

ԷՋՄԻԱԾԻՆ

1973
ԺԲ



Լ
ՏԱՐԻ




ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

ԿԵԿՅԻՆԵՄԲԵՐ

1973



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը ս. Ներսես Շնորհալու մահ-վան 800-ամյակի առթիվ	3
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակը	6
ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊ. ՏԵՐՏԵՐՅԱՆ—Սուրբ Ներսես Շնորհալի	8
ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊ. ԳԱԼՍՏՅԱՆ—Սուրբ Ներսես Շնորհալի Հայրապետը	17
ՍԻՈՆ ԱՐՔԵՊ. ՄԱՆՈՒԿՅԱՆ—Շնորհալի մեծ Հայրապետը	32
ՍԵՐՈՎԲԵ ԱՐՔԵՊ. ՄԱՆՈՒԿՅԱՆ—Երախտագիտական խոսք ս. Ներսես Շնորհալու Ռիչատակից	35
ԲԱԲԿԵՆ ԱՐՔԵՊ. ԱՊԱՏՅԱՆ—Հոգևորական սուրբ Ներսես Շնորհալից	37
ՆՈՐԱՅՐ ԱՐՔԵՊ. ՊՈՂԱՐՅԱՆ—Ս. Ներսես Շնորհալու ձեռագիր աշխատություն-ները Երուսաղեմի Ռայոց ս. Հակոբյանց վանքի ձեռագրատան մեջ	40
ՈԱՆԵ ԱՐՔԵՊ. ԱԾԵՄՅԱՆ—Շնորհալից օտար թարգմանությամբ	44
ՉԳՈՆ ԵՊՍ. ՏԵՐ-ՀԱԿՈՑՅԱՆ Մեկնություն ս. Անտարյանից ըստ Մատթեոսի արարելի Ներսիսի Շնորհալույ Ս. Ներսես Շնորհալիի մեկնությունը Կաթողիկե թուղթերում	40 57
Ա. ՀԱՏԻՏՅԱՆ—Ս. Ներսես Շնորհալից և եկեղեցական միության Ռարցը	61
ՊԱՐԳԵՎ ԸԱՀԱԶՅԱՆ—Սուրբ Ներսես Շնորհալու կյանքը և մատենագրա-կան վաստակը	72
Հ. Ա. ԱՆԱՍՅԱՆ—Ներսես Շնորհալից և «Արմատ Ռատոտո» ժողովածուն	83
Գ. Ա. ՀԱԿՈՑՅԱՆ—Ներսես Շնորհալից և Ռայոց Ռոզկոթ երգերը	98
Ռ. Ա. ԱԹԱՅԱՆ—Ներսես Շնորհալու «Վարդանանց Գորահրաշը» Եկմայանի և Կոմիտասի մշակմամբ	100
Ն. ԹԱՀՄԻՋՅԱՆ—Ներսես Շնորհալից և արևելյան քրիստոնեական երգարվեստը	110
Նորաստեղծեալ (ճոտա)	120
Մայր Ռայրեհիքում ուսումնասիրություններ Ներսես Շնորհալու մասին և Երա առան-ձին Ռատարակությունները	125
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	126
Թանկ «Էջմիածին» ամսագրում 1878 թվականի ընթացքում տպագրված նյութերի	128

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻՍԵՒՆ

«ԷՋՄԻՍԵՒՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»
Rédaction de la revue «Echmiadzine», Echmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 8/XII 1978 թ.: Ստորագրված է տպագրության 14/I 1974 թ.:

Տպագրական 8,86 մամուլ+2 ցերիքի, թուղթ 80×84¹/₂, պատվեր 820:

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1978 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

Տ. Տ. Վ Ա Ջ Գ Ե Ն Ի Ա Ռ Ա Ջ Ն Ո Յ

ՎԵՀԱԺԱՌ ԵՒ ՍՈՐԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՍՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

1973



ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ
(Մատենադարան, ձեռ. № 7048,
ժողովածու «Տաղք», Հայտապ.
1844 թ., գրիչ՝ Աստվածատուր,
Էջ 288ր)



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿՐ
Ս. ՆԵՐՍԵՍ ԾՆՈՐՀԱԼՈՒ ՄԱՀՎԱՆ 800-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ**

ՔՐԻՍՏՈՍԱԻԱՆԴ ՍԻՐՈՑ ՈՂՋՈ՛ՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ
Տ. Տ. ԽՈՐԵՆԱՅ ԱՌԱՋՆՈՑ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՑ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Տ. ԵՂԻՇԷԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ,
ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՑ
Տ. ԾՆՈՐՀՔԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՀԱՄՕՐԷՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ,
ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱԻԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ
ԵՐԵՍՓՈՒՒԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ
ՀԱԻԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Այս ներսէս առաւելեալ էր իմաստութեամբ քան
զյոյզս ի ժամանակի անդ, ո՛չ միայն քան զվարդա-
պետս հայոց, այլև քան զՅուդայացիս և զԱսորոց այնքան՝
մինչ զի համբաւ իմաստութեան նորա տարածեցաւ ընդ
ամենայն ազգս»:

(Պատմագիր՝ Կիրակոս Գանձակեցի):

Փրկչական երկրորդ հազարամեակի սեմին, երբ արևմուտքից Բիզան-
դական Կայսրութեան և արևելքից խուժող սելջուկների հարուածների տակ,
Հայաստանը կորցնում էր իր անկախությունը և քայքայում Բագրատունեաց
իշխանությունը, աստուածային նախախնամութեամբ, Հայոց աշխարհից հեռու՝
Կիլիկիայում կազմաւորուեց ու զարգացաւ մի նոր հայկական պետութիւն, որ
հանդիսացաւ պահպանողը և շարունակողը հայ ժողովրդի քաղաքական գի-
տակցութեան, հոգևոր ժառանգութեան և ազգային մշակոյթի:

Սուրբ Էջմիածնէն ժամանակաորսպէս Կիլիկիս փոխադրուեց նաև Ամե-
նայն Հայոց Հայրապետութեան Աթոռը, նորաստեղծ հայ պետութեան հովի-
ւոցն անընդ, հոգևոր ու մշակութային սերտ կապեր պահպանելով Հայաստա-
նի հոգևոր կենտրոնների հետ, երբ ու ինչքան թողալու էին լինում քաղա-
քական պայմանները:

Եւ այսպէս մօտ երեք դար շարունակ 1080-ից մինչև 1975 թուականը,
Կիլիկիան դարձաւ բուն Հայաստան աշխարհի անբաժանելի մասը, նոր փառ-
քով պատկերով հայ ժողովրդի պատմութեան գիրքը և անկորնչելի արժէքնկը
ընծայելով հայ մշակոյթի գանձատանը:

Հոգևոր դարութեան, գրականութեան, արուեստների և գիտութեան գար-
գացման մի նոր դարաշրջան է բացուում որ իրաւամբ արժանի է դառնում հա-
յոց պատմութեան «արծաթէ դարը» կոչուելու:

Մանաւանդ ժԲ դարը, հանդիսանում է կատարը կիլիկեան շրջանի հայ
մշակոյթի զարգացման, որի կենտրոնում փայլում է պայծառ անձնատրու-
թիւնը սուրբ Ներսէս Շնորհալու, շատախիղք Պահլաւունեաց հայրենասէր իշ-
խանական տան, թոռը հոչականուն Գրիգոր Մագիստրոսի:

Ապիրատ իշխանի որդին, Ներսէսը ծնուել է Տրսք գաւառի Ծովք հայ-
րենական դրակում, և փոքր հասակից մեծացել ու դաստիարակուել է Կար-
միր վանքում, իր մեծ հօր Գրիգոր Վկայասէր կաթողիկոսի ձեռքի տակ, իբրև
ուսուցիչ ունենալով նոյն վանքի գիտնական վանահայր Ատեփաննոս Մանուկ
եպիսկոպոսը:

Հայրապետական Աթոռը, քաղաքական անապահով պայմանների հե-
տեանքով 1150 թուականին, Ծովքից փոխադրուելով, նա ևս հետևում է իր
կաթողիկոս եղբորը՝ Գրիգոր Պահլաւունուն, և վերջնականապէս հաստատ-
ում է Հռոմկլա, ուր և ինք բարձրանում է սուրբ Լուսաւորչի գահը 1166
թուականին, կոչուելով Ներսէս Դ Կլայեցի կաթողիկոս:

Այստեղ, Հռոմկլայում մանաւանդ, Ներսէս Շնորհալին, ոգեկան և իմա-
ցական աստուածատուր ուժերի լիութեամբ, բոլորում է իր ստեղծագործա-
կան կեանքի ամենափայլուն շրջանը:

Պահլաւունի Ներսէսը իրապէս լի եղաւ շնորհներով՝ իբրև հոգեգարդ Հայ-
րապետ Հայոց, իբրև ուղղափառահաւատ խորիմաց աստուածաբան Մայր
եկեղեցու, իբրև ներշնչեալ աղօթող բանաստեղծ, իբրև նուիրեալ կրթական
մշակ և իբրև քաջակորով պաշտպան հայ պետութեան:

Առանց Ներսէս Շնորհալու լուսաշող ներկայութեան, պիտի մերկանար
Կիլիկեան ժԲ դարը իր փառքից և պիտի անէանար մի անկրկնելի շողարձակ
բարձունք մեր մշակոյթի պատմութեան հորիզոնից: Երանաշնորհ սուրբ Շնոր-
հալին փառատրուել է անցեալում և փառատրուելու է միշտ, իբրև բոլոր ժա-
մանակների պարծանք ամենայն հայոց:

Երակատագէտ սրտով և երկիւղածութեամբ, խոնարհում ենք հրաշաշնորհ
Հայրապետի սուրբ յիշատակի և մեծ վաստակի առաջ, աղերսանքով ջերմե-
ռանդ որ նա հարձրելոյն Գահին առջև բարեխօս լինի՝ ի խնդիր անասանու-
թեան և մի և անբաժան պահպանման առաքելական մեր Մայր եկեղեցու:

Յաւէտ յարգանք, լոյս և փառք սուրբ Ներսէս Շնորհալու նուիրական յի-
շատակին ու անթառամ գործին:

Այս տարի 18 օգոստոսին լրանում է մեծ Հայրապետի մահուան ութնա-
րիւրամեակը: Այսու Մեր կոնդակով երջանիկ ենք հրաւեր կարդալու մեր Ե-
կեղեցու նուիրապետութեան բոլոր Աթոռներին և թեմական-եկեղեցական
կազմակերպութիւններին, որ տարույս ընթացքին պատշաճ եկեղեցական ա-

րարողություններով, հանդիսաւոր նիստերով և հայերէն ու այլ լեզուներով հրատարակություններով, տօնախմբուի ու պանծացուի՝ Յնորհալի սուրբ Հայրապետ Ամենայն Հայոց:

«Յիշեցէք զստաջնորդս ձեր որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ. հայեցեալք յիս գնացից նոցա՝ նմանողք եղերուք հաւատոցն» (Եբր. ԺԳ. 7): Ամէն:

Գալստիս

ԻՍԱԳՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տոսա կոնդակս ի 16-ն յունուարի

1973 փրկչական ամի,

և ի սումարիս Տայոց ԻՆՍՏԻՏ,

ի մայրավանս սրբոյ Էջմիածնի

ՀԱՐ. 748





Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Ս. ՆԵՐՍԵՍ ԸՆՈՐՀԱԼՈՒ ՄԱՀՎԱՆ 800-ԱՄՅԱԿԸ
(1178—1873)

Այս տարի, օգոստոսի 19-ին, լրացավ ս. Ներսես Ընորհալի Հայրապետի մահվան 800-ամյակը:

Հայոց Հայրապետը այս առթիվ գրած Ըր 16 հունվար 1878 թվակիր և համար 749 կոնդակով նշում էր ս. Ներսես Ընորհալու տեղն ու դերը մեր եկեղեցու պատմության և հայ մշակույթի տարեգրության մեջ և 1873 թվականը հայտարարում հորելյանական տարի՝ թելադրելով, որ ամենուրեք հորելյանական հանդիսություններ կատարվեն Հայոց մեծ և սուրբ Հայրապետի հիշատակը ոգեկոչելու համար:

Հայրապետական հրահանգի համաձայն Մայր Աթոռում, Հայոց Հայրապետի նախագահությամբ, հոկտեմբերի 5—7 օրերին կատարվեցին հորելյանական հանդիսություններ, որոնց նկարագրությունը հրատարակվել է «Էջմիածին» ամսագրի սույն տարվա հոկտեմբերի համարում (էջ 22—38):

«Էջմիածին» ամսագրի դեկտեմբեր՝ հորելյանական սույն համարը, 128 մեծադիր էջերով, նվիրվել է ս. Ներսես Ընորհալու կյանքին ու մատենագրական վաստակին, որի հրատարակությանը իրենց արտագին մասնակցությունն են բերել հայ եկեղեցու բարձրաստիճան հոգեվորականները՝ Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ, ինչպես նաև մտավորականներ և՛ մայր հայրենիքից, և՛ սփյուռքից՝ իրենց բովանդակալից հոդվածներով, գիտական ուսումնասիրություններով և ողջույնի ջերմ խոսքով:

«Էջմիածին» ամսագրի խմբագրության և Հայաստանյայց եկեղեցու Միջեկեղեցական

հարաբերությունների բաժնի համագործակցությամբ հրատարակության է պատրաստվել նաև, անգլերեն լեզվով, հորելյանական մի գիրք՝ քույր եկեղեցիներից և քրիստոնյա աշխարհից ծանոթացնելու համար անունը, գործը և բազմաժանր մատենագրական վաստակը հայ եկեղեցու եռամեծ վարդապետի:

Ս. Ներսես Ընորհալու մահվան 800-ամյակին նվիրված հորելյանական հանդիսություններ կատարվեցին նաև մայր հայրենիքում, սփյուռքում և շարունակվում են կատարվել ամեն տեղ:

Արժան և իրավ:

Ս. Ներսես Ընորհալին հայ եկեղեցու մեծագույն դեմքերից մեկն է՝ որպես մատենագիր, քարեկարգիչ և հայրենասեր հոգևորական:

Նա միաժամանակ միջեկեղեցական ճանաչում և համբավ է վայելել որպես բացառիկ երևույթ և եկեղեցու մեծ վարդապետ համաքրիստոնեական մշակույթի պատմության մեջ:

Փոքր հասակից նա օժտված է եղել աստվածատուր բացառիկ և բազմակողմանի շնորհներով. «Չունենալով մարմնական ոչ մեկ հանգիստ, այլ անդադրում ժուժկալությամբ իրեն տվել էր աղոթքի կրթությանը, Աստվածաշունչ գրքերի ընթերցմանը և դրանց հարատև քննությանը: Ուստի սուրբ Հոգուց նա ստացավ գիտության շնորհներ, որոնցով մեկնում էր ս. Գրոց խոսքերի խորագույն իմաստները», գրում է նրա ժամանակակից կենսագիրը:

Շնորհալու ժամանակակից հունական և ասորական աղբյուրները նույնպես վկայում են նրա բազմակողմանի ուսումնականության, աստվածատուր շնորհների, առաքիլության ու ճգնակյաց վարքի մասին. «Իճչպես որ լսել էիք, այնպես էլ տեսանք, որ մի նոր ուժ Գրիգոր աստվածաբան է մեջտեղ եկել»:

Շնորհալու գիտնականության համբավը դուրս էր եկել հայ եկեղեցու սահմաններից և տարածվել էր երկրի ոլորտներում, գրում է նրա աշակերտ և կենսագիր Ներսես Լամբրոնացին:

Շնորհալին, որպես իր ժամանակի եկեղեցական ամենագարգացած դեմքերից մեկը, իրավացիորեն վայելել է եկեղեցու ճշմարիտ վարդապետի անժխտելի համբավը:

Շնորհալին ստեղծագործել է ավելի քան 50 տարի՝ 1120—1179 թվականների ընթացքում, և թողել է կրոնական, մեկնողական, դավանաբանական, ծիսապաշտական, պատմական, բանաստեղծական, գիտական, փիլիսոփայական, մանկավարժական, քարոզչական, երաժշտական, շարականագրական, նամակագրական հարուստ և բովանդակալից ժառանգություն: Նա իր մատենագրական վաստակով հանդիսանում է հայ մշակույթի կիրիկյան առաջին շրջանի բազմալիստակ ներկայացուցիչներից մեկը, համաքրիստոնեական չափանիշով եկեղեցական անվանի գործիչ և նույնքան մեծ մատենագիր:

Շնորհալին երկար դարեր իշխել է մեր եկեղեցական, մշակութային, մատենագրական կյանքի վրա՝ ներշնչման օրինակ հանդիսանալով հետագա դարերի հայ մատենագիրների և երաժիշտների համար:

Շնորհալու մատենագրական վաստակը համարյա անկորուստ հասել է մեզ, որոնցից մի մասը ևս տպագրվել է:

Շնորհալու հայրապետական գահակալության շրջանը եղավ կարճատև, ութ տարի, 1188—1179, բայց այդ կարճ ժամանակահատվածում նա հայրապետական վտարանդի գահը, Ծովքում և ապա Հոռմկլայում, փառավորեց եկեղեցաշեն, մշակութային, հայրենասիրական մեծագործություններով՝ եղբայրական սերտ կապեր պահպանելով նաև իր ժամանակի հույն, լատին և ասորի եկեղեցիների հետ՝ էկումենիկ ոգով՝ մնալով միշտ «բարձրաբարբառ քարոզիչը հայ եկեղեցվո ներողամիտ և լայնախոհ տեսության, որ եկեղեցվո միությունը կըմբռնե հիմնական կետերու համաձայնության և փոխադարձ հոգևոր հալորդակցության մեջ և կմերժե սիրապետության և ստրկաբար նմանողության ամեն պահանջները, որոնց վրա հաս-

տատած են հույն և լատին եկեղեցիներ միության անհրաժեշտ պայմանները» (Մաղաքիա արքեպ. Օրմանյան):

Շնորհալին իր բազմաբեղուն կյանքը կընքեց 1179 թվականի օգոստոսի 13-ին, հինգշաբթի օրը, 72 տարեկան հասակում: Նրա մահը մեծ կորուստ եղավ հայ եկեղեցու և հայ մատենագրության համար, «սուգ մեծ հասնալ եկեղեցույ մեր և բովանդակ գարմիս»:

Հույներն ու ասորիները նույնպես վշտանում էին նրա մահով. «Մեծ զգայարան և արթուն բարձաւ այսօր յեկեղեցույ Աստուծոյ զրկեցան Հայաստանեայք յերկրորդ Լուսաւորչէն իրեանց»:

Ս. Ներսես Շնորհալու անունն ու մատենագրական բազմակողմանի ստեղծագործությունը հանդիսացան անձեռակերտ հուշարձաններ գալիք բոլոր հայ սերունդների համար:

Ավելի քան կես դար անմահանջ և խանդավառ նվիրում և ծառայություն հայ եկեղեցուն, հայ ժողովրդին և հայ դպրությանը:

Դժվար է Շնորհալու նախորդների, ժամանակակիցների և հետնորդների մեջ զբտնել մեկը, որն իր նկարագրի բյուրեղային մաքրությամբ, առաքինագարդ և ճգնագրյաց իր վարքով, ծովամատույց, բազմակողմանի իր գիտությամբ, աստվածատուր իր շնորհներով, քրիստոսածախլալ իր հոգու քաղցրությամբ հավասարվեր նրան:

Շնորհալին քրիստոնեական հավատով և բարեպաշտությամբ լուսակերտված միանույլ մի մեծություն էր՝ անույն և նուրբ, ինչպես իր քնարը, հանդարտ ու մեղմ, ինչպես իր նկարագիրը, հստակ և վճիտ, ինչպես իր սիրտը, իր էության ցուլը, իր հոգու խաղալության ծաղիկը:


Շնորհալին հայ ժողովրդի ազնիվ սիրտն է, պայծառ միտքն ու մաքուր խիղճը:

Շնորհալին աղոթքն է հայ եկեղեցու:

Շնորհալին հայ եկեղեցու կամարների տակ և հայ հոգիների մեջ միշտ ու հավերժ հնչող Անյուելի Ջանգալատունն է հայ հոգեվոր երգի ու շարականի:

Հիսուսամեծն ներողամտություն, կրոնական հանդուրժողություն և լայնասրտություն, աստվածային ուրախությամբ բարախող սիրտ, որը վառվելով ջերմացնում էր մեր եկեղեցին և ժողովուրդը կիրիկյան Հայաստանում:

Արբության և տաքինության դյուցազն: Լուսեղեն հոգու մշտաժպիտ թրթռում, լույսի և քրիստոնեական սիրտ երգիչ, որ իր քնքուշ և թրթռուն սրտով հանդիսացավ նաև մեծ վարդապետը Քրիստոսի ընդհանրական եկեղեցու:



ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊ. ՏԵՐՏԵՐՅԱՆ

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ԸՆՈՐՀԱԼԻ

Դյուրին չէ այսօր, ութհարյուր տարիներ հետո, ս. Ներսես Ընորհալիի առիթով կենալ անցյալ մեծություններու դիմաց և մեր օրերու արժեչափերով կշռել զանոնք, երբ մենք մարդերը սովոր ենք դատել արդի չափանիշերով: Մեր դարը ոսկիի, անգթության, խաբեության և անսպասելի թշվառության դարն է. հերոսներ, սուրբեր և մտքի վաստակավորներ չեն խոսիլ մեզի իրենց իրական արժանիքներով: Այդ արժեքները մեծ չափերով պարպված են իրենց ոգեղեն էութենան, որոնք մեր հետո անցյալին մեջ մեզ կսփոփեն, կհուսադրեն և մեզ զգեցնող աղետները հանդուրժելու, տիրակալելու մուսլ հերոսությունը կենըջնչեին մեծին ու պզտիկին, ասպետին ու եկեղեցականին, ավագին և անավագին:

Ոչ մեկը մեր անցյալի փառքերեն, որոնք երախտագիտության պատմուճանով կհանգչին թողություն ծոցը, կրցած է առթել խոռվքը հաջորդ, սերունդներուն, որքան եղբրափառ մեծությունը Ընորհալին: Բյուրեղ կախարդանքը իր անձին շինված պետք է ըլլա մեր դարերեն ավելի՝ մեր ժողովուրդի տրտում, քայք քաղցր լինելութենան: Վասնզի ամեն մարդ իր ժամանակին պատկանելն առաջ, իր ժողովուրդն է ամբողջապես: Այսօր մեր ժողովուրդը հազիվ թե ինքզինքին կպատկանի և, հետևաբար, անկարող է այլևս երկինքները բանալու և ճանչնալու մեծությունը զգացումներուն, որոնք աստվածներ կիջեցնեն հայ հողին վրա, անոր շքեղ կայքերուն մատուներ, վանքեր և



ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ԾՆՈՐՀԱԼԻ
(Նկար՝ Հովնաթանյան դպրոցի)

վկայարաններ կառուցանել և առաջ: Չկա այսօր այն եղբրախառ փողանգը մադոց, որոնք դարեր շարունակ կալեն ու հողեն վարդեր հանեցին: Սյսօր մեր հոգին ի վիճակի չէ երկիցքներու լուսեհեն ձայներու հրդեհը քալել, թնայես կրենի երբեմնի խորհրդազգաց անձնավորությունները:

Ազգերը, ինչպես անհատները, կայրին հոգեկանով միայն, որ վեր է կյանքի սովորակացություններեն, որմե կախված է գիրին, լեզվին և արվեստին գոյությունն ու հավերժացումը: Ապրեցնող և ստեղծող այդ տարրը նույն հավերժական տարրն է, որով կլեցվին քոլոր ձևերը, դեմքերն ու դեպքերը՝ դեր մը կատարելու, արժեք մը ի հայտ բերելու համար պատմության մեջ: Մարդիկ ոչինչ կրնան իրագործել, երբ բաժնված կմնան կյանքի գերագույն այդ աղբյուրին: Մարդոց մեծությունը կչավվի այդ աղբյուրին բացվելու և անկե կարելի օժանդակությունը ընդունիլ կարենալու համեմատությամբ:

Ս. Ներսես Ընդհակառակ երկնային այդ ճշմարտություններուն բացվող և գայն մեզի բերող գերագույն միջնորդն է, որ գիտե բանալ ինքզինքը դեռի Աստված՝ իր անել առանձնաշնորհման զգացումով, և դեպի մարդ՝ անոր տկարության սերեն հրահանգված: Լյս ապակիի թափանցկոտության շնորհիվ է, որ ան կատարելապես ատակ կդառնա հոգեկան ճշմարտությունները մեկ կողմեն մյուսը փոխադրելու: Որովհետև քրիստոնեական ճշմարտությունները վարդապետական ըլլալե ավելի անձնական են:

Հեքիաթ է մեր պատմությունը, չպատմված հեքիաթ: Հեքիաթ է նույնպես պատմությունը մեր հոգիի ու մտքի հերոսներուն: Այն ճիգը, զոր մեր ժողովուրդը ըրավ, վանքեր ու տաճարներ կանգնելով և մեր մագաղաթները երկնագրելով, մեկ կողմեն միայն սենսանելի կընե իր հոգեկան դիմագծությունը: Սակայն անկե անդին տակավին մեզի ցույց չէ տրված խմորը, որ մեր ժողովուրդին ոսկորներեն և արյունեն կերտվեցավ, և որուն վրա պատմության կատարի ցուլը այնքան անգամներ իր հետքերուն ավերները դրոշմեց: Հայ հոգին փառքի պատմումանեն ավելի տասնիցս հրկիզված ծուխն ու մոխիրը կպահե իր անցյալեն: Մտքի այս արժեքները սլ ավելի բարձր ու թանկագին կդառնան, երբ նկատի առնենք պայմանները, որոնց մեջեն անոնք կրցին ծնիլ ու ապրիլ: Բոնության, գերության, հալածանքի ընդմեջեն զարգացնել մշակույթ մը՝ տրված չէ ամենուն: Անհկա տուրքն է հայ ստեղծող մտքին: Ընդդէմ է, թե մշակույթի կարգ մը սեռեր խուսափած են մեզմե, մերը չէ կրցած ըլլալ մտածող, տրամաբանող, իմաստասիրող հույներու պես, սակայն քանիցս կորցած է մտքի վերածնություններ ստեղծել, բավարարելու համար իր հոգիին պահանջքը, Ե, ԺԲ, ԺԹ դարերուն: Մենք կրցած ենք ապրեցնել մեր լեզուն դարերիով. այդ երկար շրջաններուն ունեցեր ենք քաղաքական ելևէջներ և անոնց զուգընթաց՝ մշակույթային ելևէջներ: Բանասերներն ու պատմաբանները, որոնք կառչած են առավելապես լեզվի հեղաշրջումներուն, զանազան անուններով հորջորջած են այդ վերիվայրումները. ոսկեդար, անկման շրջան, արծաթի դար. և այլն:

Ընդհակառակ դարը, արծաթով տիտղոսված, շատ ավելի բարձր է, քան Թարգմանչաց շրջանը, ուր մենք ոչինչ տված ենք մեր մտքին, այլ գոհացած ենք լոկ թարգմանությամբ: Թարգմանչական գրականություն մը ծնունդ չի կրնար ըլլալ մեր հոգիին, քանի որ եկվոր է: Ե դարու թարգմանիչները մեզի տվին դասական լեզուն և ոճը հայ քրիստոնյա մշակույթին: Վերանորոգեցին հայ եկեղեցին և մեզի բերին զգալի և գործոն կերպարանքը քրիստոնեության: Սակայն դասական լեզվի և գրականության մեջ մեծ է անջրպետը: Անշուշտ կտրուց, Փարպեցին և Նղիշեն, իրրև պատմիչներ, ուրույն տեղը:

ուճին մեր հին մատենագրության մեջ իրենց թանկագին մենագրություններու և վկայաբանական վավերաթուղթերով, Կորյուն իր կրոնափմաստասիրությանը, սակայն չեն բավեր դասական պատմունանը հագցնելու Ե դարու մեր գրականության: Ստույգ է, թե չունինք զուտ դասական գրականություն մը: Լեզու մը դասական է, երբ իրմով կաղապարված կըլլան ժողովուրդի մը մշակույթին բոլոր երեսները, նմանը չտեսնված ուժգնությամբ մը: Բոլոր տարրերը, որոնք դերակատար կդառնան, պետք է հավասարակշռվին, ներշնչուններն ու զգացումները հեղինակներուն՝ անհրաժեշտաբար հաշտվին երջանիկ միության մը մեջ: Ազգային զգացում, ցեղային արժեքներն ու ժամանակյա տուրքերը պետք է երջանիկ ամուսնությամբ մը պսակեն դարաշրջանին բոլոր արտադրանքները:

Ֆրանսական դասական շրջանի գրողներուն քով այս ներքին հավասարակշռությունն է, որ կտիրապետե: Օգոստոսի դարուն, ազգային ցանկություններն ու ձգտումները և հելլեն ազդեցությունը երկու գլխավոր տարրերն են այս միության: Գրականության մեջ դասական շրջանը կզուգադիպի առհասարակ ազգային զորավոր զգացումներուն և ձգտումներուն: Պերիկլեսի, Օգոստոսի, Լուդովիկոս Ժ-ի և Լոյսաբեթի շրջանը անգլիական գրականության մեջ այս իրողությունը կհաստատեն:

Խնդրական է անշուշտ արձաթե դարը դասական կոչել. սակայն եթե նկատի ունենանք Ռուրիկյանց օրով Կիլիկիո մեջ եղած անկախության ճիգերը, որոնք հաջողությամբ պսակվեցան, բայց մանավանդ այդ շրջանի գրողներու միակամ ու միատարր ճիգը, Շնորհալին, Գրիգոր Տղան, Լամբրոնացին, Հերացին, Կիրակոս Պատմիչը, Սարգիս, Բարսեղ և Իգնատիոս Շնորհալիները, կարելի է դասական շապիկ մը հագցնել արձաթի դարուն:

Խաղաղեն կծագի լույս, ըսված է իրավամբ: Բագրատունյաց թագավորության անկումեն վերջ, թե՛ Մեծ Հայքի և թե՛ Կիլիկիո մեջ մեր քաղաքական և եկեղեցական իշխանությունը վշտուր-վշտուր եղած՝ իր օրհասը կապրեր: Սելջուկներու արշավանքին հետևանքով Հայաստանը վերածվեր էր ավերակներու: Հայոց Կաթողիկոսությունը աստանդակակա վիճակի մեջ էր, Գրիգոր Բ՝ Վկայասերի օրերեն սկսյալ: Իր բնական հունեն դուրս էր նետվեր նաև տրնտեսական, հոգևոր և մտավոր կյանքը: Միայն քանի մը անմատույց վանքեր, որոնք բնավեր յոչուներու նման կմնային թառած ասպատակներու ճամբեն հեռու ինկող լեռներու ծոցին, կամ ծվարած մութ անտառներու խորը, կըջանային այս համատարած ավերեն վրկելու մեր ազգային մշակույթը ամփոփող մագաղաթները: Հոս, այս վանքերուն մեջ էին կեդրոնացած Մեծ Հայքեն եկած և Կիլիկիո լավագույն մտավոր ուժերն ու գրիչները:

Պետք չէ մոռնալ, որ ԺԱ դարը իմացական կենդանության մեծ ապացույցներ տված է մեր պատմության: Մագիստրոսի հիմնած կրթական հաստատությունները իրենց բախտորոշ դերը ունեցան անտարակույս: Տոհմին ավանդության մեջն էր ուսումին հանդեպ խանդավառ կեցվածքը: Հատուկ խնամքով Շնորհալին աշակերտած է Հայոց Կաթողիկոսության մայր դպրոցն, և, ինչպես ինքը կվկայե, իր մեծ եղբայրը բացառիկ խնամք տարած է իր վրա: Քեսուճի Կարմիր վանքին մեջ ստացած է նախնական կրթությունը, որուն առաջնորդն էր իր գիտությամբ հռչակավոր Ստեփանոս Մանուկ կոչված եպիսկոպոսը: Իր անդրանիկ գործը, զոր կորակե «վիպասանութիւն», արդյունք «համբակ տիոց», իրն են քառերը, աշակերտական ոտանավոր մը չէ միայն, այլ նաև փաստ մը, թե ինչ ոգիով և իտեալներով այդ պատանին կմեծնար իր ժողովուրդի սպասին համար: Շնորհալի մականունը հակառակ

դպրոցական վերադիր մըլլալուն, հետո իր գործունեությունը լուսավորող, անճին ու հանճարին շաղապատումովը պիտի կնքավորեր այդ գեղեցիկ բառը: Իճը կըսե տեղ մը, թե Աթենք չէ զացած և թե հոմերական վարժություններ չունի, ակնարկելով անշուշտ հունարենի իր անգիտության: Այս շքել մտքին այս պակասը սակայն չէ վնասած անոր բանաստեղծական հանճարին: Այս պակասին կպարտինք իր գեղեցիկ լեզուն և իր մտքի հայեցիությունը:

Պատմությունեն գիտենք, թե Շնորհալին իր մատաղ հասակեն օգնական էր իր եղբորը, որ զինք ձեռնադրած է եպիսկոպոս՝ գործածելու համար անոր շնորհները, մանավանդ հավասարակշռված միտքը, կեղրոնական Աթոռի՛ բազմապահանջ կարիքներու հայթայթումին համար: Յորովայնէ ընտրեալ եկեղեցականն է ան, հոգևոր պաշտոնյա մը սրտադրող բարձրագույն բոլոր առաքինությանց շտեմարանը. բաղբրություն, ժուժկալություն, բարոյալուստ, պարզություն, սիրելու և ներելու կարողություն և այլն և այլն: Հասկանճալակն է իր կենսագրին մեկ բառը, որով անոր նկարագրին այս կողմը անխորտակելի կերպով կմնա մեր մտքին մեջ: Ձինք բարկացնողի մը անհկա կըսե. «Սեր, պիտի բարկանայի քեզի, եթե ինճի չիմանիք»:

Ավելի քան քառասուն տարիներ, մինչև իր կաթողիկոս եղբոր մահը, անհկա հոգին էր այդ կաթողիկոսարանին, որ, թափառական բերդե բերդ, Հոսս կըլլայի անջրդի ժայռին վրայեն պատասխանատվությունը ունի ավելի քան տարտղված հոտի մը հանճանճումին: Կիլիկիա, Կապադովկիա, Մեծ Հայք, Մրջագետք, Ագիպտոս, Պաղեստին, հոն, ուր հայ ժողովուրդը ունի իր բազմացրիվ բեկորներն ու մասերը, կաթողիկոսության կողմն Շնորհալին է, որ պիտի երթա, պիտի սիրուի, հուսադրե, փրկե հույներեն, արաբներեն, թուրքմեններեն, ներքին ցեղերեն, ամեն օր հալածական իր ժողովուրդը: Եկեղեցականի անոր նկունությունը, հատուկեր հեղինակությունը այնքան մեծ է, որ անոր կհանճնվի դժվար առաքելությունը պառակտված կիլիկյան իշխանությունը հաշտության մը մտեցնելու (Թորոսն ու Օշինը), միջնադարյան այս կատաղի ասպետները հանճեցնելով իրարու: Ուշագրալ են հույնպես իր հարաբերությունները Պոլսո հետ, իր ազդած հմայքովը: Ծանոթ է Ալեքսիսի հետ իր իտասակցությունը և ասոր հետևանք ընդարճակ էջը «Խնդրոց պատմաբանություն» անունով, որ երկու քույր եկեղեցիներուն ցանկալի միությունը ունեի իբրև հեռավոր նպատակ: Սակայն Շնորհալի Հայրապետ, տեսնելու, որ հույները, առանց իրենց կույմեն զիջում մը ընելու, մտադիր են հայերը քաղկեդոնականացնել և կապտել ամեն ազատություն, քաղաքավարությանը կմերժե Մանվել կայսեր առաջարկները և արևելյան հայերու կարծյաց անհրրաժեշտությունը կհայտնե առ այդ: «Հիմն հաստատության մեր հոքա են, ես գլխոյն անհնար է առանց անդամացն՝ գործոց իրիք կատարումն անել»:

Շնորհալիի հայեցողությանը եկեղեցիներեն ոչ մին պետք չէր իրավունք տար ինքզինքին քրիստոնեությունը իբրև իր սեփական ստացություն ըմբռնելու և զայն ուրիշներուն պարտադրելու: Քրիստոնեական ճշմարտությունը կը հաստատվեր մասերու միավորությանը մեջ: Ձեր ընդուներ, որ եկեղեցի մը ինքզինքը իբրև տեր նկատեր և հրամայեր, ուրիշ մը՝ իբրև ծառա հնազանդեր: Այս տեսությունը առաքելական է և սկզբունքը եղած է մեր եկեղեցիին իր գույությունեն ի վեր: Շնորհալին բարձրաբարձա քարոզն է հայ եկեղեցու լայնախոն տեսության և միությունը կըմբռնե հիմնական կետերու համաճայնության և հոգևոր փոխադարձ հաղորդության մեջ:

Կրոնավոր, ազգային գործիչ, մատենագիր. հիմնական ստորերեն կազ

մըված այս դեմքը կգատվի ընթացիկ տիպարեն անով, որ բոլոր այդ գիծերը կհամախառնվին, կենթդաշնակվին առանց մեկուց կամ մյուսին զանցումի՛ն կամ նվազումի՛ն: Հալխառք, բարություն, խոհեմություն, զգաստ կյանք, քաղցր արժանապատվություն, բեմերու վրա Աստուծո խոսքը մեկնելու արտաշարժ խորություն, թեմե թեմ, երկրն երկիր կրոնական իր առաքելությունը տանուլ հեքիաթունակ գեղեցկություն: Չուր տեղը չէ, որ մեր եկեղեցին սրբացուցած ըլլա գինքը: Արյունի նահատակության հետ մտքի այս նահատակությունը կու գան դեմ-դեմի: Ծնորհալին գրչի սուրբ մըն է գերազանցորեն: Կյանքի մեջ ամեն արժեք տառապանքով ձեռք կբերվի. գրչի արվեստն սլ տարիներու գոհողություն կպահանջե: Տառապանքով կմաքրվի մտքի ոսկին և արցունքով՝ հուգիին կտալը, գիր և մագաղաթ ըլլալն առաջ:

Մինակն է այն մեր մատենագիրներեն, որուն գործը բացառաբար կառուցված, շրջանակված է միայն ու միայն կրոնական նկատումներեն: Ջերթված, մեկնություն, դավանաբանական թուղթ, բոլորին մեջ առաջին գիծին կու գա կրոնավորը: Եվ երբ գինքը կգետեղենք իր շրջանին մեջ, այնքան դժվարությանց և կարիքներուն դիմաց, այն ատեն կհասկցվի, թե ինչ սրբազան խորություններ, աստվածային շնորհներ նպաստած են շինելու այս սուրբ կաղապարը:

ԺԲ դարը դժվարագույն դարերեն մեկն է հայոց պատմության: Բեմին վրա են ժամանակի երեք մեծ ժողովուրդները. թուրքը, հույնը և արաբը՝ Եգիպտոսով: Մեծ Հայաստանը ընկղմած է թրքական ալիքներուն մեջ: Տուլքոսի կարկառներուն վրա, հերոսական դժնդակ ճիգերով, ոտքերը անդունդին ունիք իշխանություն մը, և ինչպես ինք՝ Ծնորհալին կպատկերե, «իբրեւ զայծեամն հալածեալ յորսորդաց»: Կաթողիկոս մը, որ պիտի աշխատի թե՛ իր թագավորին գահը և թե՛ Հայրսուրբական Աթոռը ազատելու այս գազաններու ժանիքեն: Կհասկցվի, թե ինչ ծանր շնորհներ պետք է միջամտեն այդ դժվարին առաքելությունը ի գլուխ հանելու համար: Ծնորհալին մեր հայրսուրբներու շարքին մեջ ամենեն իրավ կրոնավորն է, բառին տալով իր ժամանակի երանգը. այսինքն մարտը, որ վիրկությունն է զանգվածին, սիրովանքը՝ տառապողներուն, խելքի և կյանքի ուղեցույցը՝ տգիտության մեջ թափալու ամբոխներուն: Իր Թուղթերուն մեջ այդ սուրքերուն փաստը պարծառ կերպով կերևի մեզի: Հունաց կայսեր հետ իր թղթակցությունը զոր հիշեցինք, ապացույց է, թե որ աստիճան հեղինակավոր ազդեցություն մը կրցած է ձեռք ձգել դարավոր ատելությանմբ մեզի դեմ կարծրացած Պոլսո Աթոռին մեջ: Վասնզի իր մահը բուն վկայություն մը կիլն կայսեր բերեն, երբ անիկա կխոստովանի, թե «Եկեղեցին Քրիստոսի շատ մեծ, շատ զգաստ զգայարանը մը կորսնցուց»: Իր մահը ցույց կտրվի իբրև պատճառ, որով Արևելքի այս երկու եկեղեցիները չեն հասնիր իրենց ցանկալի միության:

Իր անունով մեզի եկած գործերուն գլխավորներեն է Ընդհանրականը, որ կազմված է Հոռմկլայի կաթողիկոսարանեն զանազաններու ուղղված թուղթեր: Տեսակ մը թուղթ հովվական և անդրանիկ կոնդակ օրհնության՝ ուղղված առ համօրէն հայասեռ ազինս: Ուր դարբերու ընթացքին ան ոչինչ կորսնցուցած է իր ուժեն և կրնա նկատվի իբրև եկեղեցական հրահանգություններու և բարեկարգության լավագույն ուղեցույցը, թե՛ կրոնականներու և թե՛ աշխարհականներու համար: Դավանաբանական հարցերու տեսակետով Ծնորհալին կարելի է անվարան նկատել հայ եկեղեցվո ամենեն ուղղափառ, անջնդ, ընդհանուր եկեղեցվո ոգին ամենեն հարազատ արտահայտող և աստվածաբանական հարցերը կարևոր սլայծառությանմբ հաստատող մեր մեծ

Հայրապետը: Շնորհալից հայ եկեղեցւո տրամաբանությունն է:

Սակայն ինչ որ Շնորհալից եզակի կոնց մեր կաթողիկոսներու շարքին մեջ, իր մատենագրական վաստակն է: Իր հայտնաբերած շքեղ հատկանիշներն են այս գետնին վրա՝ բարձր կրօնազգաց ոգի, բանաստեղծական ավյուն, ունի ճկունություններով հարուստ զգայարանը, քերթողական քաղցր շնորհներ, ապրված բարոյախոսություն:

Մեր գրականության, այսինքն գրավոր դպրության առաջին օրերն սկսյալ հայ մտքի ազգային ստեղծագործությունը ամենեւն ավելի երևան պիտի գար բանաստեղծության մեջ: Սկեղեցական բանաստեղծությունը ուրիշ բան չէ, բայց օրհներգությունը ընդհանուր եկեղեցւո մեջ ծաղկած ու զարգացած, քրիստոնեության աստվածաշնորհության հանդիսավորություն տալու համար:

Մեր եկեղեցւո հոգևոր երգարանը նոյն է, թեև անոնց հեղինակներն շատեր կմնան անձանիք: Թե բանաստեղծության այս տեսակը ինքնարուխ չէ եղած մեր մեջ և ազդված ու հետևած է գլխավորաբար ս. Գրքին և հույն եկեղեցւո օրհներգության զարգացման, ոչինչ կկորսնցնեն իր արժեքն, երբ մկատի ունենանք մանավանդ ընդհանուր և հասարակաց տալաները հույն սեպի: Թող թե հայ Շարակնոցը ունի ինքնարուխ և իրեն հատուկ այնպիսի երգեր, որոնք միայն հայուն կրնան ըլլալ:

Թե՛ հույն և թե՛ լատին հոգևոր քերթողությունը տիրապետված է հայեցողական և մորալ ձգտումներով, մերը՝ ոգեղինությամբ, գործով, որ այժման անհրաժեշտ է ստեղծագործության թափը ուղղելու համար: Եվ այս տարբեր չէր կրնար ըլլալ. եթե աղոթքը ճիշտ է տառապողին, անօգնականին, եթե ան օրհներգք է և շնորհակալությունը բարիին, եթե հույսն ու երազն է այս կյանքն վեր ուրիշ կյանքի մը, ո՛վ մեզմե ավելի տառապեր, սիրեր և երազեր է: Մեր ժողովուրդը տառապաշտ, բարի, այս կյանքն անդին տեսնող և անմահության կերպարանք ճարող ժողովուրդ է, և աղոթքը շնչատության չափ անհրաժեշտ ու բնական է իրեն համար:

Եթե հոգին եղած է երգելու համար, ան եղած է ավելի ևս աղոթելու համար: Ան որքան համերգ մը, նույնքան և աղոթք մը, սաղմոս մըն է: Հոգին կաղոթե, որովհետև ինքզինքը կզգա շատ պզտիկ՝ ընդարձակ այս տիեզերքին մեջ, զարհուրելի ուժերու առջև, կիրքերուն դիմաց, որոնք կոռնան մեր նեղսը, ավելի փոքր՝ հոն, ուր մեզ կառաջնորդե մեղքը, կհալածեն իղճի խաչքը: Այնքան տկար ենք, որ կփնտրենք բնագոյրեն մեր վերև անհուն գորով մը, նայրական գորություն մը, որ մեզ պաշտպանե, և մեր ձեռքերը կմիանան, և մեր ծունկերը կնկին անդիմադրելիորեն անոր առջև: Աղոթքը դուստրն է վըշտին և սիրուն:

Երբ ժողովուրդ մը կաղոթե, ան կրնա անցնիլ ցավագին տագնապներն և դուրս գալ անոնցմե ճակատը վեր, խոռվքն վերջ գտնելով խաղաղությունը իր հոգիին: Ան այս կերպ կգտնե իր հավատքին մեջ հոգեկան վերանորոգման և երիտասարդության ուժ մը: Ահա թե ինչո՞ւ հայ ժողովուրդը անմահ է, հակառակ իրեն եղած բոլոր չարիքներուն: Շնորհալից հայ մըն է և մեծ աղոթող մը:

Շնորհալի քերթողական վաստակը կարելի է բաժնել երկու գլխավոր երեսներու. տաղաչափական և սրբազան բանաստեղծություն: Տաղաչափականի տակ կերթան Ողբ Եղեսիոյ, որ սլատմությունն է Եղեսիո առման, Ողբերգութիւն, Յիսուս Որդի, Վիպասանութիւն, որ կսկսի Արամեն, հասնելու համար մինչև Պահլավունիները, Բանք հաւատոյ դավանաբանական քերթ.

ված մը, ս. Կուսին և ս. Հոփսիմեի նվիրված քերթվածներ: Ուշագրավ է Յաղագս երկնից եւ զարդոց նորա քերթվածը, ուր լայն տեղ կտրվի բնության և անկե վերցված բնական և այլաբանական պատկերներուն: ԺԲ դարու սկզբնավորության Սարկավագ վարդապետը իր կարգ մը գրվածքներով մտնեցած էր արյեն բնության, բնական շեշտ մը տալով իր արտահայտություններուն: Խրատներ, տաղեր և առակներ, վերոհիշյալ ոգիով և մտեցումով եղած հորինումներ են, բնութենեն և իրական կյանքեն թանկագին փշրանքներ քննունելով իրենց մեջ և մտեցնալով ժողովրդային բանահյուսության:

Վերոհիշյալ գրություններուն մեկ կարևոր մասը հակառակ իր քերթուղական ձևին պատմական է: Պատմիչ բառը մասնավոր երանգ մը ունի մեր մեջ, որ այնքան ալ հարազատ չէ պատմական ըմբռնումին: Դեպքերու շարահարող մըն է ան, բայց ասոր ալ հավատարիմ չէ մնացած, որովհետև սիրած է անոնցմե կախել իր փափաքները, սերն ու վախը: Էջերով հեռացած է դեպքեն, պատմելով ճամբան հանդիպած սուրբի մը վկայությունը, նշխարի մը գլուտը, կամ փաստելով աստվածաշնչական տեսություն մը: Մեկ խոսքով հոն դնելով ինչ որ կրնա, ոչ թե ինչ որ պետք է: Կրոնական, վկայաբանական այս բունկումները գրվածքներուն տված են քիչ մը շատ կրոնական գույն, սակայն ասիկա պատճառ մը չէ զանոնք անտեսելու: Ենթահալիով պայմանավոր պատմական այս քերթվածները պարզ քրոնիկներ չեն. անոնք ունին գրական, բանաստեղծական շնորհ և արժեք, երևակայություն, չափ և ուրիշ անհրաժեշտությունները սեռին:

Վիրգիլիոս ունի 120 միլիոնոց ժողովուրդ մը իր ետին: Կերզե հերոսներու հաղթանակը անցյալին մեջ, տալու համար իր պաշտպանին հզոր կայսրությունը. ու բնական պիտի ըլլա անոր հորդությունը, ուժը: Տխուր է մեր հեղինակին կյանքի իրականությունը: Ասոր համար ալ լավագույն մեր արժեքները արյուն և ողբ են, առնվազն մարտիրոսագրություն:

Գալով քերթվածներու չափին, որ Ենթահալիով պարտադրվեցավ մեր սրբազան քերթողության, թվական է, Մագիստրոսեն մեզի ժառանգ մնացած, հավանաբար արաբական ազդեցություններն եկած: Մինչև Մագիստրոս մեր քերթողությունը կգործածեր գլխավորաբար հայկական որակված չափորամանակային: Թվական չափը իր լալ, ալան, ին-երով կստեղծե ծանր տաղտուկ մը: Մեղքը անշուշտ ժամանակի հասկացողության է: Ընթերցողը անտարբերության մատնող տաղաչափական այս առատաբանությունը բարեբախտ կերպով մը կհակակշռվի Ենթահալիի սրբազան քերթվածներով: Ծարակնոցը և ժամագիրքը կպարունակեն այդ գրությունները, որոնք անկորնչելի գոհարներ են: «Առատ լուսոյ», «Աշխարհ ամենայն», «Այսօր ամճառ», «Արարչական», «Աստուած անեղ» սաղմոսներն թխող, բայց զանոնք որոշ զգայնությամբ գերազանցող երգեր կմնան տակավին մինչև այսօր: Հին և Նոր Կտակարաններու լույսով լուսավոր, Հիսուսի աստվածությամբ և ս. Հոգիի շնորհին կարելի քաղցրությունովը թրթռագին այս քերթվածները ոսկի շիթեր են, միջնադարյան հայ հոգիի կնիքով կնքավոր, որոնք ժամանակի մեջ փոխանակ հիմնալու, այսօր մեզի կթվին բյուրեղացած՝ անվերածելի գեղեցկություններ:

Ենթահալին աղոթքն է հայ հոգիին: Իր օրերուն հայուն տառապանքը ավելի թանձր է, «Չայն հառաչանաց հեծութեան սրտի ողբոցն աղաղակի»: Այդ տխուր տեսարանին վրա է, որ կբարձրանա պայծառ դեմքը այս մեծ քերթողին, որ իր շրթները մտեցուցած հայ տառապանքի կարմիր եղեգնիկի վիթավոր ծակերուն, պիտի երզե հայ հոգիի տխրանուշ մեղեդին: Տխրության

օրերու երգիչն է ան, ամենն փորձատուն ու մարդկայինը: Աշխարհնն հուսա-
մաստ՝ ան երկնքին կփարի:


Հատկանշական են մանավանդ **Արեազալի, Խաղաղականի, Ճաշու մա-**
մերուն քանի մը շատ խորունկ, մարդկային իրականությամբ հորինումները.
որոնք իբրև ներշնչում, թռիչք, ձայնական հեշտամբ, մտածման փայլակ, սրբ-
տին խոսող ճիշերն են մեր ժողովուրդին: Անոնց մեջ կա մեր միջին դարը,
մեր երազանքը, գերությունը, հայությունը, արևելյան քաղցրությունը, հոգե-
կան տրամադրությունն ու պայծառությունը: Ուշագրավ է նույնպես **Հաւատով**
խոստովանիմը, հստակ և խորունկ, որուն թարգմանությունը հիացում ստեղ-
ծած է միջազգային հոգևոր գրականության մեջ: Հայ ժողովուրդը քիչ անգամ
այսքան իրավ և ամուր կերպով իր հոգիին երկինքը աշխարհայնացուցած է:

Իր անուճով մեզի եկած շարժումները իբր բանաստեղծություն, հոգևոր
թռիչք, կու գան բարձրագույն արվեստի ամենամաքուր ակունքնն: Այսօրվան
գրական ճաշակը շատ քիչ բան կգտնեն անոնց մեջ զինքը վիրավորող: Օտ-
աղքատ պիտի մնար մեր ժամագիրքը՝ առանց անոր երգերուն: Մեր Օտարակ-
նոցը շատ բան պիտի տուժեր: Անշուշտ անոնց կարևոր տարր **Քարաստություն-**
ներ են, սակայն մարդն է անհիկա, որուն հետ միշտ վստահ եր գտնելու զգազ-
ման անտիպ գեղեցկություն, հայեցի գողտր քաղցրություն, գեղալին տրամու-
թյուն, թևաբեկ հույսը, որ մեր սրբազան գրականության **Արազալի** կազ-
մեց, երբ խորտակեցավ մականը մեր արքաներուն: **Նորահրաշը** ուր **հայտար-**
տարի առաջ գրված, քայք մոր ու կատարյալ է այսօր ալ, որովհետև ինչ որ
կա հոն, ցեղին համար զոհվողներուն դրվատիքն է, իր երկնայնությունն է, իր
աստվածային անուշությունն է: Նույնը կարելի է ըսել **Նորաստեղծեայի** մա-
սին, որուն երկինքը չի նմանիր ոչ լատին և ոչ ալ բողոքական երկնքին՝ կա-
ղապարված աշխարհի օրինակով: Հելլինակը հոն դրած է խաղաղություն և
վառաքանություն: Հանգիստի ծարավն է, որ կհորդի ամեն տեղն:

Շնորհալիին երկինքը բոցավառ ու սպառնացող չէ, իր Աստվածը շանք
ու պատուհաս չունի: Իր Հիսուսը, հակառակ իր արյունոտ կողերուն, ձյուն թե-
վերով կմերձենա: Իր քերթվածները լեցնող, դողացող ոգին արյունի հորդ գե-
ղումը չէ միջին դարու աստվածատեսներուն. չունի ուժգին, խանդաբորբ փո-
թորիկներ, **իքքեամտաց** սլշուցումներ, կայծակվող երազանքներ: Աղոթելու
իր եղանակը գեղեցիկ է միայն: Շնորհալին մեր ամենն մաքուր բանաստեղծն
է. իր անկեղծ հոգիին երգը քաղցր է, երկնքին շառայլով գեղուն: Ան կտար-
բերի շրջանի կրոնական քերթողներն իր ինքներանգ ծավալումովը:

Իարերու հասակով ազգային հոգիին իջած գործի մը առջև վերլուծումը
պարտավոր է ամփոփվիլ և քանի մը հիմնական գիծերու վրա սևեռել ոչ մի-
այն գործը, այլև այդ գործին ետևը հեռացող, բացվող, ալվորցող գիծերու այլ
ուստայնը, որոնց մեջ օրորված պետք է ըլլա մեր ժողովուրդին ամենն ամուր
հոգեմաղբ: Չենք ետ դառնար անոր մեջ հաստատելու հայ գրական ոգիին,
չըսելու համար հանճարին հիմնական հատկանիշները: Հաստատելու հայ
զգայնության քանի մը խորագույն ակոսները և բարձրագույն լարերը, ինչ
պես նաև անկեղծությամբ խոստովանելու այդ գործին մեջ խրամատային
նվաղումները, որոնք կարծես մեր պատմության նվերն են մեր ժողովուրդին:

Անտարակույս մեն է գործը Շնորհալիին, քանի որ մարդկային մեծու-
թյուններու քոլոր սանդուղներուն հավասար քազմաթիվ հատվածներ կպս-
րունակեն: Ըսել, թե երկու Կտակարաններուն ամբողջ գաղափարաբանությու-
նը հատակը կկազմեն այդ մտքին, չի նշանակեր անոր ինքնատպությունը
կործանել: Նույն քնիչն է, որ կդառնա հազարավոր տարիներն ի վեր, կազ-



մելու համար իրերամերձ բյուրավոր կերպարանքներ, մարդկային մարմնի գետնին վրա: Շնորհալին մեր ժողովուրդի փառքին ու տկարությանց հաղորդ, անոր կարեխիտեանն խոստում և անոր իրագործումներեն վկայություն կրերե մեզի: Մեր ժողովուրդի պարզագույն անհատեն մինչև քարձրագույն տեսանողը գիծ մը ունի այդ գործեն անցնող: Չայն հասկնալ չուզողն իսկ մաս ունի անոր խորհուրդի էությունն, անոր թափանցողը՝ իր հպարտությունն:

Հովվապետ, սրբազգյաց վանական, ամենահաս գործիչ և քարձր ներշնչումներով թրթռուն այս դեմքը նմանությունը կրերե Գ և Դ դարերու հույն և լատին եկեղեցվո մեծ հայրերուն: Ազնվական իր արյունը, դժվար պայմաններու մեջ իր ստացած ընդարձակ փորձառությունը, զանգվածին վրա ազդելու իր սքանչելի եղանակները, հոգիները ուղղելու, խանդավառելու երկնանդվեր եռանդը, խոսքի, արարքի, մանավանդ մտածման իր պերճ տուրքերը, եկեղեցական նվիրապետության մեջ արդյունավայել կես դարը, մանավանդ շրջապատին վրա իր անձին սրբազան հեղումը, ճառագայթումը մեզի կրերեն ճշմարիտ սուրբի մը պատկերը: Ան մարդկային է ինչպես երկնային, կգոհացնե երկնքին կրակովը տարված աղանդավորը, ինչպես իմաստի, ձևի և արվեստի հետամուտները: Ընդհանուր հոսանքեն զատվող այս անհատականությունը հսկա փարոսի մը պես մարդկության ծովին վրա գիտե փոռել իր հոգին ճերմակ թոցը:

Չկա գիտակից հայ մը, որ արհամարհանքով ուզե նայիլ անցյալեն մեզի եկած արժեքներուն: Դեպի հին դարձը՝ շատ հաճախ քարոյական դյուցազնությունն է եղած գիտակից հոգիներուն: Բրուտի մը զավակն էր Ազաթուկես, որ ամբողջ Սիկիլիո տիրեց. ան իր սեղանին վրա ոսկի բաժակներով պատվելն հետո իր հրավիրյալները, սեղանին տակեն դուրս կրերեր կավե այն ամանները, որոնք իր անցյալեն իրեն ժառանգ մնացած էին: Ահա այդ հիազոր ոգին է, որ պիտի պահել տա մեզի ինչ որ մերն է: Մեզի կմնա կարոտով խմել մեր անցյալի զմայլեցուցիչ գինին, Շնորհալինն հրամցված, որքան ալ նոր ըլլան մեր տիկերը:





ԾՆՈՐՀՔ ԱՐՔԵՊ. ԳԱԼՍՏՅԱՆ

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ԾՆՈՐՀԱԼԻ ՀԱՅՐԱՊԵՏԸ

ԽՈՍԲ ԵՐԱԽՏԻՔԻ ԵՎ ՄԵԾԱՐԱՆՔԻ
ԱՆՁԻՆ ԵՎ ԳՈՐԾԻՆ ՀԱՆԳԵՊ

Ամեն դար ունի իր տիրական դեմքը, որուն շուքը և շնորհքը կտարածվի ամբողջ իր ժամանակին վրա և կերկարի ու կհասնի նաև հաջորդ դարերուն և սերունդներուն: Անոնք կհանդիսանան իրենց դարուն քարացուցական դեմքը. մինչև իսկ դարը կկոչվի իրենց անունով: Անոնցմե մեկն է մեր Ներսես Գ կաթողիկոսը, զոր պատմությունը և մեր ժողովուրդը պատված են ԾՆՈՐՀԱԼԻ մականունով: Տարակույսե վեր է, թե 12-րդ դարու մեր պատմության տիրական դեմքը նույնիցքն շնորհաշատ այս Հայրապետն է, որ ինքզինքը իրագործած է կրոնական ու մատենագրական գրեթե թուր մարզերու մեջ:

Կարևոր դար է 12-րդը մեր պատմության մեջ: Վերահաստատումի, վերակերտումի և վերագարթոնքի շրջան մըն է գրեթե թուր բնագավառներու միջքաղաքական, կրոնական, մատենագրական, ընկերային և տնտեսական: Տեսնված է, որ մեր մեջ սկիզբները միաժամանակ գագաթներ եղած են, որոնց գրեթե անմիջապես կհաջորդե վայրէջքը. այդպես եղավ 12-րդ դարուն համար, զոր կրճանք նկատել հայկական մեծության վերջին դարը մեր հին սլատմության:

10-րդ և 11-րդ դարերուն, արևելքեն արշավող նոր ժողովուրդներու ճընշումին տեղի տալով, մեր ժողովուրդեն կարևոր զանգվածներ, լքելով իրենց բնիկ օճախները, տակավ առ տակավ սահած էին հարավ և արևմուտք, շա-

րունակելու համար իրենց գոյությունը ավելի տանելի և սպասնով պայմաններու ներքև: Հայ ավատական իշխանությանց մնացորդները, արևելքեն եկող վտանգներուն դիմադրելու կարողութենեն զուրկ զգալով իրենք զիրենք ու մանավանդ քաջալերվելով Բյուզանդիոցի կարճատես կայսրերեն, իրենց հայրենի հողերը փոխանակած էին կայսրության հայաշատ կալվածներուն հետ, արևմուտքի և հարավի մեջ: Այս փոխանակությանը և ժողովրդային տեղափոխությանը հայ ժողովուրդի մեկ և նույն հայրենիքի երկու թևերուն, Մեծ Հայքի և Փոքր Հայքի, միջև գոյություն ունեցող հավասարակշռությունը փոխված էր ի նպաստ վերջինիս: Հայության կշեռքին ծանրագույն ճճարը միշտ եղած է Մեծ Հայքը: 12-րդ դարուն Փոքր Հայքը սկսած էր ավելի ծանր կշեռել գրեթե բոլոր մարզերու մեջ:

Հայ եկեղեցիի կրոնական քարձրագույն իշխանությունը առհասարակ հաստատված է իր ժողովուրդի քաղաքական իշխանությունը մարմնավորող կեդրոնին մեջ: Հայրապետական Աթոռի վերջին հաստատ օթարանը եղած էր Անի, որ 11-րդ դարու կեսերեն սկսյալ դադրած էր այլևս մեր տոհմիկ իշխանության կեդրոն հանդիսանալե և ինչպես էր նախ բյուզանդական և սուլթանական իշխանությանց ներքև: Այնպես որ գրեթե դար մը 3—4 կաթողիկոսներ աստանդակա՛ն թափանցան առանց հաստատ աթոռանիստ կեդրոնի, քայք միշտ հակելով դեպի արևմուտք և հարավ իրենց ժողովուրդին և քաղաքական իշխանության մնացորդներուն կամ վերածնունդներուն հետ: Ի վերջո, 12-րդ դարու կեսերուն, գրեթե նախախնամական պայմաններու ներքև, Հայրապետական Աթոռը հաստատվեցավ Հոռոմվիա կոչված բերդ-ոլյակին մեջ, եփրատի եզերքին, Հայկական Միջագետքի արևմտյան սահմանին վրա: Աթոռը այստեղ մնաց գրեթե մեկուկես դար և որ վերածվեցավ միաժամանակ մեր մշակութային կարևոր կեդրոններեն մեկին:

Այս անառիկ բերդ-դոլյակին առաջին սեփականատերը և այստեղ պաշտոնավարող առաջին կաթողիկոսը եղավ Գրիգոր Գ Պահլավունին, նրեց եղբայրը Ներսես Ծնորհալիի: Այստեղ անցան Ներսեսի կյանքին վերջին գրեթե քառորդ դարը և արդյունավորագույն մասը: Այստեղ հաջորդեց ան իր եղբորը իբրև Ամենայն Հայոց կաթողիկոս 1168 թվին: Ու այստեղ կնքեց ան իր թանկագին և քազմարդյուն կյանքը 1173-ին, և ուր կմնան ցարդ իր սրբազան ճշխարները անհայտության մեջ: Այն աստիճան սերտորեն կապվեցավ Ներսեսի անունը և հիշատակը Հոռոմվիայի այս կաթողիկոսարանին, որ անոր անունով կոչվեցավ նաև Կլայեցի:

Ծ Ն Ո Ր Հ Ա Կ Ի Ի Ա Ն Զ Ը

Ներսես Ծնորհալի Հայրապետը մեզի կտակած է կրոնական, քարոյական ու մշակութային հսկա հարստություն: Այդ կտակին կարևորագույն և սրբազնագույն մասը, ըստ մեզի, նույնինքն անոր շնորհաշատ անձն է: Այդ, անձեր ալ կրնան ժառանգ ձգվիլ գալիք սերունդներուն. երբ մանավանդ վեճ ու ցանկալի գաղափարականի մը մարմնացումը եղած են անոնք: Ներսես մարդկային ազնվականության, ավետարանական կատարելության և ժողովրդականվելու ողջակիզումի անգերազանցելի տիպարը եղավ: Ու այդ իսկ պտճառներով, իբրև անկործանելի քարոյական կոթող, միշտ կանգուն մնաց որքան մեր պատմության ու մատենագրության էջերուն մեջ, նույնքան և ավելի՛ իր ժողովուրդի զգացումներուն և երախտիքին մեջ: Ու Հայոց. եկեղեցին և մեր ժողովուրդը այդ անմեռ անձով ինքզինքը ավելի հարուստ, ավելի հզոր

ու ալեյի հպարտ զգացած է, այս բառերուն քարոյական ու ազնվական առումով: Ուստի մենք, նախքան մեր երախտիքի տուրքը մատուցանելը իր մնալուն գործերուն, կուզենք պահ մը կանգ առնել իր սրբազան անձին դիմաց՝ մեր հիացումի և հարգանքի տուրքը հատուցանելու համար անոր առջև:

Հարուստ ձիրքերով կազմավորված անձնավորություն մը եղած է Շնորհալի Հայրապետը, որ փայլած է իր ասպարեզի գրեթե բոլոր մարզերուն մեջ: Կրնար ըսել՝ իմաստունին հետ. «Մանուկ էի մտավարժ և ոգվո բարվո դիպեցա»: Երկինքն ու բնութենն օժտված էր մտացիությամբ և հոգևոր շնորհներով, զորս իր աշխատանքով առսովել փայլեցուց և կրկնապատկեց. ու ամբողջ իր ձիրքերը և կյանքը ի սպաս դրավ իր ժողովուրդի բարիքին, վայելքին ու քարոյական վերելքին:

Գժրախտ պայմաններու մեջ բախտավոր անձ մը եղավ ներսես: Հակառակ մատաղ տարիքն որքանալուն (իր երեք եղբայրներով) գտնվեցավ ամենն հոգածու ձեռքերու մեջ: Հակառակ իր ժամանակներուն տիրող ընդհանուր անապահովության՝ իր կյանքը հանձնվեցավ ամենն ապահով ձեռքերուն: Հատկապես ինք և իր անմիջական երեք եղբայրը՝ Գրիգոր, վայելեցին մայրությունը և հոգածությունը երկու կաթողիկոսներու՝ Գր. Վկայասերի (1066—1105) և Բարսեղ Անեցիի (1105—1113), երկուքն ալ նույն Պահլավությանց մեծ ընտանիքն, որմե էին նաև այս մտացի և շնորհալի հարազատները: Ներսես ստացավ ժամանակի կարելի բարձրագույն ուսումը հմուտ և հոգելից վարդապետներու ձեռքին տակ:

Շնորհալիի ամբողջ կյանքը կարելի է խտացնել երկու բառերու մեջ. աղոթք և աշխատանք: Աղոթելը սշխատիլ էր անոր համար, և աշխատիլը՝ աղոթել: Մշակեց և արժևորեց իր անձը և հոգին աղոթելով՝ դառնալու համար բոլոր ժամանակներու ամենն լուսավորյալ և առաքինացյալ սուրբերն մեկը: Իսկ աշխատանքով նա ճոխացուց և զարգացուց նախ իր միտքը՝ մշակելու համար, մեծագույն արդյունավորությամբ, հայ եկեղեցիի և մատենագրության անդաստանը: Գերակատարեց գործի իր բաժինը թե՛ իրրև քանակ և թե՛ որպես որակ, աշխատելով ի ժամու և տարածամու, և այսպես հանդիսանալով մեր մատենագրության երկրորդ վերածնունդի, արծաթի դարուն, գլխավոր կերտիչներն մեկը և լավագույն ներկայացուցիչը: Եղավ տառապես ծստա Աստուծո և դաստիարակ իր ժողովուրդին: Ու իր դաստիարակչական գործը չսահմանափակվեցավ իր անմիջական շրջանակին մեջ, այլ ծախվեցավ նաև իր ժողովուրդի հյուսիսական հոտին վրա ու հանձնվեցան հաջորդ բոլոր դարերուն իրրև հավերժական ժառանգություն, որուն արգասիքները կվայելենք նաև մենք այսօր ու պիտի շարունակեն վայելել գալիք բոլոր սերունդները: Եղավ արդարև սիրված անձ մը երկինքն և երկիրն միանգամայն. հարգանքի և համակրանքի առարկա եղավ թե՛ յուրայիններն և թե՛ օտարներն՝ հոռոմեն և լատիներն, ասորիեն ու մինչև իսկ իսլամեն: Եղավ այն պայծառ լուսնկան մեր երկնակամարին վրա, որ Արդար Արեգակեն իր ստացած իմանալի լույսը, իրրև արծաթի ցուլքեր, շաղ տվալ սիրուլաբար բոլոր անոնց վրա, որոնք ինկան իր լույսի շառավիղի սահմաններուն մեջ:

Ներսես կփայլի «Ամենայն առաքինությունեամբ եւ գիտութեամբ», կամ ուրիշ վկայությամբ մը՝ «Եւ էր նա այր բանաւոր եւ գիտնական՝ լցեալ աստուածային շնորհօք, հեզ, խոնարհամիտ եւ ողորմած»: Արդարև տիրացած էր ան սուրբիցությունաց հիմնականներուն, այսինքն, խոնարհության ու հեզության, առանց որոնց անկարելի է հասնիլ ավետարանական կատարելության: Երկվորյակ առաքինություններ են ասոնք, զորս դժվար է իրարմե զատել ու զա-

նազանել. մին կենթադրեմ անսպառնալից մյուսը, որովհետև մեկ և նույն հոգե-
վիճակին արտաքին երևում է մին, իսկ մյուսը՝ ներքինը: Մեկը առաքինի կյան-
քի ծայրիկին գուցեմ է, իսկ մյուսը՝ բույրը. մեկը՝ կտեսնես, մյուսը՝ կզգաս:

Խոնարհությանը Աստուծո Որդին երկիր իջած էր. ու խոնարհությանը
միայն մարդոց որդիները երկինք պիտի կրնային բարձրանալ: «Որ բարձրա-
ցուցանե զանձն իր՝ խոնարհեսցի. եւ որ խոնարհեսցուցանե զանձն իր՝ բարձ-
րասցի», պատգամած էր Աստուծո Որդին: Առանց այս երկվորյակ առաքինու-
թյանց կարելի չէր հաճո ըլլալ Աստուծո և ստանալ երկնային շնորհները.
«Աստուած հակառակ կայ ամբարտաւանից, եւ տայ շնորհս խոնարհաց»: Ու
Աստված ըսած էր մարգարեին բերնով. «Եւս պիտի բնակիմ հեզերուն և խո-
նարհներու մէջ»: Ներկա աշխարհի համար գրեթե անծանոթ առաքինություն-
ներ են ասոնք: Ու այս իսկ պատճառով ժամանակակից մարդեր հաճախ
այնքան գուրկ կմնան աստվածային շնորհներն: Հիսուս, աստվածային գե-
րազանց տիպարը, ինքզինքը իբրև օրինակ ցույց կուտա նաև այս մարզին
մէջ. «Սորվեցեք ինձմե, քանի որ հեզ եմ և սրտով խոնարհ»:

Ներսես լավ սորված էր այս դասը և լրիվ յուրացուցած: Վկա են իր նա-
մակները, հատկապես անոնք, որ գրված են «առ ժպիրն ոմն», որ «բանս
զկծանաց յանդուգն, լրբութեամբ», գրած էր Շնորհալիին, ըստ այս նամակնե-
րու վերև դրված ծանոթագրութեանց: Առաջին նամակը թարգմանաբար կսկսի
այսպես. «Ստացա սիրո և հանդիմանությանդ գիրը. և ի մտի ունենալով Սո-
ղոմոն իմաստունի խոսքերը՝ «ավելի լավ է սիրելիի վերքը, քան թշնամիի
համբույրը», չտխրեցա, այլ ուրախ եղա: Բանզի ես զիս այնքան լավ կճանչը-
նամ, որ ոչ միայն քու լեզուդ ու գրիչդ, այլ, եթե ամբողջ Ադամի սերունդնե-
րուն խոսքը և գիրը ջանային ի հայտ բերել իմ մէջս գտնված պարսավելի
կիրքերը, անբավական պիտի ըլլային»: Ու կվերջացնեն. «Հիշե զիս աղոթք-
ներուդ մէջ, եթե հաճո թվի քեզի»:

Իր թովանդակ գրվածքներուն մէջ ի հայտ եկած այս հեզ ու խոնարհ ո-
գին, կենթադրենք, որ կփայլեր նաև Շնորհալիի խոսքերուն, գործերուն, շար-
ժումներուն, դեմքին և ամբողջ անձնավորության վրա: Բյուզանդիոնի կայսե-
րական պալատին մէջ ծանոթ էր Ներսեսի «Հոգվո հեզհայեցությունը» և ան-
ձին պարկեշտությունը, խոնարհամիտ և հանդարտ հարցումները և պատաս-
խանքները: Լամբրոնացին այս մասին հետևյալ տողերն ունի Շնորհալիի ո-
տանավոր կենսագրության մէջ.

«Ներսես հոգի հեզ ստացաւ,
Որով Մովսէսի հանգոյն ցուցաւ,
Ընդդէմ ներհակ ումեք չյարեաւ,
Այլ սուրբ սիրով յինքն ընկալաւ»:

Կիրակոս պատմիչ ամենեն առաջ այս առաքինությունը կհիշեն Շնորհա-
լիի բարքին մէջ. «Էր ինքն հեզ ամենայնիւ, պարկեշտ, արժանատր այր
Աստուծոյ»:

Իսկ Շնորհալիի վարուց պատմիչը ունի հետևյալ արտահայտությունը
անոր մասին, զոր հառաջ կբերենք թարգմանաբար. «Ան ուներ ուրիշ առաքի-
նություններ, որոնք ավելի գերազանց են, քան մյուս հատկությունները, զորս
շատ դժվար է երկրածնի մը համար ստանալ իր անձնական ջանքերով.
Կակնարկեմ ամենագույելի հեզության, զոր ուներ նման նախամարգարեին
Մովսէսի»:

¹ Մովսես մարգարեի մասին այսպես ըսված է Աստվածաշունչին մէջ. «Եւ այրն Մովսես
հեզ էր յոյժ քան զամենայն մարդիկ որ էին ի վերայ երկրի» (Թիւք. ԺԲ 9):

Ներսես ոչ միայն բացառիկ պարագաներուն, այլ ամբողջ իր կյանքի ընթացքին ոչ ոքի բարկացավ: Եթե ուկ մեկը, խոսքով կամ գործով բարկության առիթ տված ըլլար, չէր նեղվեր, կամ քղայնության արտաքին նշաններ ցույց չէր տար. այլ հեզ և քաղցր խոսքով կըսէր. «Լճույս, եթե ինձի չխնայեի՝ պիտի բարկանայի քեզի»: Այս էր իր բարձր սուղորությունը, որ վեր է արդարև մարդկային սովորական բնութեան:

Ծնորհալին ինքն իսկ կվկայէ, թե «Երանելի հեզությունն է, որ քաջաբար կսանճահարն ախտերը, հակառակը հակառակով բժշկելու սկզբունքով: Հեզությամբ կարելի է բժշկել ամբարտապանությունը... խոնարհությունն է, որ ծնունդ կուտա հեզության. իսկ բարկության արմատը ամբարտապանությունն է...»:

Որպեսզի այս հեզությունը չշփոթվի վստայած բարության կամ անգործության հետ, կավելցնեն Ծնորհալին. «Հայց ոչ որ քարկությունը բոլորովին չար համարի, և հեզությունը՝ բարի. որովհետև իր ժամանակին և իր տեղին երկուքն ալ բարի են. Մովսեսին համար հեզ էր, կըսվի, բայց այնքան բարկացավ ժողովուրդի չարագործության վրա, որ մինչև իսկ Տասնաբանյա պատվիրաններու քարեղեն տախտակները խորտակեց»: Իսկ իր ԸՆԴՀԱՆՐԱՍՄԱՆ կոչված անդրանիկ կոնդակին մեջ խրատ կուտա եպիսկոպոսներուն, որ առեւ պարագային հեզության պատճառով ներով չըլլան, այլ ի հարկին «սաստեղ և հանդիմանել»՝ ըստ առաքելական պատվերին. և օրինակ կրէրե Տերը, որ խարազանով վտարեց տաճարին մեջ առևտուր ընդունողը. սակայն կավելցնեն հեզահոգի Հայրապետը. «Մի մոռնաք, որ Հիսուսի գործածած խարազանը չվանն էր. և ոչ կարծր նյութ»: Ինչ որ կնշանակէ, թե սաստեղու ստեճն ալ քաղցրությունը և կակուղությունը ձեռքե հանելու չէ. իր նամակներուն մեջ կհաստատեն, որ Քրիստոսի մտանության ճամբուն մեջ «առաջինն է խոնարհությունը և քաղցրությունը»:

Թեև Ներսես իր շնորհալի վարմունքով արժանացած էր ամենքի համակրանքին ու հարգանքին, սակայն չպակսեցան նաև զայն զրպարտողներ, բամբաստողներ, ատողներ և նախատողներ: Սակայն այդ ողորդն դիմաց պահեց իր պաղարյունը և չարին դեմ չարով չփոխադարձեց. ընդհակառակը, համբերությամբ հաղթանակեց: Կըսէ իր գրություններէն մեկին մեջ. «Արքայության պտուղին ծաղիկն է նեղությունը. եթե կուզենք պտուղը բաղել՝ նայս ծաղիկը պարտինք ունենալ: Այս երկրի վրա պետք է հալածվինք, որպէսզի վերին կոչման կարենանք հասնիլ: Երանելի են մանավանդ անոնք, որոնք արդար ըլլալով հանդերձ կզրպարտվին, ու գոհությամբ կտանին զայն... որովհետև բամբասանքի պատճառած կսկիծը ավելի դժնդակ է, քան ֆիզիկական չարչարանքը: Արդարև, առաքինի մարդերեն շատեր նեղություններուն կհամբերեն, սակայն նախատինքներուն չեն կրնար տոկալ: Ծնորհալին Մատթեոսի Լկիտարանի իր մեկնության մեջ «Հոգով աղքատը» կնույնացնեն խոնարհի հետ, որ արժանի կըլլա նաև մյուս երանիներուն, որովհետև «խոնարհը նաև սզավոր է՝ իր մեղքերուն համար, իսկ սզավորը հեզ է. հեզը արդար և ողորմած է. արդարը և սուրբը խաղարարար է. խաղարարը հալածանքի մեջ չընդվզիր, իսկ հալածանքի համբերողը խոտիության չմատուցիր, երբ բամբասանքի կենթարկվի»:

Այս բոլորեն դուրին է հետևեցնել, թե Ներսես կլայեցի Հայրապետու բացառապես քաղցր բնավորությամբ անձնավորություն մըն էր, որուն համար այնքան արժանապես սիրացած է Ծնորհալի մակդիրին: Ոճը մարդն է Ար-

դարև անոր գրվածքներուն մեջ կծուվալի անուշ օծությունը իր քաղցր իսանը-վածքին:

Մեծ ու տաքուկ սրտի տեր էր Շնորհալին: Ամենքի վրա առնասարակ կտարածվեր իր սրտին ջերմությունը՝ բարձրագույն վիճակներեց մինչև խոնարհագույններուն, չարին և բարիին, մեծին և վտարին վրա: Կշանար հաունիլ ամենքին. ոմանց՝ տարակույսները վարատելու, ուրիշները՝ մխիթարելու, ոմանք՝ խրատելու և վերականգնելու նյութապես և բարոյապես. աղքատները կլիացներ, տկարները կկարողացներ, չունեցողին կուտար, ունեցողներուն շնորհները կառատացներ:

Այսքան ծանրանալն հետո Շնորհալիի նկարագրին հիմունքը կազմող խոնարհության և բարության առաքինությանց վրա, այլևս կենթադրենք, որ ավելորդ կդառնա համեմալ անոր վրա վայլած մյուս հոգեկան առավելությանց վրա: Օրհնակ՝ սրբության առաքինության մասին, որով լեցուն էր երանելի այս Հայրապետը: Մատթեոսի Ավետարանի «Երանի այնոցիկ որ սուրբ են սրտիւք» խոսքի մեկնաբանության ընթացքին կըսէ Շնորհալին. «Ով որ իր սիրտը կմաքրէ ամեն տեսակ ախտերն, իր հոգվույն մեջ աստվածային կերպարանքին գեղեցկությունը կտեսնէ»: Այս խոսքերը կուտան իսկական պատկերը իր մաքուր հոգիին:

Հստ անվան և ըստ արյան իր հարազատը՝ Ներսէս Լամբրոնացին, որ կըսէինք, թե պատմած է Շնորհալիին կյանքը ոտանավոր ձևով, հետևյալ բաներով եզրակացության կրերն զայն:

«Ներսէս հրեշտակ էր երկրաւոր.

Գոլով մարմին ոչ միութաւոր.

Որ ի վերջին դարս եւ ի կոր՝

Ուրեք չկայ արժանաւոր.

Շնորհօք պայծառ եւ վառաւոր.

Բայց արդ յերկինս է դասաւոր.

Նման նմա չմնաց նմանաւոր»:

Ու մեր եկեղեցական պատմության մեջ ս. Գր. Լուսավորիչին, ս. Սահակին, ս. Մեսրոպին և ս. Գր. Նարեկացիին հետ ոչ ոք այնքան մեծարանք ու սեր վայելած է իր ժամանակակիցներեն և հաջորդ սերունդներեն, որքան Ներսէս Շնորհալի Հայրապետը, իբրև սուրբ և իբրև մատենագիր: Իր սրբության և շնորհաց համբավը տարածված էր մինչև բյուզանդական արքունիքը, ուր երբ իմացան անոր մահը, օրվան կայրը հառաչանքով ըսած է. «Մեծ և արթուն զգայարանք մը վերացավ Աստուծու եկեղեցիեն: Հայեր զրկվեցան իրենց երկրորդ լուսավորիչեն: Ով երանելի Հայրապետ, ի՛նչպէս իմ փափաքս անկատար ձգելով առ Քրիստոս ժամանեցիր²: Սակայն մենք քու անունդ, առաջին սուրբերու հետ, հիշատակության արժանի տնօրինությունը պիտի ընենք՝ տոնելով ուրախությամբ ի Քրիստոս»: Ու կավելցեն պատմիչը. «Ու պատվեր տվավ թագավորական քաղաքի եկեղեցիներուն, հիշատակել զայն տոնախմբությամբ՝ առաջին սուրբերուն հետ»:

Որչափ այ արևելյան չափազանցություն նկատենք վերոհիշյալ արտահայտությունները կայսեր կամ պատմիչին կողմէ, առնվազն կհաստատեն

² Կայսեր «Վափաքն» էր նայ ն հայն եկեղեցիներու միախորությունը, զոր իրագործելու համար բաշխուիլ թղթակցություններ հղան Շնորհալիի և կայսեր միջև և բանակցություններ կատարվեցան բյուզանդական եկեղեցիի ներկայացուցիչներու և Շնորհալիի միջև:

անոնք այն բարձր համարումը, որ կազմված էր Ծնորհալի Հայրապետի մա-
տին Գաև չյուզանդական բարձրագույն շրջանակներու մեջ:

Բացի «սուրբ, անբիծ, մեծ» և նման որակումներեն, ժամանակակից ու
հետագա պատմիչներ գործածեցին եւս անոր համար Գաև գերազանց մակդիր-
ները. օրինակ. «ԵՐԿՐՈՐԴ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ»՝ հարարերաբար, անշուշտ, Գրի-
գոր Լուսավորչի: «ՏԻՆՉԵՐԱԼՈՒՅՍ ՎԱՐԴԱՊԵՏ»՝ նկատի ունենալով, ան-
շուշտ, իր գրական և ուսուցողական գործերը: «ՀԱՄԱՀՐԵՅՏԱԿ»՝ ակնար-
կելով իր հրեշտակային մաքուր կենցաղին: Հայսմավորքը, որ պատմվա-
ծն տոնելի սուրբերուն վարքերը և հիշատակված՝ երանելի դեմքերու անու-
նեքը, Ծնորհալիի մասին սա հատկանշական վկայությունն ունի. «Ոչ ոք լա-
ռաջնոց հայրապետացն գտաւ նման նմա, եւ ոչ յետ նորա՝ մինչեւ ի ժամա-
նակս մեր»:

ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Երբ կձեռնարկենք ընդհանուր ու համառոտ ակնարկ մը նետել Ծնորհա-
լիի գրական վաստակին վրա, մեր հառաջադրությունը չէ երբեք ուսումնա-
սիրական աշխատանք կատարել, ոչ ալ՝ վերարժևորել զանոնք: Այդ անկարելի
է արդեն մեզի տրված պայմաններու սահմանին մեջ: Մեր նպատակը պիտի
լինի լոկ հիշել, հիանալ և շնորհակալ ըլլալ:

Որքան երախտիք պարտենք ազգովին անոր շնորհափայլ անձին հան-
դեսլ, նույնքան և ավելի շնորհուպարտ պիտի լինինք անոր գրական վաստա-
կին առջև:

Ամենն առաջ և ամենն ավելի հայ դպրությունը պարտական է անոր
նիս և պեպիսուն մատենագրական աշխատանքին հանդէս: Ծնորհալին կի-
րարկած է իր ժամանակին գործածության մեջ եղող գրական գրեթե բոլոր
սեները, միշտ լավ ու լավագույն արդյունքներով: Գրած է հոգևոր բանաս-
տեղծություն, աստվածաբանություն, մեկնաբանություն, նամակագրություն,
վիպասանություն (պոեմա), ուլբերգություն՝ երկու վերջին բառերուն ստա-
կան ալ պատմական առումով: Մշակած է ճառ, տաղ, երգ, աղոթք, շարական,
առակ, հանելուկ՝ այլովքն հանդերձ: Ու այս բոլորը իրագործած է իր ժողո-
վուրը դաստիարակելու, լուսավորելու և մխիթարելու նպատակով: Երբեք
իր մտքն չէ անցած վերացական գաղափարներով մտքի գրոսանք կատա-
րել, ոչ ալ քերթողության մարզանքներ ընել: Իր հիմնական շարժառիթը եղած
է ազնիվ հոգիներ կերտել, սիրտերուն երթալ, միտքերուն խոսիլ՝ անոնց մեջ
կյաթեցնելու համար աստվածատուր շնորհներ:

Հավասար հեղինակությամբ ու ճարտարությամբ կգործածէ և՛ արձակք,
և՛ տաղաչափյալը: Կրնա ըլլալ, որ մեր դպրությունը ունեցած ըլլար իրմե
ավելի «ճարտասան», «հոնետոր» և «բարձրայտիչ» գրողներ, սակայն ոչ ոք
կհավասարի անոր ոճի վայելչությամբ, մտքի հստակությամբ ու լեզվի պայ-
ծառությամբ: Իր կաթոլիկոս ընտրության առթիվ կարդացած ատենաբանու-
թյունը ու մանավանդ իր անդրամիկ կոնդակը, այսինքն՝ ԸՆԴՀԱՆՐԱՒԱԿԱՆ
յնդարձակ թուղթը, մեր հին մատենագրության արձակի գեղեցկագույն նմուշ-
ներն են կարելի է հասարել, թե՛ իբրև ոճ և թե՛ իբրև նյութի մոտեցում և մշա-
կում: Եթե ստեղծագործական վաստակով մեր առաջին կարգի հեղինակնե-
րն չէ, սակայն արտահայտության գեղեցիկ գյուտերով անգերազանցելի է:

Ծնորհալիի գրությանց մեծագույն մասը տաղուչափյալ է. ու այս մարզին
մեջ ոչ միայն մեր հին մատենագրության լավագույն բանաստեղծներն է,

այլ նաև կարգ մը պարագաներուն այս արվեստի ուսանողներեն է: Հ. Ղ. Ալիշան այս մասին կվկայե, որ Շնորհալի Հայրապետը «տաճարապետ քանի արվեստին գանձագանությամբ և ճարտարությամբ հնարող և վարդապետ իսկ կրճա ըսվիլ. վասնզի ոչ ոք իրմե առաջ այնչափ տեսակ շափերով և ոճով երգեր, տաղեր և քերթվածներ գրած է»: Թեև ուրիշներ կրճան սկսած ըլլալ իր գործածած տաղաչափայլ այս կամ այն ձևերեն մեկը կամ մյուսը, սակայն, կավելցնէ Բ. Ղ. Ալիշան, «այն ճամբան ստուգիվ հարթող և ընդարձակող դարձրալ Շնորհալին է»: Ու կեզրակացնէ. «Անհակառակ և անտարակույս խոստովանիլ, որ իբրև քերթող կամ շափաբան, Ներսես Շնորհալի մեր լեզվին մեջ կա՛մ առաջինն է, կա՛մ առաջնոց հավասար»:

Իր վիպասանությունները, այսինքն երկարաշունչ քերթվածները, օրինակ, «Յիսուս Որդի», «Ողբ Եղեսիոյ» և ուրիշներ առհասարակ գրած ըլլալով Ռասարակ ժողովուրդին համար, որդեգրած է, փոխան մեր հին մատենագրության մեջ գործածական երկարտողյան տաղաչափության, ավելի կարճ տողերով ոտանավորներ, որոնց մեջ գլխավոր նորությունը տողերուն նույնածայն վերջավորությունն էր, որ թեև ներկայիս մեզի միօրինակ և տաղտկալի կթվի, սակայն իր ժամանակին, իբրև նորություն, այնործով կարդացված և սիրով որդեգրված է:

Իր տաղաչափայլ գրություններեն կարևոր մեկ տոկոսը գրված է այնուրեքնական կարգով, ուրիշներու տուներու կամ տողերու սկզբնատառերը կկայեն իր անունը, կամ երբեմն ալ կկազմեն նախադասություններ. օրինակ, «Ներսէսի է բանա». կամ՝ «Ներսէսի կաթողիկոսի հայոց». կամ՝ «Միտիթար թծիչ ընկալ ի Ներսէսէ զայս բան». կամ՝ «Առ Ապիրատն ի Տեր Ներսիսէ բան չափով Սա»:

Քիչեր գործածեր են հայերեն լեզուն այնքան ճկունությամբ և տիրակալությամբ, որքան ըրած է Շնորհալին: Հայ լեզուն իր ամբողջ ճոխությամբ և ճշգրտությամբ իր տրամադրության ներքև ունեցած է և հլու ու հնազանդ իր գրչին եկած են մեր լեզվին բոլոր բառերն ու բացատրությունները, հանգերն ու վանկերը, երբ կանչված են:

Պարտինք հաստատել, որ Շնորհալիի գրական գործերուն նյութը գրեթե ամբողջությամբ բարոյական ու դաստիարակչական է, իբրև արգասիքները խորապես հավատացյալ հոգիի մը և հավատքի դարու մը: Բարոյական կամ դաստիարակչական ըլլալով հանդերձ ամենքն ալ զուտ կրճական կամ հոգևոր տարողություն չունին: Ոմանք ժողովրդական կամ «ուրախական» բնույթ ունին. այս կարգեն են, օրինակ, հանելուկները և հայ տառերու մասին գրվածները: Ասոնք հատկապես գրված ըլլալով հասարակ զանգվածներուն կամ մանուկներուն համար, բնականորեն հորինված են ժողովրդային բարբառով և իբրև այդ մեր ուսուցիչներին հնագույն կազմության նմուշներեն կրճան համարվիլ: Ասոնք ալ մեր աշխարհիկ լեզվի Շնորհալիի բերած կարևոր նպաստներեն են, որուն համար մեր աշխարհաբար լեզուն ալ կմնա պարտական անոր:

Երախտապարտ եղան Շնորհալիին՝ իր ժամանակակից և հաջորդ դարերու հասակով ու հոգով մանուկները, որոնց համար ևս իր սրտի և մտքի գունձներեն բաժին հանց: Գրեց անոնց համար հատուկ տաղաչափություններ, հայ տառերու անուններով ու կարգով, պարզ ու հասկանալի ոճով՝ հորդորելով զանոնք ըլլալ ուսումնասեր, ընկերասեր ու մանավանդ աստվածասեր: Ասոնց համար հատկապես հորինեց հանելուկները և «Ռախականմեր»-ը, որոնցմէ ոմանք կկազմեն մեր մանկավարժական գրականության սկիզբները:

Հատկապես Հոռմկլայի պահապան զինվորներուն համար գրված էին «Յիշևացուք ի գիշերի զանուն թո, Տէր» երգը և անոր կցորդը՝ «Զարթիք, փառք ինձ: Այս երգերը այնքան մեծ ընդունելություն գտան ժողովրդային խավերու մեջ, որ ի վերջո կամ ինք՝ Շնորհալի Հայրապետը, կամ իր հաջորդները հարմար տեսան ճերս առնել զսնունք մեր ժամագրքեն, և գիշերային ժամասացությունը բանալ ասոնցմով: «Այս զարմանալի փոխանակությամբ», կը խորհրդածես Բ. Ղ. Ալիշան, «անկոելի մնաց Հոռմկլայի պահապանաց երգը»:

Հայ երաժշտությունն ալ ունի մեծ երախտիչ հանդես Շնորհալիին, որուն գրավոր վաստակին կարևոր մեկ տոկոսը կրաղկանա հոգևոր երգերն և շարականներն, ինչպես համադրելով կհավաստես Հայսմավորքը. «Սա էր այր իմաստուն եւ բանաւոր, որ արար շարականս եւ երգս հոգեւորս զեղեցիկ եւ քաղցր եղանակաւ, տաղս, մեղեդիս ըսա գրոց անուան իւրոյ, գանձս նովին անուամբ, ոտանաւորս զեղեցկայարմար»: Ու պատմությունը կհաստատես, որ Շնորհալին ոչ միայն բանաստեղծեր է զանոնք, այլ նաև եղանակներն ալ ինք դրած է անոնց վրա: Որով որքան մեծ քերթող, նույնքան ալ անվանի երաժիշտ եղած է ան: Այն աստիճան ճանչցված ու տարածված էր Շնորհալիի այս հատկությունը, որ նախապես հիշյալ իր երկու կարևոր մակդիրներու կողքին ունեցած է նաև երրորդ մը, երգեցող: Այսպես կկոչես զայն Սամվել Աճեցի, Շնորհալիի ժամանակակից պատմիչը: Ու երգեցող մակդիրը ոչ միայն կենթադրես եղանակներու հորինող ըլլալը, այլ նաև ու առաւելաբար ակտր-ժալոր ձայնով օժտված երգիչ ըլլալը: Ու այս կապակցությամբ պետք է հիշատակենք ու հաստատենք, թե Շնորհալիի ժամանակին բարձրագույն կրթության հիմնական նյութերն էին ալ երաժշտությունն էր, բարձր քերականության, քերթողության, իմաստասիրության, մեկնաբանության ու աստվածաբանության և այլ նյութերու կարգին, հատկապես մեր վարդապետանոցներու կամ հոգևոր համալսարաններու մեջ: Ներսես, ստացած ըլլալով ժամանակի բարձրագույն ուսումը, բացահայտ է, թե վարժ պիտի ըլլար նաև երաժշտական այս նորը արվեստին, որուն քնական հակում ու տաղանդ ալ ունեցած է, ինչպես ուներ բանաստեղծության:

Շնորհալիի պարտական պիտի մնա հավերժորեն Հայց. եկեղեցին, որուն ժամասացությունները նոխացուց ու զվարթացուց ան, բազում հոգևոր երգերու հավելումներով, ու տվալ անոր վերջնական ձևը: «Նորոգէր զառաջին սուրբ հարցն հաստատեալ կարգս եկեղեցոյ, եւ զարդարէր զեկեղեցիս Հայաստանեայց սնթերի լրմամբ», կըսես իր կենաց պատմիչը: Ժամակարգության մը ծանոթագրության մեջ կկարդանք. Ներսես Հայրապետ՝ «Ամենայնի եւ ամենայն կամօքն հանեալ եւ հասնեալ, զպսկասն եկից եւ սխալն ուղղեաց. եւ կարգեաց ամենայն Հայաստանեայց եկեղեցոյ՝ անջրելի եւ հաստատուն աւանդ, առաջնորդութեամբ Հոգւոյն Սրբոյ, որ յաջողէ զամենայն բարի՝ յամենայնի»: Բացի երեկոյան ժամերգութենէն, մնացյալ վեց ժամերգությանց մեջ ալ կան Շնորհալիի հավելումները միշտ երգի ձևին տակ. «հակումի» կամ «հանգստյան» ժամասացությունը միայն օժտված է «Հաւատով խոստովանիմ» գոհար աղոթաշարքով: Միջև իսկ ս. պատարագի կարգավորությունը զուրկ չէ մնացած ս. Ներսեսի նորոգչական հոգածութենէն, ինչպես իր վարուց պատմիչը կհաստատես. «Հոգեւոր երգովք եւ քալցրանուագ եղանակօք վայելչացուցանէր զսուրբ սլատարուգին խորհրդական երգսն»:

Իր բարենորոգչական աշխատանքները տարածված են նաև Շարակնոցի մեջ, ուր ունի ավելի քան 80 շարականներ: Տոնացույցի մեջ, ուր կարգ մը տնօրինություններ ինք սկզբնավորած է, և ուրիշները (մյուստնօրինեք, լա-

ողորհներ) և այլ նման ժողովրդային արարողությունները ճոխացուցած է: Զեռնադրության Մաշտոցին մեջ, հատկապես եսյւ.-ի ձեռնադրության կարգին մեջ, կարևոր բաժին ունի ան: Որով գրեթե չկա եկեղեցական պաշտասաց և ծիսից վերաբերյալ գիրք մը, որուն վրա դրած չըլլա Ընդհանրի Հայրապետը իր օծության կնիքը:

Եկեղեցական ժամապաշտության բարեկարգությանց հետ հոգ տարած է նաև անոր նյութական վայելչության: Որքան աղքատներու և կարոտյալներու կրօնը իր ձեռքը ինկած նյութական հարստությունը, նույնքան ալ կհատկացներ եկեղեցիներու պայծառության, «գորս պայծառս եւ առոյգս յարուարէր եւ վայելուչս եկեղեցականացն կուզմէր», կրնէ իր պատմիչը ու կալելոցն. «Ջարդարէր զեկեղեցիսն ոսկեղէն եւ արծաթեղէն անօթիք, եւ պայծառագոյն ոսկեմկար զգետտիք, բաշխման սուրբ մարմնոյ եւ արեանն Տեառն, եւ յորդորէր զամենեսեան՝ իմանալի եւ զգալի պայծառութեամբ սպասատրել կենարար եւ երկրպագելի սուրբ խորհրդոյն»:

Ու կեզրակացնէ պատմիչը. «Ընդհանուր եկեղեցիք Հայաստանեայց ի ժամանակս սուրբ Հայրապետին Ներսէսի՝ լուսատրեայք ի շնորհաց նորա, եւ ուրախացեայք ի վերայ աստուածայնագոյն հովուապետութեանն նորա՝ ընդ ամենայն տեղիս, գոհանային զՏեառնէ, որ այնպիսի լուսատրիչ ի զարմէ Գրիգորի Լուսատրչի պարգևեաց նոցա ի յետին ժամանակիս»:

Ընդհանրի անլուելի կերգև մեզի հետ իր երգերուն, շարականներուն և տաղերուն անորժալուր եղանակներով, ամեն անգամ, որ անոնք հնչեն մեր եկեղեցիներու կամարներուն ներքև. ու ասիկա ոչ միայն ամենօրյա ժամերգությանց ընթացքին, այլ հատկապես եկեղեցական տարվոյն սրբազնագոյն շրջաններուն, Մեծ պահքին ու Ավագ շաբթվան ընթացքին, որոնք շարականներեն մեծ մասը ինք հորինած է: Անոր շարականներուն թե՛ բառերուն և թե՛ եղանակներուն մեջ կա աստվածային կայծղ շնորհաց և պայծառության, որով թե՛ հասկնալի են հասարակ ժողովուրդին և թե՛ հորդորիչ են սիրո, հավատքի և հոգևոր եռանդի: Մեր մյուս շարականները առհասարակ թափված են ծանոթ «Ութ ծայներ»-ու կաղապարներուն վրա. իսկ Ընդհանրի երգերը առհասարակ ազատ հորինումներ են՝ օժտված գեղեցիկ այլազանությամբ, այդ իսկ պատճառով դյուրին ըմբռնելի և սրտմգրավ են մանավանդ, երբ կպահլիճն եղանակներու հարազատությունը և չեն աղարտվիլ օտար տարրերով: Իր կենաց պատմիչը հետևյալ վկայությունը ունի այս մասին. «Թեև հրաշալի են իր երգերուն խոսքերը հասկցող միտքերու համար, սակայն ավելի զարմանալի են ճարտարությունը եղանակներուն, գորս իրարմե տարբեր կերպով կհորիներ նման մարդու մը, որ անսպառելի և առատ գանձարանն ճոխ և հարուստ միտքեր կարտաբերէ»:

Պարտական ենք Ընդհանրիին բոլոր աղոթասերներս: Իր երգերեն շատերը ոտանավոր աղոթքներ են արդեն. ոմանք հայցողական. օրինակ, «Անուստ լուսոյ»-ն. ուրիշներ՝ խոստովանողական ու զղջական. օրինակ, «Աշխարհ ամենայն»-ը, ոմանք դավանողական. օրինակ, «Աստուած անեղ»-ը: Սակայն իր աղոթասացությանց գլուխ-գործոցն է «Հաւատով Խոստովանիմ»-ը՝ բաղկացած 24 տուներն, ի դեմս օրվան 24 ժամերուն, և որոնք իրենց մեջ կխտացնեն հողելեններուս գրեթե բոլոր աղոթքի տեսակները (դավանողական, գլջական, աղաչական), որոնցմով կներկայանանք մեր Արարչին առջև, «ի նստել ի սան, ի վնալ ի ճանապարհ, ի ննջել եւ ի յառնել»՝ հայցելու համար երկնային ողորմություն և պես-պես շնորհներ մեր անձերուն համար, ինչպես նաև՝ «Ամենայն հաւատացելոց, իմոց եւ օտարաց, ծանօթից եւ անծանօթից,

կենդանաց եւ մեռելոց»։ մինչև իսկ թողություն կհայցենք մեր «թշմամեաց եւ ատելեաց» համար՝ մեզի դեմ գործված սեղքերուն փոխարեն, ու կաղերսենք, որ Աստված դարձի բերե զանոցք այն չարիքեն, զոր գործելու վրա են մեր պատճառով. «զի ոլորմութեան քում արժանի ելիցից. եւ ոլորմեա քո արա-
նածոց, եւ ինձ՝ յազվամեղիս»։

Մեծապես պարտական է մեր աստվածաբանությունը Շնորհալիին։ Օձ-տըված էր ան աստվածաբանական խոր գիտությամբ և հայեցողությամբ։ ԸՆԴՀԱՆՐԱՍՊԱՆԻ առաջին մասով իր ժողովուրդին կպարզե հայ եկեղեցիի հավատալիքները, հնարավոր պարզ լեզվով։ Իր նամակները, զորս գրած է Բյուզանդիոցի Մանվել կայսեր և Միքայել պատրիարքին. Հայց. եկեղեցիի դավանության դասական պատկերացումը կպարունակեն, և որոնք այսօր ալ նույնությամբ կրնան գործածվիլ։ Մեր ամենեն շատ հիշված հայրապետներեն է՝ ի պաշտպանություն հայկական ուղղափառության։ Ու աստվածաբանական այս ջատագովականները չեն բխիր թթու վիճաբանական տրամադրություններե, այլ խաղաղ ոգիով պարզսրբանություններեն քրիստոնեական հիմնական ճշմարտությանց։ Ծիսական և այլ երկրորդական կետերու համար քրիստոնեական եկեղեցին յաժաճելը կճկատե հակառակ Ավետարանից և Աստուծո կամքին։

Պարտական ենք Շնորհալիին ազգովին «հաճօրէն հայասեռ ազիմս», որոնց վերատեսչությունը իրեն վստահված էր Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրությամբ, և որոնց ուղղեց իր անգերազանցելի ԸՆԴՀԱՆՐԱՍՊԱՆ ԹՈՒՂԹԸ։ Այդ անդրանիկ կոնդակով «ողջուն սիրոյ եւ խաղաղութեան» կորկե «ընդհանուր հաւատացելոց հայկականացո սեռից, որք յարեւելս՝ ի սփական աշխարհս Հայաստանեայց բնակեալք, եւ որք յարեւմտեան կողմանոյ սասեալք նշդեհութեամբ եւ որք ի Միջերկրեայս՝ ի մէջ այլալեզու ազանց տարսբերեալք, եւ որք յիւրաքանչիւր եզերս աշխարհաց ըստ մեղաց մերոց ցըրուեալք ի քաղաքս եւ ի դռեակս, ի գիղս եւ յագարակս. որոց այդոցիկ ամենցունց՝ քահանայապետաց (եպիսկոպոսներուն) եւ քահանայից, վանականց եւ քաղաքայնոց, իշխանաց եւ իշխեցելոց, զինուորաց դասուց, ճիւղարժից եւ հետեւակաց, գաւառապետաց եւ գործակալաց, տանուտերաց եւ երկրագործաց, վանատականաց եւ տրուեստագիտաց (արհեստավորներու), եւ որոց միանգամ ի զանազան ճանապարհս ընթանան կենցաղոյս՝ ըստ ընտրութեան կամաց եւ յօժարութեան. արանց եւ կաւնանց, մանկանց եւ երիտասարդաց, կասաւրելոց (չափահասներու) եւ ծերոց, որք ըստ օրինաց աշխարհի քաղաքավարեալք, եւ որք գերաշխարհիկ են վարուք»։

Ու ժամանակակից ընկերության այս բոլոր այլազան խավերեն յուրաքանչյուրին իր հայրական ու հեղինակավոր խոսքը կուղե նորընտիր Հայրապետը։ Այնտեղ սրված հորդորները ի գորու են մինչև այսօր, դարերով պատգամ և օրհնություն ըլլալէ հետո հայ ժողովուրդի բոլոր խավերուն։ Անսպառ ներշնչումի առարկա եղած է այս թողթը Շնորհալիի հաջորդներուն, որոնցմե ոմանք, օրինակ, Հակոբ կաթողիկոս, 1288-ին, նույնությամբ ընդօրինակել տված ու դրկած է զայն իր հօտին, փոխան իր անդրանիկ կոնդակին։

Պարտական է, վերջապես, Շնորհալիին համայն քրիստոնեությունը, որովհետև, հակառակ բերդի մը մեջ գրեթե կղզիացալ վիճակին և հակառակ օտար լեզուներու տիրապետելու կարեւորութենեն զտրկ մնացած լլլալու հավանականության, քիչեր այնքան սերտորեն ու մտան հետաքրքրվեցան քրիստոնեական եկեղեցիներու հաշտեցման ու միության սրբազան գործով, որքան մերս Շնորհալին։

Պետք է հաստատել, որ այն միութենական աշխատանքները, որոնք գրավեցին իր հայրապետական պաշտոնավարության ամբողջ շրջանը, իր նախաձեռնությամբ սկսած ելան նախքան իր կաթողիկոսանալը, երբ հատուկ հանդիպում մը ունեցավ բյուզանդական կայսեր Երկայացուցչին և փեսային Կիլիկիո Մամեստիա քաղաքին մեջ 1165 թվին: Իբրև անկեղծ քրիստոնյա և գիտակից պաշտոնյա եկեղեցու, վրդովմունքով դիտած պետք է ըլլա Ներսես այն տգեղ պայքարները, որոնք տեղի կունենային մինչև իսկ իր անմիջական շրջանակի մեջ, ուր լատին կաթողիկը, հույն օրթոտոքսը և ասորի և հայ հակաքաղկեդոնականները շարունակ իրարու հետ վեճի մեջ էին, մահմետական ծովու մեջ, որ կապառնար կլանել զիրենք: Ու քրիստոնեից այս ցերքին պայքարը և բաժանյալ վիճակը շատ վնասակար կըլլար եկեղեցիներում՝ տկարացնելով զանոնք ամենուրեք ու մինչև իսկ բնաջնջելով զանոնք կարգ մը տեղերե: Ուստի Ներսես ազնիվ տրամադրություններով և հոգվով ու սրտով մտավ այս սրբազան գործին մեջ: Ու եթե գործնական պտուղ չտվին այդ գուլելի ջանքերը, գեթ տրվեցան միության գործին մոտենալու ամենեն առողջ սկզբունքները՝ հուսած Ծնորհալիի մեղրածոր գրչեն, որոնք նույնությամբ կրնան կիրարկվիլ այսօր միջեկեղեցական շրջանակներու մեջ:

Արդի ժամանակներու քրիստոնյա եկեղեցիներու պատմության ամենեն հատկանշական երևույթը իրարու մերձեցման ձգտումները և աշխատանքներն են, որոնք իրենց պտուղը տված են կազմությամբը **Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին**: Այս աշխատանքները ծանոթ են էբրումենիք շարժում միջեկեղեցական բացատրությամբ: Կիրկենք, քրիստոնեական եկեղեցիները միացած տեսնելու խոր ցանկությամբ լեցված հոգի մըն էր Ծնորհալին Ներսես: Այս հարցին իր մոտեցումը սակայն չմնացնելով իրմե առաջվան մեր կարգ մը հայրապետներու ամբողջական հարումին դեպի բյուզանդական եկեղեցին, ոչ ալ իրմե հետո եկողներեն ոմանց գրեթե ստրկական ենթարկումին պապական եկեղեցիի պահանջներուն: Հսկա այս եկեղեցիներու դիմաց կեցավ Ծնորհալին քրիստոնեական համբուրելի խոնարհությամբ, բայց միաժամանակ իր կրոնքին իրեն պարզևած առաքելական ազատությամբ, որուն ջատագովը ամենեն առաջ Պողոս առաքյալը եղած էր, իր «Ո՛հ ապաքեն ազաս եմ» բացականչությամբ. (Ա Կորնթ. Թ 1) և «Այլ վերինն Երուսաղեմ (եկեղեցին) ազատ է, որ է ՄԱՅՐ ՄԵՐ» սկզբունքով (Գղտ. Դ 26). կամ՝ «Ազատութեամբն՝ որով Քրիստոս զմեզ ազատեցուց» ավետարանական ճրջմարտությամբ (Գղտ. Դ 31): Ծնորհալին, իբրև գիտակից քրիստոնյա և գլուխը Հայց. եկեղեցիի, գիտեր, թե կվայելեր այդ ավետարանական ազատությունը, զոր փոխել պիտի չուզեր ոչ մեկ տեսակի հպատակությամբ: Ուստի կրնար անայլայլ ըսել դիմացիներուն. եթե պետք ըլլա մինչև իսկ կարգ մը գիշումներ ընել մեր կողմեն, այդ պիտի ընենք «ոչ թե մոլորութենե ճշմարտության դառնալու ոգիով, այլ աստվածային սիրո հաղորդությունը վերահաստատելու մտքով»: Ու պիտի եզրակացներ. «Ջիջում ընելը լոկ մեր սյարտավորությունը պիտի չըլլա, այլ նաև ձերինը: Ձեր կողմանց ալ, եթե կան ինչ-ինչ կետեր, որոնք զայթակողություն կպատճառեն մեզի, պետք է մեջտեղեն վերցրնել, եթե հաճո թվի ձեզի, երբ մենք ս. Գրքեն վկայություններ դնենք ձեր սուղերը՝ անոնց սխալ ըլլալը հաստատելու համար:

Ու Ծնորհալի Հայրապետը միարարական հարցին մոտեցավ նոր սկզբունքներով և տարբեր անդյունակետե, քան ինչ որ եղած էր ցարդ: Վիճարհանության ծանրության կեղորոնը այլուր փոխադրեց այն վիճելի կետերեն, որոնց

կառչելով գիտեր, թե ամենաթեւի պիտի ըլլար հասկացողության և համերաշխության հանգիլ: Պարզ օրինակ մը, կլսեք Շնորհալին, երբ մենք հունվար 6-ին կտոնենք ս. Ծնունդը և մյուսները՝ դեկտ. 25-ին, կարծորը թվականները չէին, այլ տոնակատարության մեջ դրված ոգին: Հակասակ այն իրողության, որ Շնորհալին Ավետարաններու տվյալներով իսկ փաստել փորձեր էր, որ հունվար 6-ն է ս. Ծննդյան ճշգրիտ թվականը, սակայն կեզրակացներ. «Թրվականը չէ կարևորը, այլ այդ սոցը Աստուծո փառքին համար կատարելն է»: Ուրիշ տեղ կըսե. «Սուրբ Աստված (սոքաասցությունը) եթե ի դեմս Երրորդության ըսվի, ինչպես դուք կընեք, ու եթե ի դեմս Որդիին մայն երգվի, ինչպես մենք կընենք, երկուքն ալ հանո են Աստուծո, երբ կըսվին առանց հակասկության ոգիին»:

Մինչև իսկ գայթակղության գլխավոր քարը եղող «ԵՐԿՈՒ ԲՆՈՒԹՅՈՒՆ ըսելեն ալ չենք փախչիր», ըսավ Շնորհալին, «եք այդ բանաձևը Քրիստոսի մարդկային և աստվածային բնությունները ԲԱԺԱՆԵԼՈՒ Եսայտաբով չըսվիր, ըստ Նեստորի, այլ երկու բնությանց ԱՆՇՓՈԹՈՒԹՅՈՒՆԸ ցույց տալու համար ընդդեմ ոչ ուղղափառ Եվտիքեսի և Ապոդեմարի»: Ու կշարունակե Շնորհալի Հայրապետը. «Թեպետ Քրիստոս ՄԵԿ ԲՆՈՒԹՅՈՒՆ ունի, կըսենք մենք, սակայն այս բանաձևը բնությունները շփոթելու համար չէ կերտված, այլ երկու բնությանց իրարու հետ անճառ միավորությունը բացահայտելու համար հորինված է: Այլապես հարկ էր երեք բնություն իմանալ Քրիստոսի մեջ, երկուքը՝ մարդկայինները, այսինքն հոգեկանը ու մարմնականը, իսկ երրորդը՝ աստվածայինը: Բայց միավորութենեն հետո բաժանումներու երկվորությունը մեջտեղեն վերցվեցավ՝ ըստ սուրբ վարդապետներու հաստատումից: Արդ, եթե ՄԻ ԲՆՈՒԹՅՈՒՆ բանաձևը անբակտելի և անբաժանելի միավորության համար կըսվի, ու եթե ԵՐԿՈՒ ԲՆՈՒԹՅՈՒՆ բանաձևը անշփոթ և անալլալելի ըլլալուն համար կըսվի և ոչ՝ բաժանման համար, ԵՐԿՈՒ ԲՆ ԱՆՈՒՂՎԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՄԵՋ ԵՆ»: Ըստ այսմ Շնորհալին կը պաշտպանե «ՅԵՐԿՈՒՅ ԲՆՈՒԹԵԱՆՅ ՄԻԱԽՈՐՈՒԹԻՒՆ» բանաձևը, որ կենթադրենք, թե երկու կողմերուն ալ ընդունելի կրնար ըլլալ, եթե հարցին մտնեցային աննախապաշար միտքով: Ամեն պարագային, Շնորհալին առանց քաջելու կհաստատե, որ միության գործը «ոչ թագավորական ահարկու գործությամբ, այլ քաղցրագույն խոնարհությամբ» միայն կրնա հաջողի:

Այս կապակցությամբ Շնորհալին կհիշատակե, թե նույն միջոցներուն Հոովմի քահանայապետը պատգամավորներ դրկած է արդեն Բյուզանդիոն, «վասն միաբանութեան հաւատոյ», իսկ ասորվոց պատրիարքն ալ իրեն դիմում կատարած է նույն հարցի մասին. այս գուզադիպությունները նախախնամական կնկատե, բոլոր եկեղեցիներու միջև միություն հաստատելու համար. ուստի, կառաջարկե. «Ի պատշաճ ժամանակի ժողով ունենալ և խոսիլ իրարու հետ Աստվածաշունչ գիրքեն, որպեսզի եթե գտնվին ավանդություններ, որոնք դուրս նկատվին աստվածադիր կանոններեն, վերցնենք մեջտեղեն երկու կողմերեն ալ և պակասը լրացնենք միաբանական սիրով»:

Ու կհաջորդեն քաղցրությամբ օծուն այնպիսի տրամաբանական արտահայտություններ, զորն ևս թարգմանաբար հառաջ բերելու փորձության չենք կրնար դիմադրել՝ հակառակ մեր գրությունը նախատեսվածեն ավելի երկարելուն: Կշարունակե սրբազան Հայրապետը առ Մանվել թագավոր ուղղած իր թողթին մեջ:

«Ձեր ներող քաղցրութենեն այս ալ կխնդրենք. եթե Աստված տնօրինե որ դեմ առ դեմ խոսիք իրարու հետ միաբարական այս հարցերու մասին,

այդ խոսակցությունը պիտի չլլա որպես տերերու՝ հանդեպ ծառաներու, ոչ ալ ծառաներու՝ հանդեպ տերերու, որովհետև եթե դուք մեր պակասությունները դենք մեր առջև, ու մենք չհամարձակինք Ձեր նկատածման հակձնել ձերիններեն մեզի գայթակղություն պատճառող կետերը, այն ատեն մարմնավորներու օրենքով շարժած կըլլանք և ոչ՝ հոգևորներու, որովհետև թեև նյութական մարզին և իմաստության մեջ մեզ կգերազանցեք, սակայն աննյութական շնորհաց մեջ մեկ եմ Քրիստոսի հավատացողները, ըլլան անոնք մեծամեծներ կամ փոքրեր, ըստ Պողոսի: Այնպես որ, եթե Աստուծո ռդորմությամբ Ձեր կողմէ սկսված այս գործը իր լրումին հասնի, ու եթե ժողովով մը քննարկութի ենթակենք այս խնդիրները, այն ատեն երկու բաժանյալ պատերուս անկյունի գլուխ և թագավոր դնենք ՔՐԻՍՏՈՍ ՎԵՄԸ, ինչ որ իրականության մեջ ալ այդպես է արդեն, դատավոր կարգենք առաքյալներու և մարգարեներու գիրքերը և եկեղեցիի ուղղափառ վարդապետները: Ու մենք իբրև դատախազ կենանք թագավորին և դատավորներուն առջև ու դատաստանով խոսենք կամքին համաձայն նկատեն, զայն ընդունինք առանց հակառակության: Եվ ինչ բաներ որ անոնք հաստատեն, թե ճշմարտութենե, հավատքի դավանութենե ու եկեղեցիի ավանդութենեն դուրս են, ըլլա մեր մեջ և ըլլա ձեր մեջ, անոնցմե հրաժարինք երկուքս ալ»:


Դժբախտաբար, սակայն, նախ բյուզանդական ու ապա Ռոմվենական եկեղեցիներ բոլորովին տարբեր ոգիով և տարբեր անկյունակետե մտնեցան հարցին, և այդ իսկ պատճառով վրիպեցալ միարարական սրբազան այս գործը, երբեմն ավելի դառնացնելով կողմերը և բաժանման պատերը ավելի ամրացնելով: Մին միությունը ըսելով կհասկնար հայ և արևելյան մյուս եկեղեցիներու միաձուլումը բյուզանդականին հետ, թե՛ վարդապետական և թե՛ վարչական մարգերուն մեջ, իսկ մյուսը՝ ամբողջական ենթարկում Հռովմի Պապին գերագույն իշխանության: Ենդրհալիին միարարական ըմբռնումը առողջ էր և ավետարանական, ու ներկա էքյումենիք շարժումը հազիվ կհասնի այդ բարձրության և լուսամտության, որուն մեջ էր Հայք. եկեղեցին 12-րդ դարուն մեջ: Մինչև իսկ Ռ. Ղ. Ալիշանի վկայությամբ միարարական հարաբերությանց մեջ «կիսայլի մեր Հայրապետի շնորհքն խոհեմության, խոհարարամտության, քաղցրության, արդարասիրության՝ միանգամայն և պաշտպանելու իր ազգն ու եկեղեցին՝ առանց ուրիշին դպչելու կամ հայտնի պակասություն մը ջատագովելու. ասոնց հետ մեկտեղ ունի վսեմական արժանապատվություն մ'ալ: Իսկ հունաց թե՛ կայսեր և թե՛ պատրիարքին թղթոց մեջ բավական չափավորության մը հետ տիրական և իշխանական ոգի մ'ալ չի ծածկվիր. և չկան այն գեղեցիկ և պիտանի իմաստքն, որով գարդարե ներսես իր թուղթերը»:

Աստվածային նախախնամությունը ներսեսի դիմաց հանեց միարարական այս հարցը, որպեսզի հունաց և լատինաց մեծ եկեղեցիները առիթը ունենային սորվելու, թե «որով ոգուով» պետք էր մտնեցային միարարական սրբազան գործին, այսինքն՝ ըստ առաքելական պատգամին՝ «մի՛ իբրև տիրելով վիճակաց, այլ օրինակ լինելով հոտին»: Կամ ճիշդ այնպես, ինչպես Մովսես մտնեցած էր անկեզ մորենիին. այսինքն հանելով «զկօշիկս» տիրակալության, կամ երեսը երկիր խոհարհեցնելով: Բայց անոնք չկամեցան հրաժարիլ իրենց կաղապարյալ տեսակետներեն, և հետևաբար ձախողեցալ այս գործը. քայն մնացին Ենդրհալիի միարարական թուղթերը իբրև հավերժական ուղեցույց՝ եկեղեցիներու միության, այսօրվան բացատրությամբ էքյումենիք շարժումին:

Երախտիք պարտինք Աստուծո, որ մեր պատմության գրեթե ամենևն տազնապալի մեկ շրջանին մեզի բնծայեց 'ներսեսը, որ կատարեց ճակատագրական դեր մը մեր պատմության մեջ, ինչպես կհատուաառե իր կեննագիրը «Երանելի Հայրս ի նուագեալ ժամանակի՝ յորում ձմեռն մեղաց տիրէր ի վերայ աշխարհիս, եւ մեզ թշուառութեան պաշարէր զմեզ՝ սոյն եւ գերութեան, երեւեցաւ ջահաւորեալ վարդապետութեամբ եւ լուսակրօն վարուք, եւ փարատեաց յաշխարհէ գմբրիկ մեղացն, եւ վերստին կաճաչացոյց զմեզ ի ձմեռային մեռելութենէն՝ յաճումն հոգեւոր չափոհասակի կատարմանն Քրիստոսի»:

Հարգանք, փառք եւ երախտիք Շնորհալի Հայրապետի մշտալառ հիշատակին:





ՍԻՈՆ ԱՐՔԵՊ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՇՆՈՐՀԱՆԻ ՄԵԾ ՀԱՅՐԱԿԵՏԸ

Հայ եկեղեցւոյ մեծաճուճ հայրապետներն ու սուրբերը լուսատու փարոսներու պես միշտ լուսավորած են հայ ժողովուրդի միտքըն ու հոգին: Հայաստանյայց եկեղեցին կենսունակ ու կենսատու հաստատություն մըն է, հավատքի ու յուսի վառարանը հայ ազգին, որուն ծոցին մեջ կապրին ու կենըջնչվին մեծ հոգիները մեր ազգին, ու կենըջնչեն իրենց հոտը: Անկե կընդունին հավատքի կայծը, աստվածային սիրո կրակը, և յուրացնելով զայն, իրենց հոգին խառնելով անոր հետ՝ զայն կիողխացնեն իրենց հաջորդներուն: Հիսուսի կենաց Ավետարանն ու հավատքի յուսը առաքյալներու ձեռքով բերվեցաւ Հայաստան, Լուսավորիչն ու իր արժանավոր զավակներն ու հաջորդները— Մեծն Ներսես, ս. Սահակ Պարթև, ս. Մեսրոպ Մաշտոց, Հովհան Մանդակունին, Հովհաննես Ծննցեցին, Նարեկացին և Շնորհալին, ու բոլոր հոգեւից առաջնորդներն ու հայրապետները հայ եկեղեցւոյ, եղան այդ անըջ յուսին լուսարարները, հսկեցին անոր վրա, առին ճառագայթներ անկե ու լուսավորեցին հայ ժողովուրդի սիրտն ու հոգին:

Ս. Ներսես Շնորհալին այդ լուսաշող դեմքերն մին է, ու մեծագույններն, ոչ միայն մաքրակենցաղ սուրբ մըն է ան, այլ նաև առաքելատիպ հայրապետ մը, հոգեշունչ աղոթագիր մը, աստվածատուր բանաստեղծ մը, շնորհալի երգահան մը, և անզուգական բարեկարգիչ մը:

ԻՐ ԿՅԱՆՔԸ ՔԱՆԻ ՄԸ ԲԱՌՈՎ.—Ս. Շնորհալին ձնած է ժԲ դարու արշալույսին, Կիլիկիո Շոպք դոյակին մեջ, որդին է նույն

քերդի իշխան Ապիրատին, մոտիկ ազգականը Վկայաներ Գր. կաթողիկոսին, և Գր. Մագիստրոսին: Յոթը տարեկանին որք կըմնա իր Գրիգոր եղբոր հետ, որ 12 տարեկան էր: Վկայաները անոնց խնամակալ կարգած էր Անիի հարսեղ կաթողիկոսը, որ անոնց դաստիարակությունը կհանձնեն Շուլրի կարմիր վանքի վանահայր Ստեփանոս Մանուկ առաջնորդին: (18 տարեկանին վարդապետ և երիտասարդ հասակին մեջ եպիսկոպոս ձեռնադրված ըլլալուն համար է որ Մանուկ անունը կկրէր Ստեփանոս եպիսկոպոս՝ ըլլալով իր ժամանակին մեծագուն դեմքերն մին): Ներսես կարմիր վանքի մեջ Ստեփանոս վանահոր ձեռքին տակ ստացաւ խնամյալ կրոնական կրթություն, ու երիտասարդ տարիքին վարդապետ և եպիսկոպոս ձեռնադրվեցաւ իր Գրիգոր եղբոր ձեռքով, որ իրմե հինգ տարիով մեծ ըլլալով՝ կաթողիկոս օծված էր՝ Գրիգոր Գ Պահլավունի անունով հայտնի:

Ներսես եղաւ իր եղբոր աջ բազուկը, անոր երկար կաթողիկոսության շրջանին: Իր եղբոր մահեն վերջ կաթողիկոս ընտրվեցաւ այնփառ հասակին մեջ, 1186-ին, ու միայն 7 տարի վարեց հայրապետական պաշտոնը, կնքելով իր արդյունալից կյանքը 73 տարեկանին:

Քե ինչո՞ւ Շնորհալի կկոչվի.—կարմիր վանքի Ստեփանոս Մանուկ առաջնորդի աշակերտներն Շնորհալի տիտղոսը կկրեն նաև հարսեղ, Իգնատիոս և Սարգիս վարդապետները, որոնք Ներսեսի դասընկերներն էին: Բայց, Ներսես, ամենն ավելի

փայլեցալ անոնց մեջ հանճարով ու շնորհքով, ու Շնորհալի անունով անմահացալ: Ատեփանոս Մանուկ ավելի զարկ տված էր ս. Գրոց մեկնության, իր աշակերտներէն Ն. Շնորհալին գրած է Մատթեոսի Ավետարանին մեկնությունը, Բարսեղ Շնորհալին՝ Մարկոսի Ավետարանին, Իգնատիոս Շնորհալին մեկնած է Դուկասի Ավետարանը, և Սարգիս Շնորհալին հեղինակն է Կաթողիկոսյաց 7 թուղթերու մեկնության գիրքին:

Կարմիր վանքի դպրոցի պատվանուկը եղած կրփի ըլլալ Շնորհալի տիտղոսը, ինչպես Սյունբաց դպրոցինն էր Քերթող (քանաստեղծ) և Արագածոտնինը՝ Իմաստասեր, ինչ որ կհայտնե դպրոցի ուսման ուղղությունը:

Ն. Շնորհալին կկոչվի նաև Կլայեցի, Հրոմվկայի կաթողիկոսարանին անունով:

Շնորհալին առանձին տոն չունի մեր Տոնացույցին մեջ, այլ կտոնախմբքի ս. Թարգմանչաց վարդապետաց հետ, ինչպես նաև Նարեկացին, որ ժ դարուն կապեր, պատճառը—որովհետև անոնք Աստվածաշունչի իմաստին ու խորհուրդին թարգմանիչները եղան, թեև ոչ անոր բառերուն ու տառին: Անոնք թափանցեցին Կենաց Մատյանի աստվածային պատգամներուն, ներշնչվեցան անոնցմով ու զայն մեկնեցին, թարգմանեցին հայ ժողովուրդին համար, Շնորհալին եղալ Ավետարանի սիրո քարոզիչ մը ու մեծ առաքյալ մը:



Իբրև կաթողիկոս.—Շնորհալին հայ եկեղեցվո մեծագույն հայրապետներէն միմ եղալ, սակայն կարճ շրջան մը միայն հովվեց հայ ժողովուրդը, թեև ավելի գործեց և օգտակար եղալ իր վարդապետության ու եպիսկոպոսության շրջանին, երբ, երկար տարիներ իր կաթողիկոս եղորո աջ բազուկը հանդիսացալ:

Քաղաքական խառնաշփոթ շրջանի մը մեջ պաշտոն վարեց, Էջմիածնէն հեռու, որ պարսիկներու իշխանության տակ կգտնվեր, Անին կործանված էր: Կիլիկիո լեռներուն ու բերդերուն մեջ հայ իշխանապետություններ հաստատված էին, և Ռուբինյանց թագավորությունը կգործադար: Քաղաքական իշխանության հովանիին տակ էր հոգևոր իշխանությունը: Խաչակիրները Եվրոպայեն կուգային ս. Երկիրն ու Փրկչի ս. գերեզմանը ազատագրելու մեծուքներու իսլամ բռնակալության լուծեն, հայ թագավորներն ու իշխանները ապագայի ազատության մեծ հուսներով ու երազներով արթըլի, ամեն օժանդակություն կընծայեին խաչակիրներուն, անոնց հետ քաղաքական հարաբերություններ ձևակերտվ, կաթողիկ վանքերն ու եկեղեցիներն

յը կբազմանային Կիլիկիո մեջ հայ ժողովուրդը որսալու համար:

Միննույն ատեն, իր եղբոր, Գրիգոր Գ Պահլավունիի հայրապետության շրջանին, հույները կհուլիին միության խնդիրը, հունաց Կիո Մանվել կայսրն ու Միքայել Պատրիարքը պատգամավորներ դրկած էին հայոց կաթողիկոսեն, որուն բանագնացն էր իր եղբայրը Ներսիս: Շնորհալիի սիրտը քրիստոնեական սիրով լեցուն էր, սակայն, տեսալ թե հունաց նպատակն էր հայ եկեղեցին ծուլել և հունացնել, հուսախար եղալ մեծահոգի Շնորհալին, ու արտյան կանգնեցալ Հայոց եկեղեցվո ուղղափառ դաժանության և անկախության:

Իբրև հայրապետ Լուսավորչի Այսոռիկ վրա բազմած ատեն գրեց իր անդրանիկ կոնդակը, ընդարձակ, խնամյալ հայերենով ու ներշնչումով. «Ընդհանրական թուղթ»-ը, անգուգական գործ մը, որ դարերու ընթացքին իրմե հետո ուղեցույցը և օրինակը եղալ հայ եկեղեցվո հայրապետներու անդրանիկ կոնդակներուն:

Բանաստեղծ ու երածիշտ Շնորհալին.— Երկու տաղանդներ այնքան գեղեցիկ ներդաշնակությամբ միացած Ներսեսի վրա, պարզ և անսեթեթ, հստակ և սիրուն կառուցվածքով իր հոգեշունչ երգերն ու շարականները զարդարած է մեղանույց ու սրտագրալ եղանակներով երգահան Շնորհալին, իր միտքին ու հոգիին մեջ բառն ու եղանակը միասին ծնունդ առած են, անբաժան լույս տեսած են սրբազան ներշնչումով:

Հայ մատենագրության արծաթի դարուն մեծագույն դեմքն է Շնորհալին, լուսատու օսմը: Իր գեղեցիկ լեզուն արծաթի հնչականությունը ունի, որուն մեջ կնշմարվի տակավին դասական լեզվի ոսկի քարքարը:

Իր գրական երկերու ցանկին վրա են նաև «Յիսուս Որդին», «Վիպասանութիւն», «Ողբ Եղեսիոյ», «Հաւատով Խոստովանիմ», ու անթիվ երգեր ու շարականներ, աղոթքներ ու տաղեր, առակներ ու հանելուկներ: Շնորհալին մեծապես ճոխացուց մեր Ծարակնոցն ու Ժամագիրքը,—Եթե Ծարականի առաջին հեղինակներն եղան ս. Սահակ ու ս. Մեսրոպ, Մովսես Քերթոզն ու Մ. Խորենացին, Ա. Եիրակացին, Հովհան Մանդակունին ու Հ. Իմաստասեր Օճնեցին, Կոմիտաս ու Պետրոս Գետադարձ կաթողիկոսները, Գր. Մագիստրոսն ու Ն. Լամբրոնացին, Վարդան ու Հովհ. Պլուզ վարդապետները, Ատեփանոս Սյունեցին ու Կիրակոս Երզնկացին, և ուրիշներ, սակայն, Շնորհալին ամենքն ալ գերազանցեց թե որակով և թե քանակով, ու քազմաթիվ ընտիր, պարզ ու հոգեզմայլ երգերով ու շարականներով հարստացուց մեր Ծարակնոցն ու Աղոթագիրքը: Ավագ տոնե-

րու և Ավագ օրհնություններու, Ծաղկազար-
դի, Հոգեգալուստի ու Վարդավառի, Վար-
դանանց ու Ղևոնդյանց շարականները, Ա-
րեւիկայի երգերն ու աղոթքներն ոմանք,
Եկեղեցի ու Խաղաղակահի, Այլ ու Հացից և
Ավագ շաբթու շարականներու մեծ մասը իր
ուսկի գրչեն ու իր աստվածատուր հանճարեն
քիած են: Իր անմահության վիտապասկը
կկազմեն մասնավորաբար այն անպաճույն
ու հոգեհույզ երգերը, որոնք ծանոթ են ամեն
հայ հավատացյալի,—«Զարթոյք»-ը, «Առա-
ւօտ լուսոյ»-ն, «Աշխարհ ամենայն»-ը, «Այ-
սօր անճառ»-ը, «Արարչական»-ը, «Աստ-
ուած անեղ»-ը, «Նայեաց սիրով»-ը, և այլն:
Ասոնք կկոչվին Աճճինք, այրութեանկան
կարգով գրված, և ՅՅ տուներն բաղկացած
են: Ինչպես առաջին անգամ Կոմիտաս կա-
թողիկոս, Է դարուն գրեց Հոփիսիմյանց շա-
րականը. «Աճճինք Նուիրեայք» սկզբնա-
վորությամբ: Ընդհանրի երգերն ու շարա-
կաններն շատերը իր անվան սկզբնատա-
ռերով կսկսին, կազմելով «Ներսէսի երգ»,
գոր օրինակ Վարդանանց «Նորահրաշ»-ը:

Վսեմ տեսիլքի ու շնորհալի հոգիի մար-
գարիտներ են իր երգերը, և ո՛րքան պարզ ու
հասկնալի—«Առաւօտ լուսոյ, Արեգակն ար-
դար, Առ իս լոյս ծագեա», կամ «Սէր անուն
Յիսուս, Սիրով քով ճմլեա, Սիրտ իմ քա-
րեղէն», և կամ «Լոյս, արարիչ լուսոյ, առա-
ջին լոյս, բնակեալդ ի լոյս անմատոյց, Հայր
երկնատոր»: Իսկ «Հաւատով Խոստովա-
նիմ»-ը համապարփակ աղոթք մըն է, օր-
վան 24 ժամերուն յուրաքանչյուրին տուն
մը հատկացված, և որ ՅՅ օտար լեզուներու
թարգմանված է:

Ընդհանրի հարեկարգիչ հայ եկեղեցվո.—
Քրիստոսի եկեղեցին աշխարհի մեջ ապրող
ու գործող կենսունակ հաստատություն մըն
է, ժամանակի ընթացքին կաճի ու կզարգա-
նա: Հայաստանյայց եկեղեցվո հոգելից հայ-
րապետներն ու մեծանուն առաջնորդները
գայն բարեկարգեր են միշտ, նոր լույսով
զարդարեր են գայն ու ճոխացուցեր: Մեր ե-
կեղեցվո առաջին մեծ բարեկարգիչն է ս.
Գր. Լուսավորիչ, Քիմնադիրը ս. Էջմիածնի
Մայր Աթոռին, երկրորդն է Մեծն Ներսես
Պարթև, հայ սիրտի Լուսավորիչը, Քիմնա-
դիրը գթությանց հարկերու, վանքերու և
դպրոցների: Երրորդը ս. Սահակ և ս. Մես-

րոպ, անբաժանելի գույզը, հայ միտքի լու-
սավորիչները, հայ գիրերու հնարիչները ու
Աստվածաշունչի անմահ թարգմանիչները,
մեր եկեղեցվո հայացման առաջին ուսուցի-
րաները, ապա կուգան Ն. Ընդհանրի, Հույ-
հան Որոտեցիցն, Գրիգոր ու Մովսէս Տաթե-
վացիները և ուրիշներ:


ԺԲ դարուն, տակալին հայ եկեղեցվո
ժամասացության մեծ մասը կբաղկանար ս.
Գրոց երկար ընթերցումներն, ու մասնավո-
րաբար վոխասաց և ձայնավոր սաղմունք-
գություններն, Ընդհանրի հորինեց նոր եր-
գեր ու շարականներ, պարզ և հստակ լեզ-
վով, սակայն իմաստալից ու ճերմակալ, և
մանավանդ հանգալոր ու կշռույթով. ներ-
դաշնակ երգեր, ու տալլապիլայ շարա-
կաններ, եկեղեցին ավելի մատչելի ու սի-
րելի դարձուց ժողովուրդին, քանի որ երա-
ժըշտությունը աղինքնող է ու խորհրդավոր,
և սիրելի նույնիսկ ամենն ուսուցիչ դասա-
կարգին: Նոր կանոններով և թուղթերով
բարեկարգեց հայ եկեղեցին, վանքերն ու
թեմերը, զեղծումներու և անկարգությունե-
րու դեմ խիստ օրենքներ սահմանեց: Իր
«Ընդհանրական թուղթ»-ով մասնավոր հրա-
հանգներ և պատվերներ տվավ թուր դա-
սակարգերուն՝ եկեղեցականներն սկսյալ
մինչև հասարակ գյուղացիները, յուրաքան-
չյուրին առածին գլուխներ հատկացնելով՝
այսպես—վանականներուն և առաջնորդե-
րուն, եպիսկոպոսներուն և քահանաներուն,
իշխաններուն և զինվորականներուն, պաշ-
տոնյաներուն ու երկրագործներուն, կանանց
դասին, ու վերջապես համուրեն հայ ժողո-
վուրդին:

Ընդհանրի մեր եկեղեցիին տվալ իր հայ-
կական նկարագիրը, ու ցեղային կնիքը, Քիմ-
նրված Հիսուսի սիրտ և լույսի Ավետարանին
ու առաքելական հավատքին վրա:

Առանց Ընդհանրիին հայ եկեղեցին պիտի
աղքատանար իր հոգևոր ժառանգութենն
ու իմացական գանձերն, իր հոգեշունչ ա-
ղոթքներն ու մանավանդ հոգեզմայլ տա-
ղերն ու շարականներն:

Հայաստանյայց եկեղեցվո մեծագույն ու
լուսավառ սուրբերն մին է ան: Իր Ընդ-
հանրի հոգին անլուելի կերպով կխոսի հայ ե-
կեղեցվո մեջ, ու հոգևոր սնունդ կջամբե հայ
ժողովուրդին:





ՍԵՐՈՎԱՅ ԱՐՔԵՂ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԵՐԱԽՏԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՍՔ Ա. ՆԵՐՍԵՍ ԾՆՈՐՀԱԼՈՒ ՀԻՇՍԱԿԻՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կոնդակը, նվիրված Ներսես Ծնորհալիի մահվան 800-րդ տարեդարձին, մեծ խանդավառությամբ և երախտագիտությամբ ընդունվեցավ ամբողջ հայության, մասնավորաբար արտասահմանի հայության կողմն: Արտասահմանի բոլոր եկեղեցիներուն մեջ այս եղանակե՞ն սկսյալ հաջորդաբար կկատարվին կրոնական և գրական հանդիսություններ՝ ոգեկոչելով Ներսես Ծնորհալիի հիշատակը եկեղեցիներու, գրական ասուլիսներու և զանազան հավաքություններու մեջ, որպեսզի հավատացյալներու և հայ մարդոց միտքերու մեջ դրոշմվի անոր սուրբ և քաղցր հոգին:

Ներսես Ծնորհալին իր հանգամանքով, որպես կաթողիկոս Ամենայն Հայոց, իր անձին առաքինություններով, իր մտքին քազմազան շնորհներով տիրապետած է ոչ միայն իր ժամանակի մարդոց միտքերուն, այլ մանավանդ անկե հետո եկող բոլոր սերունդներու հոգիներուն:

Մեր մեծապայծառ, լուսավոր և մեծագործ հայրապետներեն մին եղած է անհկա: Մեր պատմության մեջ ամենեն քաղցր, ամենեն անուշ և ամենեն հեզ հոգին, երբ հարկը պահանջեր սակայն, այդ քաղցրության և հեզության մեջ ամենեն հզոր ուժը եղած է՝ ի պաշտպանություն Հայաստանյայց առաքելական եկեղեցվո:

Մեր արծաթյա դարուն զուտ և հնչուն ոսկին է անհկա՝ Եզնիկի պարզ ոճով և Եղիշեի բանաստեղծական թռիչքով: Իր գրականությունը, մասնավորաբար իր երգերը կցույցեն իր մաքուր և անուշ հոգին:

Մասնավորաբար իր աղոթքները, իր երգերը լույսի և հավատքի երգեր եղած են: Եվ մեր ժողովուրդը, կրնամ ըսել, որ ս. Գրիգոր Նարեկացիին հավասար սիրած, հարգած և նույնիսկ պաշտամունքի առարկա ըրած է անոր անձը և անոր հոգևոր երգերը: Եթե Գրիգոր Նարեկացին իր հզոր և բարձրորակ ոճով միմիայն զգացված է հասարակ ժողովուրդին կողմն, ս. Ներսես Ծնորհալին


իրապես ապրված է հայ հավատացյալին կողմէ: Ո՞վ չի հիշեր իր «Աստուծոյ լուսոյ, Արեգակն արդար, Աս իս լոյս ծագեալ»: Ո՞վ կրնա մոռնալ իր «Լոյս, արարի: լուսոյ, առաջին լոյս»: Ո՞վ կրնա չտեսալորվիլ իր՝ Վարդանանց գորավարներուն նվիրված շարականով, որ ամբողջ հայ ժողովուրդի դիմադրության ոգին և ուզմանկան շունչն է, որ կենդանացնէ: Եվ տակալին իր սիրտ երգերը. «Մեր անուն Յիսուս, սիրով քով ճմլեա սիրտ իմ քարեղէն»: Եվ այսպես, Շնորհալին իր ամբողջ կյանքի ընթացքին եղավ լուսի և հավատքի երգիչը: Իր «Հաւատով խոստովանիմ»-ը հավատքի հզոր և քաղցր արտահայտությունն է: Ո՞ր մեկ դըպրոցական աշակերտը չի հիշեր «Հաւատով խոստովանիմ»-են, «Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն, զքարիս խօսել և խորհիլ»: Ո՞ր մեկ հավատացյալը, երբ երեկոյան քնացած պահուն, ճամբորդության ատեն, չարտասաներ «Պահապան ամենայնի Քրիստոս, աջ քո հովանի լիցի ի վերայ իմ, ի տուն և ի գիշերի, ի ճատիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ, ի ճնջել, և ի յառնել»: Անկէա իր անձով, իր երգերով, իր աղոթքներով ներկա է մեր եկեղեցիներում և յորաքանչյոր հավատացյալի հոգիին մեջ: Մեր ամբողջ պատմության ընթացքին, մասնավորաբար եկեղեցական պատմության ընթացքին, մեր ժողովուրդը զանազան մակդիրներով, որակած է իր մեծ զավակները,

մասնավորաբար իր մեծ հայրապետները: Սակայն այդ բոլոր որակումները, որոնք եղած են զանազան անձերու նկատմամբ, անոնք ժամանակի ընթացքին մոռցված և անհայտացած են: Միմիայն երեք անձեր մնացած են մեր եկեղեցւո պատմության մեջ, որոնց ժողովուրդի կողմէ տրված մակդիրները այլևս նվիրականացած և սրբացած են: Արդոնց առաջինն է անշուշտ ս. Գրիգորը՝ մեր հավատքին և մեր եկեղեցիին վերստնորոգիչը, որ Լուսավորիչ կոչված է, ինչպես և Խրիմյան Մկրտիչ Ա կաթողիկոսը, որուն ժողովուրդը Հայրիկ անվանած է, այնպես էլ Ներսես Դ կլայեցիւն մեր ժողովուրդի մեջ ճանչցված է Շնորհալի, Ներսես Շնորհալի և իր շնորհները, որ իր կենդանության ընթացքին տարածած է, իր ժամանակին տակալին անոնք կպտղաբերին և կլուսավորեն մեր եկեղեցիները և մեր հավատացյալ ժողովուրդը: Անոր համար թերևս ամենեն պատշաճ քացատրությունը կըլլա ս. գրական այն քացատրությունը, որով կսահմանվի ամեն շնորհներով և իմաստություններով լցված անձնավորությունները, «Այր լի շնորհօք և իմաստութեամբ»:

Իրավամբ ս. Ներսես Շնորհալին եղած է մարդ մը «լի շնորհօք և իմաստութեամբ» ոչ միայն իր ժամանակին, այլ նաև բոլոր ժամանակներու համար:

Հարգանք իր հավերժ թարմ և անմեռ հիշատակին:





ԱՐԱԳԵՆ ԱՐՔԵՊ. ԱՊԱՏՅԱՆ

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԿԵՐՍԵՍ ԾԵՈՐՀԱԼԻՆ (Մահվան 800-ամյակին)

Դժվար իր ամբողջական իմաստին և իտրոհորդին մեջ սահմանել հոգևորական բառը, որ մեր լեզվին ամենաարտահայտիչ եզրերեն մին է: Հոգևորականի տեղ ուրիշ լեզուներ ունին կրոնական կամ եկեղեցական քառերը, քառեր, որոնք գործածական են նաև մեր ալ մայրենիին մեջ: Բայց մենք շեշտը կուգենք դնել քառին լեզվաբանական առումեն ավելի անոր իսկության վրա: Կարծեք հոգևորական եզրին մեջ նշանակել կուզվի եկեղեցականի պաշտոնին լրությունը և սրբությունը: Ի վերջո, կրոնականը ծառայող է կրոնքին, առավելագույն՝ կրոնական սկզբունքներուն քարոզիչը, իսկ եկեղեցականը՝ պաշտոնյան հաստատության մը, որ որոշ ընկերություն մը կհատկանշե հստակ ծրագրով և սկզբունքներով: Ինք՝ եկեղեցականը, այդ հաստատության մեջ ընտրված ներկայացուցիչն է, տեսակ մը գործավարի հասկացողությամբ: Այդ է, որ շատ անգամ պարկեշտ եկեղեցական մը կսահմանվի իր գործին հանդեպ ցուցաբերած եռանդին և պատասխանատվության զգացումով: Խրդնամիտ աշխատանք մը կբավե հաճախ գնահատությունը ըլլալու եկեղեցվո պաշտոնյային:

Իր լայն իմացումին մեջ, սակայն, հոգեվորականը կընդգրկե ոչ միայն եկեղեցականի մը ամբողջական գործունեությունը, այլ է նաև ավելի քան մը: Ան այդ գործունեության կոչվածն է իր խառնվածքով, իր ոգևորական մղումներով, ձգտումներով, որոնք կը-

խանդավառեն զինք քարծրագույն իրականացումներու, հոգևոր և քարոյական սկզբունքներու նվաճումին գիտակցությամբ: Ան գործողը չէ միայն, այլ ապրողը նաև: Քարոզիչը չէ լոկ քարոյական և կրոնական ճշմարտություններու, այլ կիրարկողը զանոնք իր անձնական կրանքին մեջ, որ մեծագույն քարոզն է ինքնին, ամենահամոզիչը բոլոր փաստարկություններուն: Քրիստոնեության թե՛ հստոյությունը և թե՛ ձախողությունը ծնունդն են այս սկզբունքին: Ունէ՞ ճշմարտություն կայահանջե իրագործում կյանքի մեջ, որպեսզի հասկնալի դառնա մարդուն համար: Չապրված ունէ սկզբունք մեռյալ տարր է, ինչպես մեռած էր Քրիստոսի քարոզության օրելուն հրեական օրենքը, պարզված ըլլալուն համար ոգին, որ կյանքն է ինքնին: Այս հաստատումը ճիշդ բոլոր գաղափարական ուսուցումներուն համար:

Մեր միտքը ամփոփելով լոկ քրիստոնեական գաղափարականին շուրջ, որ գերազանցն է և վսեմագույնը բոլոր վարդապետական հղացումներու մեջ, պիտի ըսենք, որ Հիսուսի կրոնին թե՛ ջատագովները և թե՛ հակառակորդները իրավունք ունին, երբ զայն կդիտեն Ավետարանի սկզբունքներուն և ճշմարտությանը կիրարկման ճանքով զայն դավանող ընկերության կյանքին մեջ: Ավետարանը ի վերջո լոկ հայտարարություն կըմնա, աստվածային պատգամներու իր անհասանելության մեջ, եթե ան չլերածվի անհնարաւ կենցաղի, վարմունքի, գործունեու-

թյան կանոնի մը: Պետք է ընդունինք, որ քրիստոնյա ընկերությունը չէ արդարացուցած իր կոչումը, որ մեզի ենթադրել կուտա անկարելիության մը մասին, որ գամե մոտիկ ապագային սիրո և խաղաղության ուզիմ տիրող և զսպանակող ուժը դառնա մարդկային գոյակցության: Երկու հազար տարիներ են անցած Քրիստոսի օրերեն և նույն են մեղքերը ընկերության: Ս. Ներսես Ծնորհալիի ախտաճանաչումը հանգամանորեն ներկայացված իր ԸՆԴՂԱՆՐԱԿԱՆԻՄ մեջ, այժմեական է մեր օրերուն համար ալ, ինչպես էր Ավետարանի քարոզության սկզբնական շրջանին: Բայց էթն դժվար է փոխել մարդը, իր բնությանը անմիջականորեն, հրաշքի համագոր ազդեցությամբ մը, այդ ըսել չէ, որ ճշմարտությունները պետք չէ հայտարարվին: նույն ուժգնության և շեփորումով բոլոր ժամանակներու մեջ և բոլոր բեմերեն: Եվ բեմերուն ամենեն ազդեցիկը անձնական օրինակն է, գերազանց մարդը իր հավատքի, նվիրումի, ոգեկանության անսպառ խանդավառություններով: Ու քիչ են թիվով այդ որակի մարդերը. սակավաթիվ ընտրյալները ընկերության. նախառահամնվածներ անոնք, որոնք ընդհանրության հոգիին ամենեն վսեմագույն տենչանքներուն, ձգտումներուն, ազնվական խանդավառություններուն, քարոչական և հոգևոր ներշնչումներուն մարմնացումներն են, զազաթնացումները: Այդ քիչերուն է, որ կապարտի մարդկային ընկերությունը իր մշակույթն ու քաղաքակրթությունը: Մեծերն են, որ պատմությունը կգրեն և անցյալին հետավորութենեն իրենց անձին և վաստակին հրաշալի արևով կլուսավորեն ապագային ճամբաները:

Ս. Ներսես Ծնորհալիի մեր ժողովուրդի պատմության մասն այդ քիչերեն է: «Բագու մը են կոչեցեալք եւ սակաք ընտրեալք»: Արդյո՞ք պետք է մտածել ճակատագրականության մը մասին, որ կորոշե ընտրյալները և անոնց կուտա շնորհը տիրելու ժամանակներու վրա, խորտակելու մոռացումի պարիսպները, լայննալու և մեծնալու հոգիներու մեջ, լույս դառնալու իրենց բոցարձակ անձով ժողովուրդներու ոգեկան աշխարհեններս, հոն ջերմացնելու համար սարսափող սիրտը միախարության տաք շունչով՝ կլանքի մութին, տագնապներուն և տառապանքներուն դեմ: Եվ զարմանալիորեն այդ ընտրյալները միշտ ոգեկանին առաքյալներն են: Անոնք, որոնք կաշխարհակալեն սրտերու վրա, որովհետև իրենց զենքը ավելի ազդու է քարոչական ըլլալուն համար և այդ իսկ պատճառով հավիտենական տիրապետություն է իրենցը: Այդպես են բոլոր մշակույթի մարդիկը. հոգիի ճարտարագետները:

Եվ մեծագույն արվեստը գուցե կատարյալին պատկուսով իրականացած կյանքն է, օրինակը, մտատիպարը: Հոս է, որ թիվը կպակսի ընտրյալներուն, մարդոց, որոնք ծաղկած և պտղաբերած ըլլան իրենց մարդկային բոլոր արժանիքներով անխցեկիորեն իրավ և վսեմ: Եղած են անշուշտ իմաստուններ, որոնց միտքը փայլ է տված և լույս գիտության, գրականության և փիլիսոփայության մարզերուն. քայց անոնք չեն եղած մտատիպարը մարդուն քարոչական ձգտումներուն: Սուս արվեստագետ մը չէ հոգևորականը, այլ այն մարդը, որ իմացումը ունի հոգիի քարոչականին, որ զինք կառաջնորդե քարձուքներ աշխարհի կիրքերեն և այնպե՜ս ծուլներեն ազատ աշխարհի մը իրականության, ուր կտիրեն հավերժորեն սերն ու խաղաղությունը: Աշխարհ փոթորիկն է հոգիին համար, ու սրբացած կյանքը արդյունք այն պայքարին, որ կմղե մարդը ի խնդիր հավիտենականին: Սրբությունը մեծագույն հաջողությունն է արվեստի մարզին մեջ, քայց ամեն արվեստագետ սուրբ մը չէ. ճշմարիտ հոգևորականը սրբության արվեստի մարզին նվաճողն է գերազանցապես: Ու ս. Ներսես Ծնորհալին և՛ իմացական, և՛ հոգեկան մարզերուն պատկանող անզուգական տիրանն է, ամբողջ մարդը, որուն վաստակը կոզևորե սերունդներ և որուն կյանքը կմնա օրինակելի անոնց համար, որ եկեղեցիին սպասին կնվիրվին:

Հրաշալի համադրություն մըն է ս. Ներսես Ծնորհալին մարդկային արժանիքներու և կարողությանց: Դաստիարակ է ան՝ մանկավարժի նորք զգայնությամբ օժտված, բանաստեղծ և երածիշտ, գրագետ և վարչական գործիչ, աստվածաբան և դավանական գիտության տեսաբան, մարդ և առաքյալ, քարիի, գեղեցիկի, ճշմարտության անխոնջ քարոզիչ: Ու տակավին սիրո, խաղաղության և միության զինվորագրյալ մարդն մարդ, եկեղեցիե եկեղեցի, աշխարհե աշխարհ, ափե ափ նետված կամուրջի մը պես, որ բնական աշխարհը կկապե գերբնականին, մարդը կվերացնե Աստուծո: Կանչ մըն է ան, ձեռք մը, սիրտ մը, արցունք, գուրգուրանք և սիրտիանք, աղոթք աղեքսարկու և խունկ անուշաբոյոյ, մարդկայնորեն աստվածային, տրվող, բաշխվող բոլորին, որ չմնա հոգի մը անարձագանք քարիի և գեղեցիկի ազդումներուն: Կարկաչաճոս աղբյուր մ'է ան, շտեմարանված սրբության ավազանի բխմամբ, որ դարերու ճամբաներեն հոգնաբեկ սերունդներուն կհայայնե կյանքին ջուրը, որ հագեցումն է արդարության և ճշմարտության ծաղալի հոգիներուն: Այդպես կզգա հավատացյալը եկեղեցիին մեջ, երբ խունկի գուլաներուն կզրկախառնվին Մեծ


Սուրբին գրած և եղանակած շարականնե-
րուն և աղոթքներուն ճնշուցները սրտա-
բույս և կտարածվին իբրև անհուն սփովանք
տառապած հոգիներուն վրա:

Հոգևորականը և աշխարհայինը երկու
հակընդդէմ եզերել կրօնին իրարու առաջին
ակնարկով: Անհաշտ երկու աշխարհներ, զոր
պիտի չկրնան մոտեցնել նույնիսկ փորձերը
կրոնքի մեծերուն: Պարզ է, որ աշխարհ կը-
կույի անընդհատ ոգեղինության դեմ: Սիրո
կրաշխի անձնակաւության և եսին գծում
փառքն ու սերը: Ըստհոգիտությունն ու ա-
զահությունն է անկուշտ նյութին, կոտմա-
հարե և կհալածե արդարությունը: Հպար-
տությունը ծաղրի կառնե խոնարհության ո-
գին: Հանդամությունը նսեմացնել կճգնի
հոգեկան գոհունակություններու առթած եր-
ջանկության զգացումը: Նյութը ի վերջո հա-
կառակորդն է հոգիին: Դրամը, տիրապետող
ուժը մարդուն կամքին վրա, Աստուծո տեղ,
որ պետք է գերակշռեր անանց արժեքներու
խոստումով մյուսին, որ կմոխրացնե երազ-
ները պահ մը բռնկում տալե վերջ տեն-
չանքներուն: Այս տրամաբանությանմ մար-
դը ճիշդ է, որ չի կրնար ըլլալ երկուքին
հետ. ծառա երկու տերերու. մին պետք է
առնե և մյուսը թողու: Հավատարմությունը,
ծառայությունը, միիրումը կրնան տրվիլ մեկ
տիրոջ միայն: Ասիկա ճիշդ՝ անատարկելի-
րեն:

Բայց տեղն է հաստատելու քրիստոնեու-
թյան ճշմարտությունը: Չկա սկզբունքներու
և նպատակներու երկվություն: Երկարատա-
յան վարդապետությունը ավետարանական
գաղափար մը չէ: Բացարձակը մեկ է միշտ,
որուն կոնիտին բոլոր գործունեությունները:
Այդ բացարձակը Աստվածն է, գերագույն
բարին և ճշմարտությունը: Եվ հոգևորակա-
նը, այն մարդը, որ հասած է այս գիտակ-
ցության ու իր մտքի, սրտի և հոգիի բոլոր
ուժերով և գործոցներով կզտնվի բացար-
ձակի ըմբռնողության պարունակին մեջ, իր
կյանքը նշանակետ ունի կատարելությունը
իբրև ձգտում և ապրում: Եվ այդ հափըջ-
տակության և խոր համոզումին մեջ ամեն
ինչ կենթարկե Աստուծո: Եվ այդպես իր
անճանափորությունը կարժևորվի բարիի և գե-
ղեցիկի իրագործումներով, կդառնա չույս,
հավատք և սեր: Հոգևորականը սրբության
տեսլահարց է ազնվագույն և անանց գոհա-
ցումներու ի խնդիր: Վսեմացած մարդն է
ան, սուրբը, Ներսես Շնորհալին, որուն
մարդկային կերպարանքին ընդմեջեն կցո-
լանա այնքան պայծառ ու գեղեցիկ Աստու-
ծո պատկերը: Մտատիպար հոգևորական,
որուն շունչը կենսավորեց Հայաստանյայց
սուրբ եկեղեցին և զայն ընծայեց Աստուծո,
հալիտենականության:

«Ջրոյս ի քոյոց Քեզ մատուցանեմք»:
Փառք իր սրբության և հանճարին:





ԿՈՐԱՅՐ ԱՌՔԵՊ. ՊՈՂԱՌՅԱՆ

**Ս. ՆԵՐՍԵՍ ԾՆՈՐՀԱԼՈՒ ԶԵՌԱԳԻՐ ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ Ս. ՀԱԿՈՐՅԱՆՑ ՎԱՆՔԻ
ԶԵՌԱԳՐԱՏԱՆ ՄԵՃ**

Ներսես Ծնորհալի պարծանքն է արծաթի դարուն: Ան ունեցած է բեղուն գրիչ, և տված հայ մատենագրության իր բարձրարժեք նպաստը բազմազան երկերով: Իր երկերը արժանացած են բազմաթիվ ընդօրինակությանց և կգրապեն հայկական ձեռագրատուններու մեջ պատվո բարձր տեղ: Հոս կը փորձենք ներկայացնել ինչ որ կգտնվի իր աշխատություններեն, ս. Հակոբյանց վանքի ձեռագրատան մեջ, գլխավորները առանձնապես, իսկ փոքրերը՝ ընդհանուր ձևով:

Ս.—Ողբ Եղեւիոյ, 10 օրինակ, ոմանք առանձին, ուրիշներ՝ իր չափաբանական այլ երկերուն հետ միասին, կամ տարբեր ժողովածուներու մեջ:

- 1.—Թիվ 476, ԺԸ դար, Գոտրագիր:
- 2.—Թիվ 1240, Երուսաղեմ, 1686, Գոտրագիր, գրիչ՝ Հովհաննես Երեց, հալեպցի, Ղալեմքյար:
- 3.—Թիվ 1386, Գոտրագիր, գրիչ՝ Գրիգորիս:
- 4.—Թիվ 1447, Գոտրագիր, գրիչ՝ Խաչատուր Երեց:
Նկար՝ Ներսես Ծնորհալի, էջ 14:
- 5.—Թիվ 1482, Երուսաղեմ, 1809, շեղագիր, գրիչ և ստացող՝ Մեսրոպ վրդ. Սկյուտարցի:
- 6.—Թիվ 1563, Կ. Պոլիս, 1817, շեղագիր, գրիչ՝ տ. Գեորգ Սրապյանց, Անկյուրիացի:
- 7.—Թիվ 1698, Բոլնեց գյուղ, 1814, գրիչ՝ Հակոբ:
- 8.—Թիվ 1860, բոլորգիր, գրիչ՝ Վահրամ:
- 9.—Թիվ 2125, Գոտրագիր:

10.—Թիվ 2803, Երուսաղեմ, շեղագիր, գրիչ և ստացող՝ Միմաս վրդ. Ամրիկյան:

Բ.—Յիսուս Որդի, 18 օրինակ, ոմանք առանձին, ուրիշներ՝ իր չափաբանական այլ երկերուն հետ միասին, կամ տարբեր ժողովածուներու մեջ: «Յիսուս Որդի»-ներեն շատերը միասին ունին նաև չափաբանական քանի մը գրություններ ևս, ինչպես նշված են մեր ձեռագրաց ցուցակներում:

- 1.—Թիվ 964, ԺԸ դար, Գոտրագիր:
- 2.—Թիվ 1208, Գոտրագիր:
- 3.—Թիվ 1238, ԺԵ դար, Գոտր-բոլորգիր:
- 4.—Թիվ 1240, տես «Ողբ Եղեւիոյ»:
- 5.—Թիվ 1338, բոլորգիր:
- 6.—Թիվ 1404, Ղրիմ, 1612, բոլորգիր, գրիչ՝ Ջաքարիա արեղա:
- 7.—Թիվ 1447, տես «Ողբ Եղեւիոյ»:
- 8.—Թիվ 1472, Գոտրագիր:
- 9.—Թիվ 1478, Թոխաթ, 1592, Գոտրագիր, գրիչ և ստացող՝ Մորան, որդի Միրաքի:
- 10.—Թիվ 1579, Գոտրագիր:
- 11.—Թիվ 1604, թվ. 1444, բոլորգիր, գրիչ՝ Սիմեոնով:
Նկար «Տեր Սր. Ներսես», էջ 5:
- 12.—Թիվ 1633, բոլորգիր: Նկար «Տեր Ներսես», էջ 4:
- 13.—Թիվ 1638, տես «Ողբ Եղեւիոյ»:
- 14.—Թիվ 1651, հաղեջ, 1623, բոլորգիր, գրիչ՝ Գրիգոր Երեց, ծաղկող՝ Սահակ, ստացող՝ Սահակ արք. Ծառախցի:
- 15.—Թիվ 1660, բոլորգիր, գրիչ՝ Վահրամ:
- 16.—Թիվ 1694, թվ. 1642, Գոտրագիր, գրիչ՝ Փիլիպպոս:

17.—Թիվ 2152, բոլորգիր, գրիչ և ստացող՝ Կիրակոս Կրոնավոր:

18.—Թիվ 2845, Հոատոզ, 1654, Գոտրագիր, գրիչ և ստացող՝ Կիրակոս Դպիր:

19.—Թիվ 3680, Գոտրագիր, թկ. 1772:

Գ.—**Բանց Չափա**, 11 օրինակ, որոնք կպարունակեն Ն. Շնորհալիի քերթողական մանր երկերը, ինչպես նաև Բանելուկները, Բանախ «Յիսուս Որդին» և երբեմն «Ծղե-սիոյ Ողբ»-ն այ միասին: Այդպիսի ձեռագիր-ներ են հետևյալները.

- 1.—Թիվ 1240: Տես «Ողբ Եղեսիոյ»:
- 2.—Թիվ 1404: Տես «Յիսուս Որդի»:
- 3.—Թիվ 1447: Տես «Յիսուս Որդի»:
- 4.—Թիվ 1578: Տես «Յիսուս Որդի»:
- 5.—Թիվ 1604: Տես «Յիսուս Որդի»:
- 6.—Թիվ 1633: Տես «Յիսուս Որդի»:
- 7.—Թիվ 1638: Տես «Ողբ Եղեսիոյ»:
- 8.—Թիվ 1694: Տես «Յիսուս Որդի»:
- 9.—Թիվ 1784: Նոտրագիր: Գրիչ՝ Նիկողա-յոս:

10.—Թիվ 3184, բոլորգիր: Գրիչ՝ Հովսեփ:

11.—Թիվ 3981, Թեքիրտաղ, 1639, Գոտրագիր: Գրիչ՝ Գրիգոր երեց:

Ասոնց վրա կրճաճք ավելցնելու մասին 1016 ձեռագիր ժողովածուց, որ կպարունակե Շնորհալիի վերագրված 139 Բանելուկներ, էջ 216ա—231ա: Օրինակված է Սարգիս վարդապետի ձեռքով, ԺԷ դարուն Գոտրոգրով:


Դ.—**Նամականի**, 14 օրինակ, որ կպարունակե ընդհանրական մեծ կոնդակը, միութենական բանակցությանց առթիվ գրված թուղթերը, ինչպես նաև զանազան անձերու ուղղված նամակները: Ձեռագիրներեն ումանք զուտ նամականի են, իսկ ուրիշներ կպարունակեն տարբեր գրվածքներ ևս:

- 1.—Թիվ 88, Ականց Անապատ, 1273, բոլորգիր: Գրիչ՝ Ղազար: Ստացող՝ Ստեփանոս՝ Հայր Ականց Անապատի:
- 2.—Թիվ 586, Կ. Պոլիս?, 1778, Գոտրագիր: Գրիչ՝ Ստեփանոս Ղուկասյան, Կ. Պոլսեցի:
- 3.—Թիվ 833, Երուսաղեմ?, 1634?, Գոտրագիր: Գրիչ՝ Խաչերես սարկավագ: Ստացող՝ լուսարար Մարկոս Դարանաղցի:
- 4.—Թիվ 641, Կ. Պոլիս, 1778, Գոտրագիր: Գրիչ՝ Ստեփանոս Ղուկասյան, Կ. Պոլսեցի:
- 5.—Թիվ 645, Գոտրագիր:
- 6.—Թիվ 652, Գոտրագիր:
- 7.—Թիվ 672, թկ. 1689, բոլորգիր: Գրիչ՝ Խաչատուր: Ստացող՝ Պարոն Ավետիք:
- 8.—Թիվ 773, Կաֆա?, 1859?, Գոտրագիր Բնատիպ: Գրիչ՝ Անտոն քահանա: Նկար՝ Ն. Շնորհալի, թղ. 4բ:
- 9.—Թիվ 835, թկ. 1804, Գոտրագիր: Գրիչ՝ Շեհրի: Ստացող՝ Ջիրաք:


10.—Թիվ 858, ԺԷ դար, Գոտրագիր: Ստացող՝ Սիմեոն վրդ. Ամթեցի:

11.—Թիվ 936, թկ. 1702, Գոտրագիր: Գրիչ և ստացող՝ Սուքիաս վարդապետ:

12.—Թիվ 1085, Լուի, 1608, Գոտրագիր: Գրիչ՝ Հակոբ դպիր: Ստացող՝ Կարապետ արքեպիսկոպոս:




Ս. Ներսես Շնորհալի. «Հայր երկնատր», Ձեռագր Մաշտոց (Մատենադարան, ձեռ. № 9020, Կ. Պոլիս, 1678 թ.)



Ս. Ներսես Շնորհալի. «Սաուսու լուսոյ», ժամագիրը (Մատենադարան, ձեռ. № 485, Լյուբլին-Նո-րուսյակի, 1685 թ.)

- 13.—Թիվ 1156, Իլով, 1811, Գոտրագիր: Գրիչ և ստացող Սահակ արդ. տարր-ճացի:
- 14.—Թիվ 1875, թվ. 1682, բոլորգիր: Գրիչ՝ Արիստակես քահանա:



Ս. Ներսես Շնորհալի. «Ճառագայթ փառաց», Ծառուխոյ (Մատենադարան, ձեռ. № 8838, Երուսաղեմ (և) Խաչիկ Որ սնապատ, 1193 թ.)

Ե.—Մեկնություն Անտարահին Մատթեոսի: Մեզի հասած են երկու տարբեր խմբագրություններ, երկուքին մեջ ալ Ն. Շնորհալիի գրած մասը կհասնի մինչև գլուխ Ե, համար 17: ԺԳ դարուն Արիստակես վրդ. կամ իր աշակերտը Եփրեմ ամբողջացուցած են հիշյալ մեկնությունը: Այս առաջին խմբագրության կայանկանին հետևյալ 9 ձեռագիրները:

- 1.—Թիվ 258, Կաֆա, 1620, բոլորգիր: Գրիչ և ծաղկող՝ Ջաքարիա դպիր Ճանտեմիր: Ստացող՝ Նաչատուր վրդ. Կաֆայեցի:
- 2.—Թիվ 283, Ավագ վանք, 1486, բոլորգիր: Գրիչ՝ Ծորոս քահանա: Ստացող՝ Ստեփանոս վարդապետ:
- 3.—Թիվ 392, թվ. նախքան 1278, բոլորգիր: Գրիչ՝ Ստեփանոս, ստացող՝ Սիմեոն վարդապետ:
- 4.—Թիվ 458, Կիլիկիա, ժԳ դար, բոլորգիր:

- Գրիչ՝ Թումաս: Ստացող՝ Կոստանդին Կրոնավոր:
 - 5.—Թիվ 707, Երուսաղեմ, 1756, Գոտրագիր: Գրիչ՝ Նոնա վրդ. Կեսարացի:
 - 6.—Թիվ 889, Եվքատա, Կեսարիա, 1710, Գոտրագիր: Գրիչ՝ Հարություն Երեց Կեսարացի:
 - 7.—Թիվ 932 (թերի), ԺԸ դար, Գոտրագիր: Կայանկաներ Կեսարացի Եռայի վարդապետին, 1740-ին:
 - 8.—Թիվ 1031, բոլորգիր: Գրիչ՝ Դավիթ դպիր:
 - 9.—Թիվ 2017, բոլորգիր հնատիպ: Մատթեոսի մեկնությունը հետագայում շարունակած է նաև Հովհաննես վրդ. Ծործորեցի և լրացուցած 1318-ին:
- Այս վերջինը տպագրությամբ լույս տեսած է Կ. Պոլիս, 1825-ին: Սույն խմբագրության կայանկանին վեց ձեռագիրներ:
- 1.—Թիվ 275, Կ. Պոլիս, 1781, Գոտրագիր: Գրիչ՝ Բրաբիոն Նոտար: Ստացող՝ Թովմա վրդ. Վանեցի:
 - 2.—Թիվ 416, Գոտրագիր:
 - 3.—Թիվ 581, թվ. 1674, Գոտրագիր: Գրիչ՝ Պողոս քահանա:
 - 4.—Թիվ 719, Գոտրագիր:
 - 5.—Թիվ 867, ԺԸ դար, Գոտր-շեղագիր: Ստացող՝ Պետրոս եպս. Կեսարացի:
 - 6.—Թիվ 9320, թվ. 1720, Գոտրագիր, գրիչ՝ Կարապետ Երեց:
- Զ.—Մեկնություն Դավիթ Անյաղթի «Բարձրացուցէք» ճառին, 4 օրհնակ:
- 1.—Թիվ 989, էջ 141ա—237, ԺԸ դար, Գոտրագիր:
 - 2.—Թիվ 1072, էջ 506ա—575: Թվական 1611, Գոտրագիր:
 - 3.—Թիվ 1102, էջ 193—368, ԺԸ դար, Գոտրագիր:
 - 4.—Թիվ 1631, էջ 1—25, ս. Անտոնի Մեցաստան, Կաֆա, 1429, Գոտրագիր: Գրիչ և ստացող՝ Թադեոս արդ. Ավրամեցցի:
- Է.—Մեկնություն Բանից Դավթի «Ամենայն չար տանջելի», 9 օրհնակ:
- 1.—Թիվ 401, էջ 520—532, ժԳ—ԺԶ դար: Բոլորգիր:
 - 2.—Թիվ 885, էջ 236—240, Ծորոթ (Երզնջակ), 1642, Գոտրագիր: Գրիչ՝ Հովհաննես Երեց:
 - 3.—Թիվ 974, էջ 124—139, Երեք քաղաք, 1634, Գոտրագիր: Գրիչ՝ Ներսես արեղա:
 - 4.—Թիվ 989, էջ 30—42, Գոտրագիր, ԺԸ դար:
 - 5.—Թիվ 1078, էջ 95բ (թերի), Գոտրագիր:
 - 6.—Թիվ 1291, թվ. 515բ—518ա, ս. Գեորգ վանք՝ Եկեղյաց գավառ, 1837, Գոտրագիր հնատիպ: Գրիչ՝ Ներսես սարկավագ: Ստացող՝ Նաչատուր Կրոնավոր Ատանացի:

7.—Թիվ 1304, թղ. 98բ—113ա, ս. Գեորգ Անապատ, 1332, բոլորգիր: Գրիչ՝ Հովհաննես Կրոնավոր:

8.—Թիվ 1410, էջ 150—181, Էտրեմե, 1725, նոտրադիր: Գրիչ և ստացող՝ Սարգիս արքիա:

9.—Թիվ 1514, էջ 529—539, բոլորգիր: Ավելի քան քսաներկու ձեռագիր ժամագրքերու մեջ Ծնորհալի ունի գմալելի երգեր, «Յիշեցուք», «Աշխարհ ամենայն», «Առաւօտ լուսոյ», «Այսօր աննառ», «Աստուած անդ», «Նորոգող», «Նորաստեղծեայ», «Արարչական», «Յարեելից», «Ըգնաւորք», «Լոյս», «Ըանապարհ», «Օրհնեմք գբեզ» և «Նայեաց սիրով»: Ինչպես նաև «Հատատով խոստովանիմ» սրանչելի աղոթքը, 24 տուն:

Տասնյակներով գանձարաններու մեջ ունի ս. Վարդավառի և ս. Աստվածածնի վերափոխման նվիրված գանձեր:

Տասնե ավելի Տաղարաններ կպարունակեն իր հոգևոր տաղերեց—թվով ավելի քան քառասուն—քալական նմուշներ, լման կամ մասնակի ձևով:

Վենետիկ, 1830-ից, «Բանք Չափա» խորագրով տպված իր քերթվածներու ժողովածուին մեջ կարգ մը տաղեր պակասավոր են: Այդ թերիները լրացնելու համար, 1849-ից, «Սիրոց»-ի մեջ, հրատարակած ենք հետևյալ տաղերը:

- 1.—«Տաղ Աստուածայայտութեան», էջ 83:
- 2.—«Տաղ Մեծի ուրբաթի», էջ 83—84:
- 3.—«Տաղեր Յարութեան զկնի եղաբերից», էջ 83—84:
- 4.—«Գովեստ ի ս. Գր. Լուսատրիչ», էջ 132—133:
- 5.—«Տաղ Մեծի Ներսէսի», էջ 175—176:
- 6.—«Տալ սուրբ Խաչի», էջ 176:
- 7.—«Տաղ Յարութեան Բրիստոսի», էջ 216:
- 8.—«Երգ ի բաշխումն ս. Խորհրդոյ», «Հասկ», 1952, էջ 40:

Ծառ մեծ և արժեքավոր է Ն. Ծնորհալիի բաժինը մեր Ծարակնոցին մեջ: Ցուցակագրած ենք 105 Ծարակնոցներ, որոնք կպարունակեն հետևյալ կանոնները, Եթանասնից, Յովնանու, Աղուհացից Կիրակէից, Մաղկազարդի, Հոգեգայտեան Բ—Է ատուրց, Վարդավառի և Վերափոխման Բ և Գ ատուրց, Մարգարէից, Յակոբայ Մժբնայ Հայրապետին, Մանկանցն Բերդեհեմի, ս. Հրեշտակապետաց և ս. Ղեկնդեանց, ինչպես նաև Աւագ շաբաթի օրհնութիւնները, Յովհաննու Մկրտչի Ծննդեան Հարցը, Հոփսիսմեանց Հաւորարծին, Վարդանանց

Նորահրաշք և բազմաթիվ Մանկունքներ՝ հաճախ ստեղի:

Անշուշտ ամբողջը չէ այս: Ն. Ծնորհալիի գանազան գրութեանց կհանդիպինք բազմաթիվ ժողովածուներու, և «Հատատով Խոստովանիմ»-ին, շատ մը Աղոթագրքերու մեջ:



Ս. Ներսես Ծնորհալի. «Տաղ ի ս. Խաչի», Գանձարան, ԺԻ դար (Մատենադարան, ձև. № 3503)

Դժվար է գտնել ուրիշ հայ հեղինակ մը, որուն գրությունները տեղ գտած ըլլան այսքան բազմաթիվ ձեռագիրներու մեջ: Իր քանակով և որակով պատկառելի է Ծնորհալիի թողած ժառանգութիւնը, զնախատված սերունդն սերունդ և դարե դար, և պիտի շարունակեն մնայ իր բարձր պատվանդանին վրա ոչ միայն մեր մոտ, այլ նաև օտարներու, որոնք դեռևս լիովին չեն ճանչցած Հայաստանայց եկեղեցւո իսկապես Ծնորհալի քանաստեղծ և աստվածաբան այս մեծ Հայրապետը:



ԲՈՒՀԵ ԱՐՔԵՊ. ԱԺԵՄՅԱՆ

ՇՆՈՐՀԱԼԻՆ ՕՏԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ

Հայկական ամեն գրադարանի վրա, հին թե արդի հայերեն գիրքերու շարքին մեջ, քաղվածքով են օտար լեզուներն թարգմանված գործերը: Հազվագյուտ են, սակայն, հայ հեղինակները, որոնք արժանացած ըլլան քաղմելու օտարներու գրադարաններուն մեջ, օտար լեզուներու թարգմանված: Ներսես Շնորհալին առաջիններն էլավ. աճոր գործերը ներկայացվեցան օտար ընթերցողին հարյուր հիսուն տարիներ առաջ արդեն իսկ:

Մեզի ծանոթ ներսես Շնորհալիի գործերուն ամենն հին թարգմանությունը կատարված է 1829-ին, Ժողեֆո Գաբելեդդի անուն լիարդաստի մը կողմն: Իտալացի ծագումով այս կրոնավորը, զոր Մխիթարյան հայրերը կոչած են Հովսեփ վրդ. Կապելլեդի¹, եղած է առաջին վենետիկցին, որ գրադած ըլլա հայագիտությամբ: Ան, առաջին անգամ, Վենետիկի Մխիթարյաններու տրպարանն ի լույս ընծայեց ներսես Շնորհալիի «Ընդհանրական»-ը, լատիներեն թարգմանությամբ²: Ժողեֆո Գաբելեդդի գիրքին կողքին վրա ինքզինք կկոչն «Presbyter Venetus» (վենետիկյան երեց). իր Հայաս-

տանի մասին գրած գիրքին³ առաջին էջին վրա կկոչն «Աճորավ Մխիթարյան հայկական ճեմարանին»: 1833-ին նույն Ժողեֆո Գաբելեդդին երկու հատորներով հրատարակեց ներսես Շնորհալիի ատենին ծանոթ գործերու լատիներեն ամբողջական թարգմանությունը⁴:

Առաջին հատորը կպարունակն ներսես Շնորհալիի թուղթերը և ճառերը: Կուկսի «Ընդհանրական թուղթ»-ով և կընդգրկն իր կաթողիկոսական օժանն առթիվ արտասանած ճառը, իր ելրոր՝ Գրիգոր կաթողիկոսի անունով խմբագրած հավատո գիրք՝ ուղղված Մանվել կայսեր փեսային՝ Բելա իշխանին, որ կգտնվեր Մամեստիա, Մանվել կայսեր հետ ունեցած թղթակցությունը՝ բյուզանդական եկեղեցիին հետ փորձված միութենական ճիգերուն վերաբերյալ, Տարսուհի Պողոս քահանային ուղղված թուղթը, Կարս քաղաքի բնակիչներուն ուղղված շրջաբերական գիրք՝ իրենց նոր առաջնորդ Խաչատուր եպիսկոպոսի ընտրության առթիվ, Սամսատի եկեղեցիին ուղղված թուղթը Արևողիներու դարձին առիթով և, վերջապես, մեկ խոսքով, ներսես Շնորհալիի դավանական, միութենական և կարգապահա-

¹ Հ. Բարսեղ վ. Աարգիսյան, Երկհարյուրամյա գրական գործունեություն և ճշանավոր գործիչներ, Վենետիկ, 1805:

² Sainte Narseles Clajensis Epistola Pastoralis, ex armenio latinnatale primum donata, a D. Josepho Cappellelli, 1829, p. 92.

³ L'Armenia. opera di Giuseppe Cappellelli, Firenze, 1841.

⁴ Sancti Nersensis Clajensis Armenorum Catholici opera nunc primum ex Armenia in Latinnam conversa notisque illustrata. Venetia, typis PP. Mekhitaristarum, 1833, volumina duo, pp. 287 et 328, in 8^o.

կան հարկերու մասին՝ իր ժողովուրդին, եկեղեցիին և օտարներուն ուղղած ծանոթ բոլոր գրությունները:

Երկրորդ հատորը կարտունակն լատիններնով թարգմանությունը Շնորհալիի աղոթքներուն և մեկնություններուն: Կսկսի «Հաստատվ խոստովանիս»-ի քսանչորս տուներու թարգմանությամբ, որուն կհետևի Սատրեպի Ալեուսարանի կիսատ մնացած մեկնության թարգմանությունը: Թեև Հովհաննես Երզնկացից ամբողջացուցած է այս մեկնությունը, զոր Շնորհալից հասցուցած է մինչև Ե գլուխի 18-րդ համարը, սակայն թարգմանիչը նախընտրած է թարգմանել Շնորհալիի հեղինակած մասը միայն: Մատթեոսի այս մեկնության կհետևին ցերեղ մը «Հրեշտակապետաց» և «Բարձրացուցեք»-ի մեկնությունը:

Շնորհալիի «Ընդհանրական»-ը ծանոթ էր արևմտյան հայագետներուն: Լատինական այս թարգմանությունեն դար մը առաջ ծանոթ արևելագետ և հայագետ Villefroy «Ընդհանրական»-ի մասին գրած էր արդեն. «Այս թույլը գեղուն է ամուր հավատքով. հոն կարտահայտվին հարգանքի բոլոր զգացումները, զորս ներսես կտածեր կրոնքի, եկեղեցիի և եկեղեցական կարգապահության հանդեպ»:

Գաբրիելովի լատիններենի թարգմանեց Շնորհալիի արձակ գրությունները միայն՝ բացատրելով իր հառաջաբանին մեջ, թե չէր կրնար թարգմանել քանաստեղծությունները, որովհետև պիտի կորսնցնեին լեզվական նրբություններով ստեղծված իրենց հրապուրքը:

1810-ին Միխիթարյան հարերու տպարանեն լույս կտեսներ ներսես Շնորհալիի «Հաստով խոստովանիս»-ը, վեց լեզուներու թարգմանված: 1823-ին Շնորհալիի ամենեն ծանոթ և ժողովրդական այս աղոթքը լույս տեսավ քուսնչորս լեզուներու թարգմանված: Ասոնք էին. գրաբար և աշխարհաբար հայերեն, իտալերեն, ֆրանսերեն, իրլանտերեն, գերմաներեն, հոլլանտերեն, անգլերեն, սլավոներեն, ռուսերեն, բուլղերեն, իլլիրերեն (սլավոնական լեզու), սերպերեն, հունգարերեն, թրքերեն, պարսկերեն, արաբերեն, եբրայեզերեն, գաղղերեն, ասորերեն և վրացերեն:

* Catalogue des livres tant imprimés que manuscrits de la Bibliothèque Royale de Paris, lettre U, no. 2, p. 57.

* Preces S. Nersis Clajensis Armenorum Patriarchae viginti quatuor linguis editae, Venetiis, 1823, I vol. 422 pp.

Նույն աղոթքը, երեսունվեց լեզուներու թարգմանված, լույս տեսավ 1882-ին: Նախորդ լեզուներուն վրա ավելված էին հետևյալները. գանձապրերեն, սերպերեն, դաներեն, կրեվանտերեն, իդանտերեն, բորթուկերեն, մալայերեն, հնդկերեն, սանսկրիտերեն, շինարեն, կաովպերեն և ալպաներեն:

ՀՈՉԵԿԵՒՈՐ
Ա Ղ Օ Թ Ք
 Տեան Կերսիկ Սրբազան
 Կաթողիկոսի Հայոց
 Տպարան Երևանու վարչոք.
 Արեւիկէ Աճի-ՍՆէի-Լուսն.
 Մէյիւնց:
 4930. ' Ի Մ Ո Ս Կ Ո Վ . . .
 ' Ի տպարանն ՂՆՇմբանի Հայոց
 Տեաք Հարբանց:

МОЛ И Т В А
С В. ПАТРИАРХА НЕРСЕСА
 Исполнен на старинном, Армянском, Русском, Греческом, Грузинском, Сербском, Французском, Итальянском, Английском, Ассирийском, Иллирическом, Венгерском и Турецком.
 Изданы в Мекке Араб.-Магомет.
МОСКВА
 В Типографии Императорского Наследственного Восточнаго Дома:
 1830.





Անտարակույս որ գեղեցիկ էր Միխիթարյան հայերու կատարած այս աշխատանքը, աշխարհի բոլոր ծանոթ լեզուներով մատչելի ընելու Շնորհալիի անգուգական «Հաստով խոստովանիս»-ը թուր ժողովուրդներուն, և իր ժամանակին արժանացավ լայն ուշադրության: Մեզի համար դժվար է ըսել, թե թարգմանությունները որքա՞ն հարազատ են և հաջող. սակայն դատելով ֆրանսերեն, անգլերեն և արաբերեն թարգմանություններեն, կարելի է հետևցնել, թե բոլորն ալ սլավոնալեզուներու կատարված, խնամքով և օտար լեզուներու քաջածանոթ անձերու կողմե եղած թարգմանություններն են:

1828-ին, Հովհաննես վրդ. Չոհրապրան հրատարակեց «Ողբ Եղեսիոյ»-ն: Հրատար-

* Élégie sur la prise d'Edesse par les Mosulmans, par Nersès Klajesti, patriarche d'Arménie; Paris, Donbey-Dupré, 1828, 129 pp.

րակությունը հոգաց Ասիական Ընկերակցու-
թյունը (Société Asiatique) Փարիզի մեջ:
Այս առթիվ «Ժաշակություններու Մատե-
նադարան»-ի (Bibliothèque des Croisades)
հրատարակիչ Միշո (Michaud) խնդրեց
Փարիզի Արքայական Մատենադարանի
դասախոս Ծահան Զրպտեն (Chahan
Cirbied), որ կատարե անոր ֆրանսական
թարգմանությունը, որ լույս տեսավ 1829-ին,
խաշակիրներու պատմագիրներու շարքին
մեջ, հունական և հայկական աղբյուրներու
հրատարակության մեջ:



Հրատարակիչը հուսախաբության խոսքե-
րով անդրադարձած է Զոհրապյանի այս
թարգմանության և «Ողբ»-ին: «Եղեւսիո քա-
ղաքը խոսիլ տալու գաղափարը բանաստեղ-
ծական կողմ մը ունի անշուշտ, սակայն
պատրանքը շատ կերկարի և երկին վրա կը-
տարածե միօրինակություն մը, զոր չի
փրկեր ոչ պատկերներու փառքը և ոչ ալ ոճի
ինքնահատկությունը»: Երբ թարգմանվածը
շնորհալի նրբություններով հյուսված բա-
նաստեղծություն մըն է, իսկ թարգմանու-
թյունը ուզած է ըլլալ բառացի, բանաստեղ-
ծական գեղեցկությունը զոհելով հավատար-
մության մը չորցնող մտահոգության, ար-
դյունքը չի կրնար տարբեր ըլլալ: Բանաս-
տեղծական այս երկը կպարունակե անշուշտ
պատմական տեղեկություններ, մշակված
սակայն գրական սեռի մը պահանջներուն
համաձայն, գույն և հուզականություն գգե-
ցած: Երբ բանաստեղծական այս երկը մեր-
կացվի իր գեղեցկությունը ապահովող գրա-
կան տարագեն և վերածնվի պատմական տե-
ղեկագիրի, անտարակուրս որ շատախոսու-
թյան և ավելորդաբանության տպավորու-
թյան մը մեջ կկորսվի: Իրականության մեջ,
«Ողբ»-ը մեր գրականության մեջ նախա-

տիպարը հանդիսացավ գրական ձևի մը, որ
հետագային քանիցս ընդօրինակվեցավ
պատմական աղետներ նկարագրելու:

Ուրեմն արևմտյան աշխարհին հրավցվե-
ցավ Շնորհալին 1830-ական թվականնե-
րուն: Անոր գործերն աստվածաբանական
արծակները, աղոթքներն «Հաւատով խոս-
տովանիմ»-ը և բանաստեղծություններն
«Ողբ Եղեւսիո»-ն ծանոթացուցին հստակա-
միտ աստվածաբանը և մեծ աղոթուր: Կես
դար ետքն է միայն, որ թարգմանվեցան ա-
նոր շարականներն մի քանին:

1886-ին, Պելճիքայի Լուվեն (Louvain)
քաղաքին մեջ հրատարակված «Զրիտունչս
Հայաստանը և անոր գրականությունը» գիր-
քին մեջ, ձեռիքս Նև, նույն քաղաքի մեծա-
նուն համալսարանի քրոֆեսոր, Պելճիքայի
Թագավորական ակադեմիայի անդամ, թղթ-
թակից-անդամ ս. Բեթերսպուրկի ակադե-
միային և Վենետիկի հայկական ճեմարա-
նին, ֆրանսերենի թարգմանած և հրատա-
րակած է Շնորհալիի շարականներն կարե-
վորները: Ասոնք են. Այլակերպության Բ և
Գ օրերու կանոնը⁹, («Մտազայթ փառաց
Հօր...»), Հոգեզայրուստի Մաշու շարակա-
նը¹⁰, («Որ ի հարաշարժ ի յաղբերէն...»),
ս. Պողոս-Պետրոսի կանոնը¹¹:

Այս մեծ գիտնականը և հմուտ հայագետը
հարազատ և խնամված թարգմանությունը
կատարած է վերոհիշյալ շարականներուն,
իր գիրքին սկիզբը, ուր թարգմանաբար ներ-
կայացուցած է Այլակերպության, Հոգեզա-
յրուստի, Հովհաննոս Կարապետի և Պողոս-
Պետրոսի տոներուն առթիվ երգված շարա-
կանները առհասարակ: Նև հաջողած է
ֆրանսական լեզվի պարզության և հստա-
կության մեջ փոխադրել հայ շարականի այս
մասերը, անոնց ներքջչումի ջերմությամբ և
արտահայտության ձևի քաղցրությամբ:

Յընձան այսօր լերինք Աստուծոյ,
Արարողին եղեայք ընդ առաջ,
Պարակցին յաիտենական լերանց
Դասք առաքելոց եւ մարգարէից:

Elles se réjouissent aujourd'hui
Les montagnes de Dieu
Allant au devant du Créateur,
Les troupes des apôtres et des prophètes
Associés aux montagnes éternelles.

Կարելի չէ պելճիքացի այս հայագետին
կատարած թարգմանության մասին խոսիլ,

⁹ Felix Nève, L'Arménie Chrétienne et sa Lit-
térature- Louvain, 1886, 400 pp.—էջ 37—76:

¹⁰ Նույնը, էջ 88, 98—100:
¹¹ Նույնը, էջ 150—154:

⁹ Bibliothèque des Croisades, Chronoques
grecques et arméniennes; Paris, 1829, pp. 499-504.


առանց հիշելու, թե անոր նպատակն է՝ կաթոլիկ իր ընթերցողից ներկայացնել շարականագիր բանաստեղծին մեջ կաթոլիկ դավանանքին միտող արտահայտություններ: Նախ իր կատարած ընտրությունը. Հողեգայության կանոնը և Պողոս-Պետրոսի նշանակած շարականները: Առաջինից մեջ կփնտռեն փաստեր՝ հաստատելու համար, թե հայոց եկեղեցին առհասարակ և ներսես Շնորհալին հատկապես հոռովմեադավան «եւ յՌդուլ»-ն խոստովանած են միշտ: Պողոս-Պետրոսի նշանակած շարականներուն մեջ նա կընդգծեն Պապական Աթոռի նկատմամբ մեր շարականագիրից ջատագովմանը իբրև «զուլիս առաքելոց»-ի Աթոռը և կհետևեցնեն, թե այդ իսկ պատճառով՝ զուլիս է նաև ամբողջ եկեղեցվո: Անցյալ դարու վերջերուն չէր կրնար տարբեր ըլլալ դիրքը հոռովմեական եկեղեցվո ամենեց պահպանողական կեդրոններեն Լուվենի համալսարանի այլ դասախոսին, որ, Մխիթարյան հայրերու հետևողությամբ, մեր եկեղեցվո մեծ առաջնորդներուն մեջ կաթոլիկություն միայն պետք է տեսներ: Չենք ուզեր բանալ դարձյալ անցյալին մեջ մոռցված այդ էջը և մտնել աստվածաբանական վիճարանության մը մեջ, որ վաղուց սպառած կնկատենք: Ուզեցինք հիշել միայն իրողությունը, թե 1886-ից, երբ Շնորհալին կներկայացվեր ֆրանսերեն ընթերցողից, ինչպես կդիմագծվեր:

Միջև այստեղ հիշված թարգմանությունները կպատկանին դասական գրականության: Ներսես Շնորհալի կհայտնվի անոնց մեջ իբրև մեծ աստվածաբանը, եկեղեցվո միության սրբազան գաղափարին նկիրված կաթողիկոսը, միութենական տրամադրությամբ քրիստոնյա սյուս եկեղեցիներուն մոտեցող, բայց իր եկեղեցիին դավանանքը մաքուր պահող եկեղեցականը, սքանչելի աղոթողը, ազգային աղետի մը դիմաց՝ հայու ցավից մեծ քնարերգուն, և վերջապես՝ շարականներու գանձին՝ անմար փայլով պապոուն մարգարիտներու շարքեր նետած հոգևոր բանաստեղծը:

Արշակ Չոպանյանն է, որ հայ գրականության միջնադարյան գեղեցկությունները ֆրանսական ճաշակին ներկայացուցած ատեն Շնորհալիին կընտրե ժողովրդական իր ոտանավորները, ուսմկորեն գրված¹²:


Չոպանյան ֆրանսերենի թարգմանած է տասնմեկ հանելուկներ միայն: Չանոնք կանխող ներածության մեջ սքանչելի այս թարգմանիչը կբացատրեն, թե «Հարաստանի քուրաստան»-ի այս երկրորդ հատորը նկիրված է ժողովրդական գրականության և թե Շնորհալիի դասական գործերը պիտի ներ-

կայացնեն հայ դասական գրականության նկիրված հատորից մեջ, որ բնավ լույս չտեսաւ:



Ε Τ Χ Η

ΤΟΥ ΑΓΙΟΥ ΝΙΕΡΟΣΥΣ.



Β.-L.-P. Π. Γρεισσιν.

1. Μετά πίεως ἔξομολογῆμαι καὶ προσκυνῶ Σὲ τὸν Πατέρα, Υἱὸν καὶ Πνεῦμα Ἅγιον, τῆς ἀπλαστοῦ καὶ ἀθάνατου Φύσεως, τὸν κτίστην τῶν Ἀγγέλων, καὶ τῶν ἀνθρώπων, καὶ ὅλων τῶν κτισμάτων· Ἐλέησον τὰ κτίσματά σου.

2. Μετά πίεως ἔξομολογῆμαι καὶ προσκυνῶ Σὲ τῆς Ἀγιωτάτης καὶ ὁμοῦσιον Τριάδα, τῆς μίας Θεότητα, τῆ Φωτὸς τὸ ἀδιαιρέτου, τὸν κτίστην τῆ Φωτὸς, καὶ ζωότην τῆ σκοτίας· ἀποδιώξον ἀπὸ τῆς ψυχῆς μου τὸ σκίτος τῆς ἁμαρτίας καὶ ἀγνοίας, καὶ φωτίσον ἐν τῇ ὄψι ταύτη τὸν τῆς μου, δια τὰ δουλεύω εὐ σοὶ προσφέρω εὐπροσδέχτους δεήσεις, καὶ διὰ τὰ ἐπιτύχω παρὰ σου τὰ ζήτήματά μου.

U. Ներսես Շնորհալի. «Հավատով խոստովանիս» (Ռուսերեն)

Չոպանյանն վերջ Շնորհալիի գործերն «Յիսուս Որդի»-ն է, որ թարգմանված է անգլերենի, Ամերիկայի մեջ, 1947-ից¹³: Թարգմանիչը՝ Jane S. Wingate, կիցն է Henry Knowles Wingate-ի, որ 1890-են 1920 ավետարանչական քարոզիչ մը եղած է ինտրքիտ մեջ և կատարած «outstanding educational and philanthropic work in Turkey», ինչպես կըսեն գիրքին ձոնը: Իսկ Jane Wingate եղած է հայագետ և հայերեն անգլերենի թարգմանած բազմաթիվ հայկական հեղինակներ: Շնորհալիի «Յիսուս Որդի»-ն թարգմանած է ժՋ դարու հայկական ձեռագիրի մը վրայեն, զոր Թաղեոս Ժամ-

¹² La Roseate d'Arménie, II, pp. 6—10.

¹³ Jesus Son; the Delphic Press, N. York, 1947.

կոչյալ անունով հայ մը ազատած է Կեսարիո Դերենկը (Derevenk)? վանքն, իր իսկ նախատակելին առաջ:


Մեզի ծանոթ և վերև հիշված թարգմանություններուն մեջ ամենն գեղեցիկն է այս մեկը, հարստագատությամբ, լեզվի պարզությանը, բանաստեղծական իր գևացքով և, տեղին է լսել, իր շնորհալիությամբ: Ամերիկոսի հայագետը հաջողած է Շնորհալի «Յիսուս Որդի»-ի բոլոր առաջնությունները պահել իր անգլերենին մեջ. աղոթքի բարեպաշտ շունչը, որ ալիք-ալիք կբարձրանա Հիսուսի կոսնքի նկարագրության մեջն, Նարեկացիի փոթորկուտ և խռովող ողբերգականության հակադրականը՝ վճիռ և հանդարտ հոգիի մը հավասարակշռված երգն է, հորբայես զգացված մեղքի գիտակցութենն բարձրացող՝ սիրող և խնամող Աստուծո: Անգլերեն թարգմանությունը պահած է, առանց բնագիտն շատ հեռանալու, բանաստեղծության թեթև կշռույթը, որ երկու հազար տողերը կազատն ձանձրութեն և հաճելի ընթերցվածի մը կվերածն: Առաջին տողեն մինչև վերջինը կլարդացվի ներքին երաժշտականության մը գրավիչ օրորին մեջն, ստանց բնավ տկարամալու: Անտարակույս որ թարգմանության այս հաջողությունը արդյունքն է թարգմանողի նուրբ զգացա-

կանության և հավատավոր հոգիին, որ անգամ մը ևս ապրած և ապրեցուցած է «Յիսուս Որդի»-ն իր լեզվին մեջ:

Մոտ երկու դարերն ի վեր եվրոպական աշխարհին ծանոթ է Ներսես Շնորհալին գրական իր արդյունքով, իսկ մի քանի տասնյակ տարիներն ի վեր ամերիկացի հասարակության իր «Յիսուս Որդի»-ով: Եվրոպայի պալատներն սկսյալ, որոնք «Հաւատով խոստովանիմ»-ի թագմալեզու թարգմանության պատլո տեղ մը վերապահեցին իրենց գրադարաններուն մեջ, մինչև մեծ համալսարաններու հայագետները, որոնք հիացումով թարգմանեցին Շնորհալիի աստվածաբանական նամակացին, հասնելու համար Վինկելթի, որ անգլերենի փոխադրեց Շնորհալիի աղոթքի հուզականությունը, երկար շարքը կկազմեն փաստերուն, թե Ներսես Կլայեցին ոչինչ կորսնցուցած է իր հրապույրեն այն օրեն ի վեր, երբ այցի զնաց իրեն «Իմաստասէր իմն Կոստանդնուպօլսեցի Թէոքա անուն» և վերադարձին հայտարարեց. «Որպէս լուսք, այնպէս ես տեսաք. զի նոր ոմն Գրիգորիոս Աստուածաբան յարուցեալ է»¹⁴:

¹⁴ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Երեւան, 1881, էջ 118:





ԶԳՈՆ ԵՊՈՒ ՏԵՐ-ՀԱՎՈՐՅԱՆ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ Ա. ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ ԱՐԱՐԵԱԼ Ի ՆԵՐՄԻՍԷ ԾՆՈՐՀԱԼԻՈՅ

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԾՐՋԱՆԸ

Արծաթի դարի (ԺԱ—ԺԲ) հայկական մշակույթի ամենն լավ զարգացող մշակույթն մեկն է սուրբ Գրիքի մեկնաբանությունը՝ թարգմանաբար թե ինքնագիր:

Գրիգոր Բ Վկայասեր (1086—1105) և Գրիգոր Գ Պահլավունի (1118—1166) կաթողիկոսները մասնավորապես հոգանու կրթիցին աղոր:

Նոր Կտակարանն ամբողջ՝ Ավետարանները, Գործք առաքելոցը, Առաքելական և Կաթողիկեայց կամ Ընդհանրական թողթերը և Հովհաննու Հայտնությունը առաջին անգամ լինելով, լրիվ չափով, հայերեն մեկնություններ կուճեման, ոմանք երկու, ոմանք երեք խմբագրությամբ՝ տարբեր հեղինակներն:

Մեկնաբանական գրականության շարժումին հիմնադիրը պետք է ընդունիլ Գրիգոր Բ Վկայասերը, որ թարգմանիչի համարավ ալ ունի, և իր քազում ճամբորդությունները, սուրբերու վարքին ուսումնասիրության կարգին, կօգտագործե նաև այս նպատակին համար: Ինքն է, որ 1076—1077-ին Ն. Պոլսո մեջ կիրակոս անունով հայագետ հույն հոռետորին նախ վճարովի թարգմանել կուտա «Գործք առաքելոց»-ին Ոսկեբերանին մեկնությունը և ապա զայն սրբագրել կուտա Գեորգ Լոռեցի վարդապետին «Վերքստին արծարծել զխորթացեալ բանս հոռետորին, յեղանակելով ի դիրալորս եւ յարմարականս մերոյինս ազգի»¹:

Նույնպես իր նախածնեոնությամբ է, որ զլուխ կհանվի Ոսկեբերանի՝ Հովհաննու Ավետարանին մեկնության թարգմանությունը՝ նախ Անդրեաս անուն հայագետ ասորի երեցին և ապա Ծովիաց զավատի Առոն իշխանի հույն քարտուղար Քենոփիստե հոռետորին միջոցով, որուն հայերենը կսրբագրե կիրակոս վարդապետը²:

Կեսարիո Անդրեաս եպիսկոպոսին մեկնություն Հայտնության գիրքին թարգմանությունը կկատարվի Հոռմվայի Հայրապետաճոցի պաշտոնյա Կոստանդ միտրոպոլիտի ձեռքովը, և կսրբագրվի Ներսես Լամբրոնացին, որ կանխավ Բասիլ անուն հույն մեկնակյացն մը ապահոված էր անոր բնագիրը և թարգմանության հիշատակարանին մեջ կգրե. «Սրբագրեցաւ քերթողական արուեստի... ձեռամբ նուատտ եպիսկոպոսին մայրաքաղաքիս Տարսոնի տառապելոյս ներսիսի»:

Բացի հույն կամ ասորի լեզուներե հայացված մեկնություններե, նկատելի է, որ բուն Հայաստանի կամ հյուսիս-արևելքի մեջ ծաղկող վարդապետաճոցներեն Դիոսկորոսի աշակերտներեն Անանիա Սանահնեցին

¹ Եղիշե արքեպ. Գորյան, Պատմ. հայ մատենագրության, Երուսաղեմ, 1888, էջ 82:

² Անդ, էջ 82—83:

րագրության, այլ խոսքով՝ մանրանկարչության, որ Ալվետարանին անմիջական գործածությունը դյուրացնելն զատ կնպաստե միջնադարյան հայկական կերպարվեստի զարգացումին⁷:

Հրատարակիչը «Մեկնութիւն տասն խորաններուն համար»-ը կորակե հառաջաբանություն կամ մուտք Շնորհալիի կատարած Ալվետարանին մեկնության...

Բայց «Տասն խորաններուն մեկնութիւնը» գրքուկի մը ծավալն ունի: Ան կրաղկանս երեք բաժանումներն:

Ասոնցմէ առաջինը, որ գլխավորն է, հատկացված է խղճմտությանը ներկայացնելու և բացատրելու ձեռագիր, հաճախ նաև տպագիր Ալվետարաններուն ճակատները կամ առաջին երեսներուն վրա, տեսնվող համաբարբառ ցուցակներուն խորանաձև հորինվածքը, անոնց ծագումը, թիվը, բույսերու և թռչուններուն նկարները, զարդերն ու գույները, իրենց խորհրդանշական իմաստներով միասին, ուստի կրնա ծառայել իբր ուղեցույց-առաջնորդ նաև Ալվետարաններու խորաններուն պատկերագրության, որ այնքան կզարգանա. միջին դարուն շնորհիվ հայկական մանրանկարչության արվեստին ծաղկումին:

Եթե Հին Ուխտի խորաններուն ծագումը կվերանա մինչև Մովսես մարգարեն, ապա նոր կտակարանի մեջ գեղեղվող Ալվետարանի համաբարբառ ցուցակներուն սկզբնավորումը կհասնի մինչև Ելիսեբիոս, որ գոհացում տալու համար Կարպիանոս Եգիպտացիին խնդրանքին Եվթաղի կողմէ Առաքելական և Կաթողիկե թողթերուն համար կատարված աշխատության գիծովը կպատրաստե Ալվետարանի բովանդակության համաբարբառ ցուցակներ՝ տասն խորաններով, որ քաղդատության համար դեմ առ դեմ գլխակարգությամբ և համարներով կընշանակվին այն բոլոր հատվածները, որոնք չորս ավետարանիչներուն մոտ իրարու կը համապատասխանին, կամ իրարմե կտարբերին ինչ-ինչ մանրամասնությամբ, կամ պակասով և կամ հատուկ են մեկին կամ մյուսին և կամ հասարակաց են երկուքին և կամ երեքին ալ:

Խորաններուն պատրաստության սկզբնական նպատակն է եղած օգնել ուղղավառներուն, որպեսզի սուրբ Ալվետարանին վրաստերովը կարենան պայքարիլ հերձվածողներու և հերետիկոսներու դեմ:

Ա. Ներսես սուրբգրական լայն մեջբերումներով կջանա հաստատել Ալվետարանի խորաններուն ալ տասը հատ լինելը՝ շեշտե-



Ոսկանյան Աստվածաշունչ, Ամստերդամ, 1888, չորս ավետարանիչներ

լով անոնց ամեն մեկուն հանգամանքն ու նկարագիրը և նպատակը:

Առաջին խորանին մեջ կընակի ատուվածությունն «ի լոյսն անմատոյց»:

Բ և Գ խորանները բնակարան են անմարմին հրեշտակներու քահանայության: Դ-ը կպատկերացնե երեմական դրախտը: Ե-ը՝ նոյան տապանը: Զ-ը՝ Աբրահամի խորանվանը: Է-ը և Ը-ը՝ Սրբություն Սրբոցը: Թ-ը՝ Սողոմոնի խորանը: Ժ-ը՝ «Ամենակատար եւ լի ճշմարտութեամբ սուրբ եւ կաթողիկե եկեղեցին», որ կրովանդակե բոլոր խորհուրդները:

Ըստ այսմ ալ զգուշությամբ և իմաստներու քացատրությամբ կընշանակվին յուրաքանչյուր խորանին հատուկ հորինվածքը, գույները, պատկերները և այլ մանրամասնություններ ըստ կարգի:

«Մեկնութիւն տասն խորաններու համար»-ի վերջին մասին մեջ Շնորհալի շատ ակնածալից և սիրագեղ դիմառնությամբ կըխոսի իր երեք եղբորը՝ Գրիգոր Պահլավունիին, գոր կպատվե իբր «Գլուխ պատուական լետ գլխոյն եկեղեցոյ, Գրիգորիոս կաթողիկոս հայոց»⁸:

⁷ Վ. Հ. Ղազարյան, Կերպարվեստն ըստ Ներսես Շնորհալու, «Լրաբիր», 1, Երևան, 1972, էջ 68:

⁸ Ներսես Շնորհալի, Մեկն. Ա. Աւետ., ըստ Մատթ.-ի, էջ 18:

Կատրանք այդ հատվածը՝ տեսնելու հավատ հավետությունը հեղինակին և համտեւելու համար գեղեցկությունն իր հորդասնու լեզվին:

«Աիրոյ գորութիւն՝ գերազանց է քան ըզբնութիւն... եւ եթէ առ ոմանս՝ իցէ պանծալի ըստ մարմնաւոր իրիք պատճառաց, որպիսի իցէ բոլորին կրողաց, ըստ իմում պատահեալ անձին՝ առ ի քէն գօտթեանց, ոչ յադագս բնատրականին միայն կապակցութեան արեան, որ հանուրց է առիթ եւ վառքոգեաց, այլ սակս գերազանցելոյ բանի եւ գրոյ՝ ներգործեցելոյ առ իս բարեաց... Ձեռնարկեալ յայս առաջարկութիւն՝ ըստ պատուասիրարար ըսում հրամանի, գլոյխ պատուական, յետ գլխոյն եկեղեցւոյ, Գրիգորիոս Կաթողիկոս Հայոց»⁹:

Երկրորդ բաժինն ունի «Եկեղեցական պատմութիւն» վերնագիրը:

Ներքինակը, խոսելով Ավետարանի գրավոր ծագումեն, կհիշե, որ սկզբնաբար Ավետարանը կուսուցվեր բերանացի, որպեսզի ունկնդիրները անոր վարդապետությունը գրեն իրենց սիրտերում վրայ «հոգիով և ոչ թե մտրով»։ Բայց քանի որ բերանացի ուսուցումը ժամանակի ընթացքին կենթարկվի փոփոխության, մոռացումի և ամլության, ապա ուրեմն չորս ավետարանիչները գիրի կառնեն Տեր Հիսուս Քրիստոսի կյանքն ու վարդապետությունը:

Ըստ իր տվյալներուն Տիրոջ համարձուրեն յոթը տարի հետո Մատթեոս կգրե Ավետարանը հրեաներուն համար: Տասնևհինգ տարի հետո Մարկոսը, Պետրոսի հետևողությանը՝ աղեքսանդրացիներուն համար: Բասներկու տարի հետո Ղուկասը՝ Պողոսի վարդապետության համաձայն՝ Հռոմայեցիներուն: Յոթանասուն տարի ետքը՝ Հովհաննեսը կգրե ասիացիներուն համար:

Ասոր կկցվի բացատրությունը չորս ավետարանիչներուն կենդանակերպ պատկերներուն՝ ըստ Եզեկիելի տեսիլքին (Ա գլ.) մարդ, առյուծ, եզն և արծիվ:

Մարդը՝ ճշմանակ Մատթեոսի, որ Աստուծո բանին անսկզբնական ծնունդեն սկսյալ Մեսիան կներկայացնե իբր որդի Դավթի և որդի Աբրահամի:

Առյուծը հզոր՝ ճշմանակ Մարկոսի, իբր օրինակ չարին դեմ արհամարու:

Եզր գվարակ՝ ճշմանակ Ղուկասի, որ Հիսուսի խաչելություն կմամենեցնե պարարակ եզան զենումին:

Արծիվը՝ ճշմանակ Հովհաննեսի, որ մինչև երկինքի բարձունքները կորոտա «Որդիին անսկզբնական ծնունդը Հորմեն»:

Ծնորհալի իբր քարոզիչ կու տա մաև Ավետարան անունին բացատրությունը, զոր մեջ կբերենք լսարգմանաբար:

«Գործերուն նմանությամբ առաջ մաև անունը, վասնզի աշխարհին կալեանե թե Աստված (կիջնե) երկիրը և մարդիկ (կելլեն) երկինքը: Հրեշտակները կբնակին մարդերու հետ և մարդիկ հաղորդ կլինին հրեշտակներուն՝ երկայն պատերազմը կքակվի, թշնամին կամչնա, և ճշմարտությունը կու գա կհասնի: Աստվածապաշտության հատերը խոսքով և արյունով կսերմանլին ընդհանուրին մեջ: Այս բոլորին համար այ (Քրիստոսի) պատմությունը կկոչվի Ավետարան»¹⁰:

Բ

«ՄԵԿՆՈՒԹԻՒՆ Ա. ԱԻԵՏԱՐԱՆԻՆ»

Ներսես Ծնորհալիի Մատթեոսի Ավետարանին մեկնությունը վերը հիշված հառաջաբանության պես ընդարձակ բովանդակ է, բայց դժբախտաբար կիսատ թողված է:

Ան մուտքին հետ միասին կբռնե ութսուն երեք տպագրական երկայուն երես՝ սովորականեն ավելի մեծ ծավալով:

Բուն մեկնությունը Մատթեոսի ԻԸ գլոյխներեն կընդգրկե միայն առաջինն մինչև 17 գլոյխ 17 համարը:

Մնացած պակասը Արիստակես վարդապետի մը իր Եփրեմ աշակերտին հետ կատարած անհաջող աշխատանքեն ետքը¹¹, 1816-ին, կամբողջացնե Հովհաննես Երզնկացի, 1826, Պլուզ կոչված բանաստեղծ գիտուն վարդապետը, «բայց ոչ այնքան ընդարձակությամբ և ոչ ալ մասնավոր խնամք տանելով դասական լեզվի պահանջներուն, ինչպես ջրած էր Ծնորհալին»¹²:

Արդեն հիշեցինք, թե Կլայեցի Ավետարանին մեկնությունը կգրե Գրիգորիս Պահլավունիին հանձնարարությամբ:

Գործին քովանդակության խորքը, ոճը և լեզվին հորդահոս սահանքը, ինչպես մաև Լամբրոնացիին և Ծործորեցիին ակնարկությունները¹³ և մեկնության կիսատ թողվիլը ապացույց են անոր հասուն տարիքի մեջ գրված լինելուն:

ԾՆՈՐՀԱԼԻՆ ԻՐ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներսես Ծնորհալի իր աշխատության համար ունի երկու նպատակ:

1. «Որպեսզի ամենքով միասին փառավորվի փառքի անկարոտ Աստված»:

¹⁰ Աճ, էջ 20:
¹¹ Ալիշան, անդ, էջ 118—119:
¹² Գործեան Ե., անդ, էջ 240:
¹³ Ալիշան, անդ, էջ 118:

⁹ Ծնորհալի, անդ, էջ 16:

2. Որպեսզի «Ավետարանի խոսքերը դուրբնկալ լինին զանոնք սորվող ուսումնասեր մանուկներուն»¹⁴, իմա՝ եկեղեցվո զավակներուն:

Ելնելով այս մեկնակետեն, Ծնորհալի հավակնությունը չուցի իր սեփական հեղինակությամբ միայն հրապարակ ելնելու, ուստի մենք զգուշությամբ կամփոփեն Ավետարանին յուրաքանչյուր խոսքի մասին սուրբ հայրերու ընդարձակածավալ հկարագրությունները՝ սուանց անոնց անուններուն և աղբյուրներուն հիշատակության, որ ընդունված սովորություն մըն էր ժամանակին: Ան ուզած է՝

«Հավաքել սուրբերու տարածված խոսքերը և զանոնք դնել Ավետարանի յուրաքանչյուր խոսքին դիմաց... տեղ կա որ՝ մեկնիչներուն խոսքերուն հկարագրությունը դրինք նույնությամբ, կա որ անոնց միտքերը տված ենք մեր խոսքերովը՝ երբոր անոնք ընդարձակորեն կհատարանեն, կա որ անոնց այլևայլ տեղեր ցրված խոսքերը միասին բերած ենք ավելի ընտիր շարակարգությամբ՝ փոշորան մըն ալ մեզմե ավելցնելով՝ անոնց խոսքերուն անխնամ լինելու պարագային, կա որ գտած ենք զանազան գիրքերու մեջ, և կա ալ որ մեր իսկ ներածություններեն՝ որպեսզի ամենքովը միասին վիտավորվի վատքի անկարող Աստվածը»¹⁵:

ԾՆՈՐՀԱԼԻՆ ԵՎ ՈՍԿԵՐԱՆՆԸ

Ներսես Ծնորհալին սուրբ հայրերեն ամենն շատր կհետևի Հովհան Ոսկերբանին:

ԱՌԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ ԳԼ Ա, ԲԱՆ 1

ԾՆՈՐՀԱԼԻ

Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի որդոյ կարթի որդոյ Աբրահամու:

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Զինչ խօսի անտարանիչս, զմիածնէ որդոյ Աստուծոյ հանդերձեալ է ճառել, եւ զդաւիթ ի մէջ բերէ. զայր մի՝ որ յետ բազում ժամանակաց եղեւ: Այլ դու հանդարտ լեր, եւ մի զամենայն այժմ խնդրեր: Քանզի ոչ զառաջին ծննդեանէ որ անպատմելին է, պատմէ մեզ. զի զայնմանէ Եսայի ասէ. թէ ազգատոհմ նորա ո՞ պատմեսցէ. այլ զայս որ յերկրի աստ եղեւ. նաեւ ոչ զայս հնար է բովանդակ ճառել, զի անկարելի է բացի: Նա՛ եւ այսքան եւ եթ ցուցանել, եթ ճշմարտի որդին Աստուծոյ յանձն Լառ լինել որդի մարդոյ, զի գնուելէն արասցէ որդի Աստուծոյ: Եւ յորժամ լսիցես՝ թէ Աստուծոյ որ-

¹⁴ Ծնորհալի, անց, էջ 16:
¹⁵ Անց:

Այդպես կընեն նաև Սարգիս Ծնորհալիի կաթողիկե թուղթերու մեկնության պարագային և ուրիշները: Կլայեցին ալ կառնեն Ավետարանին յուրաքանչյուր գլուխը և ապա ամեն մեկ համարը առանձինն, զոր կմեկնեն իրեն հատուկ գեղեցիկ, սեղմ և հստակ լեզվով մը, շատ անգամ բառացի հետևողությամբ, այն աստիճան, որ չենք կարծեր պսալած լինել, եթե Ծնորհալիին այս գործն անվանենք Ավետարանին Ծնորհալիին մեկնությունը ըստ Ոսկերբանի: Ասիկա թե՛ մեկնության եղանակին որդեգրության և թե՛ բացատրություններու հետևողության համար:

Շատ անգամ հատվածներ կան, զորս Ծնորհալին շարադրական ավելի ճշգրիտ հպումով մը նույնությամբ փոխ կառնեն Ոսկերբանին: Բայց մինչ Մատթեոսի Ա գլ. առաջին համարին մեկնության, սուրբ Հովհան Հայրապետը կհատկացնե 34 երես, Ծնորհալին կբավականանա երեք երեսով, ի հարկին Ոսկերբանին քառ առ քառ մեջբերումներով: Օրինակ՝ կառնենք սա բառդատական հատվածը, որ Ծնորհալին հավատարիմ է բնագիրին ճշգրտության և անոր բացատրության կերպին և անմիջապես կըմտնե նյութին, մինչ Ոսկերբանը 34 տող ներածականե մը ետքը կանցնի նյութին, և չի խաղիր համուն ավետարանչին, այլ իր և ավելի համարձակությամբ:

ՈՍԿԵՐԱՆՆԸ

«Գիրք լինելոյ Յիսուսի Քրիստոսի որդոյ Դաւթի որդոյ Աբրահամու»:

ՄԵԿՆՈՒԹՈՒՆ՝ 64 տող նախարանե մը ետքը կգրէ:

«Գիրք, ասէ, լինելոյ Յիսուսի Քրիստոսի որդոյ Դաւթի որդոյ Աբրահամու»: Զի՞նչ խօսիս. զմիածնէ որդոյն Աստուծոյ յոստացար ճառել, եւ զԴաւիթ յիշես. զայր մի՝ որ յետ բազում ազգաց եղեւ, եւ զնա նմա նախնի՞ կոչես: Եւ դու հանդարտ լեր, եւ մի զամենայն միանգամայն խնդրեր ուսանել, այլ մեղմով եւ սակաւ սակաւ. զի այժմ դեռ առաջի դրանց կաս մօտ յանդատական արտաքինս՝ զի՞ այդչափ փութաս յանմուտսն մտանել. չեւ ես զարտաքինս զամենայն քաջ նշմարեցեր: Քանզի ոչ եթէ զայնմ ծննդեանէ պատմեմ քեզ. նա եւ ոչ զմիտէն՝ որ յետոյն եղեւ. քանզի անճառ եւ առանց հասանելոց է: Եւ նախ քան զիս՝ զայս քեզ Եսայի մարգարէն ասաց... եթէ: «Հազգատոհմն նորա ո՞ պատմեսցէ: Եւ այժմ ոչինչ

դին՝ եղև ըստ մարմնոյ որդի դասի եւ Արքանահամու, մի յերկուանայցես՝ եթէ դու որդի ադամայ՝ ոչ լինիցիս շնորհօք որդի Աստուծոյ. զի ոչ իզոր ինչ եղև գայուստ նորա, եթէ ոչ՝ հանդերձեալ էր մեծ ինչ գործել: Ծնաւ ըստ մարմնոյ՝ զի դու ծնցիս ըստ հոգոյ: Ծնաւ ի կուսէ՝ զի դու ծնցիս յաւազանէ: Վասն այնորիկ եւ ծնունդ նորա է մնան մեքումս, եւ է ի վեր քան զմերս. ի կնոջէ ծնանելն՝ այս մեզ անկէ է. եւ ի կուսէ եւ առանց առն՝ այն բնութեանս ստեղծողին է: Որպէս ինքն հոգեորապէս ծնաւ զըստ մարմնոյ ծնունդ ծնանիմք եւ մեք ըստ հոգոյն զվերստին ծնունդն:

(ՄԵԿԵՆՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ Որ ըստ Մատթէոսի արարեալ ի սրբոյն

Ներսիսի շնորհալոյ: Կ. Պոլիս, 1825: Էջ 23—24):

գառաջին ծննդեան պատմիցեմք, այլ զայնմանէ որ աստ ի խոնարհս յերկրիս եղև քազում վկայիւք: ...քանզի եւ զայս չէ ինչ հնար՝ թէ ամենեւին բովանդակ կարիցեմք ճառել. զի ահագին է եւ անքննական: ...զի եւ որդի է անսկզբնական Աստուծոյ... առնոյր յանձն անուանիլ եւ որդի Դասի, զի զքեզ արասցէ որդի Աստուծոյ, յանձն առնոյր հայր իւր անուանել զճառայն, զի քեզ ծառայիդ արասցէ հայր զտէրն: ...եւ արյւ յորժամ լսիցես, թէ որդի Աստուծոյ՝ որդի է Դասիայ եւ Արքանահամու, մի ինչ այնուհետեւ յերկուանայցես, եթէ դու որդի Ադամայ ոչ լինիցիս որդի Աստուծոյ: Ջի ոչ եթէ ի գուր ինչ եւ վայրապար այնչափ զինքն խոնարհեցոյց, եթէ ոչ հանդերձեալ էր զմեզ բարձրացուցանել: Ծնաւ ըստ մարմնոյ, զի դու ծնցիս ըստ հոգոյն: Ծնաւ ի կնոջէ, զի դու ծնցիս յաւազանէ՝ որ եղերդ որդի: Վասն այսորիկ կրկին ծնունդ եղև, եւ մեզ նման, եւ ի վեր քան զմեզ. զի ի կնոջէ ծնանելն՝ այն մեզ անգ է. եւ ոչ յարեմէ եւ ոչ ի կամաց մարմնոյ, այլ ի հոգոյն սրբոյ, այն նմա՝ որ ի վեր քան զմեզ ծնունդ էր. եւ ի մեզ հանդերձեալ էր կատարել, յառաջագոյն գուշակէր. զի որպէս ինքն առանց արեան եւ առանց կամաց մարմնոյ ծնաւ զերկրորդ ծնունդն, նոյնպէս եւ մեք առանց արեան եւ առանց մարմնոյ ի սուրբ հոգոյն ծնանիցիմք զվերստին ծնունդն: Նաեւ մկրտութիւն եւ այլ ամենայն այսպիսի ինչ՝ էր սորին օրինակ:

(ՅՈՎՎԱՆՆՈՒ ՈՍԿԵՅԵՐԱՆԻ ՅԱԻԵՏԱՐԱՆԱԳԻՐՆ ՄԱՏԹԷՈՍ Գիրք կրկին

Վեներիկ, Ս. Ղազար, 1826: ճառ Բ. երեսք 19—21):

Վերի հատվածներուն քաղղատութենեն կտեսնվի, որ Ծնորհայիին մեկնությունը շատ տեղ իմաստով և բացատրությամբ միևնույնն է Ոսկեքերանին հետ՝ միայն իմաստությամբ խտացված:

Երկուքն ալ մեկնության համար ծանոթագրելու տեղ կատեճաքանեն:

Անոնք Մատթէի Ա առաջին համարը արտասանելեն ետքը կհարցնեն:

«Ի՞նչ ըսել կուզե՞ս ավետարանիչը (կամ մեկնիչը) որ կոչված է ճառելու Աստուծո միածին որդիեն, և ահա կմեջքերե՞ս անունը Դավիթի, մարդ մը որ երկար ժամանակ ետքը եղավ»:

Երկուքն ալ բեմեն կհանդարտեցնեն ունկընդիրները և կպատասխանեն: Աստվածորդին հանձն կառնե մարդու որդի լինել, որպեսզի հողելուն մարդը դարձնեն Աստուծո

որդի: Ավետարանն այսպես, Հիսուսի Քրիստոսի ծննդյան պատմության հետ, կհայտնեն նաև Աստուծո բովանդակ տեսչությունը կամ նախախնամությունը, Եհովային, Դավիթին և Արքանամին տված խոստումը և ավետիքը, թե անոնց շառավիղեն պիտի ծնի Մեսիան, որով պիտի օրհնվի երկրի բոլոր ազգերը: Այս հիմամբ է, որ Հիսուսի Քրիստոսի ծննդյան ազգահամարին մեջ կհիշվին Դավիթն ու Արքանամը և սուրբ կույսի անվան տեղ իր ազգակից խոսեցյալը Հովսեփը: Վերջինին պատճառներն են հին օրենքը, որ կթույլատրեր ամուսնությունը միայն ազգակից եղողներուն միջև, սովորությունը, որ այրերուն կուտար առաջնությունը, նախազգուշությունը, որպեսզի կուսական ծրնունդին հոչակուով իբր պատրվակ չճառա-

յեր հակառակորդներուն անապական կույտը զրպարտութեամբ քարկոծելու:

Այս առիթով ներկայիս կկցենք հատկապէս մը թարգմանաբար սուրբ Ներսէսի մեկնութենէ՝ գաղափար մը տալու համար առհասարակ սուրբ հայրերու տրամաբանության, ոճից, հունտորութեան, քարոզական ձիրքին և մանավանդ Աստվածաշունչի ծով հմտության, որոնց ամենուն արծայտ բերանն է մեր Հայրապետը Ներսէս Շնորհալի:

ՕՐԻՆԱԿ ՄԸ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻՒ ՄԵԿԱՆՈՒԹԵՆԵՆ

«Գիրք ճնունդի՝ Դավիթի որդի, Աբրահամի որդի՝ Հիսուսի Քրիստոսի» (Մտթ. Ա. 1):

Մեկնություն

Ի՞նչ կխոսի ավետարանիչը. նա հանդերձալ էր ճառել Աստուծո միածին որդիեն, և ահա կմեջբերե Ռավիթը. մարդ մը, որ շատ մանանակ էտքը եղալ:

Հանդարտ եղիր դու, և ամեն բան մի ուզեր հիմա:

Վասնզի առաջին ճնունդեն, որ անպատմելի է, չի պատմեր մեզի, որովհետև անոր մասին Նսային կլսե. «Ո՛վ պիտի պատմե անոր ազգաստոհմը». այլ այս ճնունդեն, որ հոս երկրի վրա եղալ: Թեև այս ալ անհնար է ամբողջութեամբ ճառել, վասնզի խոսքով կարելի չէ: Այլ միայն այսքան ցուցնել, յոն ճշմարտապէս Աստուծո որդին հանձն առալ լինել մարդու որդի, որպեսզի թեզ հողեղենդ ընէ Աստուծո որդի:

Այ երբ լսե, յոն Աստուծո որդին, ըստ մարմնի, եղալ Դավիթի և Աբրահամի որդի, մի զարմանար, միթե դու՝ Ադամի որդիդ, շնորհքով չես լիներ Աստուծո որդի: Վասնզի իզուր բան մը չեղալ անոր զայուստը, եթե նա կոչված չլիներ մեծ բան մը ընելու: Ծնալ մարմնով, որպեսզի դու ծնիս հոգիով: Ծնալ կույսե, որպեսզի դու ծնիս ավազանեն: Ասոր համար ալ անոր ճնունդը նման է մերիցին, և մերիցեն ավելի վեր է: Կնոջմե ծնիլը մեզի անկ է. իսկ կույսե և առանց այդ մարդու՝ այն բնության ստեղծողին է: Ինչպէս որ ինքը հոգևորապէս ծնալ մարմնիցն ճնունդը, մենք ալ հոգիով կծնինք վերստին ճնունդը:

Այ որպեսզի ավետարանիչից Հիսուս անուն ըսելովը չմոլորիս, անոր անվանակիցովը քովը կդնե, յոն Դավիթի որդի է: Քանի որ Նավեի որդին՝ Հեսու, Հուդայի ցեղեն չէր, որմն էին Դավիթ և Քրիստոս, այլ ուրիշ ցեղն մը:

Այ ինչն՝ կլսե Հիսուսի Քրիստոսի լինելուն գիրքը (ազգարանությունը), Երբ հանդերձալ է պատմել ամենը:

Ինչպէս, օրինակ, Մովսէս՝ երկինքի և երկրի ստեղծումի գիրք ըսելով կնշանակե ոչ միայն երկինքն ու երկիրը, այլև այն ամենը, որ անոնց մեջն են, Մույնպէս ասով ալ կը յայտնե ոչ միայն Հիսուսի ծնունդը, այլև բովանդակ տեսչությունը:




Ուկանցած Աստվածաշունչ, Քրիստոսի ճճնդարանություն ծառը, ըստ Մատթեոսի Ավետարանի

Այ ինչն՝ Ուախ կհիշե Դավիթը և ապա Աբրահամը:

Վասնզի մարդը ամենուն բերանն էր՝ ժամանակին մտաւորությամբ: Որովհետև յոն պետև Աստուծո, Ավետիքը տրվեցալ երկուքին, Աբրահամին՝ յոն «քո զավակովդ պիտի օրհնվին երկրի բոլոր ցեղերը», և Դավիթին՝ յոն «քո որովայնի պտուղեն պիտի նշատեցնեն քո այթողը». սակայն նա՝ իբրև հինք մուցված էր, և սա, որպէս նոր, հայտնի էր: Ասոր համար ալ դպիրները Հերովդեսին մտ վկայության ատեն չէին հիշեր Աբրահամը, այլ յոն Դավիթի զավակեն, Բեթլեհեմ գյուղեն, ուրկե Դավիթն էր, պիտի զարիստոս: Ասիկա հրեշտակն ալ կավետև կույսին, յոն՝ Տեր Աստված անոր պիտի տա իր հոր Դավիթին այթողը. և մարգարեն ալ յոն՝ «Դավիթի այթողը պիտի նստի նա»: Այ զինք Աբրահամի որդի չէին կոչեր, այլ Դա-

վիթի, ինչպես որ կույրերն ալ կաղաղակեին: Եվ երբ Տերը փարիսեցիներուն կհարցանէ, թե «Քրիստոս որո՞ւն որդին է կըսէք»: Դավիթի՝ կըսեն: Վասնզի լսած էին մարգարե-վիթի՝ կըսեն: Վասնզի լսած էին «Դավիթ պիտի գա, ներեմ, որ կըսեիք, թե «Դավիթ պիտի գա, Դավիթ պիտի հայտնվի»: ոչ թե անոր մասին, որ վախճանեցավ, այլ անոր զավակեն, որ պիտի լինէր աշխարհի փրկիչը:



Խորան, 1251 թ. ձեռագրից, մանրանկարիչ՝ Վարդան

Եվ ուրկե՞ կըսեն, թե Դավիթեն էր, քանի որ ոչ թե այրն, այլ կնոջմե ծնալ և կույսը չի մտներ ազգահամարից մեջ:

Դուք լսե Աստուծո, որ ըսավ Գաբրիելին. «Գնա կույսին, որ ճշանված է այն մարդուն, որուն անունն է Հովսեփ՝ Դավիթի ցեղեն և տունեն:

Արդ, եթե Հովսեփ Դավիթի ցեղեն էր, հայտնի է, թե կույսը անոր մերձավոր ազգական էր: Վասնզի օրենքը կհրամայեին ուրիշ տեղե կին չառնել, բայց միայն միննույն ցեղեն:

Եվ թե ինչո՞ւ կույսը չառնէր ազգահամարին մեջ, այլ միայն Հովսեփը:

Ասով բնավ մի երկմտիր. վասնզի անոնց համար օրենք չէր ազգահամարի մեջ թվել կիները, այլ միայն այրերը: Եվ որպէսզի սկզբնական օրենքին սովորությունը չլուծէ,

այդ պատճառով ալ լուս կննա կույսին նախ-նիքներուն մասին և կմեջքերն Հովսեփինն-րը:

Դարձյալ՝ վասնզի չէր ուզեր շուտով հայր-նել հրեաներուն, թե Քրիստոս ծնած է կույսն, որպէսզի անոնք, այդ բանին չհապատալով, մեղքի քարուրանքներով չքարկոծեին կույսը: Անոնք իրենց չարության ձեռքնու ունեին անցած ժամանակը, այն, թե սկիզբեն ոչ ոք լսած է, որ կինը կծնի առանց այր մարդու:

Իսկ թե Հովսեփին, որ արդար էր և սպասավոր խորհուրդին, ինչու պետք եղավ հրեշտակին երևումը և մարգարեին վկայությունը:

Աղիկա կուսական ծնունդն ընդունելու համար է: Հրեաներն ի՞նչպէս կրնային ազատիլ չար կարծիքներն, քանի որ նոր և չեղած բաներ էին, որոնց երբեք ականջալուր եղած էին: Եվ ապա Դավթեն հետո կրկերանա մինչև օրհնության առջնորդ՝ Աքրահամ: Վասնզի անոնք երկուքն ալ զարմանալի էին հին ատենները, մեկը իբր մարգարե և թագավոր և մյուսն իբրև հայր նահապետներու. և վասնզի ամուլ Սառայնն եղած ծնունդին ավետիսովը պատկերացավ բանին ծնունդը, որ եղավ սուրբ կույսեն. ասոր համար կըսեն՝....

ՆՇՄԱՐՆԵՐ

Ներսես Ընդհանրահայրից գրած մեկնություններուն վրայեն ութ դարեր սահած են:

Պատմական, տեղագրական, բնագրական, ձեռագրական և հնագիտական պեղումներն ու հայտնությունները նորանոր հորիզոններ բացած են Աստվածաշունչի հասկացողության և մեկնաբանության համար: Բայց ինչպէս կտեսնվի Ընդհանրահայրի «Մեկնություն տասն խորաններուն համար»-ին ամփոփումեն և Մատթեոսի առաջին գլուխ մեկ համարին մեկնությունեն, հեղինակին մշակումները այսօր անգամ հետաքրքրական են և զուրկ չեն շահեկանությունեն:

Տարակույս չկա, թե Ընդհանրահայրի և նմաններու մեկնությունները, գերազանցապես շատագուրական լինելով, անխուսափելիորեն լեցուն են հոնտորությանը, գուցե անհարկի ընդլայնումներով և քարոզչական անպայման մտահոգությամբ:

Ասոնք ամենքը բնական են հին ժամանակներուն համար: Գիրքերը շատ քիչ էին: Ընթերցողները սակավ, իսկ եկեղեցիները՝ լեփ-լեցուն կլինեին կենաց բանին ծարալի բազմությամբ:

Ուստի, սուրբ հայրերը, ինչ որ կգրեին Ավետարանին կապակցությամբ, կգրեին մի-

¹⁸ Ներսես Ընդհանրահայր, ակն, էջ 23—25:

նույն անպայման քարոզելու առաջադրու-
թյամբ եկեղեցվո թեմեն, կամ զանոնք մույ-
նությամբ սորվեցնելու իրենց աշակերտնե-
րուն և ժողովուրդի՞ն՝ ուր և երբոր հնարավոր
լիներ:

Ներկա մեկնիչներուն մտ թերևս շատ
անգամ կ'պակսի հոգեշահության կամ հոգե-
շինության կայծը, որ խարույկի հանգույն
այնքան կրոցալուսեր Ոսկերեանի և Շնոր-
հալիի տիպով մեկնիչներու սիրտերն ու
գրիչները:

Մոռնալու չէ նաև նորերեն ունաց զար-
տուլումը...: Անոնք երբեմն նոր բան մը
ըսելու մարմաջով շուտ կու գան անհարիր
գրույցներու, դիցաբանության, կենսաբանու-
թյան, բանասիրության և այլ բավիղներու
մեջ, իբր թե անոնց տվյալներով կարենալ
բացատրելու համար հայտնյալ կրոնքին
անմեկնելի խորհուրդները:

Իսկ հիններու մտ նման արտաքին ակ-
նարկներ եթե պատահին անգամ, անոնք կը-
ծառայեն սխալ և թյուր ուսուցումները հեր-
քելու, մոլորութենէ զզուշացնելու և մանա-
վանդ կենաց բանին ե աստվածային ճշը-
մարտության պատուքն ունեցող հոգիները
հակադրության դարձվածքներով զորացնե-
լու:

Եթե կան վարդապետներ, ինչպես «Ելո
աղանդոց» գիրքին նեղիմակը, որոնք բա-
րեպաշտության ծիրին մեջ արտաքին գի-
տության անուղղակի ներաստներուն ոլոր-
տին մեջ ալ ոտը կկոխեն համարձակ, ա-
նոնք զայր կընեն, որպեսզի սուրբ գրական
վկայություններուն նետ անոնց իսկ ընձեռած
փաստերովը պապանձեցնեն անդուուն բե-
րանները և կարկեն գակատած լեզուները:

Հավանական է, որ Շնորհալին հունարեն
և լատիներեն լավ չգիտնար, բայց աղ ըսել
չէ, որ ինքն անտեղյակ էր Ավետարան բա-
ռին ստուգաբանությանը, զոր չի տար, ան-
շուշտ որ նա գիտեր ավետարանիչներու և

անոնց խորհրդապատկերներուն վերաբերող
այլ ծանոթություններ, բայց զանոնք զանց
կընեն հիշել չվրիպեցնելու համար ունկնդիր-
ներուն ուշադրությունը: Ուսուցիչեն մակի
քարոզիչ է նա: Ուստի արտաքին բաներու
բուլեն կանցնի հեզիկ մը տահելով: Այս
զգուշության հակառակ, սակայն, տեսլ կը-
փորձվի սուրբգրական բունաբուսիկ վկայու-
թյուններուն փաստարկությամբ... որ իր
մեղքը չէ միայն, եթե մեղք համարելու է
աստվածաշնչական գիտելիքներու թլումը՝
սուրբ Գիրքը սորվեցնելու դիտումով...

Այսպես են չորս Ավետարաններուն ծա-
գումին ժամանակագրության, կարգին, չորս
հատ լինելուն իր պահպանողական մտե-
ցումները՝ համաձայն հեղինակին ապրած
մամանակին տվյալներուն և լույսին:

Հայտնի է, որ սուրբ Ներսես կ'այեցին
ծնած և սնած է գերազանցապես կրոնա-
շունչ միջավայրի մը մեջ:

Ասոր հետ նա դաստիարակությամբ ալ
գիտակ է իր ի ծնե և ի պաշտոնե հոգևորա-
կան լինելուն, կենաց բանը քարոզելուն և
ուսուցանելուն, ժողովուրդին հայր և եկեղեց-
վո վարդապետ լինելուն կոչումին:

Հեղինակին ինքնության այս գիծերը շուշա-
փելի են թե՛ իր կատարած Ավետարանի և
թե՛ Ընդհանրական թուղթերուն մեկնություն-
ներուն մեջ:

Էն տիրականը Ավետարանի մեկնության
մեջ քարոզչության գիծն է: Ասոր համար սլ
սուրբ Ներսեսի արծաթ գրիչով տողված այս
մեկնության այսօրվան ընդերցողն իսկ
ստեպ ղեմ հանդիման կու գա հայոց Շնոր-
հալի Հայրապետին, որ եկեղեցվո սրբազան
բեմին վրա, խոսչն ու զավագանը ձեռին
կանգնած, կքարոզե՞ լի քրիստոնեական հա-
վատքով և սիրո կրակով, նման այն ամեն
ուղղափառ եպիսկոպոսներուն, «որք ուղիղ
վարդապետութեամբ համառօտեն ի մեզ
զբանն ճշմարտութեան»:

Ս. ՆԵՐՍԵՍ ԾՆՈՐՀԱԼԻԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԹՈՂԻԿՆ ԹՈՒՂԹԵՐՈՒՆ

Կաթողիկե թողթերը

Նոր Կտակարանի մեջ սուրբ Պողոսի Ժ՛ի
թողթերուն պես առանձինն փունջ մը կը-
կազմեն Կաթողիկե կամ Ընդհանրական
կոչվող յոթը թողթերը՝ գրված Հակոբոս,
Պետրոս (Ա և Բ), Հովհաննես (Ա, Բ, Գ)
և Հուդա առաքյալներուն կողմէ:

Այս յոթը թողթերու մասին հիցեն ի վեր
բուն վեճեր եղած են, հակառակ անոնց
վրա տարածվող Կաթողիկե մակդիբին, և
Եվսեբիոսի օրով անոնց բազում եկեղեցի-
ներու մեջ հրապարակով կարդացվելուն,
ըսնի որ Կեսարացի պատմիչն սուսչ Եղով


սուրբ հայրերը հարազատ կընկունեին մի-
այն երկուքը՝ Ա Պետրոսն ու Ա Հովհաննե-
սը, իսկ ունաց կերկմտեին մնացյալ հինգին՝
Հակոբուն, Բ Պետրոսին, Բ և Գ Հովհաննես
մասին՝:

Կաթողիկե կոչումը, զոր առաջին անգամ
կհիշե Եվսեբիոս շուրջ 810-ին¹, այս պարա-
գային ոմանը կվերագրեն վերոհիշյալ չորս
թուղթերը սուրբ Պողոսի առաքելական

¹ Եւսեբիոս, Պատմ. եկեղեցւոյ, Գալլ. Գ, գլ. Գ, էջ
146—148:
² Անոյ, էջ 132:

թողութեան վանազանելու կարիքին, և անոց, քացի Բ և Գ Հովհաննու թողութեան, տեղական որոշ եկեղեցիի մը կամ անձի մը ուղղված շինելուն, ինչպէս որ են Պուլուսի թողութեքը: Ուրիշներ կ'հիշեն նաև պատճառը զանոցն նախնի եկեղեցվո մեջ լայն տարածում գտած Կղեմեսի և Բառնաբասի ընդարձակ թողութեան և Հերմասի Հովիվեան տարբերելուն, և կամ ալ զանոցն գատորոշելու համար առաքելական պիտակը կրող այն բոլոր անվավեր գրվածքներեն, որ չեն

րոյական պարզ ուսուցումներ են, վարդապետական բացատրություններ, քրիստոնեական մտածումի և կենցաղի, դաստիարակչական հորդորականներ, ուր հրեական և հեթանոսական բարքերն զգուշացումի ազդարարություններն վեր գերազանցորեն կտիրապետեն Աստուծո սիրույն ճշմարիտ եղբայրսիրտության մեջ երևնալու նման գոյագործոց էջեր, որ ներշնչումի աղբյուր են դարձած ս. Ներսէս Շնորհալիին և Երզնկացի Հովհաննէս Պլուզից, որուն Սիրո Նրատը՝ Ոսնալվայի կարգին մեջ ներմտծված գեղեցիկ ընդլայնումը և հաստատումն իսկ է գայն կանխող Ա Հովհ. Դ 7—20 հատվածին:



Չուագրի խորանագարդ

արդարացներ իրենց վրա փակցված այդ մակդիրը¹:

Կաթողիկէ թողութեքն առհասարակ ուղղված են խումբ մը եկեղեցիներու և կամ ընդհանրապես քրիստոնէյա հավատացյալներու:

Անոցն հետաքրքրական են և շահեկան մասնավորաբար, վասնզի կշռալիեն եկեղեցվո նախնական մեկ շրջանին (84—150) կյանքն ու մտածումը: Բաց աստի, անոցն աստվածաբանութենն ավելի հոգևոր ու բա-

Նախընթաց ծանոթությունը, միացած ժամանակին զգացված պահանջին, հասկանալի կընծայեն Կաթողիկէ թողութեքու մասին ԺԲ դարուն միևնույն շրջանին մեր մեջ ստեղծված հետաքրքրությունը, քանի որ Սև լեռանց վարդապետանոցին դասակիցներեն երկուքը՝ Սարգիս և Ներսէս, իրարմե անկախաբար մեյ-մեկ մեկնություն կորեն Ընդհանրական յոթը թողութեքուն:

ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿՆ ՈՒ ԹՎԱԿԱՆՆԸ

Ընդհանրական թողութեքու Սարգիսի մեկնության հեղինակին մասին ոչ մեկ տարակույս չէ եղած: Բայց Շնորհալիի հեղինակության դեմ անտեղի կասկածողներ գտնված են:

Ըստ հ. Ղ. Ալիշանի քննության՝ Ներսէսի Կաթողիկէ թողութեքու մեկնության 1198-ի մեկ ձեռագիրին հիշատակարանեն ջնջված է հեղինակին անունը: Այս, գուցե նաև Շնորհալիի Կաթողիկէ թողութեքու և նույնին Մատթեոսի Ավետարանի մեկնություններուն միջև տեսնվող հորինվածքի և ոճի ակնբախ տարբերությունները, ոմանց կասկածել տրված են հեղինակին իսկությունը: Բայց Ալիշանի տեսած մեկ ուրիշ ձեռագիրը բնավ տեղի չի թողուր աղոր, քանի որ ան որոշապես կ'հաստատեն, թե հեղինակն էր «Հայրապետական արժանացեալ շնորհի և վարդապետական աստիճանի, Տէր Ներսէս, մականուանեալն Կյալեցի, հմտասիրացն հետեւելով պարուց»¹:

Ասոր վրա Ալիշան իրավամբ կ'ավելցնե երկու պարագա ևս: Այդ միևնույն ձեռագիրին մեջ Ներսէսի մեկնության կ'հետևի «Շնորհալույ գրած կամ սրբագրած ս. Սարգրսի վկայաբանութիւնն, և գրոց նախա-

¹ A. J. Grieve, „The Catholic Epistles“, Peake's Commentary On The Bible. Nelson et Sons, London, pp. 901—902.

¹ Ալիշան Հ. Ղ., Շնորհալի և պարագայը իր: 1878, Վևնտիկ, էջ 116:

գաղափարն՝ Շնորհալոյ եղբորորդոյ Կրի-
գոր Ապիրատից ըլլալն»⁵:

Ներսէս Կլայեցիի Կաթաղիկն թույլտեալու
մեկնությանն երբ գրված լինելու մասին որոշ
տվյալ մը չկա: Կթժի, թե ան, որպէս խնամ-
ված հալաքածո մը սուրբ հայրերու մեկնո-
ղական մտածումներուն, գրված լինելու է
Ներսէսի հայրապետական գահը բազմելէն՝
1188-են առաջ, գուցե ավելի վաղ հասակի
մէջ, իբրև ուսուցչական ձեռնարկ, որ կրնա
օգտակար լինել նաև քարոզիչներուն և ըն-
թերցող հասարակության:

Կացությունը. — Շնորհալիի Կլայթղիկն
թույլտեալուն մեկնությունը տակաւիին չէ
տպագրված: Մենք մոր քախտն ունեցանք
տեսնելու անոր մեկ օրինակը շնորհիվ Վե-
նետիկի Մխիթարյան ուխտին ընծայած դու-
րություններուն:

Ա. Ղազարու թիվ 101 ձեռագիրը, միջին
ծավալ, երկսյուն, նորագիր, լուսանցագարդ
և կաշեկազմ, ընդօրինակված Կ. Պոլիս,
1720-ին, կպարունակէ և՛ Սարգիսի, և՛ Ներ-
սէսի համաճում մեկնությունները: Շնորհա-
լիինը Սարգիսիցն էտքը՝ «Հաաքումն
Մեկնութեան Եօթանցունց Թղթոցն Կաթո-
ղիկէից» վերտառությամբ⁶:

⁵ Աճղ, էջ 116:

⁶ Սարգիսի Կաթողիկայց մեկնությունն ունի երկու
տարբեր խմբագրություններ տասնյակ մլլ տարիներ
ուրու հետախույզությամբ, երկուքն ալ կատարված նոյն
ինքն հեղինակին ձեռքով: Աղբարձակը յուսցված է
1158-ին, իսկ համառոտը՝ 1188-ին:

Սարգիսի մեկնությունը նրատարակված է Կ. Պոլիս
և «Մեծ արժեք ունի թե՛ մեկնողական սեյն և թե՛ նր
նորդարակներուն քարոզական ձիրքին և թե՛ ըն-
տիր հայկերացության համայն» (Մ. Օրմանյան, «Աղ-
բ պատմութեան», Ա, հատ. 958): Այլշահն գայն կհամարի
գրված «Երկար քննարարությամբ և ալ երկար խրա-
տական հորդորակոր, ջանալով Ոսկերեանի ոճով
Ոստիլ ... շարադրությունն հատակ. և ավելի սլար-
լլլալով, գրուցվածքն ալ կակող և սրտարուի անա-
խորժ չըլլար կարդալու» («Շնորհալի և սարագայր
յար», էջ 114—115):

Սարգիսի մեկնությունը միաձույլ և միատարր է:
Ան թեև մտնէ կվետի Ոսկերեանի և այլ սուրբ
հայրերու, բայց իր ժամանակին ընդունված դրության
համաձայն՝ բացի մտաքարանեն ուրիշ տեղ չի Ռի-
շեր մեքերած վկայությունները:

Ըստ Գուրջանի Ոսկերեանին գատ, ան սուտ կամ
ազգային որևէ առաջնորդ մը չէ կրցած ունենալ...
գլուխ համած է իր **Մեկնութիւնը** օռչ դժուարապա-
տում և երգահանականօ քառերու կիրարկումով ս
ուչ ալ «զեղբուկ բանիք» աղափալելով իր բնագիր-
նրուն իմաստն ու տեսությունը»: Ա. արք. Գուրջան,
Պատմ. Հայ Մատենագրության, Երուսաղեմ, 1892,
էջ 201—202:

Նկարագիրը.—Ներսէս Կլայեցիի այս
գործին քաղվածական շարադրանքը, սեղմ
ծավալը, մեքերված վկայություններու հե-
ղինակներուն իրենց անուններով հիշատա-
կությունը, ծաղկաքաղ ընտիր հալաքածոյի
մը բնույթը կուտան Հնդհանրական թույլտե-
րուն իր մեկնության, որ բոյորովին այլ նկա-
րագիր ունի մինչև նոյն հեղինակին Ալեքսա-
րանի մեկնութեանն և Սարգիս վարդապետի
համաճումն մեկնությանն ընդարձակ ու համա-
տար կրկնակ խմբագրություններն: Կլայե-
ցից այստեղ շատ մտտ է մեր օրերու մեկնիչ-
ներուն, որ կարճ և տեղին նոտերով կգոհա-
նան լուսաբանել ուզված իմաստը և կխորշին
խճողումներն և ճալաղաղումն:

Շնորհալի Կաթողիկն թույլտեալուն մեկնո-
ւթյան առթիվ պետք չի տեսներ ընդհանուր
ներածություն մը գրելու, բայց յոթը ճամակ-
ներն յորաքանջչորին սկիզբը կգետելէ
կարճ, գրեթե մեկական սյունակ ճախարդո-
ւթյուն (հատաքարան) մը՝ նշելով մեն մի
ճամակի հեղինակին ինքնութունը, թույլին
որոնց և ինչու գրված լինելը, ընդհանուր
բնույթը և բովանդակությունը: Ներսէս անց-
նելով բուն նյութին առանձին կնշանակէ
մեկնելի բնագիրին համարը նույնությամբ,
կամ հատված մը՝ իմաստին համաձայն: Ա-
պա մեկ-երկու կարճ պարբերությամբ կուտա
անոր մեկնությունը, յորաքանջչոր մեքեր-
ումինց գլուխ նշանակելով մեքերված
վկայության վկայություններուն հեղինակնե-
րուն անունները, որոնք են՝ Ոսկերեան, Սե-
լեոնոս Անտիոքացի, Կյուրեղ Աղեքսանդ-
րացի, Բարսեղ Կեսարացի, Սեբրիանոս,
Թեոդորոս կրճավոր, Թերվոդորիտոն,
Հլուսիքոս, Գիդիմոս, Եփրեմ, Տիմոթեոս,
Մաքսիմոս և այլն:

Նկատելի է, որ մինչ Սարգիսի համաճում
մեկնության համառոտ խմբագրությունը վե-
նետիկի վերահիշյալ ձեռագիրին 471 երես-
ները կրճեն, Ներսէսինը 184 էջ է միայն,
որմն ամենն երկայնը՝ Ա. Հովհաննոն 77,
իսկ ամենն կարճը՝ Բ. Հովհաննոն 8 երես:

Ա. Ներսէսի Կաթողիկն թույլտեալուն մեկ-
նության վրա գաղափար մը կազմելու հա-
մար այստեղ թարգմանաբար կուտանք
հատված մը՝ իբր նմուշ ամբողջության:

ՀԱՏՎԱԾ ՄԸ
ՇՆՈՐՀԱԼՈՒ ԿԱԹՈՂԻԿՆ ԹՈՒՂԹԵՐՈՒ
ՄԵԿՆՈՒԹԵՐՆԵՆ

Ինագիրը.—«Հակոբոս, Աստուծո և Տեր Հի-
սուսի Քրիստոսի ծառա, սփյուռքի տաս-
ներկու ցեղերուի ողջունց:

Մեկնությունը.—Առաքյալներն յորաքան-
չյուրը սովորություն ունի իր գրություննե-
րու գլուխներուն գլուխը դնելու իր անունը,

իբրև պատիվ Քրիստոսի ծառայության
լուծին: Վասնզի Հիսուսի Քրիստոսի ծա-
ռա անվանվելու պատիվին նմանը չկա:
Տասներկու ցելերուդ կըսէ, որովհետև
ինքը թլիատության առաքյալ լինելով կը-
գրէ անոնց, որ հրեաներու անհավատու-
թեան զգվանքեն՝ սփռված էին հեթանոս-
ներու մեջ: Նախ զանոնք կուշունէ որպէս
խաղաղության ավետարանիչ:

ԴԻԳԻՄՈՍԻ

Շինչպէս աշխարհական մարդերը աշխար-
հական գիրերու՝ այսինքն մամուլներու և
մուրհակներու գլուխներուն վրա կնշանակեն
այն պատիվը, որով կնանչցվին, որպէսզի
աղով լսողներուն հնազանդությունը ընդո-
նին, այնպէս ալ առաքյալները կմակագրեն
իրենց Հիսուսի Քրիստոսի ծառա լինելը:

⁷ Ձեռագիր № 101, էջ 497, ս. Ղազար, Վեներտիլ:





Ա. ՀԱՏԻՑՅԱՆ

Ս. ՆԵՐՍԵՍ ԾՆՈՐՀԱԼԻՆ

ԵՎ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Ժամանակաշրջանը, ուր ապրում ենք, ընդհանուր եկեղեցու պատմության մեջ հատկանշվում է էկումենիզմով և էկումենիկ շարժման աշխուժացումով:

Եկեղեցու ժամանակակից միությանակաճ շարժումը սկիզբ է առնում մեր դարասկզբից, երբ դավանական ու ծիսական հողի վրա բաժան-բաժան եղած, պառակտված քրիստոնեական եկեղեցիները վերջապես ըմբռնեցին Քրիստոսով ճշմարիտ և վերջնական միության վերադառնալու անհրաժեշտությունը, և բոլորի մեջ էլ բարի ձգտում առաջ եկավ անկեղծ զղջումով հաղթահարելու բաժանումների գայթակղությունը, իրենց տաքելական գործն ու քարոզչությունը հաջողությամբ և ավելի մեծ արդյունավորությամբ կատարելու համար ժամանակակից աշխարհի պարհաններում:

Եկեղեցիների միության շարժումը հին է և հստակ է ընդհանուր եկեղեցու պատմության մեջ էկումենիզմ անունով:

Էկումենիզմ բառը ծագում է հունարեն οίκος (Օյկոս=տուն) բառից և սկզբնապես նշանակել է «բնակված ամբողջ աշխարհը» (Օյկումենե):

«Էկումենիզմ» բառը ունի, սակայն, պատմական մի շարք իմաստներ, որոնցից կարե-

վորն է երկու կամ ավելի եկեղեցիների կամ տարբեր դավանության պատկանող քրիստոնյաների միջև գոյություն ունեցող հարաբերությունները: Սա բառի ժամանակակից իմաստն է, որն արտահայտում է տիեզերական քրիստոնեության պատկանելու գիտակցությունը և այլ եկեղեցիների հետ միության ցանկությունը:

Այսօր այդ բառը ճշգրտորեն գործածվում է բացահայտելու համար այն ամենը, ինչ վերաբերում է համայն եկեղեցու միությանը, ինչ վերաբերում է Քրիստոսի եկեղեցու առաքելությանը, ուսուցմանը, պաշտամունքներին, ծառայությանն ու քարոզչությանը աշխարհին:

Անցյալում եկեղեցու կյանքում բոլոր այն ջանքերը, հանդիպումները, բանակցությունները, թղթակցությունները, որոնք դարերի ընթացքում կատարվեցին վերականգնելու համար Քրիստոսի սուրբ, առաքելական եկեղեցու ընդհանրականությունն ու մեկությունը, մտնում են էկումենիկ շարժման պատմության մեջ:

451 թվականին գումարված Քաղկեդոնի ժողովր պառակտեց Քրիստոսի տիեզերական եկեղեցու ընդհանրականությունն ու միությունը, մեկությունը, և ստեղծվեցին

Կայսրը այս ոգով և սամեայն վճռակա-
նությանը պաշտոնապես եկեղեցիների միու-
թյան հարցը դրեց Գրիգոր Գ Պահլավունու
և Շնորհալու առաջ:

Կայսեր առաջարկած միությունը իր խոր-
քում նպատակ ուներ խարխլելու Կիլիկիա-
յում նաև նորահաստատ հայ ազգային պե-
տականության հիմքերը և վնասակար էր
մեր եկեղեցու ինքնուրույնության և դարա-
վոր գոյության, որոնց շնորհիվ պաշտպանն էր
Շնորհալին:

Այս իմաստով պատմական ու նաև այժմե-
ական մեծ նշանակություն ունեն եկեղեցա-
կան միության հարցում 1165—1173 թվա-
կաններին Շնորհալու գրած 7—8 թղթերն ու
այլ զրվածքները, որոնցում հստակորեն նա
ճշտել է իր դիրքը և ահմանել իր սկզբունք-
ները միության հարցում հանուն հայ եկեղե-
ցու: Շնորհալու այդ դիրքը և սկզբունքները
ամփոփոխ պահվել են մինչև այսօր: Եվ երբ
հայ եկեղեցու առաջ հետազայում դրվել է
եկեղեցիների միության հարցը, մեր հայրա-
պետներն ու վարդապետները առաջնորդվել
են Շնորհալու ոգով:

Շնորհալու ժամանակ, 1165 թվականին,
առիթ ներկայացավ ուղղակի բանակցու-
թյունների մեջ մտնելու հույների հետ:

1164 թվականին վեճ ծագեց Բուրքինյան
Թորոս և Լամբրոնի տեր Օշին իշխանների
միջև: Շնորհալին հաշտարարի դեր կատա-
րեց և ամրապնդեց կիլիկյան հայ պետակա-
նության հիմքերը և կենտրոնախույս հայ
իշխաններին համախմբեց ազգային կենտ-
րոնական իշխանության դրոշի ներքո:

1165-ին դեպի Հոռմկլա իր ճանապարհին
Շնորհալին այցելեց Մամեստիա, ուր հան-
դիպեց «թագավորազարմ իշխան Ալեքսե-
ին», որը նշանակվել էր «դուքս կողմանցս
արևելեայց», և որը ցանկանում էր «մեծաւ
ուրախութեամբ» տեսնել Շնորհալուն և իմա-
նալ «զպատճառս պատակտելոյ միոյ եկե-
ղեցոյ Քրիստոսի»²:

Շնորհալին իր ստանձնած հայրենասի-
րական, հաշտարար առաքելությունը «զհա-
ստացեալ գործն արդեամբ» կատարելով,
ինչպես նշում է Լամբրոնացին³, վերադառ-
նում է Հոռմկլա, «աճքակ սիրով կապակ-
ցեալ» երկու հայ իշխաններին:

Ի պատիվ Շնորհալու մինչև Մամեստիա
նրան ուղեկցում է Օշինը՝ Լամբրոնի «գերա-
զույն իշխանն», ինչպես իր հորը անվանում
է Լամբրոնացին:

Մամեստիայում Ալեքս իշխանը, որը հե-
ծելագորաց սպարապետ էր, բայց և «կորո-

վամիտ և իմաստուն մի անձնավորություն»,
Ռետաշքրքրվում էր եկեղեցական հարցերով
և ուղում էր «խոհական հայոց առաջնոր-
դից» Շնորհալուց, իմանալ Քրիստոսի եկե-
ղեցու պատակտման պատճառները:

Շնորհալու Մամեստիա գտնվելու առիթից
օգտվելով իշխանը նրան հրավիրում է իր
պալատը, «հյուր պահեց ներսեսը, օրերով
բանակցեցաւ և վիճարանեցաւ անոր հետ,
բոլոր դավանական և ծիսական տարբերու-
թյանց վրա և գոհ մնալով անոր տված բա-
ցատրություններէն, խնդրեց, որ գիրի առնն
իր խոսած կետերը»⁴:

Շնորհալին Մամեստիայում շարագրում է
հայ եկեղեցու դավանության և կարգաց ու
ավանդությանց մասին իր առաջին գիրը, ո-
րի պատճենը պահել է Լամբրոնացին իր ժո-
ղովածուում, «Պատճառ խնդրոյ միաբանու-
թեան թագաւորին Հոռոմոց Էմմանուէլի և
սրբոց կաթողիկոսացն հայոց՝ ներսեսի և
Գրիգորիսի թուղթքն՝ գոյ գրեցին առ մի-
մեանց»⁵:

Հանդիպումից հետո Ալեքս իշխանի
խնդրանքով Շնորհալին գրի է առնում և նը-
րան է ներկայացնում, հանուն իր կաթողի-
կոս եղբոր և իրեն, «Զմերս դաւանութիւն
հաւատոյ և գկարգս եկեղեցոյ» զրվածքը:

Այս թուղթը եկեղեցական միության մա-
սին Շնորհալու գրած առաջին պաշտոնա-
կան թուղթն է, որի ամբողջական վերնա-
գիրն է՝

«Գիր հաւատոյ խոստովանութեան Հա-
յաստանեայց եկեղեցոյ, գրեալ ի ներսիսէ
արքեպիսկոպոսէ յեղբօր տեսուն Գրիգորի-
սի կաթողիկոսի հայոց, ի խնդրոյ գերապա-
տի փեսայէ ինքնակալ թագաւորին հոռոմոց
Մանուէլի Ալեքսի Մեծի պոստոստաւատօքի,
յորժամ ել յարևելս, և էր ի Մամեստիայ
մայրաքաղաքին Կիլիկեցոց, ի թուակնու-
թեան հայոց վեց հարիւր տասն և չորս»⁶:
(814+551=1165):

Հանդիպման և խոսակցության ժամանակ
Ալեքս իշխանը, ինչպես երևում է, Շնորհա-
լուն է ներկայացնում կայսեր կողմից նա-
խապես կազմված և իրեն ուղարկված գրա-
վոր մի հարցարան, ուր կային դավանական
և ծիսական ծանր մեղադրանքներ հայ եկե-
ղեցու հասցեին: Այդ մասին է ակնարկում
Շնորհալին իր սույն թղթի մեջ, երբ հաճախ
անդրադառնում է այդ հարցերին, նշելով,
թե «գրեալ էր ի թղթի», «դարձեալ գրեալ էր
ի գիրս», «ի գիրս ասացեալ էր», «գրեալ էր

² Մաղաքիա արքեպ. Օրմանյան, Ազգապատում,
Ա, Բեյրութ, 1858, էջ 1885:
³ Ն. Շնորհալի, անդ, էջ 113—282:
⁴ Անդ, էջ 117—144:

² Ն. Շնորհալի, Ընդհանրական թուղթ, ի ս. էջ-
միածին, 1865, էջ 116:
³ Անդ, էջ 115:

և զայս ինչ», «նաև այս ևս ամբաստանութիւն գրեալ էր զմեզ»:

Ընորհալին հետևողականորեն և հալատարին հայ եկեղեցու ավանդությանը, համարձակորեն պաշտպանում է հայ եկեղեցու դավանական դիրքը և ծիսական պաշտամունքային կարգ ու սարքը և չի զիջում ոչ մի հարցում:



Իր գրի առաջին մասում Ընորհալին հանգամանորեն ներկայացնում է հավատո մի հանգանակ, որի մեջ ընդարձակորեն կանգ է առնում մարդեղության խորհրդի և Քրիստոսի երկու բնությունների միավորության վրա: «Կխորշի Քաղկեդոնը հիշելեն և երկու բնություն բացատրությունը հերքելեն և կրքալականահա «չերկուց կատարեալ բնութեանց» միավորությունը պաշտպանել, զբմարդկային բնութիւնս խառնմամբ և միաորութեամբ» միացած ընդունիլ և ոմն և ոմն բանաձևը մերժել, որ Լևոնի տոմարի մեջ ընդունված է»⁷:

Ընորհալին բնությանց հարցում հետևողականորեն պաշտպանում է հետևյալ բանաձևը. «Ասեմք մի բնութիւն ի Քրիստոս»,

բայց «ոչ ըստ ետիքեայ, այլ ըստ Կիրոզի»: «Այս կերպով հայտարարում էր որոշյալ կրկնական սուսնց հունադավան որոշյալ մեղադրելու, որ միայն խոհական զգուշավորություն մըն է»⁸:

Օրմանյան սրբազանը նշում է, որ տեսակցության ժամանակ Ընորհալին երբեք իր կողմից կազմված հատուկ մի ծրագրի չի հետևում, այլ, ինչպես Ընորհալին էլ է վկայում, ինքը ներկայացնում է «ժամուս փութոյ համառօտ և յայտնի բանի, սակայն զրովանդակն պարագրելով, հաւատոյ մեր ճշմարտութիւն և եկեղեցոյ կարգաորոշիւն ի հարց սրբոց աւանդից ընկալեալ»⁹ (Ընդգծումը մերն է— Ա. Հ.):

Այնուհետև պատմական և աստվածաբանական փաստերով և «անսուտ բանիք» պաշտպանում է Քրիստոսի ծնունդը հունգլարի Յ-ին կատարելու առաքելական հրահանգը, պատկերների հարցում պնդում է, որ «Փրկչականն ընդունիմք և երկրպագիմք», իսկ սրբերի նկարները՝ «պատունմք», «Սուրբ Աստուածը», «որ խաչեցար»-ով ենք երգում, «ի դէմս Որդոյնց», սուրբ պատարագի գինու մեջ ջուր չխառնելը համարում է Լուսավորչից մնացած առաքելական ավանդություն, և այլ ծիսական հարցեր¹⁰:

Ընորհալին իր առաջին այս հավատո գիրը փակում է «երդամբ, թե ոչ ավելի ոչ պակաս բան մը գրած չէ, այլ միայն ու միայն ճշմարտությունը գիրի առած է... պարունակությունը կատարելապես հայ եկեղեցվո ազատախոհ և շինարար սկզբունքներու համաձայն է, մեկնությունները հիմնական են և հայոց դավանութենն կամ ծեսեն բան մը զոհված չէ»¹¹:

Ընորհալու սույն հավատո գիրը իր հայոց պատմության մեջ ամբողջությամբ մեջ է բերել նաև Կիրակոս Գանձակեցիին¹²:

Պատմական այս հանդիպումից մի տարի հետո, 1166 թվականին, Ալեքս իշխանը Ընորհալու հավատո այս գիրը անձամբ տանում է Պոլիս և հանձնում Կիո Էմմանուել կայսրին, հունաց Ղուկաս պատրիարքին և Սինդոնին, խոսելով նաև Ընորհալուց ստացած իր խորը և անկեղծ տպավորությունների մասին, որպես ժամանակի մեծ եկեղեցականի: Ընորհալու նամակի «պարզությունն ու զորությունը» մեծ տպավորություն են թաղնում Կ. Պոլսում, արքունիքում և բյուզանդական շրջանակներում:

⁸ Աճդ:

⁹ Ն. Ընորհալի, անդ, էջ 118:

¹⁰ Աճդ, էջ 126—144:

¹¹ Մաղաքիա արքեպ. Օրմանյան, անդ, էջ 1387:

¹² Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երեւան, 1961, էջ 121—147:

⁷ Մաղաքիա արքեպ. Օրմանյան, անդ, էջ 1886:

«Աքանչացաւ հիացաւ արքայն տեսնալ զգօրութիւն իմաստիցն» որ պարունակեալ էր ի բանս» Շնորհալուս, վկայում է Լամբրոնցիցի¹²: «Գովեցին զհաւատս հայոց ամենայն իմաստունք յունաց», ավելացնում է Կանճակեցիցի¹³:

Շնորհալու թղթի ազդեցության ներքո թեև ուշացումով, 1167 թ. սեպտեմբերին կայսրն իր առաջին նամակն է գրում Գրիգոր Գ Պահլավունուն, որն արդեն վախճանվել էր 1166-ին, «չաղագս այսր իրաց»՝ հայտնելով իր «սիրոյ ողջոյն»-ը և Շնորհալուս հրավիրում էր Կ. Պոլիս բանակցությունների համար:

Կայսրը և հույները կարծում էին, թե «Շնորհալին բացատրված գրութայմբ հնար է համաձայնության հանգիլ և գործը մշակելով, հայերը կրոնական միության ալ հպատակեցնել»¹⁴:

Կայսեր նամակում հստակորեն ասվում էր. «Պարտ է ամենեցուն որք ի ձեռն աստուածային մկրտութեանն զՔրիստոս զգեցեալ են... և մերձ են յամբիժ հաւատս, որպէսզի միատրեայք ի Քրիստոնէական լրումնըս՝ մի հօտ լինիցին ամենայն քրիստոնեայք և ի միոյ հովուապետէ ուսանիցին... և միով գաւազանաւ հաւատոյ հովուին ի միասին... և մի փարախ ուղղափառ եկեղեցոյ տաւաղեցին, զոր առանել ևս մանաւանդ Աստուած պահանջէ յիմում թագաւորութենէս»¹⁵:

Կայսերական նամակում ամեն բան ասված էր եկեղեցիների միության թափանցիկ շղարշի տակ, հունական մեծապետական ու գաղափարախոսական գերիշխանությունը հայ եկեղեցու և հայ ժողովրդի վրա հաստատելու տխուր վճռականությամբ:

Կայսեր «նամակը իր անորոշ բացատրություններով գաղտնի մտադրություն մը կրպարունակե կերպով մը հայերը հունական եկեղեցվույն հպատակեցնելու, և շատ անհավասար դիրք մը կուտա հայերուն... Նամակին գաղտնի մտքերը Ներսեսի աչքեն չվրիպեցան և ամենայն ճարտարությամբ ուզեց հույներուն գլուխը դարձնել ամոնց կազմած ծրագիրը»¹⁷:

Շնորհալին կայսեր 1167 թվականի սեպտեմբերին իր եղբոր և իրեն գրած նամակին պատասխանում է հանգամանորեն և համարձակությամբ ու սպառնիչ կերպով: Շնորհալու՝ կայսեր գրած նամակի վերնագիրն է. «Պատասխանի առաջին թղթոյն թագաւորին

հոռոմոց Մանուէլի, գրեալ Ներսիսի կաթողիկոսին հայոց»:

Նամակն սկսվում է հետևյալ քաղաքավարական խոսքերով. «Քրիստոսապսակեալ ինքնակալ ծիրանածին և օգոստոսավատ սուրբ թագաւորի, երկնաւորին յերկրի անունակրի և աթոռակալի...»¹⁸:

Այնուհետև Շնորհալին իր նամակում նշում է, որ իր կաթողիկոս եղբայրը մահացել է «որքս զմեզ ի հօրն բարոյ խրատու և խնամոց ի մէջ ծովու աշխարհի և շուրջ եղևոց օտից և կարճաց թողլով»¹⁹, որով իրեն անհնար է նման անցպատ պայմաններում Հայրապետական Աթոռը անտեղ թողնել և առանձինն Կ. Պոլիս գալ, ուստի ինքը կայսրին հրավիրում է «գալ յարևելս ի պատճառս նորին գործոյ և իրի»²⁰:

Ապա Շնորհալին շեշտում է, որ «Քրիստոսի եկեղեցու տիեզերական խաղաղությունը» վրդովվել է կրոնական նեղմտության, նախանձի և ատելության, «լեռնացեալ անբարտաւանութեան» և «բռնութեան» պատճառով²¹, որոնց հետևանքով էլ «մինչև ցայժմ» հայհոյվում է «երկոցունց կողմանց սուրբ հաւատոյ» կարգը²²:

Հորդորելով հույներին, որ խոնարհության օրինակ վերցնեն Քրիստոսից, Շնորհալին հստակորեն նշում է, որ եկեղեցիների միությունը չի կարող գլուխ գալ «թագաւորական հիարկու զօրութեամբ, այլ՝ քաղցրագոյն խոնարհությամբ»²³, որովհետև, գրում է, «եօթն հարիւր ամ անելի եղելոյ ժամանակաց բաժանման ի միմեանց անդամոցս Քրիստոսի»²⁴, 700 տարիներ, որոնց ընթացքում անել, խորացել է «ատելության ախտը» և նրանից ծնվող «թշնամությունն ու հայհոյանքը» դարձել են հիվանդություն և «երկրորդ բնութիւն հնացեալ սովորութեամբքն»²⁵, ծանր մի վիճակ, որը «կարօտ է բազում հոգևոր բժշկական իւղոց օժմանց, այսինքն սիրոյ գթութեանց և ողորմութեանց»²⁶:

Հիանալի է Շնորհալու համարձակությունը կայսրին գրած իր այս առաջին նամակում, երբ անցնող 700 տարիների ընթացքում, Քաղկեդոնի ժողովից սկսած, 451-ից մինչև իր օրերը, հույների երեսով է տալիս նրանց կատարած սխալները և կրոնական անհանդուրժողության վատ հետևանքները,

¹² Ն. Շնորհալի, անդ, էջ 144:

¹³ Կիրակոս Գանճակեցի, անդ, էջ 147:

¹⁴ Մաղաքիա արքեպ. Օրմանյան, անդ, էջ 1410:

¹⁵ Ն. Շնորհալի, անդ, էջ 145:

¹⁷ Մաղաքիա արքեպ. Օրմանյան, անդ, էջ 1411:

¹⁸ Ն. Շնորհալի, անդ, էջ 148—162:

¹⁹ Ն. Շնորհալի, անդ, էջ 148:

²⁰ Անդ, էջ 152:

²¹ Անդ, էջ 158:

²² Անդ, էջ 154:

²³ Անդ:

²⁴ Անդ:

²⁵ Անդ:

²⁶ Անդ:

որ է «ստերումն եկեղեցեաց և սեղանոյ Աստուծոյ կործանումն և նշանաց Քրիստոսի խորտակումն և բազում նեղութիւնք պաշտօնէից և պէսպէս գրպարտութիւնք, որպէս և ո՛չ ի մէջ թշնամեաց Քրիստոսի, յորս մեթն ենք»³⁷, և այս բոլորը պատճառներ են եղել «փախչելոյ մերոց ի ձէնք», որովհետև «այսպիսի գործ՝ ո՛չ միայն և զբաժանեալսն ո՛չ միտորէ, այլ և զմիտորեալսն պառակտէ ի միմեանց»³⁸:

Ի՞նչ է հարկավոր, ըստ Յնորհալու, ատելության և բռնության բյուզանդական այս ախտը բուժելու և որոշ չափով հայ և հույն եկեղեցիները միմյանց մտնեցնելու համար. սեր, խաղաղություն, հեզություն, հանդուրժողություն և այս ներդրամիտ ու քաղցր ոգով բնություն՝ վիճելի հարցերի, «ոչ հակառակութեամբ և անօգուտ բանակրոտութեամբ, որպէս մինչև ցայժմ, յորոց ոչինչ օգտեցա եկեղեցին»³⁹:

Բանակցությունների սեղանի շուրջ, ասում է Յնորհալին, նստենք, «եթէ տնօրինեսցէ Աստուած խօսիլ մեզ առ միմեանս, մի՛ եղիցի որպէս տեսնոմ առ ծառայս և ծառայից առ տեսարս... այլ հառասար ընդ հառասարի»⁴⁰:

Յնորհալին հույների հետ եկեղեցական միության հարցում շեշտում է նաև հետևյալը. բանակցությունների ժամանակ մեջտեղ դնել Աստվածաշունչը, առաքելական և եկեղեցական ավանդությունները, ս. հարց գրվածքները, և ինչ դուրս է աստվածադիր այդ կանոններից, «եթէ ի դասանութին հաստոյ և եթէ յասանութիւնս եկեղեցոյ», վերացնել մեջտեղից, հրաժարվել այդ բոլորից և միմյանց չմեղադրել և պակասը, թերին լրացնել «միաբանական սիրով», որով և հասկանալի կլինի, թե եկեղեցիների միության այս շարժումը «աստուածային» է թէ մարդկային»⁴¹:

Յնորհալին Կիո Էմմանվել կաթոլիկ գրած իր սույն նամակին կցում է նաև «հառատոյ» իր երկրորդ թուղթը, որը կոչվում է «Սահմանք հառատոյ Հայց. եկեղեցոյ՝ գրեալ Ներսիսի կաթողիկոսի հայոց, ի խնդրոյ աստուածասէր թագաւորին հոռոմոց Էմմանուէլի»⁴²:

Յնորհալին իր վերոհիշյալ «Սահմանք հառատոյ» գրին կցում է նաև իր երրորդ գրվածքը հայ եկեղեցու ծիսական-պաշտամունքային կարգ ու կանոնի մասին, որը կոչ-

վում է «Նորին» (Ներսիսի) յաղագս ասանդութեանց եկեղեցոյ»⁴³:

Յնորհալին իր երկրորդ և երրորդ զըրվածքներում երկրորդում էր «Գիր խոստովանութեան»-ի մեջ իր կանոնական աստիճան թղթի գրածը⁴⁴:

Յնորհալու երկրորդ և երրորդ թղթերը իրենց ամբողջության մեջ տարբերություններ չունենին թե՛ դավանական և թե՛ ծիսական-պաշտամունքային հարցերում:

«Առաջին գիրը,—հաստատում է Օրմանյան սրբազանը,—պարզ եպիսկոպոսի մը հեղինակությունն ուներ: Մանվել պետք կըզգար կաթողիկոսին ստորագրությամբ հաստատված հիմնագիր մը ունենալ... Ներսես կապարտավորվէր տալ և իբրև եպիսկոպոս գրածը իբրև կաթողիկոս վավերացնել»⁴⁵:

«Յաղագս ասանդութեանց եկեղեցոյ» կայսեր գրած իր երրորդ թղթում Յնորհալին վկայում է, որ «էին և այլևս յոլովագոյն պատճառք յաղագս արդարացուցանելոյ զմերս ասանդութիւն»⁴⁶, այսինքն հայերը ոչ թե «ինքնահանութեամբ» բաժանվեցին այլ ազգերից, այսպէս տոնելով, «այլ՝ այլ» զմերս ունելով յառաջագոյն, փոխեցին որպէս կամեցան, զոր այժմ ունին», «իսկ մերս եկեղեցի անփոփոխ զառաջնոցն պահեաց սովորութիւն»⁴⁷:

Ինչպես դավանական, այնպես էլ մեր եկեղեցու ծիսական կարգն ու ավանդությունները պահելու հարցում «Յնորհալին քարձրաքարքառ քարոզիչն է հայ եկեղեցւոյ ներդրամիտ և յայնախոհ տեսության, որ եկեղեցւոյ միությունը կըբռնէ հիմնական կետերու համաձայնության և փոխադարձ հղորդակցության մեջ և կմերժէ տիրապետության և ստրկաբար նմանողության ամեն պահանջները, որոնց վրա հաստատած են հույն և լատին եկեղեցիներ միության անհրրածեշտ պայմանները»⁴⁸:

Յնորհալու «Սահմանք հառատոյ» երկրորդ և «Յաղագս ասանդութեանց եկեղեցոյ» երրորդ գրվածքները կայսրի պատգամաբեր Սմբատ իշխանի ձեռքով Հռոմկայից 1188 թվականին ուղարկվում են Կ. Պոլիս: Սույն գրություններն արքունիքում և հունաց պատրիարքարանում մեծ հետաքրքրություն են առաջացնում, որովհետև Կ. Պոլսում «աստուածային եկեղեցոյ զխաղաղութիւնն» ավելի կարևոր էին համարում, «քան զբոլոր

³⁷ Աճղ, էջ 155:
³⁸ Աճղ, էջ 158:
³⁹ Աճղ, էջ 159:
⁴⁰ Աճղ:
⁴¹ Աճղ:
⁴² Աճղ, էջ 163—178:

⁴³ Աճղ, էջ 177—198:
⁴⁴ Մաղաքիա արքեպ. Օրմանյան, անդ, էջ 1416:
⁴⁵ Աճղ:
⁴⁶ Ն. Յնորհալի, անդ, էջ 180—187:
⁴⁷ Աճղ:
⁴⁸ Մաղաքիա արքեպ. Օրմանյան, անդ, էջ 1417:

հոսմանցուց տիեզերականութեանն յաղթութիւն»⁴¹:

Կիւ Էմմանուէլ կայսրը, կարողալով Յնորհալու գիրը, «գուարճանայր և բերկրէր յանձրն... նաև... Ամենայն դասք եկեղեցականացն և ամենայն թագաւորազարմ մեծի պալատացն, ... յայսկոյս, յայնկոյս ընթացային առ միմեանս ասելով, տեսէք զկայսրդիկոսին հայոց խոհական ճարտարութեանն հանճար նայեցարուք ընդ շաւիղս ողիղ խոստովանութեանն ընդ որ գնայ երանելին բովանդակ գարմիւն. փառք Աստուծոյ որ տեսանենք առաջնորդ եկեղեցոյ յայսպիսի ի նուագեալս ժամանակ»⁴²:

Յնորհալու՝ կայսրին գրած նամակը, մանավանդ նրան Արևելք և Հռոմկա հրավիրելու առաջարկը՝ եկեղեցական միության հարցով զբազմելու համար, կայսրի սրտովն էր, բայց կայսրը հուճարական և սերբիական կրիվներով՝ «արևմտական աշխարհին շփոթմամբ զբաղեալ»⁴³, ոչ միայն չէր կարողանում Արևելք գալ, այլ նաև Յնորհալու 1167 թվականի նամակին անձամբ պատասխանում էր, առաջին անգամ, մեծ ուշացումով, 1170 թվականին, մայիսին⁴⁴ Հռոմկա ուղարկելով նաև իր պատգամավորներին՝ հանձնին «ուրմ ճարտարաբան փիլիսոփայ» Թեորիանոս մագիստրոսին և հայազգի Հովհաննես Ուրման եպիսկոպոսին, «ի հարց և ի փորձ, որպէս զի ամենևին ի վերայ հասցէ ճշմարտապէս կամաց Հայաստանեայց՝ թէ՛ ակործելի՞ է նոցա միաւորութեանն խընդիր»⁴⁵:

Հռոմկայի Հայրապետանոցում Յնորհալու և Թեորիանոս մագիստրոսի միջև տեղի է ունենում վիճաբանություն: Յնորհալին Քրիստոսի «բնությանց» հարցում պաշտպանում է եկեղեցու մեծ հայրերի և մանավանդ Կյուրեղ Ալեքսանդրացու ծանոթ բանաձևը՝ «մի է բնութիւն Բանին մարմնացելոյ», իսկ Թեորիանոսը չէր ընդունում կյուրեղյան բանաձևը. «առ այս ոչ կամէր տեղի տալ ասելոյ անճառ միաւորութեանն մի բնութիւն» և անդում էր «զերկուց բնութեանն յատկութիւն անշփոթ» քաղկեդոնական բանաձևի վրա: Յնորհալին, սակայն, վճռականորեն «երկոքումքքն սպառնազինէր», այսինքն Քրիստոսի երկու բնությանց հարցում «միությունը պաշտպանելով՝ Նեստորի դեմ և անշփոթությունը՝ Եվոսիքեսի դեմ»⁴⁶:

Վիճաբանությունները վերջնական ու հրատակ որոշման չհասան: Յնորհալին այս առթիվ կայսրին գրեց իր երրորդ նամակը 1170 հոկտեմբերին դարձյալ, «վասն ճշմարիտ դասնութեան հուատոյ Հայց. եկեղեցոյ»⁴⁷:

Յնորհալու այս նամակից հետո էլ անցնում է երկու տարի: Կայսրը զբաղվում էր վեցնետիկցիների դեմ պատերազմելով, միաժամանակ, որպեսզի «հայոց կայսրդիկոսին նամակն ու ընթացքը կշռէր, միության գործին մասին գործնական ծրագիր կազմեր և զայն վերջացնելու ձեռնարկէր»⁴⁸:

1172 թվականի վերջերին Հռոմկա էին հասնում կրկին անգամ կայսրի պատգամավորները՝ Թեորիանոս մագիստրոսն ու Ուրման եպիսկոպոսը՝ Յնորհալուն բերելով կայսրի և Միքայել պատրիարքի նամակները, «յաղագս նույն խնդրոյ միաբանութեան երկաքանչիւրոց ազգաց եկեղեցոյ ի Տէր մերի Քրիստոս»⁴⁹, «բանակցությունները շարունակելու, և եթէ հաջողեին, ավարտելու պաշտոնով... և բանաձևված առաջարկությանց ցուցակ սը, ինը գլուխներու վերածված»⁵⁰:

Կայսրի նամակը, միաժամանակ, առաջարկում էր Յնորհալուն՝ ժողով գումարել, ընդունել իրենց ներկայացրած հետևյալ ինը «զլիակարգեալք խնդիրքը» «ուսկս միաբանութեան»:

Նզովել «մի բնութիւն» դավանողներին, ընդունել «երկու բնութիւն», «երկու կամք», «երկու ներգործութիւն» քաղկեդոնական բանաձևը, «Սուրբ Աստուած» երգից վերացնել «որ խաչեցար» քառերը, տոները հույների հետ կատարել, մեռողը ձեթից պատրաստել, պատարագին խմորուն հաց և ջրախառն բաժակ գործածել, ընդունել Դ, Ե, Զ, և Է «տիեզերական» ժողովները և հայոց կայսրդիկոսի ընտրությունը ենթարկել հունաց կայսրի նավանությունը:

Յնորհալուն գրված Միքայել պատրիարքի նամակում էլ շեշտվում էր միաբանության անհրաժեշտությունը և հայտարարվում էր, թե «սուրբ և առաքելական եկեղեցին (իմա՝ թյուզանդականը) զգիրկս իր պարզեալ ունի ձերում սրբութեանդ և է պատրաստ ի ձեր ընդունելութիւնդ»⁵¹:

Կայսրի և պատրիարքի առաջարկած ինը գլուխները «կատարելապէս հայ եկեղեցին հոռոմացնելու նպատակ ունեին և կերևի թե հույներ միամտորեն հավատացած էին, թե Ներսեսի միության վախճաք պիտի կարե-

⁴⁰ Ն. Յնորհալի, անդ, էջ 210:
⁴¹ Անդ:
⁴² Ն. Յնորհալի, անդ, էջ 186:
⁴³ Անդ, էջ 188—188:
⁴⁴ Անդ, էջ 186:
⁴⁵ Անդ, էջ 188:

⁴⁶ Անդ, էջ 198—208:
⁴⁷ Մաղաքիա արքեպ. Օրմանյան, անդ, էջ 1424:
⁴⁸ Ն. Յնորհալի, անդ, էջ 212—218:
⁴⁹ Մաղաքիա արքեպ. Օրմանյան, անդ, էջ 1431:
⁵⁰ Ն. Յնորհալի, անդ, էջ 218:

ճար մինչև իր եկեղեցին վուխխելու հաս-
նի»⁵⁰:

Այս բուրից հետո Շնորհալու քրիստոսա-
ծավալ ու բարի հոգին վրդովվեց, վշռվեց,
եք իբր պատասխան իր երեք թղթերի, ըն-
դունեց հույների այս 9 գլուխ առաջարկները,
որպես պայման եկեղեցական միության, ա-
ռաջարկներ, որոնց նպատակն էր դավա-
նական, ծիսական ու վարչական հողի վրա
վերացնել հայ եկեղեցու անկախությունն ու
ինքնագիտությունը: «Ո՛չ գիտէք, որոյ հոգւոյ
էք դուք», մտածում էր Շնորհալին:

Կարող, Միքայել պատրիարքը և հույների
Սինողը այսպես էր հասկանում հայ-հույն
եկեղեցական միության հարցը:

Շնորհալին այս առիթով կախարհն և հունաց
պատրիարքին գրած իր նամակներում շեշ-
տում էր որ հավատո և ծիսաաշտության
մեջ ազգային տարբերություններն ու ավան-
դությունները եկեղեցական հարաբերության
մեջ վճռական նշանակություն չունեն, և դը-
րանք երբեք պետք չէ դառնան հիմք հա-
կատակության և ազգային թշնամության,
ինչպես մարմնի սև կամ սպիտակ գույնը «ո-
չինչ վնասեն զմարմին, յորժամ բնութիւնն
առողջ իցէ նոյնպէս և որք զհաստն առողջ
ունիցին, չէ ինչ վնաս ոգւոց՝ տօնից կամ այլ
ինչ արանդութեանց եկեղեցւոյ զանազանու-
թիւն» (Ն. Շնորհալի, անդ, էջ 188):

«Միտքն իսկ անցնելիք բան չէր, որ Ներ-
սես և հայեր կարենային այդ պայմաններու
ներքև միաբանություն կնքել և առաջարկյալ
գլուխները ընդունիլ... Շնորհալի Հայրապե-
տը երբեք իր շնորհալի կերպերը ձեռքն չը-
թողլով՝ պատասխանում էր հույներին, թե
ինքը «առանց ազգային ժողովի և արևելյան
եպիսկոպոսներու և վարդապետներու հետ
համաձայնության, պատասխան չէր կրնար
տալ»⁵¹, որովհետև, գրում էր, թե «առանդու-
թիւնն եկեղեցւոյ մեր գոր ունիմք, ի վկա-
յութենէ Աստուածաշունչ գրոց հաստատեալ
են», թե հայ եկեղեցու ուղղափառությունը
«ի հարց անտի իջանէ» և հայ եկեղեցին «ոչ
իբր ի մոլորութենէ դառնայ ի ճշմարտու-
թիւն», և թե Հայրապետական Աթոռը գրտ-
նըվում է հայրենիքից դուրս, օտարության
մեջ, «ի մէջ այլասելից, և աշխարհ մեր յան-
օրինաց ի ստրկութիւն մատնեցաւ, սակայն
հիմն հաստատութեան մեր նոքա են (արե-
վելյան վարդապետները) և գլխոյն (իրեն՝
Շնորհալուն) անհնար է առանց անդամոցն
գործոյ իրիք կատարումն առնել»⁵²:

Կարևոր և Միքայել պատրիարքի նամակ-
ներին պատասխանելուց հետո, Շնորհալին

Հոռմկլայում ազգային-եկեղեցական ժողով
գումարելու հրաման էր տալիս. «զի ամենե-
քին ի միասին եկեալք եպիսկոպոսք և վար-
դապետք, հարք վանաց ճգնաւոր կրօնա-
ւորօք սոս ի բննել զխնդիրն խաղաղու-
թեան, և ամենեցուն միաբան պատասխա-
նել»⁵³:

Սակայն, 1178 թվականի օգոստոսի 19-ին
Հոռմկլայում, հինգզարթի օրը, ծանրորեն
տկարացած վերջին ջերմակալից, վախճան-
վում էր ս. Ներսես Շնորհալին, 72 տարե-
կան հասակում, և թաղվում իր եղբոր՝ Գրի-
գոր Գ Պահլավունի կաթողիկոսի կույքին,
«եւ մնայր այս գործ անկատար մինչև ցայս
վայր»⁵⁴:

Շնորհալու մահը մեծ վիշտ է պատճա-
ռում նաև հույներին և կայսրին. «Վշտա-
նայր բարեպաշտ արքայն և հառաչանօք
ասէր. մեծ զգաչարան և արթուն բարձաւ այ-
սօր յեկեղեցւոյ Աստուծոյ, զրկեցան Հայաս-
տանեայք յերկրորդ Լուսաւորչէն իր-
եանց...»⁵⁵:

Կայսրը հրահանգում է Շնորհալու հիշա-
տակը սուրբ պահել. «Մեք զարժանի յիշա-
տակի անուն քո ընդ առաջին սրբոցն դա-
սակարգեմք տօնախմբելով ուրախութեամբ
ի Քրիստոս, և պատուէր հրամանի ետ ի
թագաւորական քաղաքին եկեղեցիս»՝ յիշա-
տակել զնա ընդ առաջին սուրբսն տօնա-
խըմբութեամբ»⁵⁶:

«Քանզի այրն իմաստուն ո՛չ եթէ խոհա-
կան բանին և գիտութեանն պատմութեամբ
հիացուցանէր զնոսա, այլ առաւել ի սբան-
չելի վարուցն պատմութիւն... զհեզահայեցո-
ղութիւն հոգւոյ և զպարկեշտութիւն անձինն
և զճգնաւորական կրօնսն...»:

Այսպես ջուրն ընկալ վեկեղեցական միու-
թյան հարցը հույների մեղքով: Օրմանյան
սրբազանը, իրեն հատուկ ընդգրկումով, ծա-
վալուն խորաթափանցությամբ ու թափով,
քննության առնելով Շնորհալու օրով եկեղե-
ցական միության ի նպաստ թափված ջան-
քերը ու դրանց ձախողումը, եզրակացնում է.
Շնորհալին «սրտի կսկիծով կնկատեր քրի-
ստոնեության անջատումները և անոր գործ-
նական վնասները կտեսներ իր աչքին առջև
Հոռմկլայի դիտանոցեն, որուն ստորոտը
հույներ և լատին և հայեր անհաշտ կերպով
իրարու դեմ կմրցեին և իրարու վնասելու և
իդար կործանելու կաշխատեին: Ներսես,
վե՞ր ու բարձր զգացումներով վառված սիրտ
մը քրիստոնեական միավորությունը իբր
միայն պայման կնկատեր այդ չարիքին...

⁵⁰ Մաղաքիա արքեպ. Օրմանյան, անդ, էջ 1482:
⁵¹ Անդ, էջ 1488:
⁵² Ն. Շնորհալի, անդ, էջ 210—221, 222—227:

⁵³ Անդ, էջ 227:
⁵⁴ Ն. Շնորհալի, անդ, էջ 227:
⁵⁵ Անդ, էջ 228:
⁵⁶ Անդ:

Ներսես չէր ընդուներ եկեղեցի մը՝ տեղ, որ հրամայե, և եկեղեցի մը՝ ծառա, որ հնազանդի, եկեղեցի մը, որ ինքզինքը ուղղության կանոն կարծե և եկեղեցի մը, որ մյուսը ընդօրինակելու պարտավորվի... Ներսեսի տեսությամբ պետք չէր որ եկեղեցիներն ոչ մի՞նք քրիստոնեությունը իբր իր սեփական ստացությունը ըմբռներ և ոչ ալ իր դրությունը իբր ամենու՞ն պարտավորիչ առաջարկեր, այլ ճշմարտությունը պիտի հաստատվեր մասերու միավորության մեջ:

Այս դրությունը իսկապես և տիրապես հայադավան եկեղեցվո սկզբունքն է, որուն ո՛չ հունադավանը կմոտենա և ո՛չ ալ հռոմեադավանը կհավանի. բայց Ներսես իր բարեմտության մեջ կկարծեր թե հնարավոր է զանոնք համոզել...

Ներսեսի զգացած միությանական ձգտումը, ճշմարիտ քրիստոնեի անկախ զգացումն էր, գուտ հայադավանություն էր, և չենք գիտեր թե ինչպես անոր մեջ ոմանք հունադավանություն տեսան և ոմանք ալ՝ հռոմեադավանություն գտան... Ներսես անկեղծ և ճշմարիտ և քոլորանվեր փափաքող մըն էր, որ Քրիստոսի եկեղեցին պառակտող բաժանումը վերացվեր և իրարու դեմ մրցող չարս ճյուղերը հայն ու ասորին, հույն ու լատին դաղարեին իրարու դեմ պայքարել... և իրարու համաձայնեին էական և դավանական կետերու մեջ, մաքի և ուղղության համաձայնությամբ, բանասձևերն ու բացատրությունները ազատ թույլով յուրաքանչյուրին, բայց իրար հանդեպ միշտ սեր ունենան:

...Շնորհալին իր միությանական ձգտումներուն մեջ, քրիստոնեական և ազետարանական սկզբունքներուն հետ՝ ազգասիրական և քաղաքագիտական զգացումներ ալ ուներ և իր տառապասլ և վարատական հայ ազգին համար իսկական օգնություն և գորություն մը կվիճարեր, քրիստոնյաներու համերաշխ միության մեջ, շղատահիս մեջ խաղաղություն, բարօրություն և ապահովություն կփափաքեր հայթայթել իր վշտակիր հոտին:

Մենք չպիտի վարանինք հոչակել Շնորհալին՝ իբր հայ եկեղեցվո անկեղծ ախույան և հայադավան դրության ճշմարիտ ներկայացուցիչ, որ ավելի ճշդությամբ գիտցած է զձեզ և ճշտել մեր ազգային եկեղեցվույն ուղղությունը»²⁷ (Ընդգծումը մերն է — Ա. Հ.):

Ամենայն ինչ ասվել է այստեղ հրաշափորեն Շնորհալու միությանական ձգտումների և ջանքերի տրամաբանական, ճիշտ ու հայեցի մեկնարանությամբ: Շնորհալու գծած ազգային-եկեղեցական այլ ուղղությունից

հետագայում երբեք չի շեղվել հայ եկեղեցին: Ի՞նչ է այսօր Շնորհալու պատգամը, դասը մեզ, իր մահվան 800-ամյակի առիթով:

Շնորհալու օրով հայ և մյուս եկեղեցիների միջև գոյություն ունեցող միջեկեղեցական հարաբերությունների փշոտ, ցավալի պատմության 700 տարիներ: Իսկ այսօր՝ 1500 տարիների տխուր պատմություն ունի այդ հարաբերությունը:

Բայց ժամանակները փոխվել են. փոխվում են նաև շատ մտայնություններ: Կյանքը, հասարակությունը մշտական շարժման ու փոփոխման օրենքով են ընթանում:

Ժամանակաշրջանը, ուր ապրում ենք, Էկումենիկ շարժման դարն է:

Հայ եկեղեցին, Մայր Աթոռի գլխավորությամբ, անդամ է եկեղեցիների համաշխարհային խորհրդին և ակտիվորեն մասնակցում է միջեկեղեցական հարաբերությունների համաձողովներին:

Այս առթիվ երախտագիտությամբ պետք է արձանագրել Հայոց Հայրապետի, մեր օրերի Վազգեն Ա Շնորհալու՝ եկեղեցիների միության մասին գրած 1965 թվականի հունիսի 4 սրբատառ կոնդակի հետևյալ մտքերը, կոնդակ, որը գրվել է Ներսես Շնորհալու եկեղեցիների միության սկզբունքներով և օրմանյանական թախով ու համոզմունքով...:

«Եկեղեցին, իբրև աստվածային նախալրցմանության գործ, անշուշտ մեկ է և տիեզերական, սակայն այդ աստվածային տնօրինության իրագործումը երկրի վրա զգեցած է և կզգենու արտաքին տարբեր տարազներ, համաձայն ժողովուրդներու հոգեկան դիմագծության և Աստուծո խոսքը ընկալելու և ապրելու կերպին, և համաձայն պատմական իրադրությանց ու ավանդություններուն, որոնց մեջ ծնած ու աճած են եկեղեցիները:

Այս երկու հազար տարիներու ընթացքին, քրիստոնեությունը, եկեղեցիները հաճախ կտրծք տված են արտաքին այնպիսիներու և ներքին հակամարտություններու և պառակտումներու, և երբեմն նույնիսկ յոճամական փոխադարձ գործողություններու, սակայն, Աստուծո ողորմությամբ, ամոնք կարողացած են հասնիլ խաղաղության ավիին, շարունակելով իրենց սրբազան առաքելությունը, ամեն մեկը իրեն սահմանված հոտին մեջ:

Մեր օրերուն, փա՛ռք Ամենակալին, այնս չկան ոչբարեկամական դրսևորումներ եկեղեցիներու միջև: Այլևս ոչ ոք չի մտածեր մին վեճերու և հակառակություններու մասին: Այսօր բոլոր եկեղեցիները, բոլոր քրիստոնյաները կխոսին փոխադարձ հանության մասին, գործակցության մասին, միության մասին:

²⁷ Մաղսքիս արքեպ. Սրսանյան, ակո. էջ 1413, 1414, 1442, 1443:

Հայաստանյայց առաքելական և եկեղեցին դավանաբանական հարցերու նկատմամբ իր մտածելակերպով ու բանաձևումներով թեև կմնա անշեղ ու հաստատ իր ավանդական ուղղափառ դիրքերում վրա, սակայն, ինչպես անցյալի մեջ, այսօր ալ կառաջնորդվի «Միութիւն ի կարևորս և ազատութիւն յերկրայականս» հին ու քարե-քար սկզբունքով: Ուրեմն հույժ ցանկալի է, որ քույր եկեղեցիներու հետ մենք շարունակենք պահպանել ու մշակել իրաւ ջրիստոնեական եղբայրական կապեր, մեր մայր եկեղեցվո և մեր լուսաբնակ հայրապետներու ոգիով, եկեղեցիներու միջև միությունը տեսնելով ի Քրիստոս սիրո մեջ, փոխադարձ ճանաչման ու զնահատման մեջ, սերտ գործակցության մեջ:

Դավանաբանական, քրիստոսաբանական կամ այլ խնդիրներ այլևս արգելք չեն և ոչ ալ պայման՝ եկեղեցիներու սիրալիր հարաբերությանց ու եղբայրական գործակցությանց: Դավանաբանական դիրքերու վերաբնութայն ու միակերպումի ճանապարհով միութենական փորձերը տակալին կանխահաս են: Այսօր նման փորձեր կրնան դուռ բանալ նոր վեճերու, նոր անհասկացողություններու և իրարամերժ դրսևորումներու: Հիշենք, որ անցյալի մեջ հաճախ, միության մասին մարդոց տեսակետներն են եղած քրիստոնեական ճշմարիտ սիրո և միության ոգին խափանողը:

Վերաքննել ու փոփոխել տասնյակ մը և ավելի դարերու հույովայթով հաստատված կանոններ ու դավանաբանական բանաձևեր, նվիրագործված ավանդություններ ու ծիսական կերպեր, վատահորձ շփոթություն և դժգոհություն պիտի հառաջացնէ հավատացյալ ժողովուրդի գիտակցության մեջ, և տկարացում սիրո և հավատարմության դեպի մայր եկեղեցին, և հետևաբար քրիստոնեական հավատքի տկարացում ժողովուրդի հոգեբանության մեջ, ի մասնավորի ազգային եկեղեցիներու պարագային:

Մեր եկեղեցվո ծագման, կազմավորման ու զարգացման պատմության ու ավանդություններուն և մեր ժողովուրդին հատուկ կրոնական ապրումներու դրսևորման կերպերուն մեջ մենք կգտնենք մեր ազգային եկեղեցիին քրիստոնեական հարազատությունը և վավերականությունը:

Ազգի մը բազմադարյան կյանքի փորձով մարմին առած ու կյանքի ձև ստացած ավանդությունները, հոգեբանությունը և աստվածաբանական մտածելակերպը շատ ավելի գորավոր են ու վավերական, քան տեսական մեկնությունները, ինչքան ալ տրամաբանական թվին անոնք վերացական մտածումի առջև:

Հայ եկեղեցին չի կրնար անտեսել նաև իր գոյության ու իր առաքելության ազգային նկարագիրը: Մանավաճ ի սկյուռուս աշխարհի ցրված հայ ժողովուրդի համար, հայ եկեղեցին իր ինքնուրույն դավանաբանությամբ, ավանդություններով, իր ազգային լեզվով ու ծեսերով, իր սնկախ ու ժողովըրդապետական կազմակերպությամբ, ազգապահպանման հզոր ազգակ և ինքնապաշտպանության ամուր վահան կհանդիսանա այսօր, երբ մեր ժողովուրդի ավելի քան կեսը և մեր նվիրապետական պատմական Աթոռներու չորսեն երեքը կգտնվին մայր հայրենիքի սահմաններէն դուրս:

Հետևաբար եկեղեցիներու միությունը մենք կըղծանք իրականացած տեսնել հավատալով, թե Քրիստոսով և ս. Ավետարանով մեկ է եկեղեցին, և թե պատմական ազգային եկեղեցիներու գոյությունը, այնպես ինչպես անոնք կան այսօր, չի հակասեր և չի ծխտեր Քրիստոսով մեկությունը ընդհանրական եկեղեցիին:

Մեր օրերու, եկեղեցիներու միության գաղափարը և առաջադրանքը պետք է բանաձեւել իբրև միություն մը Քրիստոսի սիրուն մեջ, եղբայրական հարաբերությանց մշակումով ու սերտ գործակցությամբ, փոխադարձ հանդուրժողության, հարգանքի ու հավասարության պայմաններու մեջ, ամեն եկեղեցի պահելով իր դավանաբանական մտածելակերպը, իր ավանդությունները և իր ինքնագլուխ անկախ դեկավարությունը:

Եկեղեցիներու միության գաղափարը, մեր դարաշրջանին համար, օգտակար ձևով և բավարար չափով իրագործված է Եկեղեցիների համաշխարհային խորհուրդի շարժման հիմնական սկզբունքներով, որոնք բանաձևվեցան 1961-ին, Դեհլիի համագումարին: Ամենքս հոգեպես միախորոված ըլլալու ենք, եթե աշխարհի բոլոր քրիստոնյա եկեղեցիները, առանց խտրության, անկեղծորեն միանան և հավասար հեղինակությամբ եղբայրաբար գործակցին, մեր օրերուն՝ քրիստոնյա եկեղեցիները և համայն մարդկությունը հուզող կենսական հարցերու լուծման ճանապարհին: Եթե մեր սերունդը այդ իրականացնէ, արդեն պատմական մեծ հաջողություն մը արձանագրած պիտի ըլլա Քրիստոսի մի և ընդհանրական ս. եկեղեցին:

...Բոլոր պատմական եկեղեցիներու իմացության, ներքնչումի և ապրումի բյուրեղացած, առարկայացած այդ արտահայտությունները կկազմեն այն համաքրիստոնեական գանձարանը, որ իր ամբողջությամբ միայն, իր այլազանությամբ ու բազմաբանությամբ, նույնիսկ երբեմն իր հակասություններով, կարտացոլէ լիությամբ տիեզերքը Աստուծո խոսքին և կնառագայթ

վառքը Քրիստոսին, մտածումի տարբեր ձևերով, զգացումի տարբեր երանգներով, տարբեր լեզուներով, տարբեր դաշնավորումներով:

Պատմականորեն զարգացած ամեն քրիստոնեական եկեղեցի իր սուրբերով, իր դավանությամբ, իր ավանդություններով, իր գրականությամբ և իր արվեստով, ուրույն և անկրկնելի ապրող հուշարձան մըն է, կեցողանի խոսք մըն է, վավերական վկայություն մըն է՝ «վասն մեծի փառացն Աստուծոյ»:

Պետք է սրբությամբ պահել, պահպանել զանոնք ամբողջ, անխառն ու անայլալ, առանց հովտ մը իսկ ավելցնելու կամ պակասեցնելու: Պետք չէ աղքատացնել, պետք չէ տկարացնել, պետք չէ գունազերծել Քրիստոսի եկեղեցին:

Ինչքան իրավ ավետարանական հոգի կա, ինչքան մարդկային ճշմարտություն և ինչքան ողջմտություն՝ մեր երանաշնորհ երիմյան Հայրիկի բոլորիս ծանոթ այն պարզ ու վճիտ պատկերին մեջ, որով քրիստոնեական եկեղեցիները կնամանցներ մեծ ծաղկելուցի մը, ուր ամեն մեկ ծաղիկ իր ուրույն գույնը ունի, իր ուրույն երանգը և իր

ուրույն բույրը, բույրը մեկտեղված Քրիստոսի սիրո կապով:

Այսօր, եթե կա բան մը, որ մենք՝ քրիստոնյաներս և աշխարհի եկեղեցիները պետք է իրոք փնտրենք՝ այդ Քրիստոսի սերն է»:


Հայրապետական իր սույն կոնդակով Հայոց Հայրապետը հստակորեն արտահայտում էր նաև հայ եկեղեցու, մեր հոգևորականության և հավատացյալ հայ ժողովրդի զգացմունքը «եկեղեցիներու ցանկալի միության գաղափարին վերաբերյալ», և որպես գերագույն պետն ու գլուխը հայ եկեղեցուն՝ Վիրապետության, հրահանգում էր ու հորդորում «բանիվ և գործով ընթացալ մեր լուսաբնակ նախնյաց մեզի ավանդ թողած ճանապարհեն, անշեղ ու անսասան պահելով մեր առաքելական ու ազգային եկեղեցին, և անկեղծորեն, խնդությամբ գործել, իրականացած տեսնելու համար բոլոր քրիստոնյա եկեղեցիներու միությունն ու եղբայրությունը Քրիստոսի կենցարար սիրով»⁵⁸:

Արժան և իրավ:

Խոստովանեմք և հետեիմք:

⁵⁸ Վազգեն Ա Հայրապետ Հայոց, գլխը երկրորդ, Մայր Աթոռ ս. Էջմիածին, 1968, էջ 84—88:





ՊԱՐԳԵՎ ԸՆՀԱՄԱՋՑԱՆ

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ԸՆՈՐՀԱԼՈՒ ԿՅԱՆՔԸ
ԵՎ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

Այս տարի, օգոստոսի 13-ին, լրացավ հայ եկեղեցու մեծ Հայրապետ ս. Ներսես Ընդրհալու մահվան 800-ամյակը:

Ս. Ներսես Ընդրհալին միջեկեղեցական ճանաչում և համբավ է վայելել որպես բացառիկ երևույթ և եկեղեցու մեծ վարդապետ համաքրիստոնեական մշակույթի պատմության մեջ: Նրա ողջ կյանքը եղել է վիթխարի աշխատասիրության, անվհատ կամքի, ծառայության և անհուն հայրենասիրության մի հիասքանչ, ուսանելի օրինակ:

Ս. Ներսես Ընդրհալին սերում է Պահլավունի հայ իշխանական տոհմից: Նա ծնվել է 1101 թվականին կաթողիկոսանիստ Ծովք դոյակում, որը գտնվում էր Տյուք գավառում, Կիլիկյան Հայաստանի և Ասորիքի սահմանում, Այնթապից հյուսիս-արևմուտք:

Ընդրհալին իր կրթությունը ստացել է Տավրոսյան լեռներում գտնվող Ծուղրի կարմիր վանքում Ստեփանոս Մանուկ գիտնական վարդապետի ձեռքի տակ: Փոքր հասակից նա օժտված է եղել աստվածատուր բացատրիկ և բազմակողմանի շնորհներով:

Տասնյոթ տարեկան հասակում Ծովք դղույակում, ուր ժամանակավորապես հաստատվել էր Հայաստանյայց եկեղեցու Հայրապետական Աթոռը բուն Հայաստանում տիրող շաղաքական անցյալստ պայմանների բերումով, նա իր կաթողիկոս եղբոր՝ Գրիգոր

Գ Պահլավունի Հայրապետի ձեռքով ձեռնադրվում է կուսակրոն քահանա: Ժամանակակից կենսագիրը վկայում է, որ Ընդրհալին օրավոր աճում էր մտքով ու մարմնով և ստեղծագործում՝ «չունենալով մարմնական ոչ մեկ հանգիստ, այլ անդադրում ժուկալությանը իրեն տվել էր աղոթքի կրթությանը, աստվածաշունչ գրքերի ընթերցմանը և դրանց հարատև քննությանը: Ուստի, — շարունակում է կենսագիրը, — սուրբ Հոգուց նա ստացավ գիտության շնորհներ, որոնցով մեկնում էր ս. Գրոց խոսքերի խորագույն իմաստները: Նրա քաջակորով իմաստության վրա հիանում էր ժամանակակից ընտրյալ վարդապետների դասը»¹:

Ընդրհալուն ժամանակակից հունական և ասորական աղբյուրները նույնպես վկայում են նրա բազմակողմանի ուսումնականության, առաքինության, աղոթասեր ու ճրգնակյաց վարքի մասին. «Ինչպես որ լսել էինք, այնպես էլ տեսանք, որ մի նոր ոմն Գրիգոր աստվածաբան է մեջտեղ եկել»²:

¹ «Պատմություն վարոց սրբյան Ներսիսի կաթողիկոսի Հայոց և տիեզերայնս իմաստասիրի»: «Առփրք հայկական», ԺԴ, Վենետիկ, 1850, էջ 82—83:

² Կիրակոս Գամձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1981, էջ 118:

առաքինագարդ և սուրբ կյանքով մեծարվել է: Նրա շիրիմը եղել է ուխտատեղի.

«Պատուենք զսուրբ այս դամբարանի Փառագարդեալ երկնանման. Ուրախացիր պետդ վարժման Ծածուկ և սուրբ գրոց լուծման, Թողեր յերկրի գրով արձան»,—

վկայում է ժամանակի նրա կենսագիր Ներսես Լամբրոնացին:



Արդարև, Շնորհալու ողջ ստեղծագործությունը հանդիսացավ անձեռակերտ մի հուշարձան նրա անվան ու հիշատակին, գալիք թուր սերունդների համար:

Շնորհալու մահը մեծ վիշտ պատճառեց նաև Կիո Էմմանվել կայսրին և հույն եկեղեցուն. «Վշտանայր բարեպաշտ արքայն և հառաչանօք ասէր. մեծ զգայարան և արթուն բարձաւ այսօր յեկեղեցոյ. գրկեցան Հայաստանեայք յերկրորդ Լուսաորչէն իրեանց»: Կայսրը հրամայում է պահել Շնորհալու սուրբ հիշատակը. «Մեք զարժանի յիշատակի անուն քո ընդ առաջին սրբոցն դասակարգենք՝ տօնախմբելով ուրախութեամբ ի Քրիստոս. և պատուէր ետ ի թագաւորա-

կան քաղաքին եկեղեցիսն՝ յիշատակել զնա ընդ առաջին սուրբսն տօնախմբութեամբ»:

Ներսես Շնորհալին որպես մատենագիր ստեղծագործել է ավելի քան կես դար՝ 1121—1173 թվականների ընթացքում: Նա թողել է հարուստ, բովանդակալից և քաղվածաւոր մատենագրական ժառանգություն: Շնորհալու ստեղծագործության ժամանակաշրջանը Կիլիկյան Հայաստանի պատմության մեջ համարվում է եկեղեցական, մշակութային, քաղաքական, տնտեսական մեծ իրադարձություններով հարուստ մի ժամանակահատված: Շնորհալին իր մատենագրական վաստակով հանդիսանում է հայ մշակույթի կիլիկյան առաջին շրջանի մեծ ու բեղմնավոր ներկայացուցիչներից մեկը, համաքրիստոնեական չափանիշով եկեղեցական մեծ գործիչ և նույնքան մեծ մատենագիր:

Շնորհալու քաղվածաւոր ստեղծագործության մեջ մտնում են կրոնական, մեկնողական, դավանաբանական, ծիսապաշտական, պատմական, բանաստեղծական, գիտական, փիլիսոփայական, մանկավարժական, քաղաքական, երաժշտական, շարականագրական մեծարժեք երկեր: Նա իր կյանքով և ստեղծագործությամբ երկար դարեր իշխել է մեր եկեղեցական, մշակութային, մատենագրական կյանքի վրա՝ ներշնչող օրինակ հանդիսանալով հետագա դարերի հայ մատենագիրների, գուսանների և երաժիշտների համար:

Հայ եկեղեցու այս մեծ վարդապետի մատենագրական վաստակը համարյա անկորուստ հասել է մեզ: Սովորաբար ընդունված է Շնորհալու ստեղծագործությունները քաժանել երկու մասի՝ արձակ և չափածո:

Շնորհալին իր գրական գործերը ընդհանրապես հորինել է չափածո և «նախքան իր կաթողիկոսանալը, առույգ հասակում»⁵:

«Շնորհալին արձակ լեզվով գրել է միայն իր պաշտոնի վերաբերյալ գործերը, որոնք ունեն սակայն և՛ գրական, և՛ պատմական մեծ արժեք»⁶:

«ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ»

Շնորհալու բանաստեղծական չափածո ստեղծագործության նախընթաց երկն է սույն մեծ քերթվածը՝ գրված 1121 թվականին: Այն բաղկացած է 1600 տողից և, ըստ հեղինակի վկայության, շարադրվել է «հոմերական փիպասանության»՝ հայ գրականության մեջ Ռիմք դենլով մի նոր ժանրի: Քրիստոնե-

⁵ Մաղաքիա արքեպ. Օրմանյան, «Ալլպապատուն», Ա հտ., Բեյրութ, էջ 1988:

⁶ Մամուկ Արեղյան, Երկեր, Դ հտ., Եր., էջ 98:

ական ոգով և հայրենասիրական ջերմ շնչով գրված այս քերթվածը հայ ժողովրդի չափածո պատմությունն է սկզբից մինչև իր ժամանակները: Հեղինակը, Նորենացուն հետևելով, ուտանավորով պատմում է Հայկազն և Արշակունի տոհմերի մասին, այնուհետև կանգ է առնում Բագրատունիների վրա, երախտագետ սրտով խոսում է ս. Գրիգոր Լուսավորչի, ապա Պահլավունի տոհմի մեծ ներկայացուցիչների մասին՝ դրվատելով նրանց հայրենաշեն և եկեղեցանվեր գործերը: Քերթվածում զգացվում է հեղինակի հակալքրանքը հատկապես դեպի մահմեդական տաճիկները և նրանց կրոնին հետևող իր ժամանակակից մյուս ազգերը: Այս վիպասանությունը իր զուսպ շարադրանքով և լեզվի պարզությամբ սիրելի է եղել ոչ միայն իր ժամանակին, այլև հետագայում:

«ՅԻՍՈՒՍ ՈՐՈՒՑ»

Ծնորհալու բանաստեղծական տաղանդի փայլուն արտահայտություններից մեկն է համարվում 4000 տողից և երեք գրքերից բաղկացած այս երկարաշունչ քերթվածը՝ գրված 1152 թվականին, որի մեջ լայնորեն դրսևորվում են հեղինակի անհատականությունը և նրա մտքի ու երևակայության բարձր թռիչքը: Ծնորհալին իր սույն քերթվածը անվանում է «սրտի հեծության ողբասացություն և խոսք Աստուծո հետ»: «Յիսուս Որդին» Հին և Նոր Կտակարանների պատմության բանաստեղծական վերարտադրությունն է՝ ընդելուզված ընդհանուր եկեղեցու պատմության դրվագումներով: Քերթվածն ավարտվում է Բրիտանի երկրորդ գալլասյան, վերջին դատաստանի և աշխարհի վախճանի դանթեական նկարագրությամբ: Հստ հեղինակի բնութագրման, «Յիսուս Որդի» քերթվածը բովանդակում է մարդկության պատմության անցյալը, ներկան և ապագան: Նա միաժամանակ սրտաբուխ խոսք է Աստուծո հետ, մարգարտահեռ հյուսվածքով բազմազան աղոթքների մի շարք, որի մեջ երևում է մեծ երգացանցի և աղոթողի հոգին և ողջ էությունը, նման ականակիտ ու վճիտ մի աղբերակի, որը հանդարտ սահում է կարկաչելով, և որի խաղաղ ափին նստած մարդ սուզվում է խորհրդածությունների մեջ աշխարհի և հավիտենականության մասին:

Ծնորհալու այս գործը դարերի ընթացքում հայ ժողովրդի մեջ վայելել է մեծ ժողովրդականություն և եղել է հայ հավատացյալի ընթերցանության ամենասիրելի գիրքը: Առաջին անգամ այն տպագրվել է 1585 թվականին և այնուհետև ունեցել է վեց հրատարակություններ:

«ԲԱՆ ՀԱՒԱՏՈՅ»

Ծնորհալու այս քերթվածը գրվել է 1151 թվականին Հոռմկլայի հայրապետանցում: Այն բաղկացած է 1500 տողից և ունի կրոնա-դավանաբանական բովանդակություն: Ծնորհալու «Բան Հատույ» քերթվածը գրվել է ընդհանրական եկեղեցու մեծ հայրապետների դավանաբանական գրվածքների հետևողությամբ, որի մեջ հեղինակի հիմնական նպատակն է եղել պաշտպանել և հաստատել նաև հայ եկեղեցու ուղղափառ դավանությունը, սուրբ եկեղեցու հավատացյալներից հավատքի մեջ հաստատ պահելու և հակառակորդներից պապանճեցնելու համար:

«ՀԱՒԱՏՈՎ ՆՈՍՏՈՎԱՆՈՒՄ»

Ծնորհալու չափածո գրվածքների մեջ իր ուրույն տեղն ունի նաև այս հոգեբուխ աղոթքը, որը թեև գրված է արձակ, բայց ապրումների, հույզերի հարստությամբ և շարադրանքի ներքին կշռույթով սքանչելի և կրոնաբույր ազատ չափի մի քնարերգություն է: Ծնորհալին այն անվանել է «Հրիստոսին հավատացող յուրաքանչյուր անձի աղոթքը»: «Հատաով խոստովանիմ»-ը հեղինակի բարեպաշտական զգացումների, նրա հոգեկան վեհ ձգտումների և վսեմ իդեալի հարգատ արտահայտությունը հանդիսացող գործ է: Այս հոգեգրավ աղոթքը ծանոթ է նաև քրիստոնյա աշխարհին՝ թարգմանված լինելով 98 տարբեր լեզուներով:

«ՈՂԲ Ե՛ՒԵՍԻՈՅ»

Ներսես Ծնորհալու հայրենասիրական չափածո ստեղծագործության թագն ու պսակն է գեղարվեստական սույն մեծարժեք պոեմը, որն իր իսկական բանաստեղծական մտահղացումով և արվեստով իրավամբ հանդիսանում է միջնադարյան հայ գրականության ամենանշանավոր երկերից մեկը:

Այս քերթվածը, որը բաղկացած է 2006 տողից և ունի չորս մաս՝ նախերգանք, Նդեխիայի պաշայումն ու կոտորածը, անենքները և Ծնորհալու հույսերը պայծառ գալիքի նկատմամբ, գրվել է քրիստոնեական կրոնի վեհ սկզբունքների ջատագովությամբ և հայրենասիրական, քնարական ջերմ շրջչով: Քերթվածի նյութը և եղելությունները պատմական են: Պոեմի բովանդակությունը կազմում է Նդեխիա (Ուոհա) քսյուսքի 1144 թվականի անխալի կործանման և քրիստոնյա բնակիչների անգութ կտորածի անցքը: Գրիստոնեական մշակույթի հնագույն կենտրոն հանդիսացող Նդեխիա քաղաքը,

որ այդ օրերին ապրում էր շուրջ 30.000 հալ ազգայնակալություն, գտնվում էր խաչակիրների ձեռքում, որոնք գլորվել էին կերուխուսի, ցուխ ու շվայտ կյանքի մեջ՝ դրանով իսկ թուլացնելով քաղաքի պաշտպանական հզորությունը: Քաղաքի վերջին կառավարիչ

ՏՆ՝ ՆԵՐՍԵՍԻ

ՇՆՈՐՀԵՂԻՈՅ

ՀԱՅՈՑ ԿԱՔԱՂԻԿՈՒԻ

ՆԱՄԱԿԱՆԻ

31703



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲ ԴԱԶԱՐ

1838

ճուսին իշխանը, անճնատուր մեղկության ու զվարճության, ամեննին չէր հետաքրքրվում քաղաքի պաշտպանության հարցով: Այս նանգամանքից օգտվելով՝ Հալեպի մահմեդական Ջանգի ամիրան գալիս ու պաշարում է Եդեսիան: Քաղաքի բնակչության հետ եպիսկոպոսներն ու քահանաները թեպետ ավելի քան մեկ ամիս հերոսաբար պաշտպանում են քաղաքը, սակայն թշնամու անընդմեջ և ուժեղ գործերի առաջ թուլանում են, և ի վերջո ամիրայի զորքերը կարողանում են քանդել պարիսպները ու ներխուժել քաղաք: Նրանք անասելի վայրագությամբ կործանում են Եդեսիան, անխնա կոտորում են բնակիչներին, թալանում և շատերին գերեվարում:

Եդեսիայի անկումը ծանր վիշտ է պատճառում Կիլիկիայի հայությանը և անճամբ Շնորհալու: Շնորհալու Շահան ելքոր որդին՝ Ապիրատ իշխանը, որը Եդեսիայի պաշարման ժամանակ որպես գորսական մասնակից է եղել դեպքերին և ապա, ազատվելով, եկել է Մովս, այդ եղելության մասին պատմել է Շնորհալուին: Եվ Իսհա Շնորհալին, այդ եղելության թարմ տպավորության տակ, հյուսել է վերոհիշյալ «Ողբը» 1145 թվականին:

«Ողբը» գրվել է դիմառնաբար. Եդեսիա քաղաքը հանդես է գալիս իբրև որդեկորույս և այդի մի կին, որը նախ խոսում է քրիստոնեական ավանդություններով հարուստ իր փառավոր անցյալի մասին և ապա, ավերակների վրա նստած, ողբում իր գլխին եկած մեծ աղետը ու հրավիրում համայն քրիստոնյա աշխարհը՝ Անտիոքը, Երուսաղեմը, Կոստանդնուպոլիսը, Հոռոմը, ողբակցել իրեն:

«Ողբացե՛ք, եկեղեցիք,
Հարսունք վերին առագաստի,
Քորք և եղբարք իմ սիրելիք
Որք յընդհանուր կողմն աշխարհի:

Ազգք և ազինք որ էք յերկրի,
Հաւատացեալըք Քրիստոսի,
Ի երկրպագուք Նորին խաչի»:

Ապա Եդեսիան իր խոսքն ուղղում է Մեծ Հայքին, Վաղարշապատ և Անի մայրաքաղաքներին, Հայաստանյայց եկեղեցուն և կրկին ոգեկոչում իր անցյալի փառավոր վիճակը ու ողբում իր կրած դժբախտությունը:

«Բայց և զքեզ յայս հրատիրեմ,
Արևելեան քաղաքդ Անի:
Քանզի երթեմն և դու էիր
Վայելչական հարսն ի քոզի,
Մերձաւորաց յոյժ ցանկալի,
Հեռաւորաց փառիագելի...»

Եւ արդ, առ քեզ բանիս բերեմ,
Հայաստանեայց եկեղեցի,
Յորում կայթեաց շողն երկնային...»:

Ինչպես երևում է, Շնորհալին, ոգեկոչելով Եդեսիայի, հայկական երբեմնի այդ փառավոր ուստանի պատմությունը, ողբում է ոչ միայն այդ քաղաքի տխուր բախտը, այլև ի դեմս Եդեսիայի՝ ողջ Հայաստանի ավերված իրականությունը, մի հին քրիստոնյա երկիր, որ էր «նման վրթեալ ծաղկի, պայծառացած ի գոյն վարդի» և որը, սակայն, մոխրակույսի էր վերածվել արաբների և սելջուկների արշավանքներով:

Ընդհանուր, որպես քրիստոնյա և ճշմարիտ հայրենասեր, հոգեկան ծանր վիճու է ապրում Լեդեսիա բաղաթի գլխին պայթած դրախտությունների ստիժով.

«Որ աստանոր սիրտ իմ ճպի,
Դ երիկամունքս գալարի...
Ցառ հարկանի որովայնիս,
Միտք և հոգիս իմ այլայլից...
Մինչդեռ յիշեմ զօրն անհազից
Ին զառաւօտըն մթագին»:

«Լեդեսիոյ Ողբը» հանգավոր սրտահույլ մի քնարերգությունն է: Բանաստեղծը սրտի կսկծից մերթ ճիչեր է արձակում թշնամիների դեմ, մերթ մեղմ և անուշ, բայց խորին տրտմությամբ հառաչում է Հայաստանի ու նրա կորած քաղաքական ազատության համար:

«Ողբի» հիմնական և սեռտուն գաղափարը Հայաստանի անկախության կորուստն է և նրան ազատագրված տենետեղու պայծառ երազն ու անկոտրում հավատը: Այնուհետև, Ընդհանուր գրչի տակ, «Լեդեսիոյ Ողբը» դառնում է աշխարհամասվալ, համամարդկային, համաքրիստոնեական ողբ և վիշտ:

Ամբողջապես ողբ և ցասում շնչող այս պոեմը սպասելի էր, որ վերջանար հոռետեսությամբ, սակայն քերթվածն ալիարտվում է բարմանալի լավատեսությամբ, հայ ժողովրդի և Հայաստանի ազատության, գալուց գվարթ օրերի գեղեցիկ երազով, քրիստոնեության հաղթանակի նկատմամբ խոր հավատով և ուրախ, աշխույժ տրամադրությամբ:

Ընդհանուր խորապես հավատում է, որ թշնամին պիտի կործանվի, և ժողովուրդների միջև առեւելություն, անհանդուրժողություն սերմանող չարի ուժերը պիտի խորտակվեն, վերստին պիտի հաստատվեն սերն ու եղբայրությունը, արդարությունն ու խաղաղությունը երկրի վրա և ժողովուրդների միջև, իսկ հայ ժողովուրդը, «որպես ծաղիկ բողբոջած և սաղարթագեղ զարդարուած», բոլոր տառապանքներից հետո, քրիստոնյա ժողովուրդների օժանդակությամբ, աշխարհի բոլոր ծայրերից պիտի գա ու մեկտեղվի իր հայրենի հողի վրա, ապրելու համար խաղաղ և բարձր իր մշակույթով, քրիստոնեական ավանդություններով ու հերոսական պատմությամբ:

«Ողբ Եղեսիոյ» պոեմում Ընդհանուր հանդես է գալիս միաժամանակ թե՛ որպես քրիստոնյա մեծ մտածող, հումանիստ և թե՛ որպես ճշմարիտ ու ջերմ հայրենասեր: Նա քրիստոնեական գաղափարախոսությունը և ազգասիրությունը հրաշալիորեն զուգորդում, շաղկապում է միմյանց, մի հանգամանք, որն

ամբողջ պոեմին հստակել է: մեծ կենդանություն և արտամայրաչակամություն՝ դուրս քերելով այն ազգային գրականության շրջանակներից ու բարձրացնելով միջին դարերի համաշխարհային մշակույթի մեծարժեք ստեղծագործությունների շարքը, որպես քրիստոնյա բոլոր ժողովուրդների ելքայրության և համերաշխության յուրահատուկ մի հիմն՝ բռնության և չարիքի դեմ:

Ընդհանուր չափաժող գրական վարտակի մեջ մտնում են նաև «Երբողյանները»՝ «Լ սուրբ Խաչն», «Աս սուրբ հրեշտակն» և այլն, նրա խրատները, առակները (հանելուկի ըմպատով), որոնք գրվել են «խան ուրախութեան մարդկան», և որոնց նպատակն է եղել սակայն ոչ այնքան մարդկանց ուրախացնել, որքան գվարձալի եղանակով ուսուցանել, զարգացնել նրանց մեջ դատողություն, սրամտություն, դիտողականություն: Ընդհանուր հանելուկները, թվով 120, ժողովրդական լեզվով հորինված նույնահանգ բառյակներ են, անպաճույճ, սեղմ ոճով, դիպուկ նմանություններով իսկական վոքերիկ բանաստեղծություններ, որոնք ներթափանցված են ժողովրդական բանահյուսության հյութեղ տարրերով, և որոնց մեջ այքի են ղնկնում հեղինակի նուրբ սրամտությունն ու լեզվի պատկերավորությունը:

Ընդհանուր գրել է նաև մի մեծ քերթված իր ժամանակի մեծ գիտնական, աստղագետ և իր բարեկամ Մխիթար Հեթումցի բժշկապետի խնդրանքով: Սույն քերթվածը, որը վերնագրված է «Ցաղագս երկնից և զարդուց նորա», գրվել է Հոռմկլայում 1180 թվականին և բաղկացած է 200 տողից:

Ընդհանուր չափաժող գործերից շատերը իրենց թեմայով և կրոնական, եկեղեցական բովանդակությամբ, տաղաչափական արվեստով, լեզվական-արտահայտչական միջոցներով և կառուցվածքով նորություն էին ժամանակի գեղարվեստական գրականության մեջ:

ԱՍԵՆԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր սրճակ գործերի մեջ առաջինն է սույն աշխատությունը, որը գրվել է 1186 թվականին, նրա կաթողիկոս ընտրվելուց անմիջապես հետո: Ատենաբանությունը հույակապ մի ճառ է, որ նա արտասանել է իր ձեռնադրության և օժման առիթով, սուրբիկի 17-ին Հոռմկլայում գումարված ազգային-եկեղեցական ժողովում, Ծաղկազարդի օրը՝ «յաւուր տօցի արմանեցեաց»: Սույն ատենախոսության մեջ Ընդհանուր խոսում է նախ իր կաթողիկոս եղբոր՝ Գրիգոր Գ Պահլավունի Հայրապետի մասին, մի կողմից հյուսում է նրա գովքը, թվում նրա սրճա-

ճիշդներն ու բարեխառնությունները, իսկ մյուս կողմից՝ նվաստացնող հր անձը. «Զարհուրիմ երկխոյու հայեցեալ շիմս տկարութիւն և ի մեծի այսր աստիճանի բարձրութիւն և ճանրութիւն»:

Շնորհալին այնուհետև անդրադառնում է ժամանակի դժվարություններին, Աշուն, որ «տաճանապիմք ըստ մարմնոյ», որով լսն խաթարվել են եկեղեցու կարգերը, թուլացել են հավատն ու բարեպաշտությունը:

Դժվարություններից մեկն այն է, հաստատում է Շնորհալին, որ հայ ժողովուրդը զրկվել է իր հայրենի երկրից, պետականությունից, տարագիր է, չի բնակվում մեկ երկրի մեջ, ինչպես է պարագան մյուս ազգերի մոտ, որպեսզի կարելի լիներ շրջել իր հավատացյալ հոտի մեջ, սերմանել Աստուծո խոսքը, խրատել և ուսուցանել: Հայրապետական Աթոռը նույնպես «դրդուեալ է ի հաստատութենէ, ի զանազան և յանպատշաճ վայրս տարաբերի ընդ հարկաւ և երկիւղիւ այլաներից և անօգնական և աննուէր ի մերասերաց»⁷:

Ատենաբանության վերջում Շնորհալին հույս է հայտնում և աղոթում, որ Աստված իրեն ուժ և կարողություն պիտի տա մխիթարելու իր հոտին, որովհետև Աստված պիտի իրկի «զմեզ ի բերանոյ առիծուց, ազատել զզերեալսն ի տանէ կապանաց և դարձուցանել զամենեսեան յաշխարհն հայրենի... յարուցանել թագաւոր արդար, յիրաւունս Աստուծոյ հաստատեալս»⁸:

Շնորհալու այս գործը վսեմ է իր պարզությամբ, ազդու է ոչ միայն իր ձևով, որ պաշտպանված է գրական-գեղարվեստական ակնհայտ արժանիքներով, այլ նաև ջերմ է իր բովանդակությամբ, որը բխում է հեղինակի զգայուն սրտից, նրա քրիստոնեական աշխարհայեցողությունից, համոզմունքներից և լավատեսությունից: Ատենաբանությունը ուժեղ է և տպավորիչ իր կոտ տրամաբանությամբ, հեղինակի հստակ և կապակցված մտածողությամբ և ամբողջ նյութի կարգավորյալ ընթացքով:

«ՌՈՒՂԹ ԸՆԴՀԱՆՐԱՍԿԱՆ»

Կաթողիկոսության շրջանում Շնորհալու գրած գործերի փառապսակն է կազմում նրա հայրապետական անդրանիկ կոնդակը, որը ծանոթ է «Ռուղթ ընդհանրական» անունով: Սույն աշխատությունը գրվել է 1188 թվականին, Ատենաբանությունից 3 ամիս հետո:

⁷ Ներսես Շնորհալի, Ռուղթ ընդհանրական, ի ս. էջմիածին, 1885, էջ 411—426:
⁸ Ներսես Շնորհալի, անդ, էջ 421:

Շնորհալու այս թուղթը իրավամբ համարվել է «չափ լուսատու աստուածասիրացն մտաց, ազբիր Շնորհաբոլս վտակեալ յարքումն ոգոց նոցին ծարսեաց, պանծալի մատենալ... յորում զանձեալ են պատուիրանք աստուածաշինք, յարատք հոգեշահք առ համօրէն դասս հոգեւորականաց և ժողովրդականաց և դասնութիւն ուղղափառ հաստոյ եկեղեցոյս մերոյ»⁹:

Շնորհալու «Ընդհանրականը» սկսվում է սիրո ողջուցով ու հայրապետական օրհնությամբ և ուղղված է բովանդակ հայության. «ընհանուր հաստացելոց հաշկականսոց սեռից, որք յԱրևելս՝ ի սեպհական աշխարհը Հայաստանեայց բնակեալք, և որք յԱրեւմտեանն կողմանս սահեալք նօշեհութեամբ, և որք ի միջերկրեայս, ի մէջ ալլաւելզու ազանց տարաբերեալք, և որք յիրաքանչիւր յեզերս աշխարհի ըստ մեղաց մերոց ցրուեալք՝ ի քաղաքս, ի դղեակս, ի գիղս և յազարակս»:

«Ընդհանրականում» Շնորհալին նախ հայտնում է իր կաթողիկոս ընտրվելը, խոսում է իր կաթողիկոս եղբոր մահվան մասին, որն այս կյանքում ճշմարտությամբ և առաքինությամբ «նառապետեալ, եհաս անվնաս, յանքոյթ և յառանց այեաց նառհանգիստը» և իրեն թողնց «ի տաժանելի և յաղցաւոր կեանս ի մէջ օձից և կարճաց և զանազան խածանող զազանաց... այն ծանրութեան բեռանց ի ներքոյ՝ հոգևորականաց և մարմնատրաց»:

Այնուհետև նա խոսում է իր ուսերին դրված հայրապետական բարձր պարտականությունների մասին, այն է՝ «ի վայրի դալարոց աստուածաշին օրհնացն հանգուցանել, կեղանարար ջրով հոգւոյն իմաստութեամբ սնուցանել, զգազանսն հայաճել, զվիրաւորեալսն բժշկել, շրջել առ ամենեսեան՝ ընդ ամենայն կողմանսն աշխարհի, քարգել զբանն Աստուծոյ... նստեալ յԱթոռ հայրապետութեան և վարդապետութեան՝ ուսուցանել ժողովրդեան մերոյ զաստուածաշին պատուիրանս ըստ առաջին հայրապետացն»:

«Ընդհանրական թղթում» Շնորհալին սկզբում համառոտակի, բայց ամբողջական ձևով ներկայացնում է հայ եկեղեցու դավանությունը, եկեղեցական կարգն ու կանոնները և ավանդությունները:

Այնուհետև նա իր հայրապետական խոսքն ուղղում է հայ ժողովրդի կյանքում գոյություն ունեցող բոլոր դասակարգերին՝ «առ կրօնատրս», «առ առաջնորդս սրբոց ուխտից վանականաց», «առ առաջնորդս եկեղեցոյ», «առ դասս քահանայից», «առ իշ-

⁹ Անդ, էջ 1:

լուսնու», «առ զինուորաց դասս», «առ յուրաքականող (քաղաքի բնակչության), «առ ևրկրագործս», «առ կանանց դասս»:

Ծնորհալից, դիմելով բոլոր այս դասերին, Ողբերական թե աշխարհական, զինվորներ թե կանայք, տալիս է նրանց Ավետարանի ոգով իր խրատականը, իր պատգամը և հանգամանորեն խոսում նրանց կրոնական, եկեղեցական, մարդասիրական, ազգային պարտականությունների մասին՝ քրիստոնեական քարոշականության վեճ գաղափարի լույսի տակ:

«Ընդհանրականը» իր քույրականությամբ շատ կարևոր սլատմական մի փաստաթուղթ է՝ ժամանակի հայության, հատկապես հոգեվորակականության կյանքի, բարքերի, սովորույթների ու կենցաղավարության լայն ընդգրկումով:

Իքրև գրական արժեքավոր գործ՝ «Թուղթը» հորինված է գեղեցիկ ձևով, եկեղեցու մեծ վարդապետից հատուկ հեղինակությամբ, հանդման դաստիարակչական մեթոդով: «Թուղթը» ընթերցողին տպավորում է իր սխտեմատիկ մտածողությամբ, թեթեվասահ, բայց պատկերավոր խոսքով: Ծնորհալից այստեղ կարողանում է իր միտքն արտահայտել սովորաբար գրական կարճ, հրստակ ու սրտալի դարձվածքներով՝ խուսափելով բառերի ավելորդ կուտակումներից և քերականական բարդ, խճճված ձևերի կիրառումից: Նա խոսում, կարծես զրուցում է մեղմ, հանդարտ ու ծանր, ոչ հրամայողաբար, այլ համեստությամբ, իր աստիճանին պատշաճ հայրապետական խրատական եղանակով:

Ծ Ն Ո Ր Հ Ա Լ Ո Ւ Ն Ա Մ Ա Կ Ա Ն Ի Ն

Ծնորհալու մատենագրական վաստակի մեջ կարևոր տեղ է գրավում նրա նամակահին՝ տարբեր առիթներով նրա գրած թղթերը, որոնց մեջ առանձնապես ուշագրավ են եկեղեցական միության վերաբերյալ նրա դավանաբանական թղթերը, ինչպիսիք են՝ «Առ Մանուէլ թագաւոր Հոռոմոց» գրած Ա, Բ, Գ թղթերը, «Առ Միքայել պատրիարք Հոռոմոց» թղթերը և այլն:

Ծնորհալու օրով միջեկեղեցական կյանքում հրատապ այժմեականություններ կյանքացնող հարց էր եկեղեցական միության հարցը: Բյուզանդիայի Կիո Էմմանվել կայսեր, Ներսես Ծնորհալու և Կ. Պոլսի Միքայել պատրիարքի միջև այս առթիվ փոխանակվեցին թղթակցություններ և կատարվեցին մի շարք բանակցություններ: Ծնորհալին 1168—1178 թվականներին գրեց իր նշանավոր 9 դավանաբանական թղթերը, որոնք

կոչվում են՝ «Գիր խոստովանութեան հաստույ Հայաստանեայց եկեղեցոյ», «Ասանանք հաւատոյ Հայաստանեայց եկեղեցոյ» և «Յաղագս աւանդութեանց եկեղեցոյ» և որոնցում նա հանգամանորեն ներկայացրել է հայ եկեղեցու հավատո դավանությունը և հատկապես նշում էր ու սահմանել հայ եկեղեցու դիրքը միության հարցում, դիրք, որից հետագայում երբեք չի շեղվել հայ եկեղեցին:

Ժամանակաշրջանը, ուր ապրում ենք, միջեկեղեցական հարաբերությունների պատմության մեջ հատկանշվում է էկումենիզմով և էկումենիկ շարժման աշխուժացումով: Ինչպես հայտնի է, հայ եկեղեցին, Մայր Աթոռ ս. Էջմիածնի գլխավորությամբ, 1968 թվականից ի վեր առնամ է եկեղեցիների համաշխարհային խորհրդին և մասնակցում է միջեկեղեցական բոլոր կարևոր ժողովներին:

Այս իմաստով պատմական և այժմեական մեծ նշանակություն ունեն Ծնորհալու՝ եկեղեցական միության մասին գրած վերոհիշյալ դավանաբանական թղթերը:

Ըստ Ծնորհալու, «Քրիստոսի եկեղեցու տիեզերական խաղաղությունը» վրդովվել է կրոնական նեղմտության, նախանձի, զլուսացեալ ամբարտաւանութեան և բռնութեան» պատճառով:

Ծնորհալին իրավացիորեն նշում է, որ եկեղեցիների միությունը գլուխ չի կարող գաղ «ոչ թագաւորական անարկու գորութեամբ, այլ քաղցրագոյն խոնարհութեամբ», որովհետև անցնող երկար դարերի ընթացքում «Քրիստոսի անդամների՝ եկեղեցիների միջև աճել և խորացել է «ատելութեան ակտը», և նրանից ծնվող «թշնամությունն ու հալոթյանը» դարձել են հիվանդություն և «երկրորդ բնութիւն հնացեալ սովորութեամբքն», ծանր մի վիճակ, որը «կարօտ է բազում հոգեւոր բժշկական իւղոց օժման»:

Նման կացության առաջ ի՞նչ պետք է անեն եկեղեցիները հակառակության այդ ակտը բուժելու և միմյանց մոտենալու համար:

Ծնորհալին որպես դեղամիջոց առաջարկում է «միաբանական սեր», խաղաղություն, համագործակցություն, հեզույթուն, հանդուրժողություն և այդ ոգով բնությունը հաղանաբանական, ծիսական բոլոր վիճելի հարցերի, «ոչ հակառակութեամբ և անօգոտ բանակոտութեամբ, որպէս մինչև ցայժմ, յորոց ոչինչ օգտեցաւ եկեղեցին», որով և պարզ կդառնա, թե եկեղեցիների միության շարժումը աստվածային է, թե՛ մարդկային:

Ծնորհալին այնուհետև նշում է, որ եկեղեցիների միության հարցում բանակցությունների սեղանների շուրջ նստեն. «Եթէ տնօրինեցէ Աստուած խօսիլ մեզ առ միմեանս, մի՛ եղիցի որպէս տեսոն առ ծառայս և ծառայս»:

յից առ տեսար... այլ հաստար ընդ հաստարի»:

Շնորհալուց մեզ հասել են նաև անձնական, մասնավոր բովանդակությունն ունեցող բազմաթիվ նամակներ, որոնք, իբրև պատմական փաստաթղթեր, կարևոր են նմանապես հայ եկեղեցու պատմության համար:



«Թխուս Որդի», Վինետիկ, Հիշատակարան

Շնորհալու նամակակնից, բացի իր պատմական նշանակությունից, ունի նաև գրական մեծ արժեք որպես հոետորական արվեստի դասական օրինակ: Շնորհալու թղթերը աչքի են ընկնում իրենց գորեղ տրամաբանությամբ, բերված գեղեցիկ և դիպուկ օրինակներով, ճարտասանական ինքնատիպ ձևերի գործածությամբ, ուժեղ հակաճառությամբ և առարկելի մտքերի նկատմամբ ցուցաբերված կոտ տրամաբանությամբ: Շնորհալին անձնական բնույթ կրող իր նամակների մեջ զանազան առիթներով և զանազան մարդկանց կողմից իրեն հասցված անհրավ մեղադրանքների և զրպարտությունների դեմ հանդես է բերում եկեղեցու մեծ վարդապետին հատուկ քրիստոնեական անհիշաչարություն, քրիստոսաբույր ներողամտություն, աստվածատուր խոնարհություն և բարություն:

Շնորհալու արձակ գործերից են նաև Մատթեոսի Ավետարանի մեկնությունը, որը հասցրել է մինչև 6 զլուխ 17 համարը՝ «Մի՛ համարիք, եթե եկի լուծանել»: Մեկնությունը համարվում է «գեղեցիկ և հանճարեղ քանի» գրված գործ: Շնորհալին գրել է նաև «Կաթողիկեայն թղթերի» մեկնությունը:

Շնորհալին թողել է թարգմանական արժեքավոր գործեր, ինչպես, օրինակ՝ «Վարք սուրբ Պարսամայ», «Ներթողեան Յովհաննու Ոսկեբերանի, ի սուրբ Գրիգոր Լուստորիչն Հայոց», «Վարք Տարագրուի և Պրոտսի»:

ՏԱՂԵՐ ԵՎ ԾԱՐԱԿԱՆՆԵՐ

11-րդ դարում Արևելյան Հայաստանում հայ պետականության վերացումով «եւ ի յանկմանէ ազգիս Հայոց» այնտեղ տիրող տնտեսական և քաղաքական ծանր պայմանների հետևանքով աղքատացել էին հայկական հոգևոր-կրթական օջախներն ու վանքերը, խաթարվել ու վերացել էին հայ եկեղեցու դարավոր ժամասացության կարգն ու եկեղեցական-ծիսական պաշտոներությունը:

Վանքերում և եկեղեցիներում լռել էր հայ հոգևոր երգը: Շնորհալին այս բնագույլառում ևս կատարեց պատմական անգնահատելի դեր. վերականգնեց և է՛լ ավելի հարուստացրեց հայ հոգևոր, եկեղեցական դարավոր ժամապաշտության և երգարվեստի լավագույն ավանդությունները. «Շարադրէր բանս աղօթականս նորս արուեստի և լնոյր գմիտս և զգօրութիւն հնոյն և նորոյն... և սկսանէր երգել գերզս հոգևոր պաշտամանց գոր պակաս և թերի գտանէր»¹⁰:

Այս առիթով Շնորհալին բերել է տալիս հայկական «հուշակատր և աստուածաբնակ» վանքերի եկեղեցական կարգ ու կանոնի մասին «հրեշտակակրօն սուրբ հարց» կանոնադրությունները և ամբողջացնում է հայ եկեղեցու գիշերային և առավոտյան, արևագալի, ճաշու, երեկոյան և խաղաղական ժամերի, ինչպես նաև սուրբ պատարագի խրատները, որոնք հայտնի են «խրատ ժամատեղեաց» անունով. «Զպակասն ելից, զսխայն ուղղեաց և կարգեաց ամենայն Հայաստանեայն եկեղեցւոյ անջրելի և հաստատուն ասանդ»:

Այսպիսով՝ Շնորհալու բարեկարգչական ջանքերով «Հարսնացեալ եկեղեցի Հայաստանեայն պայծառապէս զարդարմամբ շքեղանայր»:

Մովքում և ապա Հոռմկայում էր դարձյալ, որ Շնորհալին գրեց իր հոգեբուխ շարականները, անմասն տաղերն ու գանձերը,

¹⁰ «Սոփեբք հայկականք», էջ 41:

մեղեդիներն ու երգերը և հարստացրեց հայ հոգևոր բանաստեղծության գանձարանները՝ Ծարակնոցը, Ժամագիրքը, Տաղարանը: Հայ հոգևոր բանաստեղծության անկրկնելի մարգարիտներ են նրա «Նուաւօւ լուսոյ»-ն, «Աշխարհ ամենայն»-ը, Արևազալի երգերը և ջերմ, մարդկային ու ժողովրդային, կենարար ու թարմ շնչով հագեցած նրա մյուս քերթվածները, որոնք դարեր ամբողջ թրթռնացել են ամեն հայի շրթների վրա: Տոհմիկ, հարազատ, գունագեղ, պայծառ ու արևային կախարհանքով լեցուն այդ բանաստեղծություններն էին, որ, հետագա դարերում ոգեպետ յուրացվելով մեր միջնադարյան լուսերգակ տաղասացների կողմից, նախապատրաստեցին նոր շրջանի հայ բանաստեղծության յուրահատուկ ոգին. այն է՝ արևելյան գունագեղության, բարձրաթիչ երևակայության, միստիկ զգացմունքայնության ներդաշնակ գուգադրումը արևմտյան լայն ու խոր մտածողության, գուսպ, պարզ և ներբակիր» արվեստի ձևերի հետ:

Ընդհանուր, որպես եկեղեցական ծիսապաշտության վերանորոգիչ և եկեղեցական պաշտամունքների իսկական բարեկարգիչ, պատմական բացառիկ կարևոր դեր կատարեց, ինչպես եղել էին անցյալ դարերում ս. Սահակ Պարթև, Հովհան Մանդակունի և Հովհան Օձնեցի հայրապետները:

Ընդհանուր, որպես երածիշտ և շարականագիր, թողել է նույնպես բազմամանր երածիշտական հարուստ ժառանգություն: Նրա երածիշտական, շարականագրական արվեստի ազդեցությունն են կրել հետագա դարերի բոլոր հայ երածիշտներն ու շարականագիրները: Ընդհանուր, որպես երածիշտի, իրավամբ համեմատել են բյուզանդական եկեղեցու մեծ երածիշտ Ռոմանոս Երզնցողի և ասորի սուրբ Եփրեմ Խորիի հետ:

Երածիշտական արվեստի բնագավառում Ընդհանուր խոշոր երևույթ է համաքրիստոնեական չափանիշով: Հայ Ծարակնոցում, Ժամագրքում և Տաղարանում առաջնակարգ տեղ են զբաղում Ընդհանուր հոգևոր երգերը իրենց թեմատիկ բազմազանությամբ և երածիշտական բարձր արվեստով:

Ընդհանուրի իր սուղերը, շարականները և հոգևոր երգերը գրել է 1135—1165 թվականներին և առաջինը ինքն է եղել երածիշտական բազմապիսի իր ստեղծագործությունների կատարողը: Նա որքան մեծ է եղել որպես ստեղծագործող երածիշտ, երգահան, նույնքան և անվանի՝ որպես «երգասաց», երգեցող: Նա ունեցել է «բաղջր ծայն» և ոչ միայն «քայցր եղանակաւ և խոսրովային ոճով» գրած իր ստեղծագործություններով զարդարել է հայ հոգևոր քնարերգությունը, այլ նաև հնչեցրել է այդ երգերը իր գրավիչ

ձայնով և դրանք սուլորեցրել «մանկանց եկեղեցւոյ»:

«Յօժարական կամօք երգէր եւ աննախանձ ուսուցանէր, Որ երածիշտ սուրբ Հոգւոյն էր»¹¹:

Հայկական ս. պատարագի գրական բնագիրը հին է և հիմնված ընդհանրական եկեղեցու սուրբ հայրերի հեղինակության վրա: Բայց հայկական պատարագի երածիշտական ձևավորումը սերտորեն կապված է հայ ազգային երգարվեստի ավանդությունների հետ:

Այս հարցում էլ Ընդհանուր կատարել է պատմական դեր. «Եւ հոգևոր երգօք և քաղցրանուագ եղանակօք վայելչացուցանէր զսուրբ պատարագին խորհրդական երգան»:

Հոգևոր նույնքան մեծ արժեք են ներկայացնում Ընդհանուր տաղերը, մեղեդիները, գանձերը, որոնք հորինվել են խիստ բազմազան չափերով և որոնցով նա մեծապես ճոխացրել է հայ եկեղեցու ժամբարանությունը: Միշտ թարմ և ուժեղ են հնչում նրա բոլոր տաղերը: Նրա յուրաքանչյուր շարականի և տաղի ամեն մի բառն արտասանվում է, հընչում, տեղ է հասցվում. գեղարվեստական ամբողջություն ստեղծելու մեջ նրա խոսքն ու եղանակը հավասարազոր նշանակություն ունեն՝ ներդաշնակորեն միահյուսված լինելով միմյանց հետ:

Ընդհանուր ունեցել է նաև վայելչագրության շնորհ: Մինչև իր ծերության օրերը ինքն է գրել և բազմացրել իր ստեղծագործությունները «հրաշատեսակ և վայելույ ի գանազան կերպս, որպէս աստուածային մատամբ շարժահիւսեալ... գիծք շնորհակիր և աստուածաներկ»:

Ընդհանուր հոգ էր տանում նաև եկեղեցու ճարտարապետական կառույցին, եկեղեցու արտաքին «պայծառ, առույգ, վայելույ» տեսքին և եկեղեցական սպասների բարեզարդությանը. «Ջարդարէր գեկեղեցիսն ոսկեղէն և արծաթեղէն անօթիք և պայծառագոյն, ոսկեկար զգեստիք, բաշխման սուրբ մարմնոյ և արեանն Տեառն, և յորդորէր զամենեսեան իմանալի և զգալի պայծառութեամբ սպասարարել կենարար և երկրպագելի սուրբ խորհրդոյն»:

Շուրջ 52 տարի անմահանց և խանդավառ մվիրում և ծառայություն՝ հայ եկեղեցուն, հայ ժողովրդին և հայ դպրությանը:

Դժվար է Ընդհանուր նախորդների, ժամանակակիցների և հետնորդների մեջ գտնել

¹¹ Ներսես Լամբրոնացի, առհ, էջ 477—478:

մեկը, որն իր նկարագրի բյուրեղային մաքրությամբ, առաքինազարդ և ճգնագգայաց իր վարքով, ծովամատույց բազմակողմանի իր գիտությամբ, աստվածատուր իր շնորհներով, քրիստոսածավալ իր հոգու քաղցրությամբ հավասարվեր նրան:

Շնորհային քրիստոնեական հավատով և բարեպաշտությամբ լուսակերտված միաձույլ մի մեծություն էր՝ ամուշ ու նուրբ, ինչպես իր քնարը, հանդարտ ու մեղմ, ինչպես իր նկարագիրը, հստակ ու վճիտ՝ ինչպես իր սիրտը, իր էության ցուլը, իր հոգու խաղաղության ծաղիկը:


Հիսուսանման ներողամտություն, կրոնական հանդուրժողություն և լայնասրտություն, աստվածային ուրախությամբ բարախող սիրտ, որը վառվելով անկեզ մորենու նման, ջերմացնում էր հալ եկեղեցին և հայ ժողովուրդը նրա պանդխտության օրերին կիլիկիայում:

Արբույթան և առաքինության դյուցազն: Էուսեղեն հոգու մշտաժպիտ թրթուր և լույսի երգիչ, որ իր քնքուշ և թրթուրն սրտով հանդիսացավ մեծ վարդապետը Քրիստոսի ընդհանրական եկեղեցու: Շնորհալու շուրպակ կյանքը պայծառ օրհնակ է եկեղեցու եռամեծ վարդապետի:

Շնորհալու թողած մատենագրական հարուստ հոգևոր ժառանգությունը հայ եկեղեցու մշտակենդան և անսպառ հարստությունն է, որն իր արժանի տեղն է գրավում նաև քրիստոնեական ընդհանուր եկեղեցու մշակույթի գանձարանում:

Հայ ժողովուրդը իր ջերմ գորովը, անխառն հիացմունքը, իր սրտի բուվանդակ երախտագիտությունը պիտի ընծայաբերի միշտ հայ հոգևոր վերածնության այս մեծ ուսմիթրայի, առաքելանման հոգևորականի, մեծ Հայի և մեծ Մարդու հիշատակի ստաց:





ՆԵՐՍԵՍ ԾՆՈՐՀԱԼԻՆ ԵՎ «ԱՐՄԱՏ ՀԱՒԱՏՈՅ»
ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Ներսես Ծնորհալին հայ-բյուզանդական հարաբերությունների պատմության կիլիկյան շրջանի խոշորագույն դեմքերից է, որը 1185—1173 թթ. ընթացքում հայ և հունական եկեղեցիների միջև տեղի ունեցած պաշտոնական բանակցությունների առիթով որոշակի ձևակերպում ու հիմնավորում է տվել հայոց դավանական հայացքներին: Այդ բանակցությունների ամբողջ նպատակը հույների համար եղել էր միավորել երկու եկեղեցիները և ձուլել հայկականը հունականի մեջ, իսկ հայերի համար՝ գտնել մերձեցման ուղիներ և ստեղծել համերաշխության պայմաններ:

Նպատակների այդ տարբերությունը որոշակիորեն երևում է գրավոր այն աղբյուրներում, որոնք նյութ են պարունակում այդ բանակցությունների պատմության համար: Մի կողմից հունական վավերագրերն են՝ բյուզանդական պատգամավոր Թեորիանոսի տեղեկագրերը, որ նա ներկայացրել է կայսրրին՝ Ներսես Ծնորհալու հետ իր ունեցած բանակցությունների վերաբերյալ¹, իսկ մյուս կողմից հայկական վավերագրերը՝ Ծնորհալու դավանագրերն ու նամակները, որոնք ի մի են ամփոփված Ներսես Լամբրոնացու կողմից և ամբողջությամբ հասել մեզ²:

Պարզ է, որ այդ բանակցությունների ընթացքում դավանական ու ծիսական հարցերի վերաբերյալ գաղափարների փոխանակման եղանակը զուտ սքոլաստիկ բնույթ էր կրում: Եթե փորձենք վերևից նայել սքոլաստիկյան այդ երևույթի վրա, որը ոչնչով չէր օգնում առաջադրված հարցերի լուծմանը, կտեսնենք այն իրական հողը, որի վրա կանգնած էին կողմերը՝ պատմական իրականության մեջ: Թեորիանոսի հաշվետվության սկզբի հատվածում արդեն ասվում է, որ բյուզանդական կայսր Մանուել Կոմնենոսը, բանակցություններ սկսելով հայոց կաթողիկոս Ներսես Ծնորհալու հետ, «ցանկանալով ցանկալի տեսանել զմիաբանութիւն նորա և իւրոց հնազանդելոց ընդ սրբոյ տիեզերա-

¹ «Թեորիանոսի ընդ կաթողիկոսի Հայոց բանակցութիւն» և այլն, թարգմանել և հրատարակել է՝ Ադ. վ. Պայճյան, «Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս», Վիեննա, 1878, էջ 204—288:

² «Պատճառ խնդրոյ միաբանութեան թագաւորին Հռոմոնց Էմանուէլի և սրբոց կաթողիկոսացն Հայոց Ներսիսի և Գրիգորիսի թուղթքն՝ զոր գրեցին առ միմեանս: Հրատարակված է բազմաթիվ անգամներ՝ Ծնորհալու «Թուղթ ընդհանրական»-ի հետ միասին: Մենք օգտագործել ենք՝ «Թուղթ ընդհանրական, արարեալ երիցս երանեալ սուրբ հայրա-Լամբրոնացոյ ընդ պատրիարքին Յունաց» (հրատ. Հովհ. Տերտեմցի), Վ. Պոլիս, 1861:

կան և առաքելական եկեղեցւոյ»³, այսինքն՝ բյուզանդական եկեղեցու հետ: Հռոմական կողմի այս մեծամիտ ոգին իշխում էր բանակցությունների ամբողջ ընթացքում: Նույնիցքն մեծամիտ Թեորիանոսը, Հռոմկլայի հայոց կաթողիկոսարանում կատարած իր առաջին բանակցությունից հետո, երբ Կ. Պոլիս էր վերադառնում՝ Շնորհալու առաջին նամակը տանելով Մանուել կայսրին, պարծենում էր, որ այդ նամակում «բովանդակէր և այն եթէ ընդունէր նա զսուրբ զտիեզերական և զմեծ Սինհոդոսն «Քաղկեդոնի»⁴. այնինչ Շնորհալու այդ նամակում, որի հայերեն բնագրի լրիվ օրինակն ունենք⁵, ոչ մի խոսք չկա Քաղկեդոնի ժողովն ու նրա դավանությունն ընդունելու մասին: Այսպիսի հակասություններ շատ կան այս բանակցություններին վերաբերող բյուզանդական և հայկական վավերագրերի միջև: Բոլոր դեպքերում հռոմական կողմը մտածում էր միայն գերակշռություն ունենալու մասին, իսկ հայկական կողմը՝ այդ գերակշռությանը չենթարկվելու մասին:

Հայ բանասիրական գրականության մեջ արդեն նշված է, որ Թեորիանոսի հաղորդագրություններում աղավաղված է Շնորհալու դիմագիծը, նրու կերպարը: Թեորիանոսի գրածները թողնում են այն տպավորությունը, թե, կարծես, Շնորհալին այնքան էլ ամուր գիտելիքների և կայուն սկզբունքների տեր մարդ չէր և, չդիմանալով իրեն ներկայացված առարկություններին, տեղի էր տալիս անընդհատ: Հասկանալի է, որ Թեորիանոսն իր տերերի՝ կայսեր և պատրիարքի առաջ իր վարկը բարձր պահելու համար աշխատել է իր առաքելության արդյունքները ներկայացնել դեպի հաղթանակ գնացող ընթացքի մեջ: Սակայն Շնորհալին այդ բանակցություններին վերաբերող իր գրվածքներում հանդես է գալիս իր իսկական դեմքով, իր դիրքին արժանի բարձրությամբ, կրոնա-պատմական և դավանաբանական հարցերում ունեցած խոր հմտությամբ, ձեռնհասությամբ ու սկզբունքայնությամբ, որոնց շնորհիվ մինչև վերջը մնացել էր հայ եկեղեցու տեսակետների պաշտպանության դիրքերի վրա: Շնորհալին ընթանում էր բյուզանդական եկեղեցու հանդեպ հայկականի ինքնուրույնությունը պահպանելու ուղղությամբ, իսկ դա՝ նշանակում էր պայքարել ի պաշտպանություն հայության ազգային ինքնուրույնության՝ Բյուզանդիայի քաղաքական ազդեցության դեմ:

Ի տարբերություն բյուզանդական կողմի, որը բանակցում էր քաղաքականապես գերիշխող ու պահանջող դիրքերից, Շնորհալին, տրամադիր չլինելով բյուզանդական եկեղեցու հետ ձուլվելու մտքի հետ հաշտվելու, աշխատում էր մի կողմից պատմական ու իմաստասիրական հիմունքներով ամրապնդել հայկական տեսակետները, մյուս կողմից՝ ցույց տալ, որ հայկական տեսակետներն արդեն չեն էլ հակասում հռոմականներին: Օրինակ՝ դարերով վիճելի եղած բնութեցական կնճռոտ ու անլուծելի հարցում Շնորհալու կարծիքով գաղափարական որևէ տարբերություն արդեն իսկ գոյություն չունեի հույների և հայերի միջև: Նա ասում էր, որ «փոխանակ միանձնատրոսեանն՝ զոր դուք ասէք ի «Բրիստոս, որ է ուղիղ և խոստովանեալ ի մէջ, է՛ և մերս մի բնութիւն ասելն զոյգ և նման...», քանզի մի բնութիւն ո՛չ վասն այլ իրիս ասի ի մէջ, այլ յաղագս անբաժանելի և անճառ միատրոսեան Բանին և մարմնոյն»⁶, ուստի՝ «եթէ միութիւնն վասն անքակտելի և անբաժանելի միատրոսեանն ասի և ո՛չ վասն շփոթման, և երկու բնութիւնն՝ վասն անշփոթ և

³ Աղ. Վ. Պալեյան, էջ 204:

⁴ Աճղ, էջ 286:

⁵ Ներսես Շնորհալի, էջ 198—212:

⁶ Աճղ, էջ 128—130:

անայլայլելից լինելոյ և ո՛չ վասն բաժանման, երկաքանչիւրքն ի սահմանի են ուղղափառութեան»⁷: Դուրս էր գալիս, որ տարբերությունները միայն բանաձևումների մեջ էին. ճշանակում էր՝ դավանական ամենաթիմնական հարցում տարակարծություն չկար հույն երկաքանակների և հայ միաբնակների միջև:

Ավելի ընդհանրացնելով իր այս միտքը՝ Շնորհալին, կայսեր առաջին նամակին տված իր պատասխանում, ասում էր, որ չարախոսությունների գոհ գնալով մենք՝ հայերս կարծում էինք, որ հույներից նետտորականներ եք, իսկ դուք կարծում էիք, որ հայերս եվտիքյաններ ենք⁸. ուստի՝ քանի որ երկու կողմի կարծիքներն էլ թյուրիմացություն էին եղել և քանի որ երկու կողմերն էլ հավասարապես նզովում էին թե՛ Նեստորին, թե՛ Եվտիքեսին, ապա պարզ է, որ բնութենական հարցում տարածայնություն չկար կողմերի միջև:

Շնորհալին միաժամանակ առաջ էր մղում այն միտքը, թե անհմաստ բան էր նաև ծիսական բարցերում տարբերություններն անհստի վերացնելու գաղափարը, որ հետապնդում էին բյուզանդացիները: Օրինակ՝ նա բալարը և խմորյակ հացի վեճի կապակցությամբ հայկական տեսակետը թիմնավորելուց հետո ասում էր, այնուամենայնիվ, որ «եթե փոյո» էր Հոգւոյն՝ միոյն հաճոյ լինել Աստուծոյ և միւսոյն ո՛չ, ցուցեալ էր եկեղեցւոյ՝ կա՛մ առաքելովքն և կա՛մ սրբոց վարդապետացն բանիւքն. բայց հաստատեալ գիտեմք, եթէ ո՛չ այլ ինչ է հաճոյ Աստուծոյ, բայց ուղղափառ հաւատքն և մաքուր վարքն» և թե դրանք «առանդութիւնք են ազգաց և ո՛չ առաելութիւն կամ նուազութիւն ինչ ի հաւատս»⁹: Նույնպես և բաժակի մասին էր ասում. «Թէ ջրով ոք կատարէ և եթէ առանց ջրոյ, ո՛չ և ընդ միոյ ի սոցանէ՝ կամ փառս ընդունիցի յԱստուծոյ և կամ տանջանս» և այլն¹⁰: Իսկ ծննդյան և մկրտության տոները միննույն օրում և կամ տարբեր օրերում կատարելու հարցում եղած հակառակության կապակցությամբ ասում էր, թե «յայսպիսի իրս յանցանք՝ ո՛չ թիւ ամսոյն է կամ պատկեր ատորն, այլ հակառակութիւնն միայն. զի յորում ատուր և սոցնէ ոք անհակառակաբար՝ հաճոյ է Աստուծոյ»¹¹:

Այս էր մեծահոգի, լայնախոհ և միաժամանակ զգաստ Շնորհալու սկզբունքը. մերժեճալ և համերաշխության ուղիներ որոնել, բայց՝ սեփականից չհրաժարվել անտեղի որեն: Բյուզանդական «երկաքնյա» կոչված դավանանքն իր էության մեջ չէր տարբերվում հայկական «միաբնյա» դավանանքից, երկուսն էլ ուղղափառ էին, հետևաբար՝ անհրաժեշտություն չկար, որ կողմերից մեկը կամ մյուսը պահանջեր այդ դավանանքն անվանել այնպես, ինչպես ի՛նքն էր անվանում. իսկ ծիսական տարբերությունների մասին արդեն ավելորդ էր խոսել:

Բանակցությունների ետուն շրջանում, 1173 թ., Շնորհալին մահացավ, բայց նրա ոգին, նրա ձևակերպած ու հիմնավորած հայացքները ղեկավարող դեր ունեցան հաջորդ սերնդի համար:

Քաղկեդոնական Բյուզանդիայի հետ բանակցությունները շարունակվեցին Գրիգոր Տղա կաթողիկոսի (1173—1183 թթ.) օրով, մինչև 1178 թ.¹², իսկ Գրիգոր Ապիրատի կաթողիկոսության (1184—1203 թթ.) օրով, 1187 թ., կա-

⁷ Աճղ, էջ 180:

⁸ Աճղ, էջ 200:

⁹ Աճղ, էջ 180:

¹⁰ Աճղ, էջ 183:

¹¹ Աճղ, էջ 187:

¹² Աճղ, էջ 220—276:

տարվեց բանակցության մի վերջին փորձ, որի համար որպես բանազնաց և. Պոլիս էր ուղարկվել Ներսես Լամբրոնացին¹²: Սակայն Ներսես Ընորհալու գծած ուղիներով կատարվող այս բանակցություններն ապարդյուն էին անցել՝ բյուզանդացիների կամակորության պատճառով: Այլևս պարզ էր դարձել, որ հայերին քաղկեդոնիկ և հունաձես դարձնելու մոլեռանդ քաղաքակառուցությունից, որը դարավոր պատմություն ուներ իր ետևում, նրանք ամենևին չէին հրաժարվել: Նույնիսկ Լամբրոնացու նման մեկը, որը վերջին բանակցության դերակատարն էր եղել և որն ընդհանրապես հայտնի էր իր գիշողական լայն տրամադրություններով, հիասթափված էր վերադարձել և Պոլսից և զգվանքով գրում էր. «Ստրջացեալ ի հոգևոր կամս մեր՝ դարձաք յմաստախոռ յուսոյ սոցա ամօթով»¹³: Ժամանակակից աղբյուրներից մեկը նույնպես ասում է, որ Լամբրոնացին, որին շատեր «հոռոմ դատէին» (հոռոմների հանդեպ զիջումներ անելու կողմնակից), բանակցությունից և վիճարանություններից դուրս էր եկել որպես «անապակ հայ և ճմարտութեանցն վարդապետ»¹⁴, այսինքն՝ հայոց եկեղեցական ավանդությունների հավատարիմ ախոյան, որն, իր հերթին, ոչինչ չէր զիջել հունական քաղկեդոնիկ եկեղեցուն¹⁵:

Ավելի քան 25 տարիների ընթացքում Ընորհալու ոգով և նրա գծած ուղիով ընթացող հայ եկեղեցական գործիչներն եկել էին այն համոզման, որ միակ միջոցը մնում էր դիրքավորվել քաղկեդոնականության հանդեպ և անցնել ինքնապաշտպանական պայքարի: Բայց բյուզանդացիներն այլևս ժամանակ չուներեցան ականատես լինելու այդ պայքարին, որովհետև դարավերջում Կիլիկյան Հայաստանում քաղաքական իրադրությունն այնպես էր փոխվում, որ Լևոն Բ-ի թագադրությանը բյուզանդացիներն այնտեղ իրենց ունեցած գերիշխող դիրքերը զիջում էին լատինական Արևմուտքին: Հայ եկեղեցական գործիչներն այնուհետև պիտի գործ ունենային, բյուզանդական եկեղեցու փոխարեն, հոռոմական եկեղեցու հետ, որը քաղկեդոնականության նոր դրոշակիրն էր դառնալու Հայաստանում:

Հայ-բյուզանդական դարավոր պայքարի պատմության և ծանոթ բանակցությունների փորձով զինված հայ գործիչներին մտահոգում էր քաղկեդոնականության նոր արշավանքի վտանգը: Սկևռայի առաջնորդ և Լամբրոնի արքեպիսկոպոս Վարդան Բենիկ Մարաթացին, որը հետագայում ավելի հայտնի դարձավ Այգեկցի մականվամբ¹⁷, սկսում է գործել հակաքաղկեդոնական պայքարը վերականգնելու և ինքնապաշտպանության ճակատ ստեղծելու ուղղությամբ: Նա Ընորհալու բանակցությունների մթնոլորտում հասակ առած հոգևորական էր, որը 80—90-ական թթ. հավաքում և ուսումնասիրում էր հայ հակաքաղկեդոնական պայքարի և ընդհանրապես դավանաբանական մտքի պատմության վերաբերյալ նյութեր, որոնցով 1205 թ. ավարտեց և

¹² Լամբրոնացու դեսպանության հաղորդագրությունն է՝ «Եսասկությունց Ներսեսի Լամբրոնացույ ընդ պատրիարքին Յունաց» (Ռբատ. Հովհ. Տերոյնցի), Կ. Պոլիս, 1861:

¹³ Հ. Ղ. Այիշան, «Հայապատում», Վենետիկ, 1801, մասն Բ, էջ 425:

¹⁴ Անդ, էջ 426:

¹⁵ Սա Լամբրոնացու կյանքի վերջին դրվագն է, որովհետև քիչ անց, 1198 թ., նա մահացավ. նշանակում է՝ մահացել է հայ եկեղեցու, այսինքն՝ հայոց ազգային շահերի, պաշտպանության դիրքերի վրա: Լամբրոնացուն շատ ջնջադատող մեր պատմաբանները պետք է հաշվի տան լինելից այս պարագան:

¹⁷ Տես Հ. Ս. Անասյան, «Վարդան Այգեկցին իր նորայայտ երկերի լույս տակ» (արտատպ. «Բագմավեպ»-ի 1968 թ. հատորից), Վենետիկ, 1969, էջ 40—41:

նրապարակ հանց իր «Արմատ հաւատոյ» հակամատակամ ժողովածուն՝ որպէս պայքարի ուղեցոյց¹⁸:

Քանի որ հայ եկեղեցին արդեն չունի իր տեսակետներն ուրիշներին թելադրելու հավակնություններ, վարդան Այգեկցու քննադատությունն ու պայքարն ուղղված էր ոչ թե քարկեղոնական օտար եկեղեցիների,—տվյալ դեպքում՝ լատինականի,—դեմ, այլ քաղկեդոնական մտայնությամբ ու գաղափարներով տարված հայերին՝ նրանց լուսարանելու և տարհանուցելու նպատակով: Դա էլ, իհարկե, պայքար էր, անուղղակի պայքար, ընդդէմ օտար ազդեցությունների, ընդդէմ Արևմուտքի գաղափարական ոտնձգությունների՝ Հայաստանի սահմաններից ներս:

«Արմատ հաւատոյ»-ի հեղինակը տողորված էր Շնորհալու առուջ ու լայնախոն գաղափարներով: Նա ասում էր, որ «այստար ամենայն ազգք քրիստոնեայ գիր հաւատն և գիր եկեղեցոյն կարգքն և զսահմանն՝ զպատարագի և զտանից՝ ամրացուցեալ է բազում վկայութեամբ ի Գրոց. թէ սուտ է և թէ իրա՛ւ՝ զայն Աստուած գիտէ»¹⁹ և ավելորդ է վիճել այդ սասին: Նա գտնում էր, որ «ամենայն մարդ պիտի որ գիր կարգ և զհաւատն գովէ»²⁰, «այս չէ ժամ զհաւատքս քննել կամ հաստատել, զի լցաւ երկիր գիտութեամբ Աստուծոյ. այժմ որ ունի՛ ա՛յն է զինչ որ ունի»²¹, «ամէն ազգ կալէք գիր եկեղեցոյն սահմանն և սովորութիւնն և զկարգն... զի զհաւատքն ուղիղ պահիցէք... և վասն կարգաց եկեղեցոյ մի՛ քննէք և բանավէ՛ն լինիք և անհանգրստիք»²², «սպաշտեցէք ամենայն ազգ գիր կարգն և զսահմանն իւր եկեղեցին»²³:

Շնորհալու գաղափարներով տողորված վարդան Այգեկցին միաժամանակ «Արմատ հաւատոյ»-ում օգտագործել է նրա այն գրվածքները, որոնք բանակցությունների ժամանակ ուղղված էին Մանուել Կոմնենոսին:

Մի ուրիշ սուրբիվ ասել ենք, որ Այգեկցու դավանագրերում լայն չափերով օգտագործված են Շնորհալու «Գիր հաւատոյ խոստովանութեան» գրվածքը և դավանական այն արտահայտությունները, որոնք կան նրա առ Մանուել Կոմնենոս գրած նամակներում: Այստեղ որպէս օրինակ բերենք «Արմատ հաւատոյ»-ի Գ գլխում տրված դավանության հետևյալ մասը, որը վերաբերում է եռանձնյա աստուածության ստորոգելիներին.

«Երեք անձինք կատարեալք և մի բնութիւն և մի աստուածութիւն և մի կամք և նախախնամութիւն և մի արարչագործ զարուպիւն»²⁴:

Հմետ. Շնորհալու հետևյալ սուղերի հետ.

«Մի էութիւն, մի իշխանութիւն, մի կամք և մի արարչագործ զօրութիւն յերիս անձնատրութիւնս իմացի»²⁵. Ունէ՛ «Անսկիզբն Հայր, և յանսկզբնակսնէն Հօրէ սկսեալ Որդի և Հոգի... մի կամք և մի զօրութիւն և մի իշխանութիւն, մի արարչութիւն եղելոց և մի նախախնամութիւն ի վերայ ամենայնի»²⁶:

¹⁸ Աճղ, էջ 7—10 և 14—35: Տե՛ս նաև Հ. Ս. Աճառյան, «Հայ պատմա-դավանաբանական գրականության թանկարժեք հուշարձանը», «Լեզմիածին» (ամս.), 1972, № 8, էջ 27—36, № 9, էջ 45—56:

¹⁹ Հ. Ս. Աճառյան, «Վարդան Այգեկցին...», էջ 48:

²⁰ Աճղ, էջ 45:

²¹ Աճղ, էջ 46:

²² Աճղ, էջ 47:

²³ Աճղ, էջ 48:

²⁴ Արևանի Պատ. Մատենադարանի ձեռ. № 3285, էջ 339ա:

²⁵ Նկրսեն Շնորհալի, էջ 118:

²⁶ Աճղ, էջ 202:

Ոլջազոպ է «Արմատ հաւատոյ»-ի Ը գլխի վերնագիրը, որն ուղղակի ծագում է Ծնորհալու մի հատվածից: Ահա այդ վերնագիրը. «Վկայութիւնք ղնդուն Ըոցա, որք ապականացու ասացին զանապական մարմին Տառն մարոյ Յիսուսի Քրիստոսի, և անգոսնելի կիրք ետուն նմա որ է կերակրոց և ըմպելեաց ախտարար հոսումն»²⁷:

Հմնտ. Ծնորհալու տողերը.

«Իսկ ապականացու ասել զտարմինն...: Ապա թէ վասն ակամայ և անգոսնելի կրի'ց ապականացու որ ասիցէ զնա, այսինքն՝ կերակրոց և ըմպելեաց ախտարար հոսմանց» և այլն²⁸:

Ծնորհալու այս հատվածը մենք հետո կտանք ամբողջությամբ: Բայց ավելացնենք, որ այս տողերի ազդեցությամբ են գրված նաև նույն Ը գլխի վերջում, անապականության դավանագրում, գտնվող «և հեռացեալ յանգոսնելի կրից՝ ի կերակրոց և ըմպելեաց յախտաբար հոսմանց» բառերը²⁹:

«Արմատ հաւատոյ»-ում, անապականության նույն դավանագրում, դարձյալ կարդում ենք.

«Քանզի Բանն ի'ր համարէր զամենայն կիրս և զչարչարանս մարմնոյս ...բայց զի ի'ր էր մարմինն և յորժամ կամէր թոյլ տայր կրել զկիրս մարդկայինս բայց ի մեղաց, և բռնադատել ի կրից մարմնոյն գունակ մեզ»³⁰:

Հմնտ. Ծնորհալու տողերի հետ.

«Զի ո՛չ եթէ մարդկային կամքն զաստուածայինն բռնադատէր՝ որպէս և ի մեզ, զի կամք մարմնոյն ցանկայ հակառակ հոգւոյն, այլ մարդկայինն՝ աստուածայնոյն հետևիւր կամաց. զի յորժամ կամէր և թոյլ տայր, յայնժամ զիրսն կրէր մարմինն»³¹:

Բացի այսպիսի անուղղակի փոխառություններից՝ Վարդան Այգեկցիին «Արմատ հաւատոյ»-ում տեղ է տվել նաև Ծնորհալու գրվածքներից մի շարք հատվածների, քառացի և կամ որոշ խմբագրման ենթարկված:

Նախ ասենք, որ «Արմատ հաւատոյ»-ում վկայակոչված են երկու ներսեսներ՝ «Ներսէս միջին» և «Ներսէս վերջին»: Միջին կոչվածը ներսես Իսաբրևանդացին է, իսկ վերջինը՝ Ծնորհալին: Վարդան Այգեկցիին հայոց կաթողիկոսների շարքում երևացող եղյակ անվանակիցներից ներսես Պարթևիին համարելով առաջին, — թեև նրան չի հիշատակում, — հաջորդներից, քնակաճարար, պիտի անվաներ միջին և վերջին:

Ծնորհալու անունով բերված հատվածները նրա հետևյալ գրվածքներից են.

1. Գիր հաւատոյ յստտվանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ³²:
2. Սահմանք հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ³³:
3. Յաղագս առնողութեանց եկեղեցւոյ³⁴:
4. Պատասխանի թղթոյն մեծի թագաւորին Հոռոմոց Կիւ Մանուէի,

²⁷ Ձեռ. № 3285, էջ 857ա:

²⁸ Ներսես Ծնորհալի, էջ 188:

²⁹ Ձեռ. № 3285, էջ 987ա:

³⁰ Աճղ, էջ 867ա:

³¹ Ներսես Ծնորհալի, էջ 171:

³² Աճղ, էջ 117—144:

³³ Աճղ, էջ 169—176:

գրեալ Ներսիսի կաթողիկոսի վասն ճշմարիտ դաւանութեան հաւատոյ Հայաստանեայց եկեղեցոյ¹⁴:

«Արմատ հաւատոյ»-ի տարբեր գլուխներում Շնորհալու այս երկերից բերված են 10 հատվածներ, որ ստորև նշում ենք՝ ցույց տալով նրանց համապատասխան տեղերը Շնորհալու երկերի հրատարակության մեջ:

Դ—Է գլուխներում, Երրորդության և մարդկության մասին հույն, ասորի և լատին հեղինակների վկայություններն ամփոփելուց հետո, Վարդան Այգեկցին մի նոր շարքով արվելացնում է վկայություններ նաև «ի մերոց Հայաստանեայց յաստուածաբնակ հայրապետացն և ի սրբազան հոգիքնկալ վարդապետացն բռնից»¹⁵: Վկայարկչված հեղինակներն են՝ Գրիգոր Լուսավորիչ, Սահակ Պարթև և Մաշտոց, Դավիթ Հարբացի, Մովսես Քերթոզահայր և այլն: Այս բաժնի վերջին հեղինակն է Ներսես Շնորհալին, որից բերված են չորս հատվածներ:

1. **ՆԵՐՍԷՍԻ ՎԵՐՋՆՈՅ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ՝ Ի ԹՂԹԷՆ ՈՐ ԱՌ ՄԱՆԻՎ ԹԱԳԱՒՈՐՆ.**—Այլ և խառնի ընդ մարմնոյ անմարմին հանն, և միացուցանէ ընդ ինքեան զմարդկային բնութիւնս՝ աստուածացուցանելով զնա խառնմամբն և միաւորութեամբն, ո՛չ փոփոխում[ն] կամ այլալիութիւն ելով ի միաւորութեանն, ըստ որում և ո՛չ հոգի և մարմին մարդկային¹⁶:

Բերված է «Գիր հաւատոյ խոստովանութեան» երկից¹⁷:

2. **ՆՈՐԻՆ՝ ՅԵՐԿՐՈՐԴ ԹՂԹԷՆ.**—Է՛ մարմին, և է՛ անմարմին. մարմին՝ ըստ մարդկութեան[ս] զոր առ, և անմարմին՝ ըստ աստուածութեանն զոր ունէր: Եւ նոյն տեսանելի և անտեսանելի: Ո՛չ ոմն և ոմն, այլ մի էութիւն և անձնաւորութիւն՝ յերկուց բնութեանց ի մի Քրիստոս միացելոց՝ անշփոթելի և անբաժանելի միաւորութեամբ¹⁸:

Բերված է «Սահմանք հաւատոյ» երկից՝ որոշ կրճատումով¹⁹:

3. **ՆՈՐԻՆ՝ ՅԵՐԿՐՈՐԴ ԹՂԹԷՆ.**—Միացաւ ընդ մերս բնութիւն անբաժանելի, և ոչ լուծումն կամ փոփոխումն ընկալաւ աստուածութեանն ի մարդկութիւնն, և ոչ մարդկութեան՝ յաստուածութիւնն, այլ մնաց անորոշելի և անշփոթելի²⁰:

Բերված է «Պատասխանի թղթոյն...» երկից²¹:

4. **ՆՈՐԻՆ.**—Արդ՝ եթէ մի բնութիւն վասն անքակտելի միաւորութեան ասի և ոչ վասն շփոթման, և երկու բնութիւն՝ վասն անշփոթ և անալլաղելի մնալոյ և ոչ վասն բաժանման և բնութեանցն զյատուկսն տալոյ, երկոքեանս ի սահման[ի] [եճ] ուղղափառութեան²²:

¹⁴ Աճղ, էջ 177—198:

¹⁵ Աճղ, էջ 198—208:

¹⁶ Ձև. № 3285, էջ 360ր:

¹⁷ Աճղ, էջ 366ա:

¹⁸ Հմմտ. Ներսես Շնորհալի, էջ 118:

¹⁹ Ձև. № 3285, էջ 366ա—366ր:

²⁰ Հմմտ. Ներսես Շնորհալի, էջ 170:

²¹ Ձև. № 3285, էջ 366ր:

²² Հմմտ. Ներսես Շնորհալի, էջ 203:

²³ Ձև. № 3285, էջ 366ր:

խմբագրված է «Գիր հաւատոյ խոստովանութեան» երկից⁴¹:

«Արմատ հաւատոյ»-ի ը գլխում, որն անապականության հարցին է նվիրված, օտար վկայություններից հետո դարձյալ կան մի քանի հայկական վկայություններ, որոնց վերջում՝ Շնորհիւց բերված երկու հատվածներ:

5. Ի ՀԱՒԱՏՈՅ ԹՂԹԷՆ ՆԵՐՍԻՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՈՐ ԱՌ ՄԱՆԻՆ ԹԱԳԱՒՈՐՆ.—Ապա թէ ոք վասն ակամայ և անգոսնելի կրից ապականացու աւել գնա, այսինքն՝ կերակրոց և ըմպելեաց ախտաբար հոսմանց, այսմ ոչ հաղորդիմք. քանզի ապականութիւն մեղա՛ց է ծնունդ, և որ մեղս ոչ արար, ոչ տիրեաց նմա այսպիսի ապականութիւն: Վկայի ի Գիրս թէ զկիրս [ոչ] ակամայ, այլ կամատրաբար կրեաց, և այս կիրք ապականութեան ոչ կամաւ, այն ակամայ և բռնութեամբ ներգործի ի մեզ, և որ զայս աւել յայտ առնէ թէ ոչ կիրքն նմա՛, այլ ինքն կրի՛ցն ծառայէր, և թէ այսպիսի ապականելի կրից ի ներքոյ անկեալ էր, ապա յայտ է թէ և մեղա՛ց, որ հայրն է ապականութեան, [ի ներքոյ անկեալ էր]. գոր մի՛ լիցի իմանալ կամ աւել ուղիղ հաւատացելոց: Իսկ թէ վասն հաստատութեան մարդանայոյն աւել ոք զայս առ նա լինել, բառական են յայտնի կիրքն որ գրեցան, որք են անանգոսնելիք՝ քաղցն և ծարաւն, արտասուքն և վաստակելն, թէ ճշմարտապէս մարդ եղև, և անգրեղոցն և վատթարագունիցն ոչ կարօտանալ ուղիղ խոստովանողացն գնա [Աստուած] ճշմարիտ⁴²:

Խմբագրված է «Գիր հաւատոյ խոստովանութեան» երկից⁴³:

6. ՆՈՐԻՆ ՅԵՐԿՐՈՐԳ ԹՂԹԷՆ.—Բնութիւն Ադամայ մեղանշականն՝ միացաւ ընդ Աստուածն Բանի և եղև անմեղ և անապական արտաքոյ անգոսնելի կրից, որպէս հրահալելին ի հուր մերձեալ ժանգ ապականութեան թէ իցէ ի մնա՛ ծախեսցի. զի որոյ սկիզբն անապական [է] ի Կուսէ առանց սերման, և ի գերեզմանի մարմին նորա ոչ ետես զապականութիւն, հարկ եղև ի ծննդեանն մինչ ի մահն լինել անապական⁴⁴:

Հիմնովին վերախմբագրված է «Գիր հաւատոյ խոստովանութեան» երկից: Ահա Շնորհալու այդ հատվածը.

«Եւ առնելով զբնութիւն Ադամայ՝ ո՛չ զոր յանմեղութեանն և ի դրախտին, այլ զոր յետ մեղանացն և ապականութեանն. զի և Կոյսն Մարիամ՝ յորմէ մարմին առ Քրիստոս, ի մեղանշականին Ադամայ բնութեանն էր. սակայն միաւորելով ընդ բնութեանն Աստուծոյ, մեղանշականն եղև անմեղ, և ապականացուն՝ արտաքոյ անգոսնելի և ապականութեան կրից. որպէս և հրահալելի Գիւթք՝ յորժամ ընդ հրոյ միանան, ժանգ ապականութեան եթէ իցէ ի նոսա՛ ծախի. իսկ բնութիւնն մաքրելով յապականութեանն՝ անծախելի մնաց, զի որոյ սկիզբն անապական է, զի առանց սերման յանապական Կուսէ էր ծնունդն, և կատարումն՝ անապական, զի մարմին նորա ի գերեզմանին ո՛չ ետես զապականութիւն, հարկ է՝ զի և ի մէջ ժամանակին, որ ընդ ծնունդն և ընդ մահն՝ լինել անապական»⁴⁵:

«Արմատ հաւատոյ»-ի ԺԱ գլխում, որը նվիրված է ծննդյան և մկրտության սունը միասին կատարելու հարցին, հայկական վկայությունների վերջում գտնուի ենք հետևյալ հատվածը.

⁴¹ Հմմտ. Ներսես Շնորհալի, էջ 130:

⁴² Անտ. № 3205, էջ 358բ—359ա:

⁴³ Հմմտ. Ներսես Շնորհալի, էջ 138—140:

⁴⁴ Անտ. № 3205, էջ 359ա:

⁴⁵ Հմմտ. Ներսես Շնորհալի, էջ 120:

7. Ի ՀԱՒԱՏՈՅ ԹՂԹԷՆ ՆԵՐՍԷՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՈՐ ԱՌ ՄԱՆԻՆԻ ԹԱԳԱՒՈՐՆ.— Է՛ և այս աւանդութիւն Հայոց ի նախնեաց սկսեալ՝ զտօն ծննդեանն և մկրտութեանն տօնել ի միում աւուր, և այս՝ ոչ է վայրապար, զի ի սկզբանէ ամենայն եկեղեցիք նոյնպէս կատարէին, որ և այս զիտելի է ձեռնով իմաստութեանդ, թելպէտ և յետոյ [յ]երկուս բաժանցցին զմի տօնն: Իսկ մեք զաւանդեալն մեզ ի սրբոյն Գրիգորէ անփոփոխելի պահեցաք ըստ Ղուկայ որ ասէ թէ՛ յետ աւուրցն այնոցիկ գնաց ի տուն իւր և յղացաւ Եղիսաբէթ, և տեսիլն և պապանձումն յառաջից օր տօնի քաւութեանն եղև՛:

Կրճատումներով վերախմբագրված է «Յաղագս աւանդութեանց եկեղեցոյ» գրվածքից: Հմմտ. հատկապէս հատվածի վերջին մասերը.

«...անփոփոխելի պահեցաք՝ ըստ վկայութեան սրբոյ աւետարանչին Ղուկայ, որպէս պատմէ յետ պապանձելոյն Ջաքարիայ, և ասէ թէ՛ յետ աւուրցն այնոցիկ գնաց ի տուն իւր, և թէ յղացաւ Եղիսաբէթ կին նորա: Եւ աւուրք պաշտաման քահանայութեանն Ջաքարեայ՝ կոչէ զհինգօրեայ տօնն քաւութեան և զեօթնօրեայ տօնն տաղաւարահարացն, որ լինին երկոտասան աւուրք. և տեսիլ հրեշտակին և պապանձումն Ջաքարիայ յառաջնումն աւուր տօնի քաւութեան եղև»⁴⁰:

«Արմատ հաւատոյ»-ի ժԲ գլխում, որը վկայութիւններ է բերում ապացուցելու, թէ «Տէրն մեր զգառն ոչ եկեր յերեկոյին հինգշաբաթին», հայկական աղբյուրներից բերված միակ վկայությունը Շնորհալու հետևյալ փոքրիկ հատվածն է.

8. Ի ԹՂԹԷՆ ՆԵՐՍԷՍԻ ՈՐ ԱՌ ՄԱՆԻՆԻ ԹԱԳԱՒՈՐՆ.— Գառնն ճշմարիտ յորժամ եկեր զգառն օրինակին և զբաղարջն՝:

Բերված է «Յաղագս աւանդութեանց եկեղեցոյ» երկից՝:

«Արմատ հաւատոյ»-ի ժԳ գլխում, որը նվիրված է հացի և բաժակի հարցերին, կա դարձյալ մի հատված՝ հայկական վկայությունների վերջում.

9. Ի ՀԱՒԱՏՈՅ ԹՂԹԷՆ ՆԵՐՍԷՍԻ ՈՐ ԱՌ ՄԱՆԻՆԻՆ.— Յետ կատարելոյ զհինն՝ առեալ զհացն ի սեղանոյ անտի. յայտ է թէ՛ զբաղարջն, զի առաջի օր էր բաղարջակերացն, և ասէ՛ Այս է մարմին իմ: Նաև կուսածին և անապական մարմնոյն ի դէպ է բաղարջն լինել օրինակ, և ոչ խմորեալն: Եւ վասն զինոյն, զի [ի] Լուսաւորչէն մերմէ ունիմք զայս, որպէս չնկալաւ նա ի նախնեացն: Գրեալ է՝ Քրիստոս զինի միայն առ ի ձեռս և ասաց՝ Այս է արիւն իմ, և ջուր ոչ յիշէ, և թէ՛ ի բերանոյ որթոյ ոչ արբից»⁴¹:

Բերված է «Յաղագս աւանդութեանց եկեղեցոյ» երկից: Նրա առաջին մասը, որը հացին է վերաբերում, խմբագրված է թեթևորեն⁴². Իսկ երկրորդ մասը, որը զինուն է վերաբերում, հիմնովին է խմբագրված և զգալիորեն կրճատված: Հմմտ. այս մասը.

«Ասացուք ըստ կարգի և յաղագս բաժակի արեանն Տեսուն՝ առ մել միայն հաստատեալ աւանդութեամբ ի սրբոյն Գրիգորէ և ո՛չ առ այլ եկեղեցիս, անապակ լինելով զինի առանց խառնման ջրոյ: Որոյ նախ և առաջին

⁴⁰ Ձև. № 3295, էջ 370ր:

⁴¹ Հմմտ. Ներսես Շնորհալի, էջ 184 – 185:

⁴² Ձև. № 3295, էջ 371ա:

⁴³ Հմմտ. Ներսես Շնորհալի, էջ 179:

⁴⁴ Ձև. № 3295, էջ 373ր:

⁴⁵ Հմմտ. Ներսես Շնորհալի, էջ 178:

պատճառ...: Եւ դարձեալ՝ զի Տէրն յորժամ առ ի ձեռս գրածակն և ասաց՝ Այս է արիւն իմ նորոյ ուխտի, յաւել թե՛ Ո՛չ արքից ի քերսնոյ որթոյ, մինչև արքից զդս նո՛ր ընդ ձեզ յարքայութեան Հօր իմոյ»⁵⁵:

«Արմատ հաւատոյ»-ի ԺԴ գլխում, որը խաչեցարին է վերաբերում, դարձյալ Ծնորհալուն է պատկանում վերջից վկայությունը.

10. Ի ՀԱՒԱՏՈՅ ԹՂԹԷՆ ՆԵՐՄԻՍԻ ՎԵՐՋՆՈՅ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՅԻ ՈՐ ԱՌ ՄԱՆԻՆ ԹԱԳԱԻՈՐՆ.— Եւ արդ՝ օրհնութիւն խաչի ոչ նախ ի մէջ եղեալ է, այլ [յ]առաջին հարցն ձերոց, և նախնիքն մեր թարգմանեալ ետուն մեզ: Իսկ լուանալն նախ ջրով և ապա զինով ի խորհուրդ երկուց վտակացն որ էլ ի կողէն Տիտուսի Քրիստոսի⁵⁶:

Բերված է «Գիր հաւատոյ խառնովանութեան» երկից՝ կրճատման և խմբագրման ենթարկվելով: Հմմտ.


«Եւ օրհնութիւն խաչի ո՛չ ի մէջ եղեալ է, այլ յառաջին հարցն ձերոց՝ զոր նախնիքն մեր թարգմանեալ ետուն մեզ, որպէս և այժմ գտանեմք յԱրեւելս յունարէն գրով ի հին գիրս, ո՛չ առանել և ո՛չ նուազ քան զմերս: Զի գրեալ է լուանալ զնորոգ խաչն՝ նախ ջրով և ապա զինեալ ի խորհուրդ երկուց վտակացն՝ որ ի կողիցն Քրիստոսի ելին»⁵⁷:

Այսպիսով՝ Ներսէս Ծնորհալին «Արմատ հաւատոյ»-ում հանդես է գալիս իր գրվածքներից քաղված 10 հատվածներով, որոնց մի մասը, ինչպես տեսանք, զգալի կերպով վերախմբագրման է ենթարկված վարդան Այգեկցու կողմից:

Բայց այս ուղղակի փոխառությունները չեն, որ կազմում են Ծնորհալու և «Արմատ հաւատոյ»-ի միջև եղած բուն կապը, որովհետև «Արմատ հաւատոյ»-ն արդեն ընդհանրապես բազմաթիվ հեղինակներից քաղված նյութերի ժողովածու է: Ծնորհալու ազդեցությունն ու կապը կազմում են ավելի շատ այն անուղղակի փոխառությունները, որ մատնանշեցինք «Արմատ հաւատոյ»-ի Գ և Ը գլուխների դավանագրերում և Ը գլխի վերնագրում: Բայց Ծնորհալու կապը «Արմատ հաւատոյ»-ի հետ՝ մենք հատկապես նկատում ենք ժամանակի պատմական իրադրության զարգացման ընթացքի մեջ, յուս որում Ներսէս Ծնորհալու կրտսեր ժամանակակիցներից վարդան Այգեկցին, որը տոգորված էր նրա իմաստուն ու խոհական գաղափարներով, հայ-քյուզանդական բանակցությունների ապարդյուն էլքից հետո գտնում էր, որ հայադավան գաղափարախոսության պաշտպանության համար հակաքաղկեդոնական պայքարը պետք է շարունակվեր նաև ներքին ճակատի վրա, քաղկեդոնական հակումներ ունեցող հայերի մեջ, «ընդդէմ թերավարժ՝ երկմիտքնողաց», որոնք «տգիտաբար խօսէին վասն երկու բնութեան և կամ վասն այլոց խորհրդոց», և այդ նպատակով էլ կազմել էր իր «Արմատ հաւատոյ» ժողովածուն⁵⁸:

Ներսէս Ծնորհալու և «Արմատ հաւատոյ»-ի հեղինակի գաղափարական արձնչությունների մասին մենք արդեն բավականին խոսեցինք սույն հոդվածի սկզբում:

⁵⁵ Հմմտ. անդ, էջ 180—181:
⁵⁶ Ձև. № 3295, էջ 377ա:
⁵⁷ Հմմտ. Ներսէս Ծնորհայլ, էջ 136:
⁵⁸ Արդիւս էլ ասում է նա «Արմատ հաւատոյ-ի ներածական գլխում («և այս ետ ձեռնարկի մեզ յայս բան»), տես Ձև. № 3295, էջ 388ա:



Գ. Ա. ՀԱԿՈՒՅԱՆ.

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻՆ ԵՎ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԵՐԸ

Մենք է ներսես Շնորհալին նաև հոգևոր երգերի բնագավառում: Մեր շարականների բազմաթիվ հեղինակների մեջ ամենաբարձր գագաթն է: Հայկական բազմատեսակ շարականներից հարյուրից ավելի պատկանում է նրա գրչին: Անկարելի է պատկերացնել մեր հոգևոր երգի գանձարանը՝ Ծարակնոցը, առանց Շնորհալու: Առանց Շնորհալու շարականների վերլուծման նրա բանաստեղծական պատկերը թերի կլիներ:

Պրոֆ. Մ. Արեղյանը այսպես է բնորոշում դրանք. «Ավելի կարևոր են Շնորհալու բազմաթիվ հոգևոր երգերը... Դրանց մեջ կան և շատ գեղեցիկները և այնպիսիները, որ մի ժամանակ սիրված և ժողովրդականացած են եղել»¹:

Երկու հիմնական և հավաստի պատմական աղբյուր կա, թե ինչ շարականներ է գրել Շնորհալին: Այդ աղբյուրներից մեկը կիրակոս Գանձակեցին է, որը Շնորհալու գիտության և համբավի մասին խոսելիս, միաժամանակ հայտնում է, թե նա ո՞ր կանոնի ո՞ր շարականներն է գրել²:

Երկրորդ տեղեկությունը տալիս է հին Ծարակնոցի առաջաբանը:

Շնորհալուն պատկանող շարականների վերաբերյալ որոշ տեղեկություններ են հա-

ղորդում նաև Ռ. Գաբրիել Ավետիսյանի «Բացատրություն շարականաց» և Սահակ վարդապետ Ամատունու «Հին և նոր պարականոն կամ անվավեր շարականներ» ուսումնասիրությունները:

Արժեքավոր ու նոր տվյալներով հարուստ են Սեսրուպ Մաշտոցի անվան Մատենադարանում եղած Շնորհալու շարականների (№№ 1553, 5274, 3484, 1558, 8084, 8987, 9053, 424, 3498, 370, 1578, 1577, 1585, 1589, 2179, 824, 2961) բազմաթիվ ձեռագրերը:

Մեր հոգևոր երգերի ժողովածուի՝ Ծարակնոցի մեջ ներսես Շնորհալին իրոք ամենաբեղմնավոր և առեմամբ հեղինակն է:

Ն. Շնորհալու բազմաթիվ և բազմաբնույթ շարականները կարելի է խմբավորել այսպես՝

- Ա. Տերունական տոներին նվիրված շարականներ.
- Բ. Վկայաբանական և դավամաքանական շարականներ.
- Գ. Կանոններից դուրս երգեր.
- Դ. Ազգային թեմաներով գրված.
- Ե. Հայրենասիրական շարականներ:

Ա. ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՏՈՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

Այս խմբում մենք տեղ են գրավում Մեն պահքի կիրակիներին երգվող «Աղուհացից» կոչվող շարականները:

Մեն պահքի երկրորդ կիրակիի օրհնության հիմնական իմաստը պահեցողությունն է: Երրորդ կիրակիի օրհնության մեջ Շնորհալին գեղարվեստորեն վերարտադրում է

¹ Մանուկ Արեղյան, Երկեր, Երևան, 1970 թ., հատ. Դ, էջ 111:

² Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 119:

³ «Ջայնբաղ Ծարական», էջմիածին, 1898, Առաջաբան, էջ 8 (մեջբերված բոլոր շարականները այս աղբյուրից են):

Անատակ որդու տուսկը: Այստեղ նա մեղա-
վար մարդկությունը նմանեցրել է Անատակ
որդուն, որը գոյում է, վերադառնալով իր
հայրական տունը՝ դարձի է գալիս և ներումն
խնդրում: Ըստ շարականի՝ Ադամի մեղա-
շելու հետևանքով մարդը նման է Անատակ
որդուն, որը նույնպես պետք է դարձի գա և
ողջա:

Զորորդ կիրակի օրվա շարականներում էլ
տիրապետողը զոջման և ապաշխարելու ո-
գին է:

Հիմազերորդ կիրակիի օրհանության հիմնա-
կան միտքը դատալորի առակն է, որտեղ
հորդորվում է լինել արդարադատ և անա-
չառ:

Աղոթագից կանոնների մեջ աչքի են
ընկնում Մեծացուցեցների պատկերները, ո-
րոնցից շատերը կրում են Նարեկացու
«ԾՆՆՆձեան» տաղերի ազդեցությունը⁴:

Ավագ շարաթին նվիրված շարականների
մեջ լավագույնը «Այսօր անձառն» է: Սա
հոգեշունչ մի գեղեցիկ քերթված է, որտեղ
Ծնորհալին նկարագրում է վերջին ընթրիքի,
և Քրիստոսի չարչարանաց հետ կապված
դեպքերը:

Մի քանի շարականներ էլ նվիրված են
Հարության տոնին, շարականներ, որոնցում
աչքի են ընկնում բանաստեղծի ուրախ
զգացմունքները և զվարթ ոճը:

Հարության կանոններում Ծնորհալուն են
պատկանում նաև «Նորոգեալ կղզիք» և
«Յարեա Տէրն ի գերեզմանէն» վերնագրե-
րով շարականները:

Վարդավաթի առաջին օրվա շարականը
վերագրվում է Մովսես Քերթոռին: Մնացած
երկու օրվա «պատկերը» գրել է Ծնորհալին:
Ուրախ զգացումներով ու աշխույժ տողերով
են գրված երկրորդ օրվա Մեծացուցեց, Ո-
ղորմեան և Մանկունքը: Բանաստեղծը լըց-
ված է ուրախությամբ. նա ուզում է, որ իր
զգացմունքներին հաղորդակից դառնան եր-
կինքն ու երկիրը. ամբողջ տիեզերքը, հատ-
կապես այն լեռները, որտեղ կատարվել է
Տիրոջ պայծառակերպությունը: Մուրք և
խորհրդավոր են Սինա, Թաբոր ու Հերմոն
աարերը, ասում է երգը, որոնք կապված են
իրենց պատմությամբ Աստուծո, Մովսեսի և
Հիսուսի հետ⁵:

Իր գեղեցկությամբ ու պատկերներով աչ-
քի է ընկնում երկրորդ օրվա «Տէր յերկնից»
շարականը, իսկ երրորդ օրվա կանոնի մեջ՝
Մանկունքը: Այստեղ ևս հորդում են բա-
նաստեղծի զգացումները: Դարձյալ ցնծու-
թյուն է Թաբոր սարի վրա, բոլոր լեռներն
են այսօր ցնծում ու պարում.

Լերինք ստեճայն այսօր ցնծան՝
Ընդ ելանել րո Տէր ի Թաբոր⁶:

Այս կանոնի շարականները գրված են
սահուն ու գեղեցիկ լեզվով և համեմատա-
բար բարձր տաղաչափությամբ:

Ինչպես Հոգեգալստյան, Վարդավաթի,
այնպես էլ Վերափոխման տոնը մինչև 12-րդ
դարը միայն մի օր էր տոնվում: Ծնորհալին
սահմանեց Վերափոխման ինճօրյա տոն, ո-
րից 6-ը՝ պաս, իսկ 3-ը՝ հանդիսավոր տո-
ներ, և գրեց այդ տոնին նվիրված մի քանի
շարական:

Աստվածածնի վերափոխմանը Ծնորհալին
ընծայել է նաև երկու գեղեցիկ տաղ, որոնք
իրենց բովանդակությամբ շատ նման են այս
երկու օրվա կանոնների շարականներին:

**Բ. ՎԿԱՅԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ
ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՐԱԿԱՆՆԵՐ**

Ն. Ծնորհալու վկայաբանական շարա-
կանները թվով երեք են՝ նվիրված ս. Սարգ-
սին, ս. Գևորգին և Սեբաստիայի քառա-
սուն մանկանց: Առաջին և երկրորդ շարա-
կանները Ծնորհալին գրել է ասորական
աղբյուրներից վերցված նյութերի հիման
վրա՝ հաղբատցի վարդապետների խնդրան-
քով: Իսկ վերջինը՝ քառասուն մանկանց շա-
րականը, վերցված է վկայաբանական տրվ-
յալներից:

11—12-րդ դարերում Սև լեռների փեշե-
րում կային նաև ասորի ու հույն վանական-
ներ: Ասորական մեծաստաններից մեկում
կար ս. Սարգսի վկայաբանությունը՝ ասորե-
րեն լեզվով: Սանահնեցի Գևորգ վարդապե-
տի խնդրանքով Ներսես Ծնորհալին վերցրե-
ց այդ վկայաբանությունը, թարգմանեց
հայերենի և երգահյուսեց ս. Սարգսին նվիր-
ված «Ամենասուրբ Երրորդութիւն» անունով
հայտնի «օրհանությունը»:

Շարականի նյութը ս. Սարգսի և նրա որ-
դի Մարտիրոսի վարքի ու նահատակության
պատմությունն է:

Այս կարգի, բայց պարականոն երկու շա-
րական էլ Ծնորհալին նվիրել է ս. Գևորգին:
Սրանցից մեկն է «Այսօր տօնէ եկեղեցի»
օրհանությունը, որը շատ նման է մարտիրո-
սաց կարգի շարականներին:

Գևորգ զորավարի ամբողջ կանոնը Փոքր
Վկայաւեր կաթողիկոսի գրածն է: Իսկ այն
օրհանությունը, որը գրել է Ծնորհալին, բաղ-
կացած է 10 տնից, ծայրանուն է և կազմում
է «Քաջամարտիկ» բառը:

Ինչ ձևով ու ոճով Գրիգորիս կաթողիկոսը
իր գրած շարականների մեջ հանդես է բե-

⁴ «Շարական», էջ 185:
⁵ Անթ., էջ 873:

⁶ Անթ., էջ 877:

րում Գեորգի արիությունը, ազգասիրությունը և նահատակությունը, նույն բառ ու բանով այս ամենը պատկերացրում է Ն. Շնորհալիհի իր հայտնի «Քաջամարտիկ» օրհնության մեջ:

Իսկ «Այսօր անյաղթելի» օրհնության մեջ փառաբանվում են Աբրահամի և Գարգամի նահատակված քառասուն անմեղ մանուկները: Հայ եկեղեցին ամեն տարի տոնում է «Քառասնից» հիշատակը: Այս փոքրիկ շարակա՛նում տրված է Աբրահամի և Գարգամի լծի ստույգների վրա ընկած անմեղ մանուկների նահատակության պատմությունը:

Մեր հին գրականության մեջ դավանաբանական արձակ և չափածո գործերն առանձնապես երևան են գալիս և զարգանում Քաղկեդոնի ժողովից հետո: Հետագայում գրականության այս տեսակը հասել է իր զագաթնակետին Ներսես Շնորհալու օրով: Շնորհալու Հայրապետաց և Հոգեգալստյան կանոնների շարականներից գրեթե բոլորը այդ տրամադրությամբ են գրված: Բացի այդ կանոններից դավանաբանական շատ տողեր ու տներ էլ նա ունի «Այսօր անճառ», «Աստուած Անեղ», «Նորաստեղծեալ», «Որդոցն Որոտման», «Առաօտ լուսոյ», «Արևագալի» ու այլ երգերում:

Հայրապետաց կանոնի բոլոր շարականների, առանձնապես Մանկունքի մեջ, Շնորհալին երգում է տիեզերական երեք ժողովները: Նիկիո՝ ընդդեմ Արիոսի. Կ. Պոլսի՝ ընդդեմ Մակեդոնի. և Էփեսոսի՝ ընդդեմ Նեստորի:

Գալաթիարական բովանդակության տեսակետից Հայրապետաց կանոնի շարականները շատ բնորոշ են: Արանք մի կողմից յա՛վագույն ևս պագույց են այն պայքարի, որ դարերի ընթացքում հայ ժողովուրդը մղել է քաղկեդոնականության դեմ, իսկ մյուս կողմից էլ ցույց են տալիս, թե ինչպես Շնորհալին, իր ամբողջ կյանքի ընթացքում, թե՛ գործնականապես և թե՛ քաղմասթիվ արձակ ու չափածո գործերով հետևողականորեն պայքարել է Քաղկեդոնի որոշումների դեմ:

Հոգեգալստյան տոնն էլ 4—12-րդ դարերում տոնվել է միայն մի օր: Ներսես Շնորհալին այդ տոնը նույնպես ճիսացրեց, դարձրեց 8 օր:

Հոգեգալստյան Բ, Գ, Դ, Ե օրերի կանոնները գրել է Ն. Շնորհալին, որոնք նույնպես դավանաբանական բնույթ են կրում:

Գ. ԿԱՆՈՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԵՂԱՇ ՇԱՐԱԿԱՆ-ԵՐԳԵՐ

«Երգ» կոչած մի քանի շարականներ թեպետ կանոնների մեջ չեն մտնում, բայց ժամակարգության մեջ կան և երգվում են: Դր-

րանք հետևյալներն են՝ «Լերգ վեցօրեայ արարչութեան», «Նորաստեղծեալ», «Արարիչ և մարդավր», «Նայեաց սիրով», «Է՛ր վն հայցեն», «Առաօտ լուսոյ» և «Աշխարհ տնենայն» երգերը:

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԵՍՏ ԳԵՅՈՒԹՅԱՆ ԵՆԿԵՐԻ ԱԿԱԳԵՐԻՍ Ի. ՈՐՈՏԱՆԻ ԵՎՈՒՆ ԳՐԱԿԱՆՈՐԵՒՄԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Գ. ՆԱԿԱՐԵԱՆ

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԵՍՏ ԳԵՅՈՒԹՅԱՆ ԵՆԿԵՐԻ ԱԿԱԳԵՐԻՍ ԻՐԱՅԻՆՈՒԹՅԱՆ ԵՐԳԱՆ

«Նորաստեղծեալ»-ի մեջ երգվում է առաջին օրվա արարչագործության մասին, երբ ստեղծվել են երկինքը, երկիրը և լուսը: Այստեղ աչքի են ընկնում քանաստեղծի զգացմունքի ու մտքի ներդաշնակությունը, մեղմ ու գեղեցիկ ոճը, երգի երաժշտականությունն ու հատկապես տաղայափոխությունը: Չկան միապաղաղ, տաղտկալի կրկնություններն ու միօրինակությունները: Բացի այդ, Շնորհալին վարպետորեն կարողացել է համադրել արարչագործության և դավանաբանական մտքերը, որոնք դրսևորել է գեղարվեստորեն, պարզ ու ջերմ: Տաղաչափության տեսակետից էլ երգը արժեքավոր է նրանով, որ միահանգ չէ, այլ ամեն մի տոն ունի իր հատուկ հանգը:

«Նորաստեղծեալ»-ը Ներսես Շնորհալու երգերից լավագույնն է: «Արարչական» երգը ռաղկացած է վեց երգից, ամեն մի երգը նվիրված շաբաթվա մի օրվան:

Այս երգը գրված է պարզ ու պատկերավոր, ըստ որում գեղակոչող տեղը բռնում է քնարական տարրը:

«Արարիչ և մարդասեր» ննջեցելոց երգը ծաղկացած է տասներկու տնից: Այստեղ բանաստեղծը նկարագրել է վերջին դատասանի պատկերը:

Ն Ե Ր Մ Ե Ս Շ Ն Ո Ր Կ Ա Ն Ի

3 *Յաղագս երգի և պարզույ նորա*
1973
անկողններ
Ողբ եղբայր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՐԱՊԵՏԱԿՈՒՄԱՆ ՄԻՈՒՆ 1968

Հրապարակի բեմում զարդարված առագաստի ետևում բազմած է դատավորը՝ Հիսուսը: Փշում է զարբիեյան փողը. բացվում է վարագույրը. բոլոր սրբերը հավաքվում են այստեղ. արդարների դասը ուրախանում է. իսկ մեղավորները աղաչում, թախանձում են:

Ըստ երգի՝ երբ զարբիեյան փողը հնչե, սուրբ խաչի ճառագայթները շլացուցիչ լույսով կծագեն արևելքից: Գալիս են հրեշտակներն ու հրեշտակապետները: Սուրբ սեղանի առաջ մարում է հավիտենական տանջող կրակը. խավարը հալածվում է, իսկ մեղավորները ուրախանում են, որովհետև ներվում են.

...Առաջի սուրբ սեղանոյն
Հուր շիջանի, խաւար մերծի:
Տրտմեալ հոգիքն ուրախանան՝
Զի թողութիւն մեղաց յինի...⁷

«Նայեաց սիրով» և «Է՛ր քէն հայցեմք» երգերը Մեծ պահքի «երեկոյեան ժամու» համար են գրված:

Առաջինում երեկոյան ժամավորը օրվա աշխատանքից հետո փառաբանում է գթած

Հորը, գիշերվա խաղաղություն խնդրում, որ երկնի հրեշտակները պահապան լինեն իրենց և փրկեն խավարի մեջ շրջող դևերից: Ըստ այս՝ «խաղաղական» կոչված երգի՝ ցերեկն ստեղծված է աշխատանքի ու գործի, իսկ գիշերը՝ հանգստի ու քնելու համար: Սակայն բանաստեղծը խնդրում է Տիրոջից, որ մարդը գիշերը միայն մարմնի աչքերով քնի, իսկ հոգու աչքերով մնա արթուն.

...Որ արարեր զսի գործոյ,
Եւ զգիշեր ի հանգիստ քնոյ.
Տուր ի ննջել աչաց մարմնոյ՝
Արթուն լինել մեզ ըստ հոգոյ⁸:

Մյուս «խաղաղական» երգի՝ «Է՛ր քէն հայցեմք»-ի մեջ Շնորհալին նույնպես իր խոսքն ուղղում է երկինք ու խնդրում Տիրոջից մխիթարություն և ուրախություն.

Ի քէն հայցեմք Հայր գթութեանց՝
Եւ Աստուած մխիթարութեանց.
Ի տխրական գիշերային մերձեալ ժամուս՝
Մխիթարեա զմեզ ի տրտմութեանց մեղաց՝
Եւ շնորհես զուրախութիւն գործովք արդարութեան...⁹:

Ժողովրդի կողմից ավելի սիրված ու տարածված են «Առաւօտ լուսոյ» և «Աշխարհ ամենայն» երգերը՝ իրենց պարզության ու գեղեցկության պատճառով:

«Առաւօտ լուսոյ» երգի սկզբում Շնորհալին երկնային Հորն համարում է «Լույսի առաջնորդ» և խնդրում է, որ այդ Արդար Արեգակի լույսը ծագի և իր վրա.

Առաւօտ լուսոյ՝
Արեգակն արդար՝
Առ իս լոյս ծագեա՞ն¹⁰:

Ըստ Շնորհալու անսպառ են երկնի գանձերն ու ողորմությունը: Նա ուզում է, որ այդ գանձերից իրեն էլ բաժին հասնի: Իր խրճիթները ներկայացնելուց հետո, բանաստեղծն այս անգամ էլ դիմում է Հիսուսին և խնդրում հավատ, հույս, սեր.

Հաստեա հաւատով,
Հաստատեա լուսով,
Հիմնեցո՛ւ սիրով¹¹:

Իր ձևով ու արվեստով «Աշխարհ ամենայն»-ը շատ նման է «Առաւօտ լուսոյ» եր-

⁸ Աճղ, էջ 476:

⁹ Աճղ, էջ 477:

¹⁰ «Ժամագիրք», 1882, էջմիածին, էջ 7:

¹¹ Աճղ, էջ 7:

⁷ Աճղ, էջ 658:

զին: Այստեղ բանաստեղծը ներկայացնում է իր բոլոր հանցանքները, որոնք գործել է մոլորվելով, դուրս գալով ճիշտ ճանապարհից: Նա բողոքում է ինքն իր դեմ և կոչ անում ամբողջ աշխարհին, որ իրեն վշտակից դառնա և ողբա: Երգի մեջ երևում է Գրիգոր Նարեկացու ազդեցությունը: Ինչպես «Ողբերգության մատյանում» Նարեկացին, այնպես էլ այստեղ Շնորհալին,—իհարկե ավելի գուսպ ու չափավոր,—դիմում է ինքնաձաղկման, ինքնախարազանման ձևերին և մեղքի ծանրության տակ հառաչում է.

Գող եղէ մեղաց՝
Գտող կորստեան.
Գուր ինձ փորեցի:
Դաւեցի զանձն իմ,
Դաւանանցի.
Դարան գործեցի¹²:

Եթե «Առաւօտ լուսոյ» երգի մեջ մեղքի նկարագրի կողքին միշտ առկա է հույսը, խնդիրքն ու սպասելիքը, ապա «Աշխարհ ամենայնի» մեջ խնդիրք կամ հույս չկա: Այստեղ հեղինակը անընդհատ տանջվում ու տոչորվում է և այդ դրությունից նա ոչ մի ելք չի գտնում.

Չարաչար վշտօք
Չարչարի անձն իմ,
Չունիմ դադարումն...
Ջեռնում հրով մեղաց...¹³:

Երկու երգն էլ ունեն պարզ ու պատկերավոր լեզու: Դարձվածքները շատ մոտ են ժողովրդական ոճին և հարազատ: Հետաքրքիր են պատկերները, փոխաբերություններն ու այլաբանությունները: Եթե հառնամատենք այս երկու երգերի արվեստը, անշուշտ «Առաւօտ լուսոյն» գրված է ավելի քարձր արվեստով ու լավատեսությամբ, քան «Աշխարհ ամենայնը»:

Դ. ԱԶԳԱՅԻՆ ԹԵՄԱՆԵՐՈՎ ԾԱՐԱԿԱՆՆԵՐ

Ծարականների այս խմբի նյութը վերցրված է հայ ժողովրդի պատմությունից և իրական կյանքից: Արախիսի շարականներից են՝ «Յիշեսցուք», «Ջարթիք փառք իմ», Տըրդատ թագավորին, Աշխենին և Խոսրովդուխտին նվիրվածները և Արևագալի երգերը:

«Յիշեսցուք» և «Ջարթիք» երգերը Շնորհալին հորինել է Հոռովկայի բերդի պահապան զինվորների համար, որպեսզի այլազ-

զի «վայրապար» երգերի փոխարեն հայ զինվորները երգեն հայերեն¹⁴:

«Յիշեսցուք» և «Ջարթիք» երգերը ունեն նաև հայրենասիրական նշանակություն: Բերդի պահապան զինվորների համար գրված այդ երգերը եկեղեցու հայրերը վերցրել և մտցրել են գիշերային ծամերգության մեջ:

ԱՅՈՒՆԱԿՈՒ ՄԱՆ ԴԻՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԵՐԵՄՈՒ
II ԱՐԿԱՆԻՆ ԵՎԵՆ ԴԵՐԵՆԵՐԻՆԱՆ ԻՆՏԵՐՆԵՐ

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

ՈՐԲ ԵԴԵՄԻՈՅ

Բնական ընագիր, բանաստեղծական դիտարկություններ, ժամոթագրություններ
ՄԱՆԻԿ ՄԿՐՏՉԱՆԻ



ԱՅՈՒՆԱԿՈՒ ՄԱՆ ԴԻՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՐԵՎԱՆ 1978

Կես գիշերին, երբ աշխարհը խոր քնի մեջ է, Շնորհալին դեռ արթուն է: Նա մտածում է իր ժողովրդի դրությունը քարելավելու և նրա հոգևոր կյանքն ու մշակույթը պահպանելու մասին: Իսկ արշալույսին նա, որպես կոչնակ, ձայն է տալիս հայ մարդկանց՝ «Ջարթիք, փառք իմ զարթիք»...:

Ջերմ զգացմունքով գրված այս բանաստեղծությունը բաղկացած է 10 տնից, ամեն տունը՝ երկու տող: Բոլոր տներն էլ սկսվում են «Ջարթիք» բառով, որով կոչ է անում Շնորհալին բուրբին.

¹² Աճղ, էջ 6:

¹³ Աճղ, էջ 7:

¹⁴ Կիրակոս Գամձակեցի, անդ, էջ 120:

Զարթիք, նոր ժողովուրդք,
Նոր երգս առեալ նորագոյին ալելուիա¹⁵:

Տրդատին ընծայված շարականներից մեկը «Որ գերագոյն» կոչված Մանկունքն է, իսկ մյուսը՝ «Որ անիմանալի» վերնագրով պարականոն Հարցը:

Բնորոշ է «Տէր-յերկնից» փոքրիկ պարականոն շարականը, որտեղ բանաստեղծը երգի առարկա է դարձնում թագուհի Աշխենին և թագավորի քույր Խոսրովդուխտին:

Արդեն շարականի մյուս են դառնում նաև աշխարհիկ կյանքի դեկավարները, որոնք եկեղեցու կյանքում մեծ դեր են կատարել: Ծնորհալիս ոչ միայն առաջին անգամ երգում է հայ իրականությունից ու պատմությունից վերցրած անձեր, այլև Տիրամոր կողքին հոգևոր երգի մեջ տեղ է գտնում հայ կինը: Իսկ Արևազալի երգերն արժանի են հատուկ ուշադրության այն տեսակետից, որ սրանք իրենց էության մեջ արտահայտչական ձևերով տարբերվում են մեր սովորական շարականներից և հանդիսանում են հավանաբար հետավոր արձագանքն ու արտահայտությունը հայ հեթանոսական շրջանի կրոնական աշխարհայացքի:

Արևազալի շարականներում Ծնորհալիս փառաբանել է Լույսը՝ Քրիստոսին, և կարողացել է Լույսի գովերգումը ներդաշնակել դավանաբանական հարցերի հետ, որոնք դարձել են լուսե օրհներգություններ: Բանաստեղծը բարձր զգացումներով է երգում լուսե Արարչին կամ Անեղանելի, իմանալի Լույսը.

Լոյս, արարիչ լուսոյ առաջին լոյս.
բնակեալդ ի լոյս յանմատոյց...
Լոյս ի լուսոյ ծագումն արեզակն ար-
դար...¹⁶:

Միայն Արևազալի շարականներում չէ, որ Ծնորհալու երգերը ողողված են լույսով: Նա իր նշանավոր գրեթե բոլոր գործերում էլ երգում է լույս Քրիստոսը, Նրա հետ կապում իր մտքերն ու զգացմունքները:

Ծնորհալիս մեր հոգևոր երգի մեջ ստեղծեց նաև լույսի փառաբանման սքանչելի պատկերներ, որոնք այդ լույսի պես պայծառ փայլում են նրա գրեթե բոլոր աչքի ընկնող մեծ ու փոքր շարականներում:

Ե. ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԾԱՐԱԿԱՆՆԵՐ

Հայ ժողովրդի պատմության մեջ Ավարայրի պատերազմը աննախընթաց հերոսական, պանծալի էջերից մեկն է:

¹⁵ «Ժամագիրք», էջ 5:

¹⁶ «Ծարական», էջ 474:

Այդ հերոսական ճակատամարտի պատմությունը սրտառուչ ձևով գրի է առել Եղիշեն՝ իր «Վարդանանց պատմությունը» գրքում:

Ակաճ 5-րդ դարից մինչև մեր օրերը Եղիշեի այս գիրքը միշտ էլ եղել է մեր հետագա պատմագիրների ու գրողների ոգեշնչման առարկան: Ավարայրի ճակատամարտը, մասնավորապես Վարդան Մամիկոնյանի կերպարը թեմաներ են հանդիսացել մեր բազմաթիվ գրողների համար: Այդ պատերազմի հերոսներին նվիրված առաջին բանաստեղծությունները գրել է Ներսես Ծնորհալիս, որոնք հայտնի են «Նորահրաշ պակաոր» և «Արիացեալք» վերնագրերով:

Բանաստեղծության առաջին տունը նվիրված է հայոց բանակի զորագլուխ Վարդան Մամիկոնյանին, որն անձնուրաց կերպով, հոգու և իսկական զենքով արիաբար գնում է մահվան դեմ: Իր հերոսական մահով «քաջ նահատակը» վաճում է թշնամուն հայրենի երկրից:

Նորահրաշ պակաոր և զօրագլուխ առաջինեաց,
Վառեցար զինու հոգոյն արիաբար ընդդէմ մահու,
Վարդան, քաջ նահատակ, որ վանեցեր զթշնամին,
Վարդագոյն արեամբք քո պսակեցեր զեկեղեցի¹⁷:

Նկատելի է, որ Վարդանին նվիրված առաջին տան մեջ Ծնորհալիս գեղեցիկ կերպով հանախակի գործածում է հերոսի անվան առաջին տառ՝ «Վ» բաղաձայնով սկսվող արտահայտությունները, որոնք ավելի վառ են դարձնում պատերազմի ամենանշանավոր հերոսի՝ «Վարմիր Վարդանի» պատկերը:

Պատերազմում երկրորդ գնդի զորագլուխը եղել է Խորեն Խորխոռունին: Բանաստեղծը գեղեցիկ մակդիրներով ցույց է տալիս Ավարայրի և ա՛յս հերոսի՝ Խորենի քաջությունն ու հոգեկան քարեմասնությունները.

Երկնաւոր թագաւորին զինու յաղթեալ
պատերազմին,
Խոհական իմաստութեամբ. խոհեմացեալ
անճառապէս.
Խորեն խորհրդական և ծանուցեալ անուն
բարի,
Խաչելոյն վկայ եղեալ՝ հեղմամբ արեան
պսակեցաւ¹⁸:

¹⁷ Աճդ, էջ 482:

¹⁸ Աճդ:

Այստեղ էլ Շնորհալից հաճախակի գործածում է Խորեմի անվան սկզբնատառ «Խ» բաղաձայնը:

Սրբորդ տունը մի ուրիշ ճշանավոր հերոսի՝ Արտակի մասին է: Արի Արտակը նույնպես հերոսաբար ընկնում է մարտի դաշտում և ներկվում աղբյուրի մնաց բխող բոսորագույն արյան մեջ:

Բեճական լուսով լցեալ արիացեալն քաջն
Արտակ,
Թաթաւեաց ի կարմրութիւն բոսորագույն
բոյնեալ աղբերն...¹⁹:

Շարականի մնացած տներում գովերգվում են Ավարայրի հերոսներ Հմայակ Դիմաքսյանը, Տաճատ Գնթունին, Վահան Գնունին, Արսենը, Գարեգին Արվանձտյանը՝ համապատասխան մակդիրներով ու փառաբանությամբ:

Բանաստեղծության նախավերջին տունը ճշանավոր է նրանով, որ այստեղ գովերգվում ու փառաբանվում են բոլոր մարտիկները, որոնք արիաբար ընկել են Ավարայրի դաշտում:

Բամկական խումբ հազարաց և երեսնից
թիւ ընդ վեցից,
Որք ընդ նոսին նահատակեալ արիաբար
պատերազմաւ,
Եւ հեղին գարինս իւրեանց ի նորոգումն
եկեղեցոյ,
Ընդ նոսին պսակելով ի երկնատր հանդիս
սաղրէն»:

Այս բանաստեղծության 10 տների գլխագրերից ստացվում է «Ներսէսի երգ» կապակցությունը:

«Նորահրաշ» օրհնություն-շարականի անբաժան մասն է կազմում Շնորհալու գրած «Մանկունքը», «Արիացեալք»-ը:

Բացի Վարդանանց երկու շարականից, Շնորհալին գրել է նաև Ղևոնդյանց քահանաների նահատակությանը նվիրված երգեր, որոնք երգվում են եկեղեցում՝ Ղևոնդյանց տոնի օրը:

Ինչպես Ղևոնդյանց նահատակությունը հանդիսանում է Վարդանանց պատերազմի շարունակությունը, այնպես էլ այս երգերը

իրենց էությունը ու ոգով կազմում են «Նորահրաշ»-ի և «Արիացեալք»-ի անբաժանելի մասը:

Ղևոնդյանց շարականների մեջ բանաստեղծը Հազկերտին համեմատում է անդրդաշին վիշապի, անգութ փարավոնի հետ: Նա մոգերի չար խորհուրդներով զազանացել, կատաղել է: Սակայն Ղևոնդյանք, Վարդան Մամիկոնյանի պաճուկներին և իրենց հայրենիքին հավատարիմ, «չաշխարօրէն պատերազմի ախոյանի» դեմ չեն ընկնվում և հերոսաբար ընդունում են մահը:

Մի ուրիշ լիրիկական շարական-երգի մեջ, որը պատկանում է «Համբարձիցների» կարգին, բանաստեղծը հավերժ ներբողներ է ձուցնում Ղևոնդյանց հերոսներին և պարծենում նրանց անվամբ.

Երգեմ ձեզ երգս, ըզհրեշտակական ըղ-
ձայնս,
Յաւերժս և վայելուչս, մտերիմս և ներբող-
եանս

Ով սուրբ Ղևոնդեանք:
Առաւել պարծիմք ձեօք...²⁰:


Մասնավորելով մեր խոսքը Ավարայրի ճակատամարտում ընկած հայ հերոսներին ու մարտիկներին նվիրված Շնորհալու վերելում հիշված շարականների մասին, պետք է նշել, որ դրանք բոլորը միասին կազմում են ներդաշնակ, գեղեցիկ ու անմահ հայրենասիրական մի երգ: Դ. Դեմիրճյանի քառերով ասած՝ «Դարերի հին երգն է դա՛ Վարդանանց նվիրված: Ահա այդ հավերժանան երգի մեջ են ճշմարտորեն ամփոփված Վարդանը և Վարդանանք»:

Ազգային մշակույթի պահպանման և դավանաբանական-գաղափարական պայքարի բնագավառներում, իր ժամանակին, շարականներն ևս եղել են նաև մի տեսակ առանձնահատուկ հոգևոր զենք՝ օտար աշխարհանալների ու նրանց գաղափարախոսությունների դեմ պայքարելու համար: Հայկական շարականները կապված են մեր ժողովրդի ոչ միայն կրոնական, այլև հասարակական-քառաքանակ կույրի հետ: Արսեսն են եղել մեր շարականները, որոնց հեղինակների մեջ Ն. Շնորհալին ամենաբեղմնավոր և ամենապայծառ դեմքն է համդիսանում:

¹⁹ Անդ:

²⁰ Անդ, էջ 468:





Ռ. Ա. ԱԹԱՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ԾՆՈՐՀԱԼՈՒ «ՎԱՐՊԱՆԱՆՏ ՆՈՐԱՀՐԱՅԸ» ԵՎՄԱԼՅԱՆԻ ԵՎ ԿՈՄԻՏԱՍԻ ՄՇԱԿՄԱՄԲ

Վարդանանց շարականը, ինչպես հայտնի է, բաղկացած է երկու խոշոր հատվածներից¹։ Եռամաս «Ճախաբանային» ծավալուն «Արիացեալք» հատվածը, մի ստեղծի, որ երաժշտական առումով ռապսոդիա կամ թերևս պոեմ կարելի է նկատել, և լակոնիկ կառուցվածք ունեցող տներից կազմված «Նորահրաշ»², «հիմնական» հատվածը, որ երաժշտական-ժանրային տեսակետից ավելի շուտ որպես երգ պետք է ընկալել (ինքը հեղինակն այն անվանել է երգ)։ Մեղեդիային հագեցված ու ծանր երգվող առաջին հատվածի և պարզ ու համեմատաբար թեթև, «զմայուն» երգվող երկրորդ հատվածի համադրությունը գոյացնում է երաժշտական խոշոր ձևի մի ամբողջություն, որը ժոնդիկ կոմպոզիցիայի արվեստում վարպետության մի առատ դրսևորում է։ Այդ հատվածներից երկրորդը իր մեղեդիի մատչելիության ու, թերևս, խոսքերը անմիջականորեն վարդան Մամիկոնյանին ուղղված լինելու շնորհիվ հատկապես լայն ժողովրդականություն է վայելել։

Հենց դրա մասին էլ մեր խոսքն է։

• • •

«Յամենայնի հանճարեղ» Ներսեսի «քաղցր եղանակաւ» և «խոսորովային ոճով»³ հորինած շարականների, տաղերի, մեղեդիների ու երգերի շարքում «Նորահրաշն» իր արժանավոր տեղն ունի։ Այդ երգն իր շատ կողմերով սերտորեն կապված է նաև հայկական բուն ժողովրդական երաժշտությանը, մասնավորապես՝ անդրադարձնում է ժողովրդական մեղեդիների կոմպոզիցիայի կարևոր հատկանիշներ։

«Նորահրաշը» հայ միջնադարյան այն երգերից չէ, որոնցում եղանակն իր երաժշտական-հուզական բովանդակությամբ ընդհանրացված ձևով է հաղորդում երգվող խոսքի իմաստը կամ տրամադրությունը։ Այստեղ խոսքի ամեն մի բառն արտասանվում, հնչում, տեղ է հասցվում. գեղարվեստական ամբողջությունը ստեղծելու մեջ խոսքն ու եղանակը հավասարազոր նշանա-

¹ Արտատպվում է «Պատմա-բանասիրական» հանդեսից (1872, № 4) հեղինակի մանր փոփոխություններով։

² Նիկողայոս Թաշճյան, Զայնագրեալ Ըարական հոգևոր երգոց, Վաղարշապատ, 1875, էջ 889—894։ Տե՛ս նաև՝ Եղիա ՏՅտեւչյան, Ըարական ձայնագրեալ, Ե մաս, Իսթանբուլ, 1884, էջ 844։

³ Կիրակոս Փանճակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1881, էջ 147 և 118։

կուրթում ունեն: Չնայած դրան, երզն ունի նաև զուտ մեղեդիական զարգացում, գեղեցկություն, արտահայտչություն: Այդ մեղեդիի երաժշտական որակը գոյանում է նրանում արտահայտչական միջոցների չափազանց խելամիտ ընտրության ու գործադրության շնորհիվ:

Ձայնը ԴԿ դարձվածք է, բացառիկ հետաքրքրական ձայնեղանակներից մեկը, որ միջնադարի հայ երգահասակներին թե՛ խոր հուզական, թե՛ գունագեղ մեղեդիներ առելու ալ առիթներ էլ է տվել: Այդ ձայնեղանակը պարունակում է մի փոփոխական լադ⁴, մինևույն հիմքի վրա մածոր և մինոր երանգ գույքանող հնչյունների փոխհաջորդումով, որը գյուղական ժողովրդական եղանակների մեջ ևս միշտ արտահայտչական զգալի արդյունք է ստեղծել:

Ն. Թաշճյանի ձայնագրությամբ Վարդանանց շարականի առաջին՝ «Արիացեալք» հատվածի մեղեդին, որ այլ ձայնեղանակով է ընթանում, հր առանձին բաժինների վերջավորության մեջ մեկ հնչյունով փոփոխ ակնարկ է պարունակում այն լադի, որում պետք է ընթանա «Նորահրաշ» հատվածը: Դրանով գեղեցիկ կերպով պատրաստվում է այդ երկրորդ լադային տեսակետից առավել գունագեղ հատվածի երևան գալը, ամբողջության մասերը կապվում են միմյանց:

Ինչ վերաբերում է «Նորահրաշի» մեղեդիի ութմա-իմտոնացիոն կառուցվածքին, ապա այստեղ էլ որոշ բացառիկություն կա: Միջոցները խիստ սահմանավիակ են. ձայնածավալը մեղ է՝ հիմնածային վեր՝ միայն 4 աստիճան, և վար՝ 2, ընդ որում, ծայրի հնչյունները հանդես են գալիս մեկ-երկու անգամ. ելևէջային կազմը սահուն-աստիճանական է բառիս բուն իմաստով, ամբողջ մեղեդիում միայն երկու, փոքր և վոքբազույն (Ց և 2 աստիճանով) թռիչք կա, որոնք արդեն երգված ելևէջների թռիչքածն կրկնությունն են և առանձին լարվածությունն չեն ստեղծում. վերջապես, ութմը ևս բավական պարզ է՝ գերազանցորեն երկու տեսակի՝ տևողության հանդարտ հաջորդականություն, որը միայն երգի երկու կեսերն սկսող ֆրազներում, կատարման ընթացքում, փոքր-ինչ ազատություն է ստանում: Եվ, չնայած միջոցների այսպիսի ծայրահեղ «ժլատությանը», մեղեդին ամբողջությամբ հեռու է միօրինակությունից:

Կաղտնիքը կամ պարզապես վարպետությունը նախ՝ մածոր-մինոր երանգախառի մեջ է, որի մասին ասվեց, ապա՝ մեղեդիական գծի ալիքավորվածության մեջ, քանի որ ալիքները թեև ցածր, բայց շարունակական են, իսկ «հանդարտ մակերևույթը», որ անշարժություն կարող էր առաջ բերել, շատ ավելի կարճ գիծ ունի: Հնարավոր միօրինակությունը կանխող մյուս գործոնն էլ կառույցի առանձնահատկությունն է:

«Նորահրաշը» կառուցված է այնպես, որ անհավասարաչափ տարրերի հաջորդականությունից ստեղծվում է այնուամենայնիվ խիստ հավասարակշռվածություն: Այս երևույթը, որ ընդհանրապես հայ ժողովրդական մեղեդիների կառուցման գրավիչ կողմերից մեկն է և լայնորեն տարածված է գյուղական տարբեր տեսակի երգերում, նպաստում է նաև տվյալ մեղեդիի հոսունությանը, շարունակականությանը, ամբողջականությանը⁵:

⁴ Հայ մոնոդիկ երաժշտության նկատմամբ այս տերմինը գործածելիս մենք այն հատկացնում ենք ամբողջական պարբերության սահմաններում նրա լադային զարգացման հետևյալ երկու տեսակներից. ա) մինևույն հիմնահայնի դեպքում տարբեր հնչյունաշարերի հաջորդում, բ) մինևույն հնչյունաշարի սահմաններում տարբեր հիմնածայինների գոյացում: Երկու դեպքում էլ լադային ոլորտներն ու երանգները միանգամայն որոշակի են:

⁵ Այսպիսի մեղեդիների կառույցում անհամաչափությունների համաչափությունը կամ ներդաշնակությունը ասոցիացիայով կապվում է հայկական քարային զարդարվածություն և մանրակարգության մեջ գոյություն ունեցող համանման երևույթների հետ:

ՆՈՐԱԿՐԱԾ

ՆՈՐԱԵՍ ԾՆՈՐԿԱԼԻ

Չափավոր-դ.4.

Նո - րա - կր ազ ար - ան -

կա - ւոր և ար - ան - քաղ - ցի և - ան -

քին - անգ. վա - րն - ցար քի - ան և ան -

ւոր և - րի - ան - քար քոր - քան մա - րու :

վար - ան, վաղ նա - ան - քան,

որ վա - րն - քեր քի քոր - քան - քին, վար -

քա - րդն ար - ան - քոր քի ար - ան -

ան - քեր ան - քեր - քեր քի :

Այս բոլոր հատկանիշներն էլ հենց «ապահովում են» երգի գույտ մեղե-
դիական արտահայտչականությունը նույնիսկ անկախ գրական տեքստից, ա-
ռաջ բերում նրա պարզ ու գրավիչ անմիջականությունը: Անշուշտ, խոսքային
տեքստի հետ երգն ամբողջությամբ ավելի խոր իմաստ է ստանում:

Այն հարցին, թե Վարդանանց շարականի երկու հատվածների եղանակ-
ները որքան ճշգրիտ են հասել մեզ հին դարերից, լրիվ պատասխան չալն
առաջիմ դժվար է: Նշենք միայն, որ խազային և նոր-հայկական ձայնանիշե-
րով գրառումները համեմատելիս, ինչպես այլ շատ դեպքերում, այս դեպքում
էլ նկատվում են ֆակտուրային որոշակի համապատասխանություններ, որոնք
ինչ-որ չափով վկայում են հնագույն մեղեդիների պահպանվածության մասին:
Այսպես թե այնպես, իր այժմյան՝ այսինքն մեզանից 100 տարի առաջ՝ Ն.
Թաշեյանի կողմից վերածայնագրված վիճակում էլ «Նորահրաշ» երգը ներ-
կայանում է որպես միջնադարյան հայ մոնոդիկ երաժշտության բարձրարժեք
կտորներից մեկը:

«Նորահրաշը» գրվել է Կոմիտասի, Մակար Եկմալյանի և մի շարք այլ
հայ կոմպոզիտորների մասնավոր ուշադրությունը, որոնք ներդաշնակել, մշա-
կել են այն: Այդ մշակումներն ևս գեղարվեստական նկատելի հետաքրքրա-
կանություն ունեն, մինչդեռ դուրս են մնացել երաժշտագետների և կատարող-
ների տեսադաշտից:

* Արմեն Տիգրանյանն այդ երգն օգտագործել է իր «Դավիթ-Ռեկ» օպերայի մեջ:

Եկեղեցւոց Գերդաշնակությունն իր կյանքի ընթացքում չի տպագրվել: 1886 թ., նրա «Պատարագի» լույս տեսնելու տարին, հեղինակն իր ձեռագիրը, որում բացի «Նորահրաշից» նաև «Թաղումն քաջորդվումն» ստեղծագործությունը կա, նվիրել է լեզվաբան Ստ. Մալխասյանին, որն, ինչպես հայտնի է, Եկեղեցւոց Գերդաշնակությունն էր ցույց տվել «Պատարագի» հրատարակության գործում: Վերջինս 1909-ին այդ ձեռագիրը լուսանկարչական եղանակով, «Մակար Եկեղեցւոց անտիպ երգերից» ծանուցումով տպագրել է տվել Գարեգին Լեոնյանի «Գեղարվեստում»: Այսպես, Եկեղեցւոց «Նորահրաշը» սամույի էջերում թաքցված է մնացել:

Երգը Գերդաշնակելիս Եկեղեցւոց Թաշնյանի ձայնագրած մեղեդիից դուրս է թողել երկու պարբերությունների սկզբում ազատ ուղիով երգվող հատվածները⁷, ըստ երևույթին ամբողջ երգին հաղորդելու համար ժանրային այն հատկանիշը, որ նշված է նրա խորագրում՝ «*Marcia religiosa*», և բավականացել է «Նորահրաշ» և «Վարդան» բառերի վերջին վանկը երկարաձգելով: Ներդաշնակությունը շարադրության տեսակետից մոտիկ է, օրինակ, նրա «Պատարագի» «Մարմին Տէրունական» հատվածին⁸:

Հայտնի է, որ պոլիֆոն բազմաձայնությունը՝ որպես երաժշտական զարգացման միջոց, Եկեղեցւոց իր ստեղծագործություններում համեմատաբար սահմանափակ է կիրառել: Դա բացատրվում է հայ իրականության մեջ այն ժամանակ այդ արվեստի փորձի սակավությամբ, նաև կոմպոզիտորի ստեղծագործական «բնավորությամբ», նրա նախասիրություններով: Նրա «Նորահրաշում» պոլիֆոնիա գրեթե չկա, եթե չհաշվենք «Որ վանցներ» ֆրազը, ուր բասը, մանակելով մեղեդիին, ինչ-որ չափով ինքնուրույնություն է ստանում, և ընդհանրապես ձայների հակադարձ շարժման դեպքերը, որ նույնպես, թեև միայն մի թեթևակի, ինքնուրույնություն են տալիս նրանց: Ուրեմն, բազմաձայնման ոճը հոմոֆոն է, կարևորագույն նշանակություն ունի հարմոնիան, որ մայր-մեղեդիին լրացնում է և, պետք է ասել, լի՛ է լրացնում:

Մեղեդիի գրեթե ամեն մի հնչյունը մատուցվում է ակորդով, ընդ որում, ինչպես նրա այլ ստեղծագործություններում, այստեղ էլ պարզ նկատելի է հեղինակի հակումը բարեհնչուն (կոնսոնանս) ակորդների նկատմամբ, որոնք ամբողջությամբ մի տեսակ ողջախոհ մաքրություն են հաղորդում:

Կան եվրոպական ավանդական Գերդաշնակությանը բնորոշ դարձվածքներ, ինչպես՝ ավտենտիկ, պլազալ և բարդ կոչվող հանգաձևերը, բայց կան նաև այդ ավանդականը մերժող դեպքեր թե՛ համահնչյունների կառուցման, թե՛ հաջորդականության մեջ, օրինակ՝ երկու պարբերությունների սկզբում և այլուր: Ընդհանուր առմամբ հարմոնիան լավ մերվում է մեղեդիին, արդեն հիշված հակադարձ շարժումը և ակորդների «հարմոնիկ» կապերը լուրսհատուկ սահունություն են տալիս հյուսվածքին, ստեղծում լիստ միաձուլություն:

Եկեղեցւոց այս եղանակը Գերդաշնակելիս տոնայնությունից դուրս բերելու անհրաժեշտություն չի զգացել, բայց նրբորեն հաշվի է առել մեղեդիի լադային փոփոխականությունը: Այդ տեսակետից գրավիչ է «արիաբար» և

⁷ Մակագրությունն է՝ «Նվիր իմ բարեկամ երաժշտասեր Ս. Մալխասյանին, 14 փետրվարի, 1886»:

⁸ № 9, էջ 177:

⁹ Այդ կապակցությամբ «պարավոր»-ի առաջին երկու հնչյունները փոխել է:

¹⁰ Մ. Եկեղեցւոց, Իրգեցությունը սրբոյ Պատարագի, Լայպցիգ, 1886, էջ 182:

«պսակեցեր» խոսքերի հետ ումանտիկական մածորամինոր համակարգի ալապես կոչվող ցած VI աստիճանի ակորդի կիրառումը, որ դյուրացնում է մեղեդիի մածորից մինոր անցումը, այն դարձնում է բնական, լադային հակադրությունը՝ գեղեցիկ, արտահայտիչ¹¹:

		Ֆ ՝ = զ ՚ ն ՚ Է ՚ Բ				
		I	II	III	IV	
1-ին պարբերությունը՝	{	լազային երանգը՝	մինոր, մածոր, մածոր, մինոր,			
		սեռգուժյան միավորները՝	6	9	7	10
2-րդ պարբերությունը՝	{	լազային երանգը՝	մածոր, մածոր, մածոր, մինոր ¹² ,			
		սեռգուժյան միավորները՝	10			

Շարական Արոյ պարդանակ.

(MARCIA BELIOSEA.)

U. և գուլյան

Ծնորհալու մեղեդիի մասին խոսելիս մենք ասացինք, որ նրա անհամաչափ կառույցը նպաստում է միապաղաղությունից խուսափելուն, երգի ըն-

¹¹ Պետք է ասել, որ 1-ին տունը վերջավորող ակորդը բնագրում մինոր է, 2-րդը՝ նույն մեղեդիական նյութով՝ մածոր: Լադային այսպիսի տարբեր վերջավորում եկամայանի համար բնորոշ չէ և այստեղ էլ անսովոր է հնչում: Մեզ թվում է, որ դա միտումով չի արված. մինորը նախնական մտադրությունն է, որ բնագրում, 1-ին պարբերության վերջում, պատահաբար չի ուղղվել, մնացել է այնպես, ինչպես եղել է: Այս նկատի ունենալով, 1-ին կեսի մինոր վերջավորությունը ցույց տվող նշանը մենք դրեցինք փակագծերում, ճախրնորելի համարելով այստեղ ևս մածոր ակորդը:

¹² Մածոր վերջնակորդով:

թացքը դարձնում է շարժուն: Եկմայանի մշակման մեջ այդ բանին նույնչափ նպաստում են նաև ներդաշնակության լադային երանգի փոփոխումները: Ուրեմն, եթե այս երկու տվյալները միաժամանակ պատկերենք մի սխեմայում, ավելի պարզ կերևա վերը հիշված անհամաչափության հավասարակշռվածությունը ամբողջ երգում:

Սխեմայից երևում է, որ լադային տեսակետից սկիզբները՝ հակադիր տարբերակված, վերջերը՝ միանման են, իսկ ֆրազների տեսականության տեսակետից ընդհանուր անհամաչափություն կա, բայց երկրորդ ֆրազն առաջինից և չորրորդը՝ երրորդից երկար են (ուրեմն և 2-րդ նախադասությունն 1-ից երկար է)¹³: Այս բոլորը ամբողջությունը համաչափեցնող նշանակություն ունեն:

Եկմայանի «Նորահրաշում» կատարման ուժգնության միջերը հեղինակին են¹⁴: Ընդհանրապես սկզբումքն է՝ ամեն մի պարբերության սահմաններում սկզբից դեպի մեջտեղը՝ հնչման աստիճանաբար ուժեղացում, մեջտեղից դեպի վերջը՝ նույն ձևով մեղմացում, ընդ որում, 2-րդ պարբերության ամբողջապես հնչման ուժի ավելի բարձր մակարդակ ունի: Նկատելի է, սա-

¹³ Ի դեպ, կառուցվածքների անհամաչափությունն ավելի ակնթախ է դառնում, երբ նույնը դիտում ենք ըստ մոտիվների. ամա սխեման՝

$$2+4, 4+5, 3+4, 4+8:$$

¹⁴ Մենք թեթևակի խմբագրեցինք, 1-ին պարբերության «չատ ուժգինը» փոխարինելով «ուժգինով», 2-րդում նույնը չկրկնվելու, այլ ավելի էֆեկտավոր հնչում ստանալու համար:

կայն, և մի այլ սկզբունք՝ ուժային երանգավորման կապը բանաստեղծական տեքստի իմաստի, ավելին՝ նրա առանձին արտահայտությունների իմաստի հետ: Այսպես, 1-ին պարբերության մեջ ուժային բարձրակետն ընկնում է «վառեցար զինու հոգւոյն», 2-րդում՝ «վարդագոյն արեամբդ քո» արտահայտությունների վրա, մինչդեռ «ընդդեմ մահու» արտահայտությունը մեղմա-

կողմնա.

Ն Ո Ր Ա Կ Ի Ր Ա Շ.

գույն է երգվում, «պսակեցեր զեկեղեցի»՝ նույնպես: Այսպիսի Ռետաքրքրական կապ գոյացել է նաև աստիճանաբար ուժեղացող և մեղմացող տեղերում:

Մեզ հարոճի չէ՝ Եկմայլանի «Նորահրաշի» կատարվել է, թե ոչ: Ինչպես ասացինք, հրապարակվել է 1908-ին: Կոմիտասինը, այն տարբերակը, որի մասին խոսվելու է, գրված է Պոլսում, կատարվել է 1914 թ. փետրվարի 9/22-ին, Փրթի-Շանի ձմեռային թատրոնում կայացած նրա «Հայ գուսան» երգչախմբի համերգում:



Կոմիտասի համար, որ շատ տարբերակներով մշակել է հայկական քաղմաթիվ հոգևոր երգեր, «Նորահրաշի» մշակումը, անշուշտ, ինքնըստինքյան ենթադրվող մի «Ռեթթական» աշխատանք պետք է եղած լինի: Այդ երգի ներդաշնակմանը Կոմիտասն անդրադարձել է մի քանի անգամ: Անկախ դրանից, նա ընդհանրապես սնեռուն ուշադրություն է նվիրել ազգային հին պատ-

մության այս վառ հայրենասիրական դրվագին, քանի որ մշակել է Վարդանանց հերոսամարտին նվիրված կամ՝ նրա հետ առնչվող գրեթե բոլոր լավագույն աշխարհիկ երգերը նույնպես «Բամ. փորոտան», «Հիմի՛ էլ լոենք», «Մեզ նոր արև ծագե», «Իմ հայրենյաց հոգի՛ Վարդան», պատանեկան տարիներին՝ «ԸՎ հայկազունք» (հիշենք նաև «Վարդան» օպերայի 1882-ին վերաբերող մտահղացումը):

«Նորահրաշի» այս մշակումը մենք հայտնաբերեցինք Կոմիտասի ճոցատետրերից մեկի մեջ սուկ սևագիր վիճակում, բայց դրա երաժշտական բովանդակությունից էլ պարզ երևում է երգի նկատմամբ կոմպոզիտորի խոր շահագրգռվածությունը:

Կոմիտասի մշակումը այլ սկզբունքով է: Նա պահպանել է պարբերությունների սկզբնական, ազատ ուղիղ ընթացող դարձվածքները (Թաճկյանի ճանազարության հետ համեմատած միայն մի քանի մեղեդիական «վարդարանքների» պարզեցում է արել) և դրանք ներդաշնակել է պոլիֆոն ոճով, ավելի ստույգ՝ նմանակման պոլիֆոնիայի ոճով:

Այս տեսակի պոլիֆոն դարձվածքներ Կոմիտասն ունի և՛ հոգևոր, և՛ ժողովրդական երգերի մշակումներում: Ընչտ է, տպագրված «Պատարագում», որը հիմնականում Պոլսում է հորինված, ձայնից ձայն անցնող, նմանակող սկզբնական դարձվածքները քիչ են. կան, օրինակ, «Խորհուրդ խորին» հատվածում, ուր մենք բոլոր տեղերին որպես արձագանք նույն խոսքերով պատասխանում են խոր քսները, կարծես հաստատում Խորհրդի խորությունը, կամ՝

«Սուրբ, սուրբի» մեջ, որտեղ վերևի երեք ձայներին դարձյալ արձագանքում են բասերը, հաստատելով անոր գաղափարը:

Էջմիածնում մշակված հոգևոր երգերում նման դարձվածքներ ավելի շատ են տեսնվում, և հետագայում դրանց պակասելը կապված է Կոմիտասի քաղ-մանավանդան արվեստում տեղի ունեցած որոշակի էվոլյուցիայի հետ¹⁵:

Անշուշտ, ամեն անգամ, նայած երաժշտության կոնկրետ բնույթին, այդ նմանակումները մի որոշակի նպատակի են ծառայում, արտահայտչական որոշակի արդյունք ստեղծում: Ժողովրդական երգերի մշակումներից նույն-պես կարող ենք հիշել՝ «Ա՛խ մարս՛ւլ ջան» վաղ տարբերակի սկզբը, որտեղ ամեն կողմից լսվող նույն կոշական բառերը երգին դրամատիկ հնչում են տա-լիս. բնորոշ են դրանք նաև «Էրոտո հոռովելում», «Գութանի երգում» ու «Կալ-երգ և սաղեբգերում», ուր նպատակում են աշխատանքային բնույթակեր ստեղծելուն և էպիկական, մասշտաբային հնչում են տալիս խմբերգերին:

Բնույթով այս վերջիններին են մոտիկ կոմիտասյան «Նորահրաշի» նմա-նակող քացականչությունները: Այստեղ վերին երեք ձայների միահամուռ «Նո-րահրա՛շ» դարձվածքին, որի երաժշտությունը կոշական բնույթ ունի, ստորին ձայնը պատասխանում է՝ «Նորահրա՛շ, Նորահրա՛շ», երկրորդն ավելի բարձ-րից, ավելի «համոզիչ», նախ՝ ստեղծվում է մի ոգեշնչված մթնոլորտ, որից հետո միայն սկսվում է պատմելը:

Երկրորդ պարբերության սկզբում ևս՝ նախ չորս ձայները միասին քացա-կանչում են՝ «Վարդա՛ն...», ապա առանձին ձայներում (ալտ, տենոր և 1-ին բաս, հետո՝ 2-րդ բաս) կրկնվում է նույն քացականչությունը, կարծես ժողո-վրդի միջից տարբեր մարդիկ, տարբեր կողմերից իրենց նվիրվածությունն են հավաստում հերոսին: Այսպիսով, ամբողջությունից մի տեսակ անջատ-վում, ընդգծվում, հնչյունային մի ավելի շոշափելի հետք են թողնում երկու բառ՝ «Նորահրա՛շ... Վարդա՛ն...»: Բանաստեղծությունն ու եղանակն արդեն այնպես են կառուցված, որ մի շարք տների երկրորդ կեսի սկզբում շեշտվում է Վարդանանց հերոսներից մեկն ու մեկը՝ Խորե՛ն, Հմայա՛լ, Տաճա՛տ և այլն:

Ինչ վերաբերում է շարունակությանը, Կոմիտասի մոտ ևս մայր-մեղեդին իշխող է, շարադրանքը նույնքան ակորդային, քայք «երկրորդ» ձայներն այս-տեղ ավելի ինքնուրույնություն ունեն, և ամբողջ գերազանցապես պոլիֆոն սուպրադրություն է գործում: Ի դեպ՝ շարադրության տեսակով այս էլ մոտիկ է իր Կոմիտասի «Պատարագի» «Մարմին Տերունականին»¹⁶:

Հետաքրքրական է, որ «արիաբար» և «պսակեցեր» խոսքերի հետ Կոմի-տասի մոտ էլ, թեև մի փոքր այլ ձևով, հանդես է գալիս նույն հարմոնիան, ինչ որ Եկմալյանի մոտ է՝ մածորամիճոր համակարգի ցած VI աստիճանի ակորդը: Սակայն, ամբողջությամբ վերցրած, Կոմիտասն ավելի գունեղ ներ-դաշնակություն է կիրառել և դրան արտահայտչական ավելի մեծ դեր հատ-կացրել: Բավական է ասել, որ 2-րդ պարբերության մեջ ներդաշնակումը խիստ տարբերակելով, հեղինակն իրականացրել է տոնայնական գունեղ անցումներ և երգի, վերջին հաշվով, փոքր ծավալում ներգրավել է հարմոնիաների քավա-կան լայն շրջանակ:

Այստեղ տեսնում ենք ժողովրդական և հոգևոր երգերի երգչախմբային մշակումներում Կոմիտասի նախասիրած մի այլ հնար ևս ձայների ինքնու-րույն ընթացքի հետևանքով նրանց «պատահական» գուգորդումներից կամ

¹⁵ Այդ մասին մենք խոսել ենք մեր «Կոմիտասի երաժշտական ծառանգությունը» հոդվա-ծում (տե՛ս «Կոմիտասական», Երևան, 1988):

¹⁶ Կոմիտաս, Երգեցողությունը սրբոյ Պատարագի, Փարիզ, 1988, էջ 22:

ոչ-ակորդային հնչյուններից ներդաշնակության մեջ գոյացող հետախորտոնայնական ճարմոհիաներ (օրինակ՝ սոլ-դիեզ կամ լյա-բեմոլ մածոր ակորդը երգի սկզբում): Ուրեմն, երգի սկզբնական ֆրազում փաստորեն հնչում են՝ ֆա, մի, լյա-բեմոլ, մի, ֆա՝ բոլորը մածոր հարմոհիաներ, և դա հենց սկզբից երգին, նրա հետագա զարգացման համար զորեղ լիցք է տալիս: Ընդհանուր առմամբ, Կոմիտասի երգում (և դարձվածքի լսողային ինքնատիպությունը երևան է բերված ավելի ևս լայնորեն:


Ավելորդ չի լինի բերել նաև Կոմիտասի մշակման սխեման ըստ լսողային երանգների և ֆրազների տեսակաբանության, որտեղ նույնպես երևում է երգի կառույցի ընդհանուր ներդաշնակ բնույթը, որ մի սաղ տեսակի է, բաց Եկմալյանի մշակման մեջ:

1-ին պարբերությի՝	{	մինոր, մածոր, մածոր, մինոր-մածոր,
	{	7+4 9 7 11
2-րդ պարբերությի՝	{	մածոր, մինոր, մածոր, մինոր-մածոր,
	{	7+4 9 7 11

Կոմիտասի «Նորահրաշ» հրապարակելով, մենք չփորձեցինք երգում երանգանիշեր դնել (բնագրում չկան): Այդ երգը կատարողական մեկնաբանության քաղմազան հնարավորություններ է տալիս, ու թերևս մի շարք կատարումներից հետո միայն հարմար կլինի դրանցից լավագույն ձևն արձանագրող երանգանիշեր և տեսային ցուցիչներ դնել: Ինչ վերաբերում է տակտազմերին, որ նույնպես բնագրում չկան (բացի երկու տեղից), կարողաք դյուրացնելու համար դրեցինք, հիմնվելով մտան ստեղծագործություններում տակտազմերը նշանակելու կոմիտասյան սկզբունքի վրա:

Ներսես Ծնորհալու «Նորահրաշ» երգի Եկմալյանի և Կոմիտասի մշակումները հայ կոմպոզիտորական երաժշտության զարգացման տարբեր շրջանների արգասիք են և արդեն այս պատճառով, կոմպոզիտորական արվեստի տեսակետից, միմյանցից բավական տարբեր են: Երկուսի մեջ էլ, երաժշտական տեխնոլոգիայում, հավասարապես գայտուն արտահայտված է հեղինակների անհատականությունը, ինչը նույն հեղինակների բազմաթիվ այլ գործերում ճանաչված է որպես նրանց ստեղծագործական-ոճական արժանավորություն: Երկու մշակումներն էլ բարձրացնում են նախնական արդեն բարձրարժեք միաձայն երգի գեղարվեստական նշանակությունը և իրենց առանձին արժանիքներն ունեն. դրանք միևնույն խոսքերին ու եղանակին տարբեր արտահայտչություն են տալիս:

Եվ եթե թույլատրելի է այնպիսի ոչ-մեծածավալ (նաև պարզ ու համեստ և սեծ հավակնություն չունեցող) գործերին, ինչպիսին այս երկու խմբերգերն են, կերպարային-հուզական բնութագրություններ տալ (այն էլ՝ անձնական ընկալումով), ապա կարծում ենք՝ սխալ չի լինի ասել, որ երկու խմբերգն էլ բավականաչափ հուզական են և գեղեցիկ, բայց եթե Եկմալյանի մշակումն ունկնդրելիս նրանում, ներքին ողջ հուզականությամբ հանդերձ, զգացվում է ինքնամոփոփվելու մի ձգտում, թերևս ընկալվում է նահատակված հերոսի համար սրտարուխ աղոթքի մի պահ, ապա Կոմիտասի մշակումն ունկնդրելիս զգացվում է ներքուստ փոթորկվող և պողոթկալու պատրաստ բողոքի մի պահ, Եկմալյանի մշակման մեջ աչքի է զարնում քնարականությունը, Կոմիտասի մշակման մեջ՝ ավելի շուտ վիպական հերոսականությունը:



Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ԾՆՈՐՀԱԼԻՆ

ԵՎ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵՐԳԱՐՎԵՍՏԸ

Մեծ ու տարողունակ երևույթ է արևելյան քրիստոնեական երգարվեստը: Իր տարածական զարգացմամբ այն ընդգրկում է աշխարհագրական հսկայածավալ մի սահման՝ հարավային Հնդկաստանից ու Եթովպիայից, Մերձավոր Արևելքի, Անդրկովկասի և Փոքր Ասիայի վրայով, մինչև Բալկանները և Ռուսաստան: Նշված վիթխարի տարածքների վրա մինչև այժմ էլ ապրող և կամ միջնադարում ծաղկած մի ամբողջ շարք քրիստոնյա ժողովուրդներ ստեղծել են պաշտաւոնունքային բազմահազար երգեր ու մեղեդիներ: Վերջիններս ներկայացնում են արևելյան զգացողության ու (դրան այս կամ այն չափով ու ձևով ընդելուզված) արևմտյան մտածողության այլազան գուգորդումներ. ցեղային, դավանական, բայց ավելի (ու գլխավորապես) ազգային լեզուների ու ճաշակի տարբերություններով պայմանավորված արվեստի յուրատիպ գործեր՝ Դը-


րանց ամբողջությունը կազմում է արևելյան քրիստոնեական երգ-երաժշտությունը, որ արևմտյանից տարբերվում է՝ միաձայնային (մոնոդիկ) կոթողների մեղեդիական հում-զամանալի մշակումով, ելևէջի գունագեղության մեջ և կշռույթի իմաստալից ազատության մեջ:

Արևելյան քրիստոնեական երգարվեստի ազգային ու տեղական անխտիր բոլոր ճյու-

՝ Այժմ խոր հասկացողություն գույություն ունի արևելյան միաձայնային երաժշտության մեղեդիական արտահայտչականության ուժի և տիպի, նրա գեղարվեստական ինքնահատուկ արժանիքների մկատմամբ: Արդեն ընդունված ճշմարտություն է, որ բազմաձայն արվեստում, ուր ստեղծագործական լարումը տարածվում է մի քանի ձայնագծերի վրա (մեկի մեջ կենտրոնանալու փոխարեն), բնականաբար, չքանում են հիշյալ արժանիքներից կարևորագույնները: Այն է՝ ելևէջի հարուստ Որբերանգավորումը (որ արդյունք է՝ ՌՈՅՆՈՒՆԱՅԻՆ հիմքի ոչ հավասարեցված մկարագրի). զարդոտորումների հմուտ կիրառումը (որ կոչված է մշտանորոգ հոսունություն հաղորդելու մեղեդիին, ի հարկին ըջանակալի ուղղումներ մտցնելով համաչափ կառուցվածքների փոխհարաբերության մեջ). և արվեստական հատածներից (տակտերից) թլոթովին անկախ, ազատ շնչող ու ճախող կշռույթը (որը, նայած տեղին, կարող է և համաձայնեցված լինել՝ գրական բնագրերի և կամ այլազանորեն չափված մարդկային տարբեր շարժումների կառուցվածքի հետ): Հմտ. Grove's Dictionary of Music and Musicians, vol. II (5-th ed.), New York, 1966, էջ 800 (Eastern Church Music).

¹ Նույնական կամ գրեթե նույնական ձայննդանակներ, «թափատող» մեղեդիներ, մեղեդիական հատվածներ ու դարձվածքներ և այլն, սովորական երևույթներ են արևելյան քրիստոնեական արվեստի շրջանակներում, հատկապես աշխարհագրականորեն ամփոփ և ուրույն մարզերի սահմաններում: Եվ սակայն, ի տարբերություն արևմտյանի, արևելյան քրիստոնեական երգ-երաժշտությունը ավելի երփներանգ ու բազմազան է: Ու նախ և առաջ այն պատճառով, որ Արևելքում պաշտամունքն ու պաշտոներգությունը ձևավորվելով զարգացել են ազգային լեզուների հիման վրա:

մըտյան (հեպլենական, հոռոմեական) մշակույթների խոշոր խառնարան Անտիոքում: II դարի վերջերից մինչև IV դարի սկզբները ասորական երաժշտությունը իր առաջին ծաղկումն է ապրում, առայժմ գաղափարական տեսակետով երերում այն գեոնցի վրա, որը հետագայում աղանդավորական, հերետիկոսական հոչակվեց: Այս շրջանումն է, որ ստեղծագործական տաղանդավոր ու քեղուն գործունեությամբ աչքի են ընկնում Բարդաժանը⁷ և որդին՝ Հարմոնիոսը (գնոստիկյան հակումով), մանիքեականության հիմնադիր Մանհե⁸, արիոսականության քարոզիչ Արիոսը և այլն, հիշատակելով լույսմեծակարկառուն քանաստեղծ-երաժիշտ-



խազանշանների այն խումբը, ուր «հաստատիչն» է Ընդհանրից

ներին: Նրանց հարուստ ժառանգության մի զգալի մասը վերահիմաստավորելով փոխակերպեց և ուղղափառ հավաստի ոլորտը ներքաշեց ասորական երգարվեստի մեծագույն ներկայացուցիչը՝ Եփրեմ Խորին Ասորին (IV դ.)⁹, որի հեղինակությունները մինչև մեր օրերն իսկ հարատևել են պատարագի ու ժամերգության մեջ: Նրանից հետո էլ ասորական երգ-երաժշտությունը, որը նույնպես քարգավանեց մինչև արաբական արշավանքները, դուները լայն քաջեց արևելյան ու արևմտյան ոլորտներից ներհոսող տարրերի դիմաց, ու ինքը ևս նշանակալի ազդեցություն գործեց երկուսի վրա: Հորինվածքի հարցերում հաշվի առնելով նաև արևմտյան ճաշակի պահանջները, այն՝ իր ողջ առաջընթացում փայլուն կերպով հաստատեց. հոգեվոր քանաստեղծության մեջ՝ զուգահեռականության սկզբունքը, շեշտական տաղա-

չափությունն ու սկրոստիքոսի հնարավորությունները, իսկ երգարվեստում՝ ասեղի ու սուղմոսասացության տարրեր ձևերը, շարականերգության (hymnody, гимнодия) կապված «լցուրդ» (madhrāṣe) և «կալցուրդ» կամ «կոնդակ» (soghithā) կոչված տեսակները (ժանրերը) և ութ-ձայնի վարդապետությանը վերաբերող կարևոր պրույթներ: Նշված ժամանակամիջոցում ասորական հոգևոր երգաստեղծության զարգամանը գործոն մասնակցություն բերեցին՝ Նարսեհը կամ Ներսեսը (V դ.), Հակոբ Սարուգեցին (V—VI դդ.), Սեվերիոս Անտիոքացին (V—VI դդ.), Սիմոն Գեզիրացին (VI դ.), Հակոբ Եղեսիացին (VII դ.) և այլն¹⁰:

Մի ամբողջ շարք ուրիշ դեմքեր էլ իրենց ստեղծագործական ուժերը սպառեցին առաքելական-լուսավորական վիթխարի գործունեության զուգընթաց ու նրա մեջ. դեպի արեվմուտք՝ մինչև Իտալիա, Ֆրանսիա, Գերմանիա և Անգլիա, դեպի արևելք՝ մինչև Պարսկաստան, Թուրքեստան, Չինաստան, Հնդկաստան: Եվ գուցե նաև դա է պատճառը, որ ասորական արվեստի զարգացումը տևեց մինչև VII դարի կեսերը: Հետո այն ձեռագրերի օգնությամբ (թող որ անհազ)¹¹ ու ավանդության ուժով հասավ մինչև մեր ժամանակները մի վիճակում, որն այս կամ այն չափով ու ձևով ցույց է տալիս նրա քնորոշ առանձնահատկությունները, այդ թվում և՛ բյուզանդականի և հայկականի համեմատությամբ՝ ավելի արևելյան նկարագիրը (հատկապես եկեղեցի հարթության վրա):

Անվիճելի է, որ ասորի քանաստեղծ-երաժիշտների սկսած գործը հաջողությամբ շարունակեցին, առաջին հերթին, բյուզանդացիները:

Մ. թ. առաջին երեք հարյուրամյակների ընթացքում բյուզանդական հոգևոր երգ-երաժշտությունը աստիճանաբար դուրս է գալիս անտիկ ավանդույթների ոլորտից¹²: Նրա

⁷ Ծանկեամ է դիտել, որ Խորենացու հաղորդած տվյալների համաձայն, III դարի սկզբներին Բարդաժանը այցելում է Հայաստան: «Մովսիսի Խորենացու պատմություն հայոց», Թիֆլիս, 1919, էջ 201:

⁸ G. Widengren, Mani and Manichaeism, London, 1965.

⁹ C. Emerean, Saint Ephrem le Syrien, Paris, 1910.

¹⁰ Dom J. Jeannin, Mélodies liturgiques syriennes et chaldéennes, Paris, 1923.

Dom J. Jeannin, Dom J. Puyade, L'Octoëchos syrien, «Oriens Christianus», N. S., III, 1913.

H. Besseler, Musik des Mittelalters und der Renaissance (E. Bücken, Handbuch der Musikwissenschaft, Potsdam, s. 49—50).

¹¹ Հայտնի է, որ ասորական երաժշտական հարուստ մշակույթի ասպարեզում խազանշանների որևէ չափով զարգացած համակարգ այնպես էլ չստեղծվեց: Տե՛ս մեր հետազոտությունը՝ «Հիմնական դրույթներ իսլամագրության արվեստի վերաբերյալ», «Բանբեր Մատենադարանի», № 10, Երևան, 1971, էջ 192:

¹² Մ. թ. առաջին դարերին հատուկ՝ հունական քրիստոնեական երգի անտիկ նկարագրի մասին որոշակի գաղափար է տալիս վերջերս (1922-ին) Օք-

ձևավորման մեջ վճռական նշանակություն են ունենում IV—VI դարերը: Հոռմեական Կայսրության մի ամբողջ շարք յուրատիպ միջապայերից՝ կարևորագույն դեր են կատարում, այս տեսակետով, մասնավորապես, հայերով ևս բնակեցված Կապադովկիան ու նրա կենտրոն՝ Լիեսարիան¹³: Հույն արվեստագետների շարքում Գրիգոր Նագիանգացին առաջիններից մեկը՝ գիտակցաբար աշխատում է ասորական երգարվեստի նվաճումները փոխադրել բյուզանդական երգերաժշտության բնագավառը¹⁴: Այդ միտումը գրեթե լիակատար իրագործման է հասնում բյուզանդացի հանճարելու բանաստեղծ-երաժիշտ Ռոմանոս Երզնցողի մեծածավալ ստեղծագործության մեջ¹⁵:

VII—VIII դարերում հրապարակ են իջնում մեծատաղանդ ուրիշ արվեստագետներ՝ Անդրեաս Կրետացին, Հովհան Դամասկացին, Կոսմաս Երուսաղեմացին և այլք, որոնք բյուզանդական արվեստը հարստացնելով երուսաղեմյան, հատկապես Մար-Սարայի վանքի ուրույն ավանդույթներով, վերնթաց նոր շարժում են առաջ բերում: Ծագում և զարգանում է կանոնի ժանրը, իրագործվում է ութ-ձայնի (ինքնուրույն երգերին վերաբերող) համակարգի խմբագրում-հաստատումը, տարածվում և ընդունելություն է գտնում՝ հոգևոր երգերի երաժշտական քաղաղրիչի ինչ-ինչ կետերը նվաճելի (խազերի) օգնությամբ հաստատագրելու գաղափարը:

Վերջապես, պատկերամարտության աղետալի պատմաշրջանից հետո, բյուզանդական երգարվեստը դարձյալ վերելքի ճամփան դուրս են բերում Թեոդորոս Ստուդեացին և առհասարակ Ստուդեի վանքին (որով և արդեն բուն իսկ Կ. Պոլսի դպրոցին)

սիրիճոսում (Կահիրիի մոտ) գտնված պապիրուսը, հնագույն օրհմերգի ամբողջական հատվածով, որի մեղեդին՝ գրառված հին հունական տառային սիստեմի օգնությամբ՝ վերծանված ու վերլուծված է արդեն: O. Ursprung, Der Hymnus aus Oxyrhynchos, das älteste Denkmal christlicher Musik (տե՛ս՝ „Bulletin de la société „Union musicologique“, III, 1924):

¹³ Ալեքսանդրիայի դերը, որպես երգարվեստի մարզում նոր պաշտամունքին պատշաճող լեզվա-ոճական համաձուլվածքի ստեղծման կենտրոն, թվում է, համաքրիստոնեական նշանակություն ունի ավելի (քան արևելյան քրիստոնեական):

¹⁴ P. Грубер, История музыкальной культуры, Т. I, часть первая, М—Л, 1941, стр. 425.

¹⁵ P. Maas, Das Kontakion, Byzantinische Zeitschrift, Leipzig, 1909 (XIX), s. 285. E. Mioni, Romano il Melode, Turin, 1937. Н. Успенский, Св. Роман Сладкопевец и его кондаки, „Журнал Московской Патриархии“, 1966, №11.

կապված մյուս ճանաչված արվեստագետները, որոնք վերականգնում են արևելյան քրիստոնեական երգի բնականոն հեղաշրջման ընդհատված գիծը, զարգացնում մեղեդիական զարդորտուն ոճը և գործնականում առաջ մղում նվաճյալ գրությունը: Նրանց գործունեությամբ լիցքավորված ընթացքը ձգվելով մինչև XI դարի վերջերը, իր ավարտին է հասցնում բյուզանդական եկեղեցական երգարվեստի դասական այն



Ս. Կերսես Ծնորհայի. «Աշխարհ ամենայն», Ժամագիրք (Մատենադարան, ձեռ. № 495, Էջմիածին—Նորազարիք, 1885 թ.)

շրջանը, երբ բանաստեղծն ու երաժիշտը հանդես էին գալիս մեկ անձնավորության մեջ: Այս առումով բյուզանդական արվեստի վերջին մոնիկաններից մեկն է հանդիսանում Հովհան Մաւրոպոսը: Եթե տեսադաշտում ընդգրկենք նաև բյուզանդական արևմտյան գաղութներում ծաղկած երգիչների փաղանգը՝ սիցիլիացի և հատկապես գրոտաֆերատացի բանաստեղծ-երաժիշտներին, ապա մեզ հետաքրքրող շրջանը կարող է երկարել մինչև 1140-ական 50-ական թվականները, բայց, մինչև այն, առանց XII դարին վերաբերող որևէ կարկանդակ դեմքի:

Պետք է ասել, որ Կ. Պոլսի անկումից և զարգացման ուշ միջնադարյան փուլը թևակոխելուց առաջ բյուզանդական հոգևոր երաժշտությունը մի ծաղկում ևս ապրեց

XIII—XIV դարերին: Հանդես եկան լատինական կոչված նոր տիպի երաժիշտ-արվեստագետներ, որոնք ոչ թե նոր երգեր էին հորինում, այլ որոշ հին ստեղծագործությունների ծաղկեցնում՝ զարդուրում երգատնի հունի մեջ: Սրանք (որոնց մեջ ամեն տեսակետով նշանավոր եղավ Հովհան Կուկուզելեաը՝ «Ռեշտականաձայն» կոչված), կատարելագործելով մշակման բարձր աստիճանի հաս-

վումեցումները: Առաջին հստակ դրսևորվում են նրա համադրական նկարագիրը, և ասորականի ու հայկականի համեմատությամբ ավելի արևմտյան բնույթը (մասնավորապես կառուցողական հարթության վրա):

Բայց անկախ բյուզանդական հեղաշրջման յուրահատկություններից, արևելյան քրիստոնեական արվեստի գրական-երաժշտական հնարավորությունները սպառված չէին տակավին: Մեզ հետաքրքրող ժամանակներում է շրջանակներում էլ, նրգաստեղծության՝ հայկականից ավելի աչքառու ազգային որևէ այլ դպրոց գոյություն չունենալով, արևելյան քրիստոնեական երգ-երաժշտության առաջխաղաց զարգացման դեկր XII դարում բնականորեն անցնում է հայ արվեստագետների ձեռքը, որոնք մասամբ նույնիսկ հաջորդ հարյուրամյակի ողջ ընթացքում պահպանում են բանաստեղծին ու երաժշտին մի անձնավորության մեջ ներկայացնելու դասական ավանդույթը ևս:

Հայկական հոգևոր մասնագիտացված երգարվեստը, ծագումով ուղղակի կախման մեջ լինելով գրերի գյուտից, հրապարակ եկավ ավելի ուշ, քան ասորականն ու բյուզանդականը, և, բնականաբար, կրեց երկուսի ևս ազդեցությունը: Մեծ ու բարերար է եղել մանավանդ բյուզանդական հոգևոր երգաստեղծության ներգործությունը հայ իրականության վրա: Վերջինս տևապես ու գիտակցական մղումով հետևել է Բյուզանդիային՝ եկեղեցու կազմակերպման և ծեսի ու արարողության սկզբունքները մշակելիս, հոգևվոր երգի տարբեր տեսակները զարգացնելիս, և ութ-ձայնի նոր համակարգի, ինքնուրույն երգերի կանոնացման ու երաժշտության ծավալման առանձին կետեր խազագրելով նշելու գաղափարները յուրացնելիս:

Սակայն, գիտենք, որ հայ իրականությունը իր գործունեների թվում ունեցել է հեթանոս Հայաստանի քրմական դասերի ջանքերով հաստատված երաժշտական ձևերը, մ. թ. II—III դարերում հայկական գաղութներում և բուն Հայաստանում, քրիստոնեական համայնքների շրջանում, պաշտամունքային տարրեր խոսքեր սիրված ու տարածված հին եղանակների զուգորդությամբ հնչեցնելու տարերայնորեն կուտակված փորձը, IV հարյուրամյակի ընթացքում թարգմանչաց դասերի անմիջական մասնակցությամբ՝



Ա. Ներսես Յնորհալի. «Նորահրաշ պատկար», Օարակնոց (Մատենադարան, ձեռ. № 2898, Երուսաղեմ (և) Խաչիկ հոր անապատ, 1193 թ.)

ցրրին ինչպես երգչային (կատարողական) արվեստը, այնպես և նեմային գրության համակարգը:

Առանց որևէ չափով թերագնահատելու հեղաշրջման այս վերջին փուլի նշանակությունը, պետք է նշենք հետևյալը (ինչպես հաստատված է մասնագիտական միջազգային գրականության էջերում ևս): Արևելյան-քրիստոնեական իրականության մեջ X—XI դարերում հիմնականում ավարտվում են բյուզանդական արվեստի, որպես համաձուլվածքային տիպի խոշորագույն երևույթի, գոյացման ընթացքը և, դրա հետ մեկտեղ, նաև դեսի Արևելք ու Արևմուտք իրագործած միանգամայն դրական, հզոր ներթա-

¹⁴ J. Pitra, Hymnographie de l'église grecque, Paris, 1867. P. Wagner, Einführung in die gregorianischen Melodien, I Teil, Leipzig, 1910. L. Tardo, L'Antica Melurgia Bizantina, Grollaferata, 1938. E. Wellesz, A. History of Byzantine Music and Hymnographie, Oxford, 1962.


սավմոսներ և աստվածաշնչային այլ բնագրեր բանավոր թարգմանությամբ յուրացնելով երգելու մշակված սկզբունքները, այլն լեզվա-ոճական կենսունակ նորանոր տարրեր մշտապես փոխ տալու ընդունակ անսպառ մի շտեմարան, ի դեմս հայ ժողովրդական և գուսանական երաժշտարվեստի: Որով այն, դրսից կատարած փոխառությունները հմտորեն ծառայեցնելով հոգևոր ազգային երաժշտա-բանաստեղծական մշակույթի կառուցման գործին, մինևույն ժամանակ յուրջ ներդրումներ է արել արևելյան քրիստոնեական ու դրանով իսկ, նաև բյուզանդական հոգևոր երգարվեստում, նույնիսկ տակավին վաղ միջնադարում. մինչև գրերի գյուտը՝ այդ արվեստի ժողովրդական ուղղության հնագույն ձևերի գոյացմանը մասնակցելով (ինչպես Հայաստանում, այնպես և նրանից դուրս)¹⁷, V դարում՝ ութ-ձայնի հին, ավանդական (աստվածաշնչային) երգերին վերաբերող համակարգի հաստատման գործում, և VII—VIII հարյուրամյակներում՝ զարդոլորում երգաոճի բյուրեղացման մեջ¹⁸:

Եվ ահա, քաղաքական ու տնտեսական նոր ու նպաստավոր պայմաններում, գաղափարական մեղմացած, լուսավորված մթնոլորտում, շենացող քաղաքների ու ծաղկող վանքերի երիմեղանգ, տարաբնույթ, բայց հարուստ միջավայրում վերանորոգելով զարգացման արհեստականորեն խանգարված ընթացքը, հայ երգաստեղծությունը ոչ միայն շարունակում է սեփական բարգավաճումը և առանձին ներդրումները համաքրիստոնեական մշակույթի մեջ, այլ, ինչպես պարզվում է այժմ, գրական-երաժշտական ստեղծագործության կարևորագույն բնագավառում և պատմականորեն մի զգալի ու աչքառու ժամանակահատվածում գլխավորում է ողջ արևելյան քրիստոնեական արվեստի առաջընթացը:

Հայ հոգևոր երգաստեղծությունը, թևակոխելով իր զարգացման բարձրակետային ուղիները, աչքի էր ընկնում, բյուզանդականի համեմատությամբ՝ ավելի արևելյան, և ասորականի վերաբերությամբ՝ ավելի արևմտյան ինքնատիպ մի նկարագրով ու, ինչպես դարձյալ նշվում է միջազգային երա-

ժրշտագիտության էջերում էլ՝ երկուսի ևս բաղդատությամբ՝ մեղեդիական ուշագրավ հարստություններով¹⁹:

Եվ նշանակալից այն է, որ հայ արվեստի զարգացման հիշյալ բարձրակետային ուղիները հանդիսացան նաև արևելյան



Ա. Ներսես Շնորհալի. «Էջաք ի քարտեանց Քոց, Տէր», Մանրուսումն (Մատենադարան, ձեռ. № 681, Սուրխաթ, 1862 թ.)

¹⁹ Grove's Dictionary of Music and Musicians, vol. II, p. 862. իսկ ընդհանրապես ասած՝ հայկական միջնադարյան երաժշտության մասին վերը շարադրվածը հենվում է, մասնավորապես, մեր նախորդ հոդվածների և ուսումնասիրությունների միակցության վրա: Գրանք, հայ երաժշտագիտության մեջ 60-ական թվականների երկրորդ կեսից կատարված տեղաշարժերի պայմաններում, երևացին պարբերական մամուլի տարբեր օրգաններում: Այն է՝ «Էջմիածին», (1868-ից), «Բանբեր Մատենադարանի», ՀՍՄՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտություններ), ԳԱ «Լրաբեր», ՀՍՄՀ ԳԱ «Գատմա-բանասիրական հանդես», «Բանբեր Երևանի համալսարանի», «Սովետական արվեստ» և «Советская Музыка», «Revue des Etudes Arméniennes» (N. S.) ու «Beitrag zur Musikwissenschaft» (Berlin). Ուն տարբեր ժողովածուներում՝ «Музыкальная эстетика стран Востока» (M., 1967), «Կոմիտասական» (Երևան, 1968) և այլն: Զատ են Հայկական հանրագիտարանի համար գրած մեր հոդվածները ևս, որոնք ընդգրկում են հայկական (և ոչ միայն հայկական) երաժշտական միջնադարը:

¹⁷ Հմմտ.՝ E. Wellesz, Eastern Elements in Western Chant. Studies in the Early History of Ecclesiastical Music (տես՝ M. M. B., Subsidia, v. II, 1947).

¹⁸ Հմմտ.՝ մեր զեկուցումը՝ Армяно-византийские музыкальные связи в эпоху раннего средневековья (Բյուզանդագիտական IX համամիութենական գիտական նստաշրջանի նյութեր, Երևան, 1971, 11—19 մայիսի):

քրիստոնեական երգաստեղծության գրական-երաժշտական բարգավաճման վերջին փուլը՝ դասական շրջանում:

Հասկանալի է, որեւմ (և այժմ մի նոր հիմնավորում էլ է ստանում), այն պարագան, որով XII—XIII դարերի կենտրոնական Հայաստանի ու մասնավաճ հայկական կիլիկիայի հոգևոր մշակույթը իր ժամանակին նկատելի հետաքրքրություն է առաջացրել Հռոմի և Բյուզանդիայի շրջաններում: Բորբորվել են դավանական խնդիրներ, վերահարուցվել է միության հարցը, ի մոտոթեմնվել, ուսումնասիրվել ու հավանության է արժանացել հայ Ծարակնոցը²⁰ և այլն:

Ի դեպ, վերջինս հայկական հոգևոր երգաստեղծության մի կարևորագույն մասը ուղղակի ներկայացնում էր, իսկ մնացածն էլ՝ խորհրդանշում: Եվ նրանում իր բազմատեսակ ու բազմաբանակ երգերով իսկույն ուշադրություն էր գրավում ուրիշ շատ գործերով ևս հանրածանոթ Ներսես Ծնորհալին²¹ XII—XIII դարերով տարրորշվող պատմաշրջանի հայ մեծագույն բանաստեղծերածիշտը, որի անունը հայտնի և հասկանալի պատճառներով հղովվում էր ասորվոց Միխայել պատրիարքի ժամանակագրության մեջ²² թե՛ բյուզանդացի կիո Մանուել կայսրի

ասույթներում²³, պապական շրջանակներում թե՛ խաչակիր իշխանների միջախալրում:

Նախ՝ քարոզ են եղել Ծնորհալու, մասնավորաբար, որպես երաժշտի ու երգահանի, անհատական արժանիքները, երգիչ, տեսաբան, խազագետ, գեղագետ, ուսուցիչ և նշանավոր բարենորոգիչ: Բարենորոգիչ՝ ինչպես պաշտոնեթություն ծիսական կողմի քարեկարգությանը ուղղված հասարակական քեղուն գործունեությամբ, այնպես և բազմաբովանդակ ստեղծագործությամբ: Բանաստեղծ, որ հավասարապես ազատ կիրառել է թե՛ արձակ բանաստեղծությունը, և թե՛ ազատ ոտանավորի ու խստորեն չափված քերթվածի այլազան տեսակները: Երածիշտ, որ նախանձելի վարպետությամբ օգտագործել է հին ու նոր և հիմնական ու օժանդակ ձայնեղանակներին, այլև խոսրովային ու զարտուղի կոչված եղանակներին ու դրանց տարատեսակներին հատուկ արտահայտչական գրեթե բոլոր հնարավորությունները: Իրացրել է գրական խոսքերի ու երաժշտության փոխկապակցության մի ամբողջ շարք տիպեր: Հորինել է վանկային, գնայուն-մեղեդիական և չափավոր²⁴ կամ առատորեն

²⁰ Մ. Չամչյանց, Պատմություն հայոց, հտ. Գ, Վեներիկ, 1786, էջ 111:

²¹ Այս երեք տիպի երգերում կշռույթի կազմակերպման ու ձևի զույգման մակարդակի վրա որոշիչ է գրական բնագրի կառուցվածքը: Դա առավել պարզորակ է տաղաչափյալ կտորներում, որտեղ երաժշտական բաղադրիչը հատույթավորվում է ըստ ոտանավորի կառուցողական պաշտոն ունեցող մասերի. ոտքերի, անդամների, կիսատողերի, տողերի, երկտողերի (կամ կիսատների) և տների: Թվարկված կառուցողական միավորներից երաժշտության համար առավել մեծ նշանակություն ունի բանաստեղծական տողը: Ծնորհալու երգերի մեջ կան մտուցներ (օրինակ՝ «Նորաստեղծեալ»-ը), ուր բանաստեղծական տողին համապատասխանում է մի հիմնական եղանակ (Ֆրագ), որը տարբերակվիլով կրկնվում է տան մյուս տողերի զուգորդությամբ ևս, ու վերջին (տվյալ դեպքում՝ չորրորդ) տողի հետ եզրափակվում հանգաձևով (կադանս): Ավելի երկարաշունչ կտորներում (օրինակ՝ «Արարիչ և մարդասեր» երգում, մասնավորապես ԺՄ տան մեջ՝ վեց տող), երաժշտական շեքը կառուցված է այնպես, որ բանաստեղծության կենտ ու զույգ տողերին համապատասխանող եղանակներն են տարբերակվիլով կրկնվում: Հանախ՝ երգի հիմնական եղանակը համապատասխանում է քառատող բանաստեղծության առաջին երկու տողերին, որը կրկնվիլով եզրափակվում է հանգաձևով: Որպես ընդհանուր կանոն, երաժշտական կառույցը ավարտվում է բանաստեղծական տան հետ միասին: Իսկ այն դեպքերում, երբ բանաստեղծության տները կարճ են (օրինակ՝ «Առուստ լուսոյ»), երգի եղանակը ոտանավորի տները ընդգրկում

²² Դա իմացել ու նշել է Ն. Էմինը ևս. Հմմտ.՝ Паракан, „Богослужебные каноны и песни армянского восточной церкви“, перевел с древнеармянского языкa Н. Эмин, М., 1914 (տես Առաջարանը):

²³ Ավելի քան տասը տարի առանձին հարցեր ըստ կարկվույն մշակելուց հետո, նախ համարձակվեցինք հայ հին ու միջնադարյան երաժշտության պատմական զարգացման ընթացքի մեր մտահոգացը ներկայացնել ըմբերցողին, ամենամակիրճ շարադրանքով: (Տե՛ս «Քննական տեսություն հայոց հին և միջնադարյան երաժշտության պատմության», ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1970, № 10, 1971, №№ 1, 5, 9): Երածիշտա-պատմական զարգացման ընթացքի մեջ առավել հստակ երևակվեց հայ մեծագույն երգահանի հսկա կերպարանքը, որպես մի կենտրոն, ուր հավաքվելով խտանում են և որտեղից դարձյալ տարածվում՝ միջնադարի հայ երաժշտական մարմնի կենսական ուժերը պարունակող գրեթե բոլոր երակները: Ուստի, ամեն տեսակետով հարմար նկատեցինք անցյալի հայ երաժշտական մշակույթի ուսումնասիրման հետագա խորագրումը սկսել Ծնորհալու նվիրված մի ամփոփ մեծագրության աշխատասիրությունից, որն և լույս է տեսնում արդեն մեծ բանաստեղծ-երաժշտի մահվան 800-ամյակի առիթով (Ներսես Ծնորհալին երգահան և երածիշտ): Դրա քովանդակությունը ամբողջապես ի մտի ունենք այստեղ:

²⁴ Ժամանակագրություն տեսոն Միխայելի Ասորոց պատրիարքի, Երուսաղեմ, 1871, էջ 480—482, 470:

գարդոլորում հոգևոր հարյուրավոր երգեր, յուրաքանչյուր խմբում թողնելով ինքնարտահայտման, ինքնահաստատման ու անհատականացված կերպարների երաժշտական համակողմանի մշակման անկրկնելի մուշներ:

Բայց Շնորհալու ստեղծագործության անանց նշանակությունը, նրա առիքնող ուժն ու անփոխարինելի տեղը համաքրիստոնեական արվեստում հատկապես նրանում է կայանում, որ այն՝ բովանդակության առումով սուկ կրոնական խորը ապրումներ չէ, որ արտահայտում է, և արվեստի տեսակետով էլ՝ ոչ միայն հեղինակի անհատական ճաշակն ու վարպետությունը:

Շնորհալու ստեղծագործության մեջ նույնիսկ լոկ բովանդակության (թեմատիկայի) հարթության վրա պարզ երևում է հայն ու հայրենասերը, որը Հարության տոնին և Պենտեկոստեին, վարդապետին, Աստվածածնին և Խաչի օրերին նվիրված շարականների կողքին, հուզաթաթափ երգեր է ձոնել մահ՝ Գրիգոր Լուսավորչին և Սահակ Պարթևին, Տրդատ թագավորին և Սարգիս զորավարին, վարդանանց և Ղևոնդյանց հիշատակներին: Իսկ երբ նույն ստեղծագործությունը քննում ենք լեզվի ու ոճի, ոգու և գեղագիտական ըմբռումների, գունավորության, ճաշակի, հորինվածքի և մարմնավորման ավանդույթների ու դրանց զարգացման տեսանկյունով, այն ներկայանում է նույնիսկ որպես հայ հոգևոր ողջ երգարվեստի յուրատեսակ մանրահամայնապատկերը: Հավանաբար հեթանոս Հայաստանի պաշտամունքային երգ-երաժշտության տարրեր՝ Արևազայի երգերում, և մաշտոցյան ու մանավանդ սահակյան կցուրդներում անդրադարձված

հնագույն ավանդույթների ստեղծագործական յուրացում՝ Մեծ պահքին ու Ավագ շաբաթին նվիրված շարականներում. Մովսես Խորենացու և Ստեփանոս Սյունեցու (Բ-ի) ու վերջինիս ժամանակակիցների երաժշտաբանաստեղծական ժառանգությանը հատուկ գծերի շարունակումն ու լրացումը՝ Թաղման և Հարության երգերում, ինչպես և Ղևոնդյանց շարականներում. Կոմիտաս կաթողիկոսի և Հովհաննես Սարկավագ վարդապետի հղացած կոթողների կատարելագործված, նորովի իմաստավորված վերակերտումը վարդանանց «Նորահրաշ»-ում. վերջապես՝ տաղային ստեղծագործության ոլորտներում՝ Նարեկացու ավանդների հետագա վճռական զարգացումը—անհայն տարրերի բնավ ոչ լրիվ թվարկումը, որոնք Շնորհալու ստեղծագործության մեջ յուրովի անդրադարձնում են հայ երգարվեստի զարգացման ճախաշնորհալիական գրեթե ողջ ճանապարհը: Այս բոլորի հետ մեկտեղ, քննարկվող ստեղծագործության մեջ, բնականաբար, երբվում են մահ Շնորհալու ինքնահատուկ ոճի բյուրեղացման բարձրագույն կետերը ներկայացնող կոթողներ (թե՛ սաղմոսատիպ, թե՛ ծորերգային և թե՛ զարդոլորում ծանր տիպարների շրջանակներում՝ Հայրապետաց կանոնի օրհնությունը, Պահոց Թ-րդ կիրակիի օրհնությունը, Հրեշտակապետաց կանոնի օրհնությունը, Հակոբ Մծբնացուն նվիրված կանոնի հարցը և այլն). հուշարձաններ, ո-

Է գույզ-գույզ: Առատորեն զարդուրում կտորներում կշռույթի կազմակերպման ու ձևազույցման առումով երաժշտական քաղադրիչը ինքնաբավ է (այսինքն՝ անկախ գրական բնագրից): Այստեղ գրական բնագրից հաճախ մահ կարճ է լինում, նյութն է քաղկացած մի քանի խոսքից, անգամ մեկ խոսքից (օրինակ՝ «Ալեխուհա»), որը երաժշտությանը ձևակառուցման իմաստով լոկ տարրեր գունավորության կամ երանգի (տևերի) ձայնավոր տառեր է սրամաղորում: Նման կտորներում, ոչ հազվադեպ, երաժշտության ծավալման ընթացքում նշանակալի դեր է խաղում տեմբրային դրամատուրգիան: Իսկ ընդհանրապես՝ որպես երաժշտության զարգացման միջոց են ծառայում ոչ միայն ձայնեղանակային տիպական պտույտների (մոտիվների) այլազան գույզորոմներն ու տարրերակումները, այլև մուլեդիական վույթը քչիչների, նույնիսկ առումնին ձայնամիջոցների այս կամ այն չստիվ մետեոզական մշակումը (հատկապես ուրձայնի համակարգից անկախ, ազատ ոճի գործերում):

²⁶ Սույն տերմինները փոխ ենք առնում հայ պատմական ճարտարապետությունից, համոզված լինելով, որ դրանց օգնությամբ բնորոշվող կրկույթները միջնադարի հայկական արվեստում իրենց գեղագիտական համապատասխաններն ունեն մահ մանրանկարչության, հետտորական խոսքի, բանաստեղծության և կրթաշտության մեջ: Հարմար առիթով մենք հատուկ կանդորադառնանք երաժշտության և հայկական միջնադարյան մյուս արվեստների կապերի հարցին: Այստեղ նշենք լոկ մի կետ: Այժմ մեզ համար կանկանից դուրս է, որ միջնադարի հայ ճարտարապետության ու երաժշտության մեջ ոճականորեն գուզառեռ ընթացող շարքեր են, մի կողմից՝ 1) ուղղանկյուն-երկայնական (բազիլիկ) կառուցվածքը (իր տարատեսակներով՝ պարզ, Լուսնավ, Լուսաբիդ-գմբեթակիր), 2) քառակուսի հիմքով կենտրոնագմբեթ կամարակապ հորինվածքը . (քառաբիդ-քառաթև, հավասարաթև և այլն), 3) և քանդակներով ու ճրքազեղ զարդարանքներով հագնված բազմաբսիդ կառույցները, վանքային կոմպլեքսները. մյուս կողմից՝ 1) սաղմոսերգությունը (տարատեսակներով), 2) շարականերգությունը («կցուրդ» — շքոթբուս, «կացուրդ» կամ «լուսնոյակ» — շարճշուս, և «կանոն» — շարճ կոչված ժանրերով), 3) ու լարայնություն կրող (տաղ, մեղիդի, հորդարակ, սրբասացություն և այլն անվանված տեսակներով):

րոնց մեջ փայլուն կերպով իրացված է ան-
ցունը՝ մեծակերտ ձևերից դեպի մեծակերտ-
զարդարական ձևերը (օրինակ՝ Մաշու երկու
«Գովենա»-ները)։ ահագին քանակությամբ
խոսրովային, ստեղի և զարտուղի եղանակ-
ներով շարականներ, տաղեր, պատարագի
երգեր և սոբասացություններ, որոնցում գե-
ղարվեստական համոզակազմության մեծ ու-
ժով հաստատվում են հայ մոնոդիկ երաժշ-
տության դարավոր զարգացման գլխավորա-
սույն միտումները. ու գործեր ևս, որոնք մի
ամբողջ պատմաաշրջանով կանխելով հայ
հոգևոր երաժշտարվեստի զարգացման հե-
ռանկարները, «եղբ» կոչված նոր ժանրում
ուրվագծում են այդ արվեստի ուշ միջնա-
դարյան հեղաշրջման հիմնական ուղիներից
մեկը։ Մեկ խոսքով՝ հայ մասնագիտացված
երգաստեղծության անցյալը, ներկան և ա-
պագան՝ խտացած անհատական քազմաձև
ստեղծագործության մեջ²⁶։

Շնորհալու գործունեությունն ու ստեղծա-
գործությունը համընդհանուր ուշադրության
արժանացել է այն հանգամանքով ևս, որ
նա հաջող կերպով շարունակելով արևելյան-
քրիստոնեական երգարվեստի գրական-ե-
րաժշտական զարգացման՝ ասորի և բյու-
զանդական միջավայրում արդեն կտրված
գիծը, գեղարվեստական արտադրանքի
քարձր որակով, վիթխարի քանակով և առ-
հասարակ քազմակողմանի երաժշտի²⁷ իր

ողջ կերպարանքով վերակենդանացրել է
կարծես այդ երգարվեստի հին հսկաների՝
Եփրեմ Ասորու, Ռոմանոս Երզնցողի և Հով-
հան Դամասկացու լուսավոր կերպարները։
Մանավանդ, որ նա, արտահայտելով ընդ-
հանուր կրոնական, մարդասիրական, ժողո-
վըրդասիրական և (ինչպես տեսանք) ազ-
գային-հայրենասիրական գաղափարներ ու
զգացմունքներ ևս, մինևույն ժամանակ չի
մոռացել տիեզերական եկեղեցու մեծ հայ-
րապետներին էլ։ Որով տերունական տոնե-
րին, հրեշտակապետներին, մարգարեներին,
առաքյալներին նվիրված երգերի կողքին
շարականներ է ընծայել Թեոդոս կայսեր և
Գևորգ զորավարին, Բարսեղ Կեսարացուն
և Հովհան Ոսկեբերանին, Գրիգոր Աստվա-
ծաբանին և Կյուրեղ Երուսաղեմացուն²⁸։

«արուեստաւոր» նշանների միակցությունը։ Նշանա-
կալի է, նաև այս տեսակետով, «Ընդհանրական»
քահանաներին տված Շնորհալու խրատը. «զմանր
ուսմունս ձայնաւորացն պաշտել յեկեղեցիս, և ապա
գալ ի ձեռնադրութիւն քահանայութեան» (Ներսես
Շնորհալի, Թուղթ Ընդհանրական, Էջմիածին, 1866,
էջ 78)։ Ինչպես ցույց են տալիս մեր դիտումները,
«զմանր ուսմունք» ասելով միջնադարյան հայ երա-
ժշտները, նեղ իմաստով, հասկացել են՝ եկեղեցական
երգարվեստի ձայնեղանակներին կապված մեղեդի-
կան տիպական քազմաքանակ պատկանների (մուտիվ-
ների) տարբերացման և ռճավոր կատարման նոր
արվեստը։ Լեղ պատկանների կատարումը հնարավոր
էր ոչ այլ կերպ, քան հայոց լեզվի տարբեր գունավո-
րություն (երանգ, տեմպ) ունեցող ձայնավոր տա-
ռերի զուգորդությամբ, որով հասկանալի է նաև, թե
ինչու և ինչպես է ընդհանրացել՝ «զմանր ուսմունս
ձայնաւորացն» բնորոշ դարձվածքը։

Հայկական ձայնամիջերով գրառված, վավերաց-
ված և հրատարակված երեք հայտնի ժողովածուների
մեջ (Շարակնոց, Ժամագիրք և Պատարագ), մեր դի-
տումների համաձայն, առկա է Շնորհալու հոգևոր
երգերի մոտ երկու երրորդը (ավելի քան 200
կտոր)։ Մինչև XIX դարը դրանք պահպանվել են,
մասամբ՝ ձեռագիր խազավոր տարբեր ժողովածուներ
կենցաղավարման պայմաններում, և մասամբ՝ բա-
նավոր ավանդությամբ, մանավանդ ուշ միջնադար-
յան ընդհանրապես եղել է հուսալի միջոց։ Բայց
այնպիսի մի պատմաաշրջանում, երբ մեր մասնագի-
տացված երգարվեստը ևս նոր ժամանակներին փո-
խանցվում էր ինչպես քանակական, այնպես և որա-
կական զգալի կորուստներով։ Շնորհալու երգերի ու-
շադիր համեմատությունից պարզվել է, որ կթե
դրանց գրական քննարկը պահպանվել ևն, մեծա-
վասամբ, անադարտ, ապա Լոհանկվերը, դարձյալ
մեծով մասամբ, բավական գծեր ևն կորցրել իրենց
երկնցի գեղեցկությունից, քազմազանությունից, ամ-
բողջականությունից, միանույն Ոկարագրից և ընդհա-
նուր քարեմությունից։

²⁶ Անհրաժեշտ է նշել, որ այս եզրակացություննե-
րը հաստատվում են Շնորհալու երգերի՝ ինչպես միջ-
նադարյան խազավոր ձեռագրերում տեղադրված,
այնպես էլ եղանակի հետ միասին ավանդաբար
պահպանվելով XIX դարում հայկական ձայնամիջե-
րով գրառված նմուշների զուգակշռման (համապա-
տասխան «զույգ»-երի համակողմանի համեմատու-
թյան) տվյալներով։ Կարող ենք ավելացնել նաև, թե
մեր խազագիտական հոդվածներում որպես դիտար-
կումների առարկա առաջին հերթին նկատի ենք ու-
նեցել ճիշտ Շնորհալու ստեղծագործությունները։
Հիշյալ հոդվածները հասնում են շուրջ երկու տասն-
յակի, և արդեն մտնում են գիտական շրջանառու-
թյան մեջ, ինչքան էլ որ դա անտեսողներ լինեն
(հմմտ.՝ «Мѣсяца народомъ Азбука и Аѳрѣакъ нѣп. 2, М., 1973, էջ 188—189»)։

²⁷ Հատկապես խազագետ Շնորհալու մասին թե-
կուզ սուղ տվյալների վերլուծությունը նոր լույս է
սփռում կարևորագույն խճիրների վրա։ Եփրեմ ե-
րաժիշտ վարդապետը (XVII դ.) ուսանավորով գրած
մի հիշատակարանում Շնորհալուն ներկայացնում է
որպես խազագրերի մի մեծ խմբի «հաստատիչը»
(Մատենադարան, ձեռ. № 7717, էջ 258ա—258բ)։
Քննելով և ճշտելով այդ տեղեկությունը գալիս ենք
իմամզման, որ Շնորհալին, ամենայն հավանակա-
նությամբ, հաստատել է՝ Մանրուսումն կոչված միջ-
նադարյան ընդ երգարաններում լայնորեն կիրառված

Ի վերջո, Շնորհալիճ տվել է արևելյան-քրիստոնեական արվեստի համաձուլվածքային էության Եր դրսևորումներ, և դարձյալ՝ ամուր կանգնելով ազգային հողի վրա: Նրա խառնվածքը արդեն բնականից լիովին ներդաշնակ է եղել հայ ազգային արվեստի ոգուն՝ որպես արևելյան գունագեղության, հարուստ երևակայության, տաք զգացմունքայնության և արևմտյան կարգավորող, ձեվակառույց, ճարտարակերտ մտածողության գուգորդումի յուրահատուկ արտահայտություններից մեկին: Իսկ իր գիտակցական գործունեությամբ նա մեծապես նպաստել է նաև Եույն ոգու խորացմանը և Եր կողմերի հայտնաբերմանը, այս տեսակետով ևս Նարեկացուց հետո ստեղծելով Եր որակ ու մակարդակ թե՛ հայ, և թե՛ արևելյան-քրիստոնեական իրականության չափացույցերով: Մի կողմից Շնորհալիճ լայնորեն կիրառել է մեղեդիական վերոհիշյալ «խոսքովային» (տակավին պարսից Խոսքով Ապրուեզի գահակալության տարիներին նաև հայ երածիշտների մասնակցությամբ կանոնացված) բուն արևելյան գունավորություն ունեցող տիպարներ, իսկ մյուս կողմից, էական ուղիումներ մտցնելով հայ հոգևոր երգարվեստում անհամաչափ (ասիմետրիկ) կառուցվածքների գործնական կիրառության կերպերի մեջ, մշակել է համաչափության (սիմետրիայի) և անհամաչափության (ասիմետրիայի) Եուրք ու վարպետ գուգորդման վրա հիմնված (ուստի նաև արևմտյան ճաշակի մի այլ պահանջը գոհացնող) դասական ձևեր²⁰:

²⁰ Այս կապակցությամբ Եույնական պետք է նշել, որ Շնորհալիճ (և առհասարակ հին) երգերի խաղային հյուսվածքներում այժմ կողմնորոշվում ենք սավկի (բան կրեկից) Ռուսալի կերպով: Աստիճանաբար Եվրոպայում ևն որս համար անհրաժեշտ կովանները առաջընթաց բայեր ենք կատարում՝ «ոլորակ», «խուն», «ծունկ», «ճնկներ», «թաշտիկ», «թաշտ» և «վարկ» նշանների առաջնային (կամ հիմնական) պո-

ել այսպես, հանգամանալից ծանոթությունը Մերձավոր Արևելքի արվեստի աշխարհին XII դարում ցույց է տալիս, որ Շնորհալիճ նրանում հայտնվել է որպես ստեղծագործական հազվագյուտ հանճարի տեղ վառ անհատականություն, մասնագիտացված երգաստեղծության հայկական ազգային դպրոցի ամենակարևորուն ներկայացուցիչը, ինչպես և արևելյան քրիստոնեական երգ-երածշտության լավագույն ավանդույթների քաջ գիտակ ու դրանք զարգացնելու ընդունակ և նախանձախնդիր մեծ հնդիհակ:

րությունների ըմբռնման գործում: «Ոյրակ»-ը, լայն իմաստով, սրբաշակի վարպետություն ունի թուր պլտոյտների նկատմամբ, որոնցում ձայնը այնքան շարժումներ և ոլորումներ է կատարում: Նեղ իմաստով (որպես «ծոցեր»), այն՝ «պարպկ»-ի խորացումն է: «Ծունկ»-ը՝ ըստ իր առաջնային իմաստի՝ չափական մեկ միավորի սահմաններում, կշռույթային տարրեր գծագրերի մեջ, երեք ձայների վարքերաց շարժում է ներկայացնում: Ծարժման ուղղությամբ ու չափական արժեքով սրա հետ Եույնանում է: «Ռունկ»-ը, միայն՝ բաղկայած է երկու ձայնից: «Ծրնկներ»-ը՝ «ծունկ»-ի կրկնապատկումն է: «Թաշտիկ»-ը (չափական մեկ) և «թաշտ»-ը (երկու և ավելի) միավորի արժեքով, ամենայն հավանականությամբ, սերվում են պարսկական (և արաբական) Tashdid-ից, որ իր մեջ ունի կրկնապատկելով ու մեղացնելու իմաստը: Որովհետև երկու նշանների ևս ստաջնային նշանակությունը ունեթողում է՝ երածըտական ու բառային շեշտերի միացում (այսինքն՝ շեշտի կրկնապատկում, ումեղացում): Իսկ «զարկ» անունը հայերենով (բառարանային իմաստով) բացահայտելով «փուշ»-ի գորությունը, շատ հասկանալի կերպով կապվել է նաև վերջինիս: Մինչդեռ, չափական երկու (կամ ավելի) միավորի արժեք ցուցնող «զարկ»-ը (որ և «կոտ գրեհիկ» կամ «առուդիր»), հին նրեական Zarka (բառացի՝ «սերմանող») կոչված երածշտաշեշտի անվան հայացումն է, ու, ինչպես պարզվում է, երկու նշանների մեղեդիական գորություն մեջ ևս որոշ ընդհանրություննկ պահպանվել են:



ՆՈՐԸ ՍՏԵՂԻԵՍԼ

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Մշակումը՝ Ն. ՅԱՅՄԻՅՅԱՆԻ

Moderato con sentimento antico

Sopr. solo

mf

Նո-րա-սպեղ-Յեալ բանն յ - նէ - ից իս - կոչ - բա - նէ

S.

pp

Նո -

A.

pp

Նո -

T.

pp

Նո -

B.

վեր-կինս երկ-նից, -րա -

-րա -

Ten. solo

Եւ վերկ-նա-յինս վորա ան-մարմ - նոց ի - մա - նա - լեա -

րա -

Նո -

-րա -

Sopr. solo

Եվ ըզ-գա-լի փա-րնոց քա-ռից հա-կա-ռա-կաց

S.
սպեղ-

A.
սպեղ-

T.
սպեղ-

B.
սպեղ-

-յշն վը-ուարթ-նոց,

մի-ա-բա-նից, Ձե- ակ:

Ձե-

Ten. solo

ո-րով յա-ւելփ փա-ռա-բա-նի նը-րոր-դու թիմ, առ-

Ձե-

Ձե-

Sopr. solo

Ն - ընդ սըր-ընան մի փե - թու - թիւ

ալ:

S.

Ն -

Ա.

Ն -

Տ.

Ն -

Բ.

ալ:

Ն -

Ն -

ճա - ռե - լի:

մի - ով ընու - թեամբ Աստ-ու-ժու-թիւն, ընք -

-ընք -

Ten. solo

լոյսն որ ա-նեղ-ա-րար-չա - կան

-ընք -

-ընք -


Sopr. solo
 զոր եւ ծա-գոսցյօրն ա - ռա - գին
 սըր -
 ա - սաց ի - նել լոյս ե - ղա - կան,
 սըր -
 սըր -
 սըր -
 սըր -

մի - ա - ղա - բար կիւ-րա - կէ - ին, բն -
 բն -
 առ
Sopr. e Ten. soli
 ո - թով յա-ւէք փա - ռա - բա - նի
 բն -
 բն -

Handwritten musical score for the hymn "Ezmiashin" (Էջմիածին). The score is written on five staves. The lyrics are in Armenian and are placed below the third staff.

Lyrics: Եր - բոբ - դու - թիւն աւ - ծա - ռն - լի:

Other markings include "- աւ:" above the first staff, "- աւ:" below the fourth staff, and "աւ:" below the fifth staff. There are also some handwritten scribbles above the third staff.



**ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ ՈՒՍՈՒՄԵԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՆԵՐՍԵՍ ԾՆՈՐՀԱԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՆՐԱ
ԱՌԱՆՁԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Մայր հայրենիքում մեր մտավորականության և գրականագետների ուշադրության կենտրոնում է եղել Ներսես Ծնորհալու կյանքն ու գործունեությունը և մատենագրական բազմաժանր վաստակը:

Սեր հայրենական մամուլում բազում ուսումնասիրություններ և մենագրություններ են լույս տեսել՝ Գվիրված Ծնորհալու կյանքին ու գործունեությանը, ժամանակաշրջանին, նրա արձակ և չափածո բազմաժանր ստեղծագործությանը, լեզվին, շարականագրքական, երաժշտական հարուստ վաստակին, տաղաչափական արվեստի առանձնահատկություններին և նորարարությանը:

Ծնորհալու մասին գրված լուրջ ու արժեքավոր ուսումնասիրություններից են հետևյալները.

1. **Մանուկ Աբեղյան**, «Ներսես Ծնորհալի», «Հայոց հին գրականության պատմություն», գիրք երկրորդ, Երևան, Հայկական ՍՍՐ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1946, էջ 73—130:

Նույնի երկրորդ հրատարակչությունը, տես

2. **Մանուկ Աբեղյան**, Երկեր, Դ, Երևան, Հայկական ՍՍՐ ԳԱ հրատարակչություն, 1970, էջ 85—157:

3. **Գրիգոր Ա. Հակոբյան**, «Ներսես Ծնորհալի», Հայկական ՍՍՐ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1964, էջ 5—298 (մենագրություն):

4. **Ներսես Ծնորհալի**, «Յաղագս երկնի և զարդուց նորա», «Հանելուկներ», «Ողբ Եղեսիոյ», «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1968, կազմեց, առաջաբանը և ծանոթագրությունները գրեց՝ Գր. Ա. Հակոբյան, խմբագիր՝ Լ. Վ. Միրիջանյան, էջ 3—111:

Ներսես Ծնորհալու մահվան 800-ամյակի առթիվ լույս են տեսել հետևյալ հոբելյանական հրատարակությունները.

1. **Ներսես Ծնորհալի**, «Ողբ Եղեսիոյ», բնական բնագիր, բանասիրական դիտողություններ, ծանոթագրություններ՝ Մանգիկ Մկրտչյանի, խմբագիր՝ Փ. Անթաքյան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1973, «Ներսես Ծնորհալին և նրա «Ողբ Եղեսիոյ»-ն», ներածական խոսք՝ Պողոս Խաչատրյանի, էջ 5—18, ապա «Ողբ Եղեսիոյ», բնագիր, էջ 19—138, բանասիրական դիտողություններ, ծանոթագրություններ, ցանկ ձեռագրերի՝ էջ 141—157:

2. **Նիկողոս Թամիզյան**, «Ներսես Ծնորհալին երգահան և երաժիշտ», Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1973, 248 էջ. ուսումնասիրություն, բնագրեր, շարականներ, ս. պատարագի և ժամագրքի երգեր, ծանոթագրություններ, ամփոփում ֆրանսերեն և ռուսերեն, ցանկեր, մասնագիտական եզրերի բառարան (մենագրություն):



Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

Գեկտեմբերի 2-ին, կիրակի.—Բ կիրակի Յիսնակաց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանը:

Ս. պատարագից հետո, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում կառավարական մաղթանք՝ նվիրված Հայաստանի խորհրդայնացման 58-րդ տարեդարձին: Հայ ժողովրդի մեծ տոնի առիթով հայրենասիրական ջերմ խոսքով հանդես է գալիս Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրուրյանը՝ վեր հանելով անցնող 58 տարիների ընթացքում հայ ժողովրդի արձանագրած հոգևոր, մշակութային, գիտական, տնտեսական մեծ նվաճումները, բարեմաղթում էլ ավելի բարօրություն և խաղաղություն վերածնված Հայոց աշխարհին՝ սովետական եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքում:

Գեկտեմբերի 8-ին, կիրակի.—Գ կիրակի Յիսնակաց. Յիդթիւն սուրբ Աստուածածնի յԱճճայէ.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Եզնիկ աթղ. Գետրոսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ես կերակուր ունիմ ուտել, զոր դուքն ոչ գիտէք» (Հովհ. Գ. 92) բնաբանով:

Գեկտեմբերի 11-ին, երեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռ են այցելում՝ Երևանում բացված և տուրիզմին նվիրված ամերիկյան ցուցահանդեսի կազմակերպիչները:

Մայր տաճարում նրանց դիմավորում է լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրուրյանը և ծանոթացնում տաճարի պատմությանը: Այնուհետև հյուրերը դիտում են Մայր տաճարի եկեղեցական արվեստի թանգարանը, Հին Վեհարանը:

Վերջում հյուրերին քարեհանձում է ընդունել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և ջերմ զրույց ունենում նրանց հետ: Հյուրերն աջաբանությունով ստանում են Հայոց Հայրապետի օրհնությունները:

Նույն օրը, ժամը 19-ին, Երևանում, հայրապետական վիլլայում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

Գեկտեմբերի 14-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ,

գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի մերթափանց հիստոր:

Դեկտեմբերի 16-ին, կիրակի.—Դ կիրակի Յիսնակաց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Արիս ծ. վրդ. Ծիրվանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում ս. Հակոբ Մծրնա Հայրապետի կյանքի և գործի մասին՝ «Յաղթույ և սուրբ Հայրապետ, նրման մեծին Մովսէսի» (Շարական) բնաբանով:

Ա. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

Դեկտեմբերի 20-ին, հինգշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանում սկսվում են կիսամյա բնությունները, որոնք կտևեն մինչև դեկտեմբերի 29-ը:

Դեկտեմբերի 28-ին, կիրակի.—Ե կիրակի Յիսնակաց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Աղան վրդ. Բալիողյանը:

Ա. պատարագից հետո, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում հոգեհանգստյան պաշտոն՝ ի հիշատակ արգենտինաբնակ հաճնցի հայ ականավոր լրագրող և հասարակական գործիչ Աբրահամ Գրաճյանի:

Հանգուցյալը մայր հայրենիք կատարած իր երկրորդ այցելությունից հետո Արգենտինա վերադառնալու ճանապարհին սույն թվականի նոյեմբերի 5-ին Մոսկվայում կրքքեց իր մահկանացուն: Հանգուցյալի մարմինը բերվեց մայր հայրենիք և ամփոփվեց Նոր Հաճնում: Թաղման արարողությունը կատարվում է Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի նախագահությամբ: Տ. Կոմիտաս սրբազանն իր դամբանական խոսքի մեջ վեր է հանում հանգուցյալի հայրենանվեր գործունեությունը:

Դեկտեմբերի 25-ին, երեքշաբթի.—Մերոյն Ստեփաննոսի նախավկային և առաջին մարտիրոսին.

Այսօր Մայր Աթոռի սարկավազների տոնն է: Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Արիս ծ. վրդ. Ծիրվանյանը: Ա.

պատարագի ընթացքում Մայր տաճարի լուսարարակետ տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը սարկավազ է ձեռնադրում Աղվան կիսասարկավազ Գասպարյանին, որը պատրաստվում է կուսակրոն քահանայության, բնյութաբնակ Մանուկ Թեգրյանին, որը պատրաստվում է ամուսնացյալ քահանայության, և հոգևոր ճեմարանի նախկին սան Լճնացական Մովսիսյանին, որը որպես սարկավազ ծառայելու է Ռոստովի հայոց եկեղեցում:

Ձեռնադրությունից հետո ս. Ստեփաննոս նախավկայի հիշատակին նվիրված ոգևորիչ քարոզ է խոսում պատարագիչ հայր սուրբը:

Պատարագից հետո լուսարարակետ սրբազան հոր և հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Արիս ծ. վրդ. Ծիրվանյանի առաջնորդությամբ Մայր Աթոռի բոլոր սարկավազները իրենց տոնի առիթով Վեհարանում աջահամբույրով ստանում են Վեհափառ Հայրապետի օրհնությունները:

Կեսօրին հոգևոր ճեմարանի սեղանատանը տրվում է ճաշկերույթ՝ ի պատիվ Մայր Աթոռի սարկավազների:

Սարկավազների տոնը շնորհավորում են տ. Հովհաննես բժն. Մարուքյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր և հոգևոր ճեմարանի ավագ դասախոս Ա. Հատիսյանը, հոգևոր ճեմարանի եկեղեցական երաժշտության դասատու Հայկ Ֆրունջյանը:

Շնորհակալության և երախտագիտության ցերմ խոսքեր սասցին Վեհափառ Հայրապետին, Մայր Աթոռի միաբանությանը, դասախոսական կազմին ուղղված հոգևոր ճեմարանի ավագ վերակացու Սարգիս սրկ. Սարգսյանը, Վաչե սրկ. Նալբանդյանը և Մանուկ սրկ. Թեգրյանը:

Ընդունելությունը փակվեց տեսուչ հայր սուրբի օրհնությամբ:

Դեկտեմբերի 27-ին, հինգշաբթի.—Այսօր, առավոտյան, Մայր Աթոռ այցելեց մեծանուն կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը, որն իր ծննդյան 70-ամյակի առթիվ կազմակերպված հանդիսություններից մասնակցելու և Հայֆիլիսոփոսիայի համերգային մեծ դահլիճում հորեյանական-հեղինակային համերգներ դեկավարելու համար Մոսկվայից ժամանել էր Երևան՝ իր հարգելի տիկնոջ՝ կոմպոզիտոր Նինա Մակարովայի և աշխարհահռչակ թավջութակահար Մատիսյակ Ռոստրոպովիչի հետ:

Հյուրերին Մայր տաճարի դռանը ընդունեց լուսարարակետ տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը և նրանց ծանոթացրեց Մայր տա-

ճարի պատմությանն ու եկեղեցական արվեստի թանգարանին:

Այնուհետև հյուրերին ընդունեց Վեհափառ Հայրապետը, բարի գալուստ մաղթեց բոլորին և շնորհավորական ու օրհնության խոսք ասաց հոբելյար կոմպոզիտորին՝ բարեմաղթելով, որ Արամ Խաչատրյանը շարունակի ստեղծագործել երիտասարդական խանդավառությամբ, նորանոր ու անմահ էջեր ավելացնելով ոչ միայն հայ, ազգային երգարվեստի, այլ նաև համաշխարհային երաժշտության գանձարանում:

Այնուհետև շնորհակալության և երախտագիտության անկեղծ խոսք ասաց մեծանուն հոբելյարը՝ Հայոց Հայրապետին ուղղված այս ջերմ ընդունելության և հայրապետական սրտագին խոսքերի համար՝ շեշտելով, որ «ինչ ստեղծել եմ և դեռ կստեղծեմ, ինձ համար ոգեշնչման աղբյուր է հան-

դիսացել մեր ժողովրդի աննկուն ոգին, նրա վառ հույստը և նրա սերն ու երազանքները»:

Սույն սրտատույզ հանդիպման վերջում Վեհաբանի հանդիսությանց ջրեղ դափնիճում, ի պատիվ Հայոց Հայրապետի և հոբելյար կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի, թավջութակահար Մստիսլավ Ռոստրոպովիչը մեծ արվեստով կատարում է հայի «Սարապանդա», «Մեմուետ», «Ժիգա» և «Ֆուգա» ստեղծագործությունները՝ արժանանալով Հայոց Հայրապետի բարձր գնահատությանն ու օրհնությանը և բոլոր ներկաների սրտագին ծափողջույններին:

Դեկտեմբերի 80-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Անանիա վրդ. Արարաջյանը:





Յ Ա Ն Կ
«ԼԵՎՄԻԱՏԻՆ» ԱՄՍԱԳՐՈՒՄ 1973 ԹՎԱԿԱՆԻ
ԸՆԹԱՅՔՐՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ

Ա. ՊԱՏՏՈՆԱԿԱՆՔ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնգրակը ս. Ներսես Ծնորհալու մահվամ 800-ամյակի առթիվ, Ա 8:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնգրակը ԱՄՆ-ի հայոց առաջնորդարանի «Կոմիտաս» երգչախմբի 25-ամյակի առիթով, Ա 8:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնգրակը ամերիկահայ թեմի կազմավորման 75-ամյակի առիթով, Բ 8:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնգրակը տ. Նորայր եպիսկոպոս Պողոթյանին և տ. Ծաֆե եպիսկոպոս Անեմյանին արքայության պատիվ շնորհելու մասին, Թ 8:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնգրակը փարիզաբնակ Կարպիս Զրբաշյանին ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի շքանշանով պարգևատրելու առթիվ, Ժ 10:

Հայոց Հայրապետի նամակը Նորին Արքայություն Պողոս Զ Պապին՝ «Նաղաղության օրվա» կապակցությամբ Նրա ուղերձի առիթով, Ա 11:

Ամանորի և Փրկչի հրաշափառ և սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Մարագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծույթի Ս. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների ղեկավարների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Ա 15:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Ամանորի և սուրբ Ծննդյան տոների առթիվ՝ ուղղված Հայաստանյայց եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմակալ քույր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին, Ա 18:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի այցելությունը Հայկական ԱԼՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Ն. Հարությունյանին, Բ 8:

Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ

Ամենայն Հայոց Մարագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծույթի Ս. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների ղեկավարների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Դ 8:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ՝ ուղղված Հայաստանյայց եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմակալ քույր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին, Դ 10:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույնի և օրհնության խոսքը Միացյալ Նահանգաց արևելյան թեմի պատգամավորական ժողովին, Ե 8:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույնի և օրհնության խոսքը Միացյալ Նահանգաց հոգևավորականաց համագումարին, Ե 11:

Վեհափառ Հայրապետի այցելությունը Հաղկական ԱԼՀ Միմիստրների սովետի նախագահ մեծահարգ Գրիգոր Ա. Արզումանյանին, Զ 8:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նամակը Ամերիկայի Միացյալ Նահանգաց արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանին՝ ԱՄՆ-ի հայոց առաջնորդարանի և հայ պետարանական համայնքների ներկայացուցիչների միջև Նյու-Յորքում կայացած մանդիպումների մասին, ԺԱ, 25:

Բ. ԳԵՐԱԳՐՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԳ

Քաղվածքներ Գերագույն հոգևոր խորհրդի նիստերի արձանագրություններից, Ե 22, Զ 4, Է 19:

Գ. ԳԻՎԱՆ, ՄԱՅՐ ԱՅՈՒՌ

Հաղորդագրություն (Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի որոշումով Մայր Աթոռում Հայաստանյայց եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների բաժին ստեղծելու մասին), Ա 27:

Հայտարարություն (Տանգ Կիլիկո Տ. Տ. Խորհրդ Ա կաթողիկոսի 8 ապրիլ 1978 թվակիր կոնգրակում ապօրինաբար «Ամենայն Հայոց կաթողիկոս» տիտղոսի օգտագործման մասին), Զ 9:

Հայտարարություն (1978 թվականի հունիսի 10-ի լույս 11-ի գիշերը Մայր տաճարի թանգարանից գողություն կատարելու մասին), Ը 7:

Հայտարարություն (Բնություն լույս տեսած «Վըրտ-բաց խոստովանություններ» գրքի ամսին), Ը 7:

Հաղորդագրություն (1978 թվականի սեպտեմբերի 28—30 օրերին Մայր Աթոռում վեհափառ Հայրապետի գահակալության 18-րդ տարեդարձը հանդիսավորապես նշելու մասին), Ժ 6:

Հաղորդագրություն (1978 թվականի հոկտեմբերի 5—7 օրերին Մայր Աթոռում ս. Ներսես Ծնորհալու մահվան 800-ամյակը հանդիսավորապես նշելու մասին), Ժ 18:

Հայտարարություն (Անթիլիասի կաթողիկոսի՝ «Կաթողիկոս Ամենայն Հայոց» տիտղոսի գործածության անթվակիր շարադրանքի մասին), ԺԱ 30:

Հաղորդագրություն (Հայաստանյայց եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների քաժճի հրավերով 1978 թվականի նոյեմբերի 28—28 օրերին անգլիկան և եսիսկոպոսական եկեղեցիների հերկայացուցիչների՝ Մայր Աթոռում գտնվելու մասին), ԺԱ 32:

Դ. Ա. ՆԵՐՍԵՍ ԾՆՈՐՀԱՆՈՒ ՄԱՀՎԱՆ 800-ԱՄԹԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը ս. Ներսես Ծնորհալու մահվան 800-ամյակի առթիվ, Ժ 9:

ԽՄԱԿԳՐԱԿԱՆ—Ս. Ներսես Ծնորհալու մահվան 800-ամյակը, Ժ 6:

ԵՂԻԾԵ ԱՐՔԵՊ. ՏԵՐՏԵՐՅԱՆ—Սուրբ Ներսես Ծնորհալի, Ժ 8:

ԵՆՈՐՀՔ ԱՐՔԵՊ. ԳԱՆՍՏԱՆ—Սուրբ Ներսես Ծնորհալի Հայրապետը, Ժ 17:

ՍԻՈՆ ԱՐՔԵՊ. ՄԱՆՈՒԿՅԱՆ—Ծնորհալի մեծ Հայրապետը, Ժ 32:

ՍԵՐՈՎՔԵ ԱՐՔԵՊ. ՄԱՆՈՒԿՅԱՆ—Երախտագիտակամ խոսք ս. Ներսես Ծնորհալու հիշատակին, Ժ 35:

ԲԱԲԳԵՆ ԱՐՔԵՊ. ԱՊՍՏՏԱՆ—Հոգևորական սուրբ Ներսես Ծնորհալին, Ժ 37:

ԿՈՐԱՅՐ ԱՐՔԵՊ. ՊՈՂԱՐՅԱՆ—Ս. Ներսես Ծնորհալու ձեռագիր աշխատությունները Երուսաղեմի հայոց ս. Հակոբյանց վանքի ձեռագրատան մեջ, Ժ 40:

ՇԱՀԵ ԱՐՔԵՊ. ԱՄԵՄՅԱՆ—Ծնորհալին օտար թարգմանությամբ, Ժ 44:

ԶԳՈՆ ԵՊՍ. ՏԵՐՀԱԿՈՐՅԱՆ—Մեկնությունը ք. Ալեքսանդրի մասին Մատթեոսի արարեալի Ներսիս Ծնորհալու, Ժ 48:—Ս. Ներսես Ծնորհալի մեկնությունը Կաթողիկե թուղթերում, Ժ 57:

Ա. ՀԱՏԻՏՅԱՆ—Ս. Ներսես Ծնորհալին և եկեղեցական միության հարցը, Ժ 81:

ՊԱՐԳԵՎ ՇԱՀԱՋՅԱՆ—Սուրբ Ներսես Ծնորհալու կյանքը և մատենագրական վաստակը, Ժ 72:

Հ. Ա. ԱՆԱՍՅԱՆ—Ներսես Ծնորհալին և «Արմատ հատառը» ժողովածուն, Ժ 89:

Գ. Ա. ՀԱԿՈՐՅԱՆ—Ներսես Ծնորհալին և հայոց հոգևոր երգերը, Ժ 89:

Ի. Ա. ԱԹԱՅԱՆ—Ներսես Ծնորհալու «Վարդանանց հորհրդանք» Եկմայանի և Կոմիտասի մշակմամբ, Ժ 100:

Ն. ԹԱՀՄԻՋՅԱՆ—Ներսես Ծնորհալին և արևելյան քրիստոնեական երգարվեստը, Ժ 110:

Նորաստեղծեալ (Ճոտա), Ժ 120:

Մայր հայրենիքում ուսումնասիրություններ Ներսես Ծնորհալու մասին և քրա առանձին հրատարակությունները, Ժ 128:

Ե. ՍՈՒՐՔ ԳՐԱԿԱՆ

Սուրբ գրական ընթերցումներ, Ա 18, Բ 7, Դ 12:

Զ. ՇԱՐԱԿԱՆՆԵՐ, ՏԱՂԵՐ, ԱՂՈԹՔՆԵՐ

Ա. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ—Ապաշխարության շարականներ, Գ 6:

Երգ Տեառն Ներսիսի հայոց կաթողիկոսի ողբերգություն անձինց գղջացելու և բողոք իրաքանչիւրոց դիմի խոստովանաբար, Գ 10:

Երգ Տեառն Ներսիսի Ծնորհալու հայոց կաթողիկոսի ասացեալ ի պաշտաման գիշերու, Դ 14:

Նորին Տեառն Ներսիսի Ծնորհալու հայոց կաթողիկոսի երգ աղօթական ի դէմս սրբու Երրորդության Գահ իրաքանչիւրու դիմի Երրորդության անանձակի, Դ 15:

ՀԵՆՐԻԿ ԲԱՆԻՆՅԱՆ—«Հատառը խոստովանիմ»-ը աշխարհաբար, Ե 37:

Նմուշներ ս. Սահակ Պարթևի երգերին, Թ 12:

Է. ԽՄԱԿԳՐԱԿԱՆՆԵՐ

Եղբայրական հզոր ընտանիքում, Ա 12:

Գահն ու գահակալը, Ժ 3:

Խաղաղությունը Աստուծո պարգևն է և մարդկության կամքը, ԺԱ 3:

Ը. ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԳՈՒՇԱԿՅԱՆ ԹՈՐՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ—Ղեվոնդյանը, Բ 14:—Վարդանանց, Բ 15:

ԳՈՒՐՅԱՆ ԵՂԻԾԵ ԱՐՔԵՊ.—Աստվածաշարության խորհուրդը, Ա 21:

ԿՅՈՒԼԵՍԵՐՅԱՆ ԲԱԲԳԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ—Մեծ պահը, Գ 3:

ՍՐՎԱՆՋՏՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՊՍ.—Մոռցված էջեր, Թ 5:

ՏԵՐՀԱԿՈՐՅԱՆ ԶԳՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ—Սիրո կրակով, Գ 17:

ՏԵՐՄՎՐՏՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ—Լույս և խավար, Ա 28:—Ս. Ղեմոնյանց հիշատակին, Բ 11:

ՕՐՄԱՆՅԱՆ ՄԱՐԿԱՔԻԱ ԱՐՔԵՊ.—Ծնունդին քառասունը, Ի 8:

Թ. ՄԱՅՐ ԱՌՈՒՌԻՄ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՈՆՄԱՐԱՆՈՒՄ

- Հայրապետական քարոզ Փրկչի հրաշափառ Ծնընդյան տոնի առթիվ Մայր տաճարում, Ա 8:
- Հայրապետական պատարագ և քարոզ ս. Ծնընդյան տոնի առթիվ Մայր տաճարում, Ա 25:
- ՍԱՄՎԷՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՊԵՏՐՈՍԾԱՆ.—Ս. Ստեփանոսի տոնը և սարկավագական ձեռնադրությունը Մայր Աթոռում, Ա 28:—Սուրբ Գրիգոր Նարեկացու հիշատակին նվիրված երևիկա հոգևոր ճեմարանի Ոսկերչությունների սրահում, Դ 20:
- ԱՎԵՏԻՔ ՍԱՐԿԱՎԱԿ ԱՐԱՅԱՋՅԱՆ—Ամանորը հոգևոր ճեմարանում, Ա 32:
- ՄԱՅՐ ԱՌՈՒՌԻՄ, Ա 35, Բ 17, Գ 20, Դ 18, Ե 25, Ջ 8, Է 15, Ը 8, Թ 7, Ժ 45, ԺԱ 81, ԺԲ 128:
- ՄԱՄՎԷՆ ՍՐԿ. ՊԵՏՐՈՍԾԱՆ, ԳՐԻԳՈՐ ՍՐԿ. ՔԵՆՈՇՅԱՆ—«Տաթև»-ի շնորհավորանքը—Ամանոր և սուրբ Ծնունդ, Ա 39:
- Սուրբ Ներսէս Ծնորհալի Հայրապետի մամվան 800-ամյակը, Գ 8:
- Վարդանանց տոնը և Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձը Մայր Աթոռում, Գ 19:
- Վեհափառ Հայրապետի քարոզը Փրկչի հրաշափառ սուրբ Հարության տոնի առթիվ Մայր տաճարում, Կ 3:
- Փրկչի հրաշափառ Հարության տոնի առթիվ հանդիսավոր սուրբ պատարագ և հայրապետական քարոզ Մայր տաճարում, Դ 17:
- Մարդարապետի հիշատակարանում զոհվածների հիշատակը ոգեկոչելու օր, Ե 41:
- Ամավերջի հանդիսությունը հոգևոր ճեմարանում, Ջ 10:
- Քահանայական ձեռնադրությունը Մայր տաճարում, Է 17:
- Մայրազույց վարդապետության իշխանության տրվությունը, Է 20:
- Իհիլումային աշխատանքների պաշտպանությունը հոգեվոր ճեմարանում, Է 22:
- Հոգևոր ճեմարանի վերադարձումը, Թ 10:
- Հանդիսություններ Մայր Աթոռում՝ Վեհափառ Հայրապետի զահակության 18-րդ տարեդարձի առթիվ, Ժ 8:
- Սպիտկոպոսական ձեռնադրություն Մայր տաճարում, Ժ 11:
- Հանդիսություններ Մայր Աթոռում՝ ս. Ներսէս Ծնորհալու մահվան 800-ամյակի առթիվ, Ժ 22:
- Դուռն Վեհարանի, Ժ 38:

Ժ. ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՆՈՒՄ

ՆԱՐԵԿ ՎԱՐԳԱՊԵՏ ԸԱՔԱՐՅԱՆ—Խաղաղության պաշտպանության համաքրիստոնեական համա-

ժողովի աշխատանքային կոմիտեի Երր Եստաշյուջանը, Ի 32:

Խաղաղասեր ուժերի համաշխարհային համաժողովը Մոսկվայում, ԺԱ 8:

ԺԱ. ԼՈՒՐԵՐ ԹԵՄԵՐԻՑ

- Հովվական այցելություն (Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ տ. Նարեկ վրդ. Շաքարյանը Բուենոս-Այրեսում), Գ 22:
- Այնքանդրիայի եկեղեցիների միության տարեկան աղոթածողովը, Բ 82:
- Համատեղ աղոթքի օր Ղալաթիայի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, Բ 88:
- Իրաքի և Եգիպտոսի հայոց թեմերում, Գ 24:
- Հանդիպման երևիկա (Իտալիա), Գ 58:
- Ռուսական եկեղեցու նորահաստատ մատան սծուվը Միլանում, Գ 58:
- Ա. Ծննդի արարողությունը Միլանի անգլիկան եկեղեցում, Գ 58:
- Ս. պատարագ վասն խաղաղության աշխարհի (Իտալիա), Գ 59:
- Էկումենիկ պաշտամունք «Աղոթքի շաբաթ»-վա առթիվ վասն միության քրիստոնյաների (Իտալիա), Գ 59:
- Միջկեղեցական հավաքույթներ (Իտալիա), Գ 59:
- 1915 թվականի հայ մահառակաց և երկու աշխարհամարտերին Ֆրանսիայի ազատագրության համար զոհված հերոսների հիշատակին մատուցված ս. պատարագ Մարսելում, Գ 59:
- Ֆրանսիայի և Արևմտյան Եվրոպայի Հայաստանյայց եկեղեցիների խորհրդակցական ժողով Փարիզի հայոց առաջնորդարանում, Դ 35:
- Համատեղ աղոթք վասն խաղաղության աշխարհի (Իրաք), Դ 43:
- Հանդիսություն՝ նվիրված «Միութենական օր»-վան (Իրաք), Դ 43:
- Միջհամայնքային հասարակաց աղոթք (Իրաք), Դ 43:
- Մարդարապետի հերոսամարտի տոնախմբությունը լոնդոնահայ գաղութում, Ջ 15:
- Լուրեր հունանայ գաղութից, Ջ 16:
- Ղալաթարի ուղղափառ եկեղեցու հաստատման 1800-ամյակին նվիրված հանդիսություններ (Քիթայամ), Ջ 41:
- Թեմական-համայնքային ընտրություններ Վիեննայում, Է 27:
- Թեմական-համայնքային ընտրություններ Միլանում, Է 17:
- Լուրեր քուղադարհայ թեմից, Է 28:
- ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի 71-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովը, Ժ 47:
- ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի 48-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովը, Ժ 48:

ԺԲ. ԷՎՈՒՄՆԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ԱՐՍԵՆ Ծ. ՎՐԴ. ԲՄՐՅԵՐՅԱՆ—Սրկու խոսք, Ա 55:—Ակնարկ Էկումենիկ շարժման պատմության, Ա 56:

ՊԱՐԳԵՎ ԵԱՀԲԱԶՅԱՆ—Հայաստանյայց եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունները 1972 թվականին, Ա 59:

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հիմնադրման ջանքինգամյակը, Բ 58:

Եկումենիկ հանդիպում հրահանգություն, Բ 58:

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Առաքելություն և ավետարանչություն հանձնաժողովի նոր տնօրենը, Բ 58:

Նոր կտակարանի առաջին էկումենիկ թարգմանությունը, Բ 58:

Ալեքսանդրիայի Պատրիարքի հայտարարությունը, Բ 58:

Բեռլին-Բրանդենբուրգի եկեղեցու առաջին եպիսկոպոսի ընտրությունը, Բ 58:

Լուրեր քրիստոնեական եկեղեցիներից, Բ 60:

Համաքրիստոնեական մի նոր հոգևոր կենտրոն, Բ 60:

Դոկտ. Լեոպոլդ Նիխոլսի այցը Սովետական Միություն, Բ 61:

Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի միջազգային քարտուղարության գիտը Պրագայում, Գ 61:

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթըրը Մոսկվայում, Գ 61:

ԵՀՆ-ի «Եկեղեցիների փոխօգնության ու ծառայության և ապաստանյալների օժանդակության» հանձնաժողովի հավաք Սոֆիայում, Գ 62:

Դոկտ. Ֆիլիպ Փոթըրի այցելությունը Կ. Պոլսի տիեզերական Պատրիարքին, Գ 62:

ԵՀՆ-ի «Հավատ և կարգի» հանձնաժողովի պատվիրակությունը Հարավսլավիայում, Գ 62:

Լուրեր քույր եկեղեցիներից, Դ, 45, Ը 45:

Նորից Սրբություն Պիմեն Պատրիարքի հեռագիրը Նոր Հուստինիայի և համայն Կիպրոսի արքեպիսկոպոս Մակարիոսին, Դ 45:

Եվրոպական եկեղեցիների կոնֆերանս (Ավստրիա), Դ 45:

Ի պաշտպանություն խաղաղության (Մոսկվա), Դ 48:

Էկումենիկ արարողություն Մելբուռնի «Քրիստոս Քրիստոս» մարզադաշտում և հասարակաց պաշտամունք սուրբ Պատրիկ Մայր տաճարում, Դ 48:

Խաղաղության պաշտպանության համաքրիստոնեական համաժողովի «Աշխատանքները շարունակող կոմիտեի» առաջին նստաշրջանը՝ չորրորդ համագումարից հետո, Զ 44:

Ղպտի ուղղափառ եկեղեցու Պատրիարք Շենուդա Գ-ի պաշտոնական այցը Հոմ՝ Պոդոս Զ Պապին, Զ 44:

Բուլղարիայի օրթոդոքս եկեղեցու Պատրիարք Մաքսիմ Գ-ի այցելությունը (Կահիրե), Զ 46:

Հանդիսություններ Կահիրեում՝ Եվրոպա և Աքանաս Հայրապետի 1800-ամյակին, Զ 46:

Հանդիպում հոմոնական կաթոլիկ և ռուս պրավոսլավ եկեղեցիների աստվածաբանների միջև, Ը 42:

Նիկողայոս Զ Պատրիարքի այցելությունը ռուս պրավոսլավ եկեղեցուն, Ը 49:

Հակաճանություն Հոմի եկեղեցում անսխալականության մասին, Ը 49:

Եթովպական ուղղափառ եկեղեցու Պատրիարքի պաշտոնական այցը Ժնև՝ եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնին, Ը 46:

ԵՀՆ-ի Միջազգային գործերի հանձնաժողովի գործադիր կոմիտեի 28-րդ նստաշրջանը, Ը 47:

Հարավ-աֆրիկյան եկեղեցիների ներկայացուցիչների մասնակցությունը ԵՀՆ-ի կենտրոնական կոմիտեի առաջին ժողովին, Ը 47:

ՆԵՐՍԵԱ Ծ ՎՐԴ. ՊՈԶԱՊԱՆՅԱՆ—Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտեի 25-րդ գումարումը Ժնևի կենտրոնատեղիի մեջ, ԺԱ 19:

ԺԳ. ԱՓՅՈՒՌՔՈՒՄ

Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի ամսվերջի հանդեսը, Է 28:

Ռումինահայ թեմի պատգամավորական ժողովը, ԺԱ 85:

Փարիզի՝ Ալերի Սամվել Մուրադյան հայկական վարժարանի նոր շինքի բացումը, ԺԱ 86:

Ս. Ներսես Ենոբիայու մահվան 800-ամյակին նվիրված հանդիսություն Վենետիկի ս. Ղազար վանքում, ԺԱ 86:

Միացյալ Նահանգների հայոց առաջնորդարանի «Կոմիտաս» երգչախմբի 25-ամյակը, Ա 87:

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՍՏՅԱՆ—Անթրիպսի նոր սահմանազանությունները, Ը 3:

Բաղդատի ս. Կարապետ եկեղեցու օծումը, Թ 44:

Իսի Լե Մուլիոնի եկեղեցու հիմնարկվելը, Թ 45:

Լա Սիթոյի ս. Կարապետ եկեղեցու օծումը, Թ 45:

Բողոք պատմության առջև, Թ 46:

Բյուրոթի՝ Էջմիածնի կրոնասեր տիկնանց համախըմբումի գործունեության 15-ամյակը, Թ 47:

Ընտրություններ եթովպահայ համայնքում, Թ 47:

ԺԴ. ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՂԱՄՅԱՆ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ—Մի վավերագիր Ալեքսանդրապոլի եկեղեցիների մասին, Ը 87:

ԱԹԱՅԱՆ Ռ.—Կոմիտասի առաջին տպագրված տեղեկագործությունը, Զ 34:

ԲԱՆՉԻՆՅԱՆ ՀԵՆՐԻԿ—Հովհաննես կաթողիկոս Դրախտանակերտցի, Գ 44:

ԲԱՂՂԱՍԱՐԵԱՆ Է. Մ.—Հովհաննես Որոտնեցու դավանաբանական գրությունը Կոստանդին Ե Սսեցի կաթողիկոսին, Բ 18:

ԲԱՐԹԻԿՅԱՆ ՀՐԱՉ, ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ ԱՐԱՄ—Ազաթանգեղոսի մի նորահայտ հունարեն խմբագրություն (Օբրիդայի վարքը), Գ 36, Է 32:

ԲՆՐԱՆՐՅԱՆ ԱՐԱՆ Ծ ՎՐԴ.—Ակնարկ ս. Էջմիածնի հատուկ մի քանի հոգևոր եղանակների մասին, Դ 25:—Հայ անգլիկանները ԺԹ դարի 2-րդ կեսին, Ը 26:

ԳՆԱԹՅԱՆ Հ. Մ.—«Թուխեաց» երգերի անվանման առթիվ, է 46:

ԽԿԱՆՑԱՆ Ս. Ս.—Կոմս Ա. Ս. Ուվարովի «Էջմիածնի մատենադարանը» հոդվածում հիշատակված ձեռագրերը, Ը 33:—Գարեգին Եսյս. Հովսեփյանի հայերեն ձեռագրերի հավաքածուն, Ը 35:

ԽՂԻՋԱՐՑԱՆ Հ. Ս.—Առաքելոց վաճառքը, Թ 37:

ԷՂԼԱՐՑԱՆ Ի.—Պատմական հուշարձանների վերանորոգում, Թ 28:

ԹԱՀՄԻՋՑԱՆ Ն.—Սյունցի համաճում երկու երաժիշտների և Հարության ավագ արհեստիւնները, Բ 28:—Ս. Սահակ Պարթևը և հայ եկեղեցական երգարվեստը, Ը 8:

ԹԱՄԱՆՅԱՆ ՅՈՒ.—Ամբրոդի քաղցիքի վերանորոգման նախագիծը, Թ 34:

ԹՈՒՐՇՅԱՆ Հ.—Հայության մեծ գոյամարտը, Ե 42:

ՀԱԿՈՑՅԱՆ ՀՐԱՎԱՐԻ.—Մանրանկարիչ Կիրակոս քահանայ, Գ 48:

ՀԱՏԻՏՅԱՆ Ա.—Ս. Կերեսե Շնորհալի Հայրապետ, Ե 28:—Շնորհալից որպես մատենագիր, Զ 17:—Ս. Կերեսե Շնորհալից որպես եկեղեցական միտոքարիկարգիչ և տաղանդավոր երաժիշտ-շարակահագիր, Է 9:

ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ Կ. Հ.—Եկեղեցական վավերագրերն ու թղթերը որպես «Պատմության Ազոտանից աշխարհի» երկի աղբյուր, Է 41:

ՄՈՒՂԱԳՅԱՆ Կ. Մ.—Ս. Բարսեղ Կեսարացու ճառերը, Ը 20:

ՄՈՒՐԱԳՅԱՆ ՄԻՀՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ—Աարդարաստի և Բաշապարանի հերոսամարտերի հովիտական մասնակիցներ, Ե 45:

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԵԶՆԻԿ ԱԲԵՂԱ.—Մովսես Երզնկացու «Հուսարումն համառու մեկնութեանց սրբոյ պատարագին, զոր յառաջագոյն արարուալ է սրբոց յուստոր հարցն» աշխատությունը, Թ 14, ԺԱ 43:

ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Ն.—Միջնադարյան հայկական մի սրբանկար, Թ 21:

ՏՈՎԱՐՍԿԻ Ն.—Անցի ստորգետնյա եկեղեցիները, ԺԱ 34:

ՔՈՒԱՆՋՅԱՆ ՍՈՒՐԵՆ Ե.—Արտակ եպիսկոպոս Սմբատյանցը և նրա՝ Մայր Աթոռի ստարանի պատմության մասին գրած երկը, Զ 28:

ԺԵ. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ—ՄԱՏԵՆԱԿԻՏՈՒԹՅՈՒՆ

Հիշատակարաններ Մայր Աթոռի տպարանից հրատարակված հնատիպ գրքերի, Ա 41, Բ 44:

Յուրյակ Մայր Աթոռ ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի, Ա 51, Բ 50, Գ 55, Ը 40:

ԳԵՎՈՐԳ ՀԱՏԻՏՅԱՆ—Վանքի օրեր, Գ 26:

ԳՐԻԳՈՐ ԳՅՈՒՆՅԱՆ—«Տաթև» ուսանողական պարբերաթերթը, Գ 32:

«Էջմիածին» ամսագրի մատենագիտությունը, Գ 48: Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի, Գ—ԺԱ 48:

ԺԶ. ԳՐԱԿԱՆ

ԹՈՒԳՈՒՄ ԱՐՎԷՂՊՈՎԱԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ (ՅԵՆ-ՄԱՀ)—Դրոճ մեր նրաշք, Գ 30:—Ամայքներում վրա, Գ 30:—Մայրավանքի զանգակ, Գ 31:

ԺԸ. ԿԵՆԱՄԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խոնկյան Օնանջանի Կամսարականի ձեռքյան հայր-յորամյակը, Է 30:

Գեր. տ. Գյուտ եպիսկոպոս Նազաշյան, Ժ 41:

Գեր. տ. Արսեն եպիսկոպոս Բարբերյան, Ժ 42:

Գեր. տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյան, Ժ 43:

Գեր. տ. Գևորգ եպիսկոպոս Սևրայիսյան, Ժ 44:

ԺԹ. ՄԱՀԱԿՐԱԿԱՆՆԵՐ

Հանգիստ արժանապատիվ տ. Գևորգ քահանա Փափազյանի, Ա 69:

Հանգիստ գերաշնորհ տ. Մաշտոց եպիսկոպոս Թաշիրյանի, Գ 38:

Հ. Ա.—Մահ պրոֆ. Հակոբ Շուլյանց Սիրուհու, Գ 40: Մահ ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի, Թ 41:

